

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ԵՐԿԼԵԶՎՅԱՆ ԲԱՌԱՑԱՆԿԵՐԻ
ՆՍՈՒՇՆԵՐԻ ԼԵԶՎԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Երևան - 2023

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ԵՐԿԼԵԶՎՅԱՆ ԲԱՌԱՑԱՆԿԵՐԻ
ՆՍՈՒՇՆԵՐԻ ԼԵԶՎԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Երևան - 2023

ՀՏԳ 09.198. 1

ԳՄԴ 81.2

Հ 205

Պատասխանատու խմբագիր

Բանասիր. գիտ. թեկնածու Ս. Ղ. Սիրունյան

Համբարձումյան Վ.Գ.

Հ 205 Հայ միջնադարյան երկլեզվյան բառացանկերի նմուշների լեզվի քննություն / (Պատ. խմբ. Ս.Ղ. Սիրունյան).-Եր. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2023, 200 էջ:

Աշխատանքը նվիրված է հետգրաբարյան շրջանում երևան եկած հայ-լատիներեն բառացանկերի լեզվի քննությանը: Դրանք կազմվել են ամենից առաջ գործնական նպատակով, պարունակում են ժամանակի խոսակցական (բարբառային) տարրեր՝ հնչյունական, այլն բառապաշարի մակարդակում: Ըստ այդմ լուծվում են հայերենի հնչյունաբանության պատմության որոշ հանգուցային խնդիրներ:

Գիրքը նախատեսված է հայոց լեզվի պատմության մասնագետների, հայ գրավոր մշակույթի հարցերով հետաքրքրվողների համար:

NSSN

© Էդիթ-Պրինտ, 2023

© Վ. Համբարձումյան, 2023

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Հայագիտության մեջ ընդունված է հայ-հռոմեական (լատինական) լեզվական-մշակութային հարաբերությունների պատմությունը բաժանել երկու շրջանի՝ ամենից առաջ ըստ ժամանակի գործոնի, ա) հայ-հռոմեական (մ. թ. ա. 66 - մ.թ. 423 թթ.) և բ) հայ-լատինական (XIV-XVIII դդ.)¹: Հին Արևելքի ժողովուրդներից հատկապես հայերի հոգևոր-մշակութային կյանքը եվրոպական-քրիստոնեականի հետ ունի ոչ միայն համաժամանակյա, այլև պատմական, լեզվական-ծագումնային առնչությունների ուրույն հիմքեր: Այդ ժողովուրդների միջև հին՝ հնդեվրոպական-ցեղակցային, այլև նոր՝ քրիստոնեական-հոգևոր սերտաճումներն անպայման ունեն գիտական ավելի լայն ուսումնասիրության կարիք:

Նման բաժանումը տվյալ դեպքում հնարավոր է այն հիմքի վրա, որ այդ ժամանակներում հայերի և հռոմեացիների (կամ հռոմեական-եկեղեցական պրոպագանդայի) միջև, իրավամբ, գոյություն են ունեցել տնտեսական (առևտրային), առավել ևս մշակութային (հիմնականում՝ եկեղեցական) առնչություններ:

Դա չի բացառում այն հանգամանքը, որ այլ ժամանակներում ևս եղած լինեն հայ-հռոմեական առանձնակի, մասնավոր հանդիպումներ (շփումներ՝ առևտուր, ուխտագնացություն և այլն): Այդպիսիք, թերևս, մշտապես եղել են, սակայն պետք է շեշտել այն, որ

¹ Տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Հայերը և հռոմեացիները. լեզվական շփումներ // «Երկիր» (օրաթերթ), 13-ը նոյեմբերի 1991: Նույնի, Լատինաբան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.), Ե., 2010:

դրանք չեն կրել այնքան սերտ և անմիջական (իրավապես ճանաչելի) բնույթ, որքան նշված երկու կարգի առնչությունները:

Համեմատաբար վերջին տարիներին գրված աշխատանքներում նման առնչություններ նշվում են ավելի վաղ ժամանակներում (XI, նույնիսկ՝ X դ.)²: Այս նույն ժամանակին է վերաբերում հայերի հայտնվելը Եվրոպայի երկրներից հատկապես Ֆրանսիայում, Իտալիայում, Հոլանդիայում և այլն:

Փոքր Ասիայի և եվրոպական այլ երկրների միջև առնչությունները, ինչպես նշեցինք, եղել են հիմնականում երկու կարգի՝ առևտուր և ուխտագնացություն. «Ամեն ժամանակ վաճառականական յարաբերություններ գոյութիւն ունեցան Գաղղիոյ և Փոքր Ասիոյ միջև. «ասորի» վաճառականներ, անուն՝ որոյ ներքեւ կը խառնուէին բոլոր Արեւելեայք, հիմնած էին ոչ միայն Գաղղիոյ հարաւային կողմն, այլ նաև ներքնակողմեան քաղաքներու մէջ, շատ յաջող գաղթականութիւններ, շատ աւելի բազմաթիւ», որոնք և՛ «...գարգացուցին Գաղղիոյ և Արևելեից միջև վաճառականական յարաբերութիւնները: «Ասորի»ներու թուոյն մէջ հաւանօրէն պէտք է համարել նաև Մեծ Հայոց բնակիչներէ ոմանք»³:

Նման հանգամանքներում է, թերևս, որ հարկ է լինում սովորական հաղորդակցման նպատակով ունենալ լեզվի գործածության օժանդակ միջոցներ, այլև նվազագույն (հարկավոր) բառապաշարի ցանկեր: Այս իրողությունը նկատված է նաև՝ ըստ տեղի. «Տասներորդ դարուն մէջ, իրարմէ ոմանց ներկայութիւնը առ

² Հմմտ. Ժ. Ղեղեյան, Հայ վանականները և ուխտավորները Արևմտյան Եվրոպայում X դարի վերջում և XI դարի սկզբում // «Պատմա-բանասիրական հանդես», 1984, 3, էջ 21-36:

³ Արևելքի ժողովրդեան տարրեր Գաղղիոյ մէջ. Հայերն ի Գաղղիա ԺԲ-էն մինչև ԺԸ դար, թարգմ.՝ Հ.Յ. Աւգեր[եան], էջ 144: Ֆրանսերէն բնագիրը լույս է տեսել «Revue historique»-ում (1918, № 5-6. Mai-Juin) [հեղ.՝ J. Mathoriez]:

նուազն ապահով ցուցուած է նորագիտ հայ-լատին գրուցատրութեան տետրակաւ մը, որ ազուցուած է Ս. Հերոնիմոսի Նամակաց օրինակութեան մը վերջը: Այս բառարանը, թեպէտն շատ համառօտ, կու տայ օրերու, թիւերու, գործածական իրերու և կրօնական բառերու անուններն»⁴:

Այդ բնագրին («հայ-լատին գրուցատրութեան տետրակ»-ին) անդրադարձել ենք մեր գրքերից մեկում, այլն առանձին հոդվածով, իսկ այժմ կարծում ենք, որ այն բառագիտական-բնագրագիտական առումով մնում է ոչ լիովին ուսումնասիրված: Ուստի մեր այս աշխատանքում փորձում ենք ամբողջացնել նախկինում արվածը⁵:

Այս անգամ անդրադառնում ենք մեր ձեռքին եղած պատճենի (Ֆաքսիմիլէի) անընթեռնելի տեղիների հնարավոր վերականգնմանը, որոնք նախկինում բաց են մնացել, կազմում ենք ուրվապատկերը (էստամպաժը), անդրադառնում ենք ցանկի յուրաքանչյուր տողի հնչյունական («ձայնաբանական») կողմին՝ ի համեմատություն Օ. Կարիերի արածի, կատարում որոշ ճշտումներ, այնուհետև ըստ հնարավորին զուգահեռներ ենք անցկացնում այդ բնագրի բառապաշարի և հետագա որոշ ցանկերի կամ բառարանների համապատասխան տվյալների հետ՝ հայերենում հնչյունական փոփոխությունների ընթացքը (պատմությունը) ինչ-որ չափով ավելի պատկերանալի ուրվագծելու համար:

Մեզ հասած հայերեն ձեռագիր սեղմ կամ ստվար բառարաններից և բառգրքույկներից բացի, որոնք այս կամ այն չափով քննության առարկա են եղել հատկապես միջնադարյան գրավոր մշա-

⁴ Նույն տեղում:

⁵ Վ. Գ. Համբարձումյան, Օտունի «Հայերեն-լատիներեն բառացանկը» // «Պատմա-բանասիրական հանդես», 2016, 2, էջ 123-136: Նույնի, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (X-XVIII դդ.), Ե., 2015, էջ 41- 64:

կույթի մաս կազմող բառարաններին նվիրված աշխատություններում, հանդիպում են նաև այլ կարգի՝ ոչ ծավալուն, համառոտ տեղեկատուներ (պայմանականորեն՝ բառացանկեր, «գրացանկեր» և այլն), դրանք, կարծում ենք, կարևոր աղբյուր են հայերենի հնչյունաբանության և բառապաշարի, ավելին՝ լեզվի ամբողջական պատմության համար⁶:

Այդպես ստորև ավելի մանրամասն վերլուծությամբ անդրադառնում ենք միջնադարյան մեզ հայտնի երկլեզվյան մի քանի (մեկ տասնյակից ավելի) այլ բառացանկերի, որոնց մի կողմում կա՛մ լատիներեն բնագիրն է, կա՛մ լատինագիր տառադարձությամբ հայերեն որևէ նյութ: Նկատենք, որ այս վերջինների վերաբերյալ կան միայն բանասիրական-բնագրագիտական ակնարկներ, ոչ՝ լեզվական քննություն, մանավանդ հայոց լեզվի պատմության, ժամանակի գրական (ստանդարտ) լեզվի և բարբառային-խոսակցական տարբերակի անչությամբ: Ըստ այդմ սույն աշխատանքը դառնում է անհրաժեշտ, ի լրացումն մինչև այժմ կատարվածի⁷:

Սույն աշխատանքը բաղկացած է երեք մասից:

Առաջին մասում քննում ենք այն հարցը, թե նման ցանկերին անդրադառնալն առհասարակ ինչ կարևորություն ունի հայոց լեզվի ընդհանուր պատմության համար: Երկրորդում կատարում ենք նոր դիտարկումներ Օտունի բառացանկի վերաբերյալ: Երրորդում, մեր ձեռքին ունեցած նյութերի հնարավորության սահմաններում, ուշադրության առարկա են երկլեզվյան, միայն լատիներենին

⁶ Հմմտ. *Հ.Մ. Ամալյան*, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V - XV դդ.), Ե., 1966: *Նույնի*, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (XVI - XVII դդ.), Ե., 1971:

⁷ Նման բնագրերից մի քանիսը մենք ներկայացրել ենք լույս տեսած աշխատանքներում, իսկ այստեղ դրանք բերում են համեմատաբար ավելի ամբողջական վերլուծությամբ *Վ. Գ. Համբարձումյան*, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (X-XVIII դդ.), էջ 6:

առնչվող ոչ ծավալուն («մանր») բառացանկերի (բառարանների) լեզվական իրողությունները (մեծ մասամբ՝ հնչյունական մակարդակի):

Բոլոր դեպքերում նկատի ենք ունեցել նաև այն, թե հիշյալ հարցերին ինչքանով են քննության առարկա եղել անցյալում, այլև համեմատաբար նոր ժամանակներում, իսկ դա, բնականաբար, անհրաժեշտ է յուրաքանչյուր խնդրի փոքրիշատե ամբողջական լուծման համար:

Հայտնի է, որ դասական բանասիրությունը նման բնագրերին անդրադասարձել է առավելապես նկարագրության սկզբունքով (Գ.Ա. Շրումպֆ, Գ. Ջարբեհանայան, Կ. Կոստանյանց և ուրիշներ): Ընդ սմին հայ և ընդհանուր լեզվաբանության պատմության վերաբերյալ աշխատություններում ուշադրության առարկան բնագրերի ժամանակի, հեղինակային պատկանելության, պատմական-մշակութային համատեքստում դրանց ունեցած արժեքի ներկայացումն է (Է. Աղայան, Գ. Ջահուկյան և ուրիշներ): Նույնը նկատելի է հայ բառարանագրության պատմությանը նվիրված աշխատանքներում (Գ. Գասպարյան, Հ. Ամայան և ուրիշներ): Բոլոր դեպքերում դրանց քննությունը բանասիրական-նկարագրական բնույթի է, քան բնագրային (տեքստաբանական)-վերլուծական, մանավանդ հայոց լեզվի, մասնավորապես նրա հնչյունաբանության և բառապաշարի պատմության մեջ: Այնինչ, նման աղբյուրների լեզվի ինքնակա («ինքն իր մեջ») և պատմական (տարածամանակյա) ուսումնասիրությունն ունի խորքային նշանակություն, ամենից առաջ լեզվի պատմության տեսանկյունից՝ առավելապես կապված այն կրող հանրության մտավոր-մշակութային առաջընթացի հետ: Մեր այս աշխատանքն ունի վերջին բնույթի նպատակ՝ լեզվի պատմության քննությամբ հնարավորինս ունենալ պատկերացում այն կրող հանրության ընդհանուր պատմության վերաբերյալ:

Այստեղ հնչյունական մակարդակի երևույթները, որոնք տարբեր են գրական (ստանդարտ) լեզվի համեմատությամբ, փաստեր են տվյալ ժամանակի խոսակցական լեզվի («բարբառների») վերաբերյալ, եթե բացառենք այդ երևույթներին օտար հեղինակների՝ ոչ բավարար չափով տիրապետելու հանգամանքը: Կան նաև բառային միավորների որոշ տարբերություններ՝ հատկապես գործածության ոլորտի, որոնք այս կամ այն չափով նկատելի են նաև հայերենի բարբառներում:

Այդ տարբերությունները փաստերի մանրամասն ուսումնասիրությունը մնում է արդիական հայոց լեզվի պատմության համար:

1. ՀԱՐՑԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հայերեն գրավոր (ձեռագիր կան տպագիր) մատյաններում բուն նյութից բացի երբեմն տեղ են գտել նաև, այսպես կոչված, կողմնակի նյութեր, որոնք հիմնականում գրչի ընդմիջարկումներ են՝ ցանկեր, այլ բնագրային հատվածներ հայերեն կամ ուրիշ լեզուներով, մասամբ հայերենին զուգադիր հնչյունացանկեր («այբուբեններ») և այլն:

Հայոց լեզվի պատմության համար դրանք նույնպես կարևոր են, մանավանդ որ գրված են ոչ թե տվյալ ժամանակի լեզվի գրական նորմայի (ստանդարտի) խստիվ պահպանմամբ, այլ հաճախ անմիջական («ազատ») գրչության («գրության») ձևով:

Այդ նյութերը, եթե երկլեզվյան են, ապա բերվում են լատինատառ (նաև օտար բնագիրը՝ հայատառ և այլն), զուգադիր հայերենին, որպիսով հայտնի են դառնում լեզվի հնչյունական-արտասանական, ուղղախոսական այն տարբերությունները, որոնք բնորոշ են եղել տվյալ ժամանակին, արտացոլում են հեղինակի (գրառողի կամ ինֆորմանտի) հայերենի իմացության աստիճանը, լեզվական ձեռնհասությունը:

Գրառված (տառադարձված) միավորները հայերեն բնագրերում տեղ գտած զուգադիր կամ հայատառ հատվածներ են, այլև բառեր և բառաձևեր, որոնք, բնականաբար, արտացոլում են տվյալ ժամանակի լեզուն՝ ամենից առաջ իր հնչյունաբանությամբ և բառագործածությամբ: Եվ եթե լեզվակիր հասարակական տարբեր խավերի տեսանկյունից ենք նայում խնդրին, ապա նման բնագրերում, անշուշտ, նկատելի է դառնում թե՛ գրական և թե՛ ոչ-գրական

(բարբառային-խոսակցական) տարբերությունը: Ըստ այդմ՝ կարևոր է լեզվի գրական տարբերակին զուգահեռ բարբառների տեսական, տարածամասնակյա (պատմական) քննությունը նաև այդ կարգի գրավոր աղբյուրների ընձեռած տվյալների հիման վրա:

Գրադարձությունը (տառադարձության մի տեսակը) ամեն մի լեզվի գրային արտահայտության (գրանցման) կարևոր պայման է: Լեզվի մասին գիտության մեջ տարբերում են տառադարձության մի քանի տեսակ՝ գրային, հնչյունական և հնչույթային: Առաջինից բացի մյուսները հաճախ բնորոշվում են իբրև գիտական տառադարձություն. վերջինս նեղ իմաստով նույնն է, ինչ գրադարձությունը⁸:

Այսպես, օրինակ, Մ. Բրոսսեի խնդրանքով վենետիկյան հայրերը «Բազմավեպ» հանդեսի (1846, հ. Գ, էջ 361-367) անստորագիր հոդվածում («Յադագս բնիկ հնչման հայկական տառից») (էջ 367)) դնում են հետևյալ ցանկը՝ զուգահեռ հունարենին և լատիներենին (բերում ենք մեր խմբավորմամբ՝ հունական, լատիական, սլավոնական կամ մեկ այլ գրչության զուգադրմամբ).

ա) Չայնավորներ՝ ա - α. a, է - ιε // ε. ie // e // ɛ (ռուս.), է - ε. e, ք - (-). e (գաղղ. [= ֆրանս.]), ի - ι. i, ո - ο. oo, օ - ο. o:

բ) Բաղաձայններ՝ ք - β. p, գ - κ. k, ղ - τ. t, զ - ζ. Z, s (գերմ.), թ - θ // τ. th // t, ժ - (-). j (գաղղ.), խ - χ. ch (գերմ.) kh, ծ - δζ. dz (լեհ.), կ - γ. g (գերմ.), հ - (-). h, ձ - τξ. tz (գերմ.), ղ - γ. gh (գերմ.), ճ - (-). g // ge // gi, չ - (-). c (tch գաղղ.), պ - (-). b, ջ - (-). c (dch գաղղ.), ս - σ. s, վ - β. v, տ - δ. d, ց - τξ. ts // z (գերմ.), փ - π. p, ք - κ. k, ֆ - φ. f:

գ) Չայնորդներ՝ շ - λ. l, մ - μ. m, յ - ι. i // h // ʏ (ռուս.), ն - ν. n, ո - ρ. r, ր - ρ. r // rz (լեհ.). լ - ս // β. γ // v:

Ցանկում հունարենի դեպքում փակագիծ-գծիկը նշանակում է բացակայություն. որոշ գրեր նշանակված են նույն հնչման տակ

⁸ Տե՛ս Հ.Զ. Պետրոսյան, Ս.Ա. Գալստյան, Թ.Ա. Ղարազյուլյան, Լեզվաբանական բառարան, Ե., 1975, էջ 76, 289:

(հայ. *բ, վ, լ* - հուն. *β*, հայ. *ձ, ց* - հուն. *. τξ*, հայ. *ղ, թ* - հուն. *τ*, հայ. *է, է* - հուն. *ε*, հայ. *ի, յ* - հուն. *ι*, հայ. *ռ, ր* - հուն. *ρ*, հայ. *ո* - հուն. *ο* և այլն)⁹: Այստեղ նկատելի է հնչյունի նշանակման անմիակերպություն, որ բնորոշ է լեզվին՝ ոչ միայն տվյալ ժամանակաշրջանում, այլև նախորդող ժամանակներից մեզ հայտնի «գրչությունների» դեպքում: Այս տեսանկյունից միջին դարերի գրավոր գրերի յուրաքանչյուր հիշատակության (մեծ կամ փոքր, ամբողջական կամ «պատառիկ») քննությունը՝ ամենից առաջ լեզվի բարբառային-խոսակցական տարբերակի հաշվով, արդիական է:

Մի քանի տասնամյակ անց Հ. Հյուբշմանը մշակում է հայերենի գիտական տառադարձությունը, որը Ա. Մեյեի որոշ ճշգրտում-լրացումներով մնում է անխափան և գործածական առայսօր, որովհետև լիարժեք և իրական է արտացոլում մեսրոպյան գրերի հնչական բազան: Հյուբշմանի նշանակումների առավելությունը ամենից առաջ լինում է այն, որ ի տարբերություն նախորդ փորձերի, օրինակ՝ վերը բերվածի, օգտագործվում են տարբերիչ (դիակրիտիկ) նշաններ, որոնք գործածվելով ըստ անհրաժեշտության՝ բեռնաթափում են տառադարձման ժամանակ մեկ այլ լեզվին դիմելը, այլև տարբերակային ձևով նույն հնչումը ներկայացնելը և այլն:

Ստորև դնում ենք, այսպես կոչված, Հյուբշման-Մեյեի տառադարձումը, որն ընդունված է հին գրական հայերենի (գրաբարի) համար, այն կարելի է դիտել իբրև նմուշ (էտալոն). *ա* - *a*, *բ* - *b*, *գ* - *g*, *դ* - *d*, *է* - *e*, *զ* - *z*, *է* - *ē*, *ը* - *ə*, *թ* - *t^c*, *ժ* - *ž*, *ի* - *i*, *լ* - *l*, *խ* - *x*, *ծ* - *c*, *կ* - *k*, *հ* - *h*, *ձ* - *j*, *ղ* - *ł*, *ճ* - *č*, *մ* - *m*, *յ* - *y*, *ն* - *n*, *շ* - *š*, *ո* - *o*, *ջ* - *č^c*, *պ* - *p*, *ջ* - *ǰ*, *ռ* - *r*, *ւ* - *s*, *վ* - *v*, *տ* - *t*, *ր* - *r*, *ց* - *c^c*, *ւ* - *w*, *փ* - *p^c* (*ph*), *ք* - *k^c* (*kh*), *օ* - (*< uuz [= aw]*), *ֆ* - *f*:

Հյուբշմանը տարբերիչ (դիակրիտիկ) նշաններ է օգտագործել առաջին շարքի միջին բարձրացման (երկբարբառակերպ) ձայնավոր (*է-ē*), պայթական և հպաշփական պարզ և շնչեղ խուլ [*փ* - *p^c*

⁹ Լատիներենի դեպքում նույնպես առկա է միավորի այս կամ այն կարգի համատեղում (կոմպենսացում):

Վասն զի չենք կարծեր թէ ասկէ աւելի հնագոյն յիշատակ և հաւաստիք մը գտնուի հայ լեզուի ծանօթութեան յԱրևմուտս: Անկէ ետքը հարկէ իջնել մինչև յառաջին ամս չորեքտասաներորդ դարու (1322), // որպէսզի կարող ըլլանք գտնել հայ լեզուի ուսումնասիրութիւն յարքունիս քահանայապետաց յԱւենիոն, ի ձեռն պատգամաւորաց Լևոն Ե թագաւորի»¹¹:

Այդպէս նաև՝ «Արտասանականին այլևայլ մասնաւորութեանց նկատմամբ որ բառգրոցս մէջ գործածուած ուղղագրութենէն կրնան յառաջագայիլ, փնտոելով թէ որ գաւառական լեզուին կրնան պատշաճիլ, եթէ ձեռնհաս՝ մանաւանդ ազգային գիտնականէ մը ըլլուին այդ ուսումնասիրութիւնք, շատ հետաքննական կրնան ըլլալ հայ լեզուի համար»¹²:

Հեղինակը համարում է «վրիպակ» կամ «անօգուտ գործածություն» այն տարբերությունները, որոնք տեղ են գտել հիշյալ բառացանկում, այնինչ դրանք յուրովի արտացոլում են ժամանակի գրական նորմային չհամապատասխանող ձևերը կամ իմաստները. «Ձի ոչ լոկ յաճախակի կամ անօգուտ կերպով կը գործածէ բառից հոգնակին՝ լատին եզականին դիմաց, այլ շատ անգամ կը վրիպի նաև ի նշանակութեան հայ բառից: Այսպէս homo (մարդ) թարգմանած է *անձն*, brachum (բազուկ), *ձեռք*. manus (ձեռք) *ափ*, *սիրտ* թարգմանած է pectus և latus. *անդամ*՝ renes և coxa, վանգ՝ համանշանակ ենթադրած է ecclesia բառին, *պատարագ* կը նշանակէ զոհ (sacrificium) և ոչ խորան, ինչպէս գրիչն կը համարի: Այս ամէն վրիպակաց պատճառք փնտոելով, կ'ըսէ դարձեալ հրատարակողն, տեսանք որ ուր որ բառ մը կայ որոյ նշանակութիւնը դիւրին է և

¹¹ Գ. Ա. Շրումպֆ, Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրևմուտս (ԺԴ-ԺԹ դար), Վենետիկ, 1895, էջ 8-9 (թարգմ.՝ Հ. Գ. Զարբհանայան):

¹² Գ. Ա. Շրումպֆ, նշվ. աշխ., էջ 10:

որոշ և չէ մարթ շփոթել ուրիշ հետ, թարգմանութիւնը ճիշդ է: Նոյնը չենք գտներ այն բառից նկատմամբ որ մարմնոյ ներքին մասունքը կը նշանակեն, կամ այնպիսիք՝ որ ճիշդ և սահմանափակ նշանակութիւն մը չունենալով, կրնան շփոթիլ ուրիշ մերձաւոր բառից հետ. այն ատեն ճիշդ թարգմանութիւնը գրեթէ բացառութիւն մ'է»¹³:

Այդպէս նաև Յ. Մատորիեզի մի աշխատանքը, որը նշեցինք վերը՝ հայերեն համեմատաբար ուշ թարգմանություն է ֆրանսերենից (թարգմ.՝ Ն. Ավգերյան), բավականին ուշագրավ տեղեկություններ է պարունակում ոչ այնքան այդ բառացանկի, որքան 12-րդ դ. ի վեր Ֆրանսիայում հայերի երևալու մասին¹⁴:

Այստեղ ավելացնենք միայն հետևյալը.

ա) «Ուխտագնացութիւն դէպի Սուրբ երկիր, յաճախուած Ե և Ջ դարերու մէջ, Արևելից մէջ փռանկ պաշտպանութեան հաստատուիլն Մեծին Կարողոսի ժամանակ, առ որ Հարուն-էլ-Ռաշիտ դեսպանութիւն մը դրկած էր՝ մահմետականներէ և հայ ուղղափառներէ կազմուած, զարգացուցին Գաղղիոյ և Արևելից միջև վաճառակական յարաբերութիւնները: «Ասորի»ներու թուոյն մէջ հաւանօրէն պէտք է համրել նաև Մեծ Հայոց բնակիչներէ ոմանք որ Գաղղիոյ վաճառականութենէ ձգուած, գաղթած պիտի ըլլան մեր հողին վրայ»¹⁵:

Ի դէպ՝ այստեղ ուշադրություն դարձնենք այն տողերին, որ Մաթորիեզը նշում է Մեծ Հայքից բնակիչների՝ Գաղղիա հասնելու մասին, և սա արդյո՞ք չի օգնում մեր քննության առարկա բառացանկի հայերենի վերաբերյալ տվյալներ հաղորդողի՝ Մեծ Հայքի բնակիչ լինելու վարկածի պարզաբանմանը:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում, էջ 144:

բ) «Առաջին նշանաւոր Հայն որ հաստատուեցաւ Գաղղիոյ մէջ՝ եղաւ Ս. Գրիգոր Նիկոպոլսեցին: Ծնած ի Հայաստան Ժ դարուն մէջ. թողուց իւր հայրենիքը, պանդխտեցաւ ի Գաղղիա, յետոյ հաստատուեցաւ ի Բիթիւիէ յետ կորուսանելով երկու ուղեկից ընկերները, որոնց հետ մեկնած էր իւր հայրենիքէն»¹⁶:

Այս ուղղակի մեջբերումները բավարար են ասելու, թէ ինչպիսին է եղել վաճառականական խավ ներկայացնող հայ անձերի մուտքը եվրոպական մի այնպիսի երկիր, ինչպիսին էր Ֆրանսիան այն ժամանակներում:

«Լատիներեն-հայերեն» բառացանկի վերաբերյալ, ինչպէս հայտնի է, եղել են տարբեր դիտարկումներ, որոնք, կարելի է ասել, բավականին հպանցիկ են, ամենից ավելի ակնարկային, քան որ կարելի է համարել լեզվական-լեզվաբանական քննություն: Առանձնապէս նկատի ունենք Կ. Կոստանյանցի, Գ. Ա. Շրումպֆի, Հ. Աճառյանի, Է. Աղայանի, Գ. Գասպարյանի, Գ. Ջահուկյանի, Հ. Անապանի, Ա. Տեր-Ղևոնդյանի, Հ. Ամալյանի, Ա. Դոլուխանյանի կողմից կատարվածը, որն անշուշտ փորձ է այս թեմայի առումով, թեև նրանք մեծապէս հենվում են Շրումպֆի դիտարկումների վրա, որպիսով նյութի ինքնուրույն քննությունը, կարելի է ասել, դուրս է մնում բուն հարցերի շրջանակից¹⁷:

Երկլեզվյան այդ բառացանկի հնչունական համապատասխանությունների (կորեսպոնդենցիաների) մանրամասն քննությունը ունի իր հարկավորությունը հայոց լեզվի պատմական հնչունաբանության առանցքային հարցերի պարզաբանման տեսանկյունից:

¹⁶ Նույն տեղում, էջ 146: Հմմտ. *F. Macler, Mosaïque orientale, Paris, 1907, էջ 30: Նույնի, La France et l'Arménie à travers l'Art et l'Histoire // "Histoire du France, livte X, ch. 24, Paris, 1917:*

¹⁷ Տե՛ս մեր այս աշխատանքի վերջում բերվող գրականության ցանկը:

Այսպես, Հ. Աճառյանը իր «Հայոց գրերը» աշխատության մեջ, անդրադառնալով «մեսրոպյան գրերի հնչումը կամ արժեքը» բաժնին, ըստ որում հետևելով Հ. Հյուբշմանին, գտնում է, որ չորս հնար կա դրա համար՝ հայերենի այբուբենի դասավորությունը, Դիոնիսիոս Թրակացու դասագրքի թարգմանությունը, օտար լեզուներից հայերեն և հայերենից օտար լեզուներ կատարված փոխառությունների տառադարձումները: Իսկ աշխատության տողատակում գրում է հետևյալը. «Կարելի է օգտվել նաև Կարիերի հրատարակած «Un ancien glossaire latin-arménien» (Paris, 1886) տետրակից»¹⁸:

Համեմատաբար տարբեր է Հ. Ամալյանի մոտեցումը՝ կապված ցանկի բառային և հնչունական բնույթի որոշ «անկանոնությունների» մատնանշման հետ¹⁹: Ուշագրավ է այն, որ հեղինակը կարծիք է հայտնում ձեռագրի հայերենի հնարավոր բարբառի վերաբերյալ. «Մի շարք լատիներեն բառեր թարգմանված են հայերեն ոչ թե գրական, այլ բարբառային բառերով, որոնք հանդիպում են մեծ մասամբ *կը* ճյուղի բարբառներում, ինչպես՝ *լուսնկայ, լիզու, ծիծ, կոնակ, կնիկ, աղէկ*»²⁰: Ըստ այսմ՝ փաստորեն առաջին անգամն է, որ խոսք է լինում այդ բառացանկի բարբառային (խոսակցական) հիմքի մասին, այն էլ՝ կոնկրետ բարբառի առաջարկով:

Որ սույն բառացանկում հայերենը, այսպես ասած, ներկայանում է ոչ գրական (ժամանակի խոսակցական, նույնիսկ՝ բարբառային) վիճակով, որևէ կասկած չի հարուցում, սակայն այնքան էլ

¹⁸ Հ. Աճառյան, Հայոց գրերը, Ե., 1984, էջ 568, 571: Ի դեպ՝ հիշյալ «չորս հնարը» հայտնի էր նախքան Հյուբշմանի նշումը, որն ընդունում է Աճառյանը:

¹⁹ Հ. Մ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (V-XV դդ.), էջ 37-40: Բերված օրինակներն այնքան էլ վստահելի չեն բարբառի՝ *կը* ճյուղին պատկանելու համար, որովհետև նկատելի են նաև այլ ճյուղի բարբառներում:

²⁰ Նույն տեղում, էջ 39:

հեշտ չէ ցույց տալ այդ վիճակի ինչպիսին լինելը, առավել ևս՝ ո՛ր բարբառին պատկանելը, որովհետև հին գրականից միջին գրականին անցման շրջանում այդ երկուսին զուգահեռ բանավոր-տարածքային տարբերակումը, որն, ի դեպ, տեսական բարբառագիտության կարևոր խնդիր է, առ այսօր լիովին, կամ նույնիսկ ուրվագծորեն պարզված չէ: Այնպես որ հիշյալ բառացանկի լեզուն համեմատության մեջ դնել ներկայիս (բավականին ուշ շրջանի՝ մեկ հազարամյակ անց ամրագրված) բարբառների տվյալների հետ, կարող է անհավանական լինել, նույնիսկ ոչ տեղին, քանի որ բացակայում են համեմատելի հատկանիշների անցման, այսպես կոչված, միջին օղակները, ուստի կարելի է միայն խոսել բարբառային ընդհանուր գծերի մասին:

Այսուհանդերձ, հետագա ուսումնասիրողները, այս դեպքում՝ Յ. Վայտենբերգը և վերջինիս անգլերեն լույս ընծայած գիտական հոդվածի գրախոսության հեղինակ Հ. Մուրադյանը փորձել են 10-րդ (կամ ավելի վաղ՝ 9-րդ) դ. գրավոր այդ աղբյուրը քննել հայերենի նոր բարբառների առնչությամբ (ժամանակային մեծ հեռավորության մեջ) և ըստ այդմ՝ որոշել նրա պատկանելությունը այդ բարբառներից մեկին կամ մյուսին (ավելի լայն՝ բարբառային որևէ տարածաշրջանի)²¹:

Ընդ որում, որքան էլ ոչ հստակ մատնանշմամբ, ցանկը դիտարկվում է հայ բարբառների հարցերի առնչությամբ այնքանով, որքանով այն կատարվում է Ա. Ղարիբյանի հնչյունաբանական-ավանդական տեսության հիման վրա: Վայտենբերգը, իր հերթին,

²¹J.J.S. Weitenberg, *Armenian Dialects and the Latin-Armenian Glossary of Auton* // «*Medieval Armenian Culture (University of Pennsylvania Armenian Texts and Studies 6)*», Chico Ca: Scholars Press, 1983, pp. 13-26: Հ. Ֆ. Մուրադյան (գրախոս.), J. J. S. Weitenberg, նշվ. աշխ. // «*Պատմաբանասիրական հանդես*», 1985, № 3, էջ 219-226:

վերստին լույս ընծայեց այդ բնագիրը, փորձեց այն հասկացնել որևէ բարբառի՝ հրաժարվելով անգամ «գրչագրական» որևէ մեկնաբանությունից, իսկ Հ. Մուրադյանը առաջ բերեց առարկություններ՝ փորձելով ներկայացնել շտկումներ Վայտենբերգի տեսակետների վերաբերյալ, ընդ որում որքան էլ տեղին չէր, կատարեց ցանկի ավանդական խմբավորման մի նոր խմբավորում՝ թույլ տալով ակնհայտ անճշտություններ:

Ամբողջ հարցն այն է, որ թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում այդ բնագիր-ցանկը քննված է ըստ պատմական (տարածամանակյա) բարբառագիտության հիմունքների ոչ փուլ առ փուլ կիրառման, որ տվյալ դեպքում չի արդարանում. նման մոտեցումը խրախուսելի չէ, որովհետև անտեսված է ներքին վերականգնման ամբողջ «զինանոցը» (ռեպերտուարը)՝ կապված հնչյունական օրենքների (կամ կանոնների) ներքին սահմանների որոշման, իմաստային հնարավոր անցումների նշանակման հետ:

Այս հարցի անդրադառնալու ենք իր տեղում (ստորև), իսկ այստեղ հիշյալ հոդվածի և վերջինի գրախոսականի հետ կապված՝ նշենք մեկ-երկու նախնական նկատառում:

ա) Շեշտը դրված է հարցի տարածամանակության (դիախրոնիայի) վրա, սակայն դա ունի մեծ ընդմիջարկում, այնինչ բուն քննությունը պիտի լիներ ներքին վերականգնմամբ՝ համաժամանակության (սինխրոնիայի) մեջ:

բ) Առավելապես հնչյունական հասկանիշների տարբերությունը, թերևս, ավելի շուտ համեմատելի են միջին գրականի նորմայից եղած շեղումների հետ, քան որ նոր գրականի առնչությամբ բարբառների հետ է կատարվում:

գ) Այս վերջինի նկատառումով համեմատությունը կլրացներ այն ընդհանուր պատկերը, որ ենթադրելի է միջին շրջանի հայերենի համար, որովհետև բառացանկի հնչյունաբանությունը մոտ է

կիլիկյան կամ «միջերկրյա», քան մյուս տարածքային տարբերակների վիճակին:

Հիշյալ երեք կետում նկատվածը այստեղ բերում ենք ըստ այնմ, թե լեզվական-հնչյունական առանձնահատկությունների քննությունը վերաբերում է ամենից առաջ տվյալ ժամանակաշրջանի ընդհանուր լեզվական վիճակին (IX դ. վերջ – X դ. մինչև XVII դ. վերջ, որ միջին հայերենի, իբրև ինքնուրույն գրական լեզվի, մի բացառիկ շրջան է՝ միջանկյալ հին և նոր գրական լեզուների միջև, իբրև կապող օղակ և յուրօրինակ իրողություն)²²:

Այդպես նաև մյուս՝ ավելի սեղմ կամ փոքր բառացանկ-հատվածների լեզվի քննության դեպքում. որ շեշտը դրվում է այդ «մանր» հատվածների հնչյունական-արտասանական յուրահատկությունների վրա՝ ի համեմատության հին գրական նորմայի տրվյալների, ենթադրաբար՝ միջին գրական նորմայի: Դրանք գրված են եղել հետագա ժամանակներում, և ըստ այդմ՝ ինչ-որ չափով պատկերացում են ստեղծում ժամանակի գրականին զուգահեռ բանավոր-խոսակցական վիճակի վերաբերյալ:

Մեր այս աշխատանքը, շեշտենք, նվիրված է միջնադարյան երկլեզվյան ոչ ծավալուն բառացանկերի համեմատաբար ավելի մանրամասն քննությանը. դրանց մի կողմում հայերենն է, իսկ մյուս կողմում՝ լատիներենը. վերջինս գործադրվում է իբրև հայերենի այբուբենի գրադարձություն, հայերեն բնագրային այս կամ այն հատվածի թարգմանություն, հայերենին անցած լատիներեն տերմինների նշանակում և այլն:

²² Վերջին ժամանակներս փորձ է արվում բացառել հայոց լեզվի պատմության այդ միջին շրջանը, ընդ որում գրավոր աղբյուրների ակնառու տվյալների ոչ մանրամասն և ըստ ամենայնի ուսումնասիրությամբ, որպիսով անտեսվում են երևույթի ժամանակային եռանդամ բաշխման (դիստրիբուցիայի) տեսական հիմունքները:

Աշխատանքում համեմատաբար լայն դիտարկմամբ քննում ենք Օտունի բառացանկը՝ ամենից առաջ հայերենի հնչյունաբանության տեսանկյունից²³: Իսկ Հանս Շիլտերգերի (XV դ.), Ֆր. Ռիվոլայի (1621 թ.), ՄՄՁ № 3475 (1625 թ.), Աստ. Ներսեսովիչի (1695 թ.). Հ. Վիլլոտի (1714 թ.) և մյուս աշխատանքներում տեղ գտած հատվածների, ցանկերի, այլև բառարանների համապատասխան նյութերին, որոնց մի մասին սեղմ (ակնարկման) ձևով անդրադարձել ենք նախկինում, ներկա աշխատանքում ուշադրության առարկա են ավելի ամբողջական վերլուծությամբ՝ ամենից առաջ հնչյունական-տառադարձական իրողությունների մատնանշման նպատակով²⁴:

Եվ ի լրացումն ասվածի՝ աշխատանքում նոր քննության առարկա են Թ.Ամբրոսիոսի (XIV դ. II կես - XVդ. I կես), Անդրեաս Ակուլուբուսի (XVII դ.), Մ. Լա Կրոզի (XV դ. II կես - XVIII դ. I կես), ՄՄՁ № 7560 (1576 թ.) անունով հայտնի այն հատվածպատառիկները, որոնք պարունակում են հայերեն-լատիներեն (երկլեզվյան) ցանկեր, երկու լեզուների զուգադրումներ և այլն:

Դրանց հնչյունաբանական-բառագիտական ուսումնասիրությունը ևս, կարծում ենք, կարևոր է հայոց լեզվի պատմության համար, մանավանդ որ դրանք նախկինում չեն եղել լեզվական քննության առարկա: Մեր բուն նպատակը միջին շրջանի հայերենի գրական և ոչ գրական (բարբառային կամ խոսակցական) տարբերակների փոխհարաբերության առավել պարզաբանումն է, որ կարող է նպաստել հայ բարբառների տեսությանը:

²³ Տե՛ս Վ. Գ. *Համբարձումյան*, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (X-XVIII դդ.), հ. 2, էջ 41-64: *Նույնի*, Օտունի «Հայերեն-լատիներեն բառացանկը», էջ 123-136:

²⁴ Վ. Գ. *Համբարձումյան*, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (X-XVIII դդ.), հ. 2, էջ 43-47:

2. ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՕՏՈՒՆԻ ԵՐԿԼԵԶՎՅԱՆ ԲԱՌԱՑԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Բառացանկի վերծանության և նկարագրության փորձերը

Այս ձեռագիր բառացանկը, ինչպես ընդհանուր ակնարկով նկատել են նախկինում, ունի բացառիկ նշանակություն հայերենի բառապաշարի, մանավանդ հնչյունական համակարգի պատմության համար: Այն իր ընդգրկումով, նյութի բազմազանությամբ տարբերվում է մինչև այժմ քննության առնված մյուս «մանր» բնագրերից, որոնց կարելի է տեղեկանալ թեկուզև միայն Երևանի Մաշտոցի անվան Մատենադրանի շատ ձեռագրերից, որովհետև այն բավականին հին է՝ թվագրված IX դ. վերջ - X դ. սկիզբ ժամանակով:

Է. Աղայանը այս ցանկին անդրադառնում է Կարիերի ուսումնասիրության տվյալների հիման վրա, ակնարկում է, ինչպես Կարիերը, լատիներեն մի քանի բառերի հայերեն նշանակումների անճշտությունների մասին (օր.՝ homo «մարդ», թարգմանված է *անձն* և այլն), այն գնահատում է իբրև կարևոր գրավոր հուշարձան. «ինչպիսին էլ լինի այդ բառացանկը, յուր անճշտություններով հանդերձ, մի թանկագին գանձ է համեմատաբար խորը հնությունից պահված և արժանի է ավելի լուրջ ուշադրության և ուսումնասիրության, մանավանդ արտասանական որոշ հարցերի պարզա-

բանման համար»²⁵: Այդ «անճշտությունները» ցանկի պարունակած տարբերություններն են ժամանակի գրական (ստանդարտ) լեզվից:

ա) Այդ ցանկին, հայտնի է, նվիրվել են տարբեր բնույթի աշխատություններ՝ սովորական մատենագիտական նկարագրություն, ձեռագրի վերլուծություն, լեզվի ոչ ամբողջական քննություն, ընդ որում հայերենի բարբառների ընդհանուր պատմության տեսանկյունից: Բնագիրը համեմատաբար անխաթար է, թեև նկատելի են դժվար ընթեռնելի տեղեր, նույնիսկ կարծիք է եղել, որ այն գրչության առումով փորձել են դարձնել ավելի հստակ ընթեռնելի²⁶: Այդուհանդերձ, կարծում ենք, որ դեռևս մնում են բառացանկի լեզվին վերաբերող սպառնիչ լուծում չստացած հարցեր:

Բառացանկի «լեզուն», որքան կարելի է դատել տեղեկատուի (ինֆորմանտի) հաղորդման հիման վրա կատարված տառադարձությունից, մի կողմից՝ արտացոլում է ժամանակի արտասանությունը (անկախ տառադարձողի՝ հայերենի իմացության մակարդակից), մյուս կողմից՝ պարունակում է ակնհայտ տարբերություններ, որոնք հնչյունական ռեալ «շեղումներ» են:

Դրանք նկատելի է ոչ միայն բառերի միջև, այլև հին կամ միջին գրական լեզվի (գրական նորմայի) հետ համեմատության դեպքում, այլ կերպ ասած՝ այդ «շեղումները» ոչ այլ ինչ են, եթե ոչ ժամանակի բանավոր խոսքի (թերևս՝ որևէ բարբառի) լեզվական վիճակի արտահայտություն: Ենթադրում ենք, որ անհայտ լինելու պատճառով է այն դուրս մնացել միջնադարյան հայ քերականների, լեզվի հարցերով հետաքրքրվողների ուշադրությունից:

²⁵ Է. Բ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն (սկզբից մինչև մեր օրերը), Ե., 1958, էջ 105:

²⁶ Վայտենբերգը նշում է, որ դեռևս Կարիերն է նկատել ձեռագիր նախօրինակում կրկնօրինակման հետքեր (*J. J. S. Weitenberg*, նշվ. աշխ., էջ 13-14):

Նշեցինք, որ Օտունի գրադարանի սույն բառացանկի մատենագիտական նկարագրությունը արվել է համեմատաբար ուշ՝ XIX դ. կեսերին²⁷:

Չհաշված հիշյալ գրադարանի քարտարանը հեղինակողի, այլև Փարիզի ձեռագրատան ընդհանուր քարտարանը կազմողի մասնակի ձեռնարկումները՝ այս բառացանկի բուն նյութով առաջին հետքերը Օմոնն է²⁸: Նա բնագիրը համարում է X դ. գործ և ցանկի սկզբում գրում է հետևյալը (բերում ենք բնագիրը, այնուհետև՝ թարգմանությունը). «La notice qui a été donnée dans le tome I du *Catalogue général des manuscrits des départements* du manuscrit 17_A du grand séminaire d'Autun est inexacte, toute courte qu'elle est. L'auteur du catalogue n'a fait que l'emprunter à une étiquette du XVII^e siècle qui se trouve au dos du volume et sur laquelle on lit: *Opuscula et epistolæ B. Hieronymi ex dono Valterii, X sæc^o*. Ce manuscrit, copié vers la fin du IX^e siècle ou au commencement du X^e, ne contient en réalité qu'une série de *Lettres* de S. Jérôme, mais à la fin (fol. 156), s'est trouvé ajouté à la même époque un manuel de conversation arménien-latin qu'il est intéressant de reproduire» [= Տեղեկությունը, որը զետեղված է Օտունի մեծ սեմինարիայի 17_A ձեռագրում՝ *Ընդհանուր ցանկ տարածքին վերաբերող ձեռագրերի* առաջին հատորում, որքան էլ համառոտ է, ճշգրիտ չէ: Ցանկի հեղինակը պարզապես փոխառել է 17-րդ դ. մի էտիկետ, որը ներկայացված է հատորի վերջում, ուր կարելի է կարդալ. «Վալտերիուսի նվիրածից Բ. Հիերոնիմի գործ և Նամակներ. X դ.»: Այս ձեռագիրը պատճենված է 9-րդ դ. վերջին

²⁷ *Catalogue général des manuscrits des bibliothèques publiques des départements*, 1, Paris, 1849, p. 13:

²⁸ Տե՛ս *H. Omont*, Manuel de conversation arménien-latin du X^e siècle // “*Bibliothèque de l'École des Chartes, Revue d'érudition, consacrée spécialement à l'étude du Moyen Age*”, XLIII, année 1882, Paris, Librairie d'Alphonse Picard, p. 563-564:

կամ 10-րդ դ. սկզբին, և իրականում այն Ս. Ժերոմի նամակների մի շարք է, իսկ վերջում (էջ 156) ավելացված է նույն ժամանակաշրջանի հայ-լատինական գրուցարան, որը հետաքրքիր կլինի ընդօրինակելը²⁹:

Ստորև դնում ենք բառացանկի նմանահանությունը (ֆաբսիմիլե):

Օմոնը բառացանկը, ինչպես որ բնագրում է, բաժանում է չորս մասի՝ «Verba seu dictiones armeniorum» [= Բառեր կամ թե հայերեն արտահայտություններ] խորագրի տակ: Բերում ենք ցանկը՝ Օմոնի վերծանությամբ, ըստ թեմատիկ խմբերի, որոնք կան բնագրում (լատիներեն և հայերեն տառադարձված համարժեքների միջև նշանակված կետի փոխարեն դնում ենք գծիկ, իսկ երկայուն ուղղահայաց թվարկման փոխարեն տալիս ենք տողամիջյան՝ հորիզոնական ձևով):

1) Nomina dierum [= օրվա անուններ. 7 բառ], Dies dominica – Kyrache, Feria II - Ergout xapte, Feria III – Eriec xapte, Feria IIII - Khurec xapte. Feria V – Hync xapte, Feria VI - Urpat, Feria VII - Sabpat (ն. տ.)³⁰:

2) Nomina numeri [= թվերի անուններ. 20 բառ]. I – Meche, II – Ergout. III - Eriec, IIII – Khuert, V - Hinc, VI - Viit, VII - Hioct, VIII - Ut, VIIII – In, X - Taz, XX - Xan, XXX - Erchun, XXXX - Karraschun, L - Ischun, LX –Vatschun, LXX - Hioctanatschun, LXXX – Utanatschun, LXXXX – Ininta, C – Hariur, M – Hazar (ն. տ.)³¹:

3) Nomina ceterarum rerum [= այլևայլ իրերի անուններ. 51 բառ]. Panis – Haz, Caro – Misc, Vinum - Chini, Caseus – Paner, Ovum – Chu, Piscis - Chugn, Sal – Ahl, Aqua – Chure, Celum – Erginc, Sol –

²⁹ Տե՛ս *H. Omont*, նշվ. աշխ., էջ 563:

³⁰ Նշվում է ձեռ. տարբ.՝ Hync xapte կազմության xapte-ն՝ xpate:

³¹ Նշվում է ձեռ. տարբ.՝ Hariur-ի համար՝ Haruir:

Arechac, Luna – Lucenga, Stellae – Astil, Terra – Kcedinc, Homo – Anzen, Capillus – Mazen, Oculus – Hahc, Supercilium – Hunc, Cilium – Ardevanunc, Nasus – Chit, Os – Peran, Labra – Scirtun, Dens – Atmunc, Gengiva – Lind, Lingua – Lizu, Barba – Muruc, Facies – Eriesc, Auris – Aganch, Collum – Vise, Gula – Puelc, Guttur – Kcerchac, Pectus – Scirt, Mamilla – Cize, Venter – Puerhe, Humerus – Tigunc, Brachium – Striuch, Manus – Hab, Digitus – Matun, Pugnus – Prunhc, Spina – Hualn, Dorsum – Cuelc, Latus – Scirt, Renes – Handam, ... (?), Renes – Gernac, Coxa – Andam, Genu – Scunch, Crus – Vluec, Pes – Vaden, Cabilia – Cuech, Veretrum – Cliu, Testiculi – Scuc, Mulier – Kenic (ն. տ., էջ 564):

4) Nomina sanctarum rerum [= սրբազան իրերի անուններ. 12 բառ]. Ecclesia – Vanc, Deus – Ter, Altare – Patarac, Crux – Chahc, Angelus – Arrachil tevavoet, Sanctus – Supr, Bonus – Aihich, Episcopus – Episcopus, Monachus – Apiigulalts, Presbiter – Eresc, Levita – Aottroets, Xpianus – Xpuener (ն. տ.):

Նման իմաստային (թեմատիկ) խմբերից երևում է, որ այն ունեցել է գործնական` օգտաբեր (ուտիլիտար) նշանակություն, թերևս կազմվել է առօրյա գործածության համար (ինչ-որ մեկի կամ ոմանց պատվերով):

բ) Մի քանի տարի անց բառացանկին անդրադառնում է ֆրանսիացի հայագետ Օ. Կարիերը (1838-1902): Նա որոշակի ներդրում ունի բառացանկի նոր, բավականին մանրամասն հրատարակության պատրաստման, բանասիրական-բնագրագիտական մեկնաբանությունների գործում³²:

³² Un ancien Glossaire latin-arménien, publié et annoté par A. Carrière, P., Imprimerie nationale, 1886: Կարիերի այս աշխատանքին առանձին գրախոսականով անդրադարձել է Պ. դը Լագարդը (տե՛ս *P. de Lagarde* (գրախոս.) // *Göttingische gelehrte Anzeigen*, 8, 1887, էջ 292-294):

Ամենից առաջ նկատելի է այն, որ բառացանկի լեզվի լատինագիր միավորները նշանակվում են հին գրական լեզվի (գրաբարի) ձևերով, թեև ըստ անհրաժեշտության դրանց տրվում են ծանոթագրություններ, որոնք հայերենի հարցում, բնականաբար, գտնվում են XIX դ. եվրոպական բանասիրության հնարավոր գիտելիքների սահմաններում. որ և այսօր մասամբ առարկելի են, ուստի վերանայելի³³: Միաժամանակ հիշեցվում է, որ բառացանկը գրանցված է ուշ միջնադարյան Եվրոպայում «կարոլինգյան փոքրատառ» տառատեսակով («գրչությամբ»), որ երբեմն հարկ է լինում ստույգ «վերականգնումով որոշելու լատիներեն գրերով տառադարձված հայերեն բառերի բնույթը»³⁴ :

Կարիերի աշխատանքը բաղկացած է երեք բաժնից՝ ներածական, ձեռագրի մասնակի վերլուծություն և բառացանկ, իսկ վերջում բառացանկի որոշ բառերի վերաբերյալ կատարվում են հնչյունական դիտարկումներ³⁵:

Այնուհետև, 90-բառանոց ցանկը բերվում է նույնպիսի բաժանումով, ինչ Օմոնի մոտ է (ըստ բառացանկի ձեռագրի), չորս մասի ձևով՝ «Verba seu dictiones armeniorum» (= Բառեր կամ թե հայերեն արտահայտություններ) խորագրի տակ: Ընդ որում կատարվում է մի քանի նորամուծություն. նախ՝ դրվում է արաբական համարակալում, երկրորդ՝ լատիներեն տառադարձված հայերեն համարժեքների համար, ինչպես վերը նկատեցինք, նշվում են հին գրական հայերեն (գրաբար) ձևեր՝ անտեսելով բնագրի տառադարձման յուրօրինակությունը (ժամանակը), երրորդ՝ որոշ ձևերի համար բերվում են կրկնակի ձևեր (իբրև լրացումներ), ի վերջո՝ անհրա-

³³ Ավելի մանրամասն տե՛ս ստորև՝ հետագա շարադրանքում:

³⁴ A. Carrière, նշվ. աշխ., էջ 7-8:

³⁵ Նույն տեղում, էջ 17-19:

Ժեշտ դեպքերում ներկայացվում են տողատակի ծանոթագրություններ:

Բերենք այդ խմբերը:

1) *Nomina dierum* (= օրվա անուններ, 7 բառ), 1. *Dies dominica - Kyrache* – կիրակե, կիրակե, 2. *Feria II - Ergout xapte* – երկու(ք)շաբթի, 3. *Feria III - Eriec xapte* – երեքշաբթի, 4. *Feria IIII - Khurec xapte* – չորքշաբթի, 5. *Feria V - Hync xapte* – հինգշաբթի, 6. *Feria VI - Uripat* – ուրբաթ, 7. *Feria VII - Sabpat* – շաբաթ:

2) *Nomina numeri* (= թվերի անուններ, 20 բառ). 8. I – *Meche* – մեկ (մեկը ?), 9. II – *Ergout* – երկուք. 10. III – *Eriec* – երեք, 11. IIII – *Khuert* – չորք, 12. V – *Hinc* – հինգ, 13. VI – *Viit* – վեց, 14. VII – *Hioct* – եօթ, եօթը, 15. VIII – *Ut* – ութ, 16. VIII – *In* – ինը, 17. X – *Taz* – տասը, 18. XX – *Xan* – քսան, 19. XXX – *Erchun* – երեսուն, 20. XXXX – *Karraschun* – քառասուն, 21. L – *Ischun* – յիսուն, 22. LX – *Vatschun* – վաթսուն, 23. LXX – *Hioctanatschun* – եօթանասուն, 24. LXXX – *Utanatschun* – ութանասուն, 25. LXXXX – *Ininta* – ... [բացթողում – Վ. Հ.], 26. C – *Haruir* – հարուր³⁶, 27. M – *Hazar* – հազար (ն. տ., էջ 12-13):

3) *Nomina ceterarum rerum* (= այլևայլ իրերի անուններ, 51 բառ). 28. *Panis - Haz* – հաց, 29. *Caro - Misc* – միսք, pl. de [= հոգն. թ.] միս, 30. *Vinum - Chini* – գինի, 31. *Caseus - Paner* – պանիր, 32. *Ovum - Chu* – ձու, 33. *Piscis - Chugn* – ձուկն, 34. *Sal - Ahl* – աղ, 35. *Aqua - Chure* – ջուր (ջուրը ?), 36. *Celum - Erginc* – երկինք, 37. *Sol - Arechac* – արեգակ, 38. *Luna - Lucenga* – լուսնկայ, լուսինկայ, 39. *Stellae - Astil* – աստղ, 40. *Terra - Kcedinc* – գետինք, 41. *Homo - Anzen* – անձն, 42. *Capillus - Mazen* – մազն (*ú déterm.* [= որոշ.]), 43. *Oculus - Hahc* – աչք, 44. *Supercilium - Hunc* – յունք, յոնք, 45. *Cilium*

³⁶ Կարիերը նախընտրում է Օմնի՝ տողատակում նշած լատինագիր *Haruir* ձևը, թեև հայերեն տառադարձում է *հարուր* ձևով:

- *Ardevanunc* - արտևանունք, 46. *Nasus* - *Chit* - քիթ, 47. *Os* - *Peran* - բերան, 48. *Labra* - *Scirtun* - շրթունք, 49. *Dens* - *Atmunc* - աստամունք, 50. *Gengiva*³⁷ - *Lind* - լինս, 51. *Lingua* - *Lizu* - լիզու, 52. *Barba* - *Muruc* - մուրուք, 53. *Facies* - *Eriesc* - երեսք, 54. *Auris* - *Aganch* - ականջ, 55. *Collum* - *Vise* - վիզ (վիզը ?), 56. *Gula* - *Puele* - փողք, 57. *Guttur* - *Kcerchac* - խոչակ, 58. *Pectus* - *Scirt* - սիրտ, 59. *Mamilla* - *Cize* - ծիծ (ծիծը ?), 60. *Venter* - *Puerhe* - փոք (փոքը ?), 61. *Humerus* - *Tigunc* - թիկունք, 62. *Brachium* - *Striuch* - ձեռք, 63. *Manus* - *Hab* - ափ, 64. *Digitus* - *Matun* - մատունք, 65. *Pugnis* - *Prunhc* - բռունք, 66. *Spina* - *Hualn* - ողն, 67. *Dorsum* - *Cuelc* - կողք, 68. *Latus* - *Scirt* - սիրտ, 69. *Renes* - *Handam* - անդամ, 69a. ... [-*gonc* - կոնք] (?)³⁸, 70. *Renes* - *Gernac* - կոնակ, 71. *Coxa* - *Andam* - անդամ, 72. *Genu* - *Scunch* - ծունկ, 73. *Crus* - *Ulucc*³⁹ - ոլք, ոլոք, 74. *Pes* - *Uader*⁴⁰ - ոտն, 75. *Cabilia* - *Cuech* - կոճ, 76. *Veretrum* - *Cliu* - կ... [= m. vir.] (համառոտումը մերն է՝ Վ. Հ.), 77. *Testiculi* - *Scuc* - ձուք, 78. *Mulier* - *Kenic* - կնիկ (ն. ս., էջ 13-16):

4) *Nomina sanctarum rerum* (= սրբազան իրերի անուններ, 12 բառ). 79. *Ecclesia* - *Vanc* - վանք, 80. *Deus* - *Ter* - Տէր, 81. *Altare* - *Patarac* - պատարագ, 82. *Crux* - *Chahc* - խաչ, 83. *Angelus* - *Arrachil tevavoet* - առաքեալ թևաւոր, 84. *Sanctus* - *Supr* - սուրբ, 85. *Bonus* - *Aihich* - աղէկ, 86. *Episcopus* - *Episcopus* - եպիսկոպոս, 87. *Mona-*

³⁷ Դասական լատիներենում այս բառը գրվում էր *i*-ով՝ *gingiva* (տե՛ս *И. X. Дворецкий. Латинско-русский словарь, М., 1976, 456*):

³⁸ Բառացանկում (և՛ Օմոնի, և՛ Կարիերի), այս մի տողը բաց է մնացել, որ մենք վերականգնում ենք որոշ պայմանականությամբ՝ ըստ ձեռագրի մեր ունեցած ֆաքսիմիլի:

³⁹ Միջնադարյան լատ. *v*-ով, որ դնում է Օմոնը, իսկ Կարիերը՝ դասական *u*-ով:

⁴⁰ Դասական լատ. *u*, Օմոնը վերծանում է *v*-ով, Կարիերը հետևում է բնագրին՝ դնելով *u*:

chus⁴¹ – *Apiigulalts* – արեղայացու (?), 88. Presbiter – *Eresc* – երեց, 89. Levita – *Aottrocts* – ... [բացթողում], 90. Xpianus – *Xpucner* – Քրիստոնէ:

զ) Թե՛ Օմոնի և թե՛ մանավանդ Կարիերի բերած ցանկերի մեջ կան հարցական մնացած մասեր՝ բառաշարքի այս կամ այն բառի, այլև ամբողջ շարքի բացթողում, երբեմն տարբեր հարցում-բառերի նույն բառով արտահայտում (հմմտ, *սիրտ*, *անդամ* և այլն), նաև ոչ ճիշտ ընթերցված բառի հայերեն նշանակում (հմմտ. *քրիստոնէ* և այլն):

Նման տարբերությունների («շեղումների») հարցը գրեթե միշտ եղել է հայերենագիտության ուշադրության սահմաններում: Ավելի ուշ երևան եկած քննության փորձերը, կարելի է ասել, ավելի շուտ մասնակի լեզվագիտական են՝ կապված հայերենի բառապաշարի, առանձնապես հնչյունների արտաբերության պատմության հետ:

Այսպես, Մեյեի և ավելի ուշ՝ Վայտենբերգի և Հ. Մուրադյանի աշխատանքներից բացի, մյուս փորձերը ընդհանուր բնույթի են՝ երևան եկած բանասիրական ուղղության մեջ՝ բառարանագրություն, գրականություն, լեզվաբանության պատմություն և այլն⁴²:

դ) Այս բառացանկի որոշ բառերի անդրադարձել է Ա. Մեյեն: Նա ժամանակին գալով Էջմիածին, ձեռագրերում ուսումնասիրում է Աստվածաշնչի (հատկապես Ավետարանների) և ուրիշ հին ձեռագրերի (Ագաթանգեղոս, Եզնիկ, Եղիշե և այլն) գրչագրերը և հանգում ուշագրավ մտքի՝ կապված հայերենի հնչույթային, մա-

⁴¹ Բնագրում, ինչպես նաև Օմոնի վերձանման մեջ *monacus* է, իսկ Կարիերը բերում է դասական լատ. *monachus* ձևով (տե՛ս *II. X. Дворецкий*. նշվ. աշխ., էջ 646):

⁴² Նման աշխատանքների անդրադառնում ենք ստորև՝ հետագա շարադրանքում:

սամբ նաև քերականական տարբերությունների հետ, որոնք, բնականաբար, ժամանակին նորություն են եղել լեզվի ընդհանուր պատմության, առավել ևս՝ նրա պատմական-համեմատական ուսումնասիրության տեսանկյունից:

Այսպես, Աստվածաշնչի մի գրչագիր-ձեռագրում (№ 102) Մեյեն, ի թիվս այլ երկակի տարբերությունների քննարկման, *h>hu* շփոթի մասին գրում է հետևյալը. «Ճիշտ է, որ *uhrteugtu* կանոնավոր տիպն անգամ որոշ ձեռագրերում փոխարինվել է *uhrtegtu*-ով. և հատկապես Էջմիածնի 102 ձեռագրի, որը 971-981 թթ. միևնույն գրչի կողմից արտագրված զանազան բնագրերի ժողովածու է, այդ մասին բազմաթիվ օրինակներ է տալիս, ինչպես կարելի էր տեսնել ձեռագրի հատվածների հիանալի հրատարակությունից, որ լույս է ընծայել պր. Գալուստ Տեր-Մկրտչյանը («Արարատ», 1902, էջ 368 և հջ., 1903, էջ 937 և հջ.): Բայց այս ձեռագրի գրիչն ուժեղ կերպով կրել է բարբառի ազդեցությունը. այսպես, օրինակ՝ նա անկարող է տարբերակել *h*-ով և *hu*-ով ներկայացված հնչույթները և շարունակ միմյանց հետ շփոթում է այդ տառանշանները»⁴³ :

Նկատենք, որ մեզ հետաքրքրող նյութի ժամանակի համար նման դիտարկումը միակը չէ, ոչ էլ հետագայում են պակասում դրանց վերաբերյալ եղած քննարկումները: Նման երևույթների մանրամասն ուսումնասիրությունը արդի հայերենագիտության խնդիրներից է, այն պետք է շարունակել ամենայն ուշադրությամբ:

Եվ ըստ այսմ՝ կարելի է նկատել, որ հայերեն ձեռագրերում, ինչպես նաև քննական բնագրերում ամեն կարգի գրչագրական կամ ուղղակիորեն տեղ գտած ոչ կանոնական ձևերի օրինակները կողմնակիորեն օգնում են նաև հիշյալ բառացանկին ավելի մանրամասն անդրադառնալուն: Ավելի պարզ է դառնում այն ենթա-

⁴³ Ա. Մեյե, Հայագիտական հետազոտություններ, Ե., 1978, էջ 462:

դրությունը, թե Օտունի երկլեզվյան բառացանկը կազմվել է մեկ (կամ մի քանի) առօրյա օգտագործողի սովորական (առաջին անհրաժեշտության) բառերով շփվելու համար:

ե) Հետագայում նույնպես այս կամ այն չափով խոսվում է այդ բառացանկի մասին. վերջինս փոքրիշատե քննության առարկա է եղել նաև բանասիրական (մատենագիտական) և բառարանագրական որոշ աշխատություններում: Դրանք, ի տարբերություն վերը քննարկված երկուսի (իմա՝ Կարիերի, նաև Մեյեի), բավականին ակնարկային են, այլև թողնում են կողմնակի անդրադարձի տպավորություն՝ հարակից ուսումնասիրողների հետապնդած բուն նպատակին:

Այդ աշխատանքները մի քանի խումբ են.

1) ընդհանուր բանասիրական աշխատանքներ, որոնցում ակնարկ կա մեր ուշադրության առարկա բառացանկի վերաբերյալ, ընդ որում այդ ակնարկը չի պարունակում լեզվական որևէ դիտարկում⁴⁴,

2) հայ մատենագիտության և գրականության պատմությանը վերաբերող աշխատություններ, որոնց հեղինակները խոսում են հիշյալ բառացանկի մասին՝ իբրև մատենագրական հուշարձանի, երևան եկած, այսպես կոչված, գրաբարից միջին գրական հայերենին անցման ժամանակամիջոցում⁴⁵,

⁴⁴ Հմմտ. Կ. Կոստանեանց. Հայագիտությունն Արևմտեան Եւրոպայում (համառօտ տեսութիւն եւ գրացուցակ), Թիֆլիս, 1910, էջ ԽԶ: Գ. Ա. Շրումպֆ. Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ - ԺԹ դար), էջ 7-9: Հ. Աճառյան. Հայոց գրերը, էջ 571:

⁴⁵ Հ. Անսայան, Հայկական մատենագիտություն, հ. Բ, Ե., 1976, էջ 1211-1212: Ա. Տեր-Ղևոնդյան, (գրախոս.), «La livre Arménien à travers les ages» (Marseille, 1985) // «Պատմա-բանասիրական հանդես», 1987, 1, էջ 219-221 և այլն:

3) հայ լեզվաբանական մտքի, ի մասնավորի միջնադարի բառարանագրության պատմությանն առնչվող աշխատանքներ, որոնցում բավականին հպանցիկ խոսվում է նաև սույն բառացանկի մասին, լեզվական նյութի մի մասի հիման վրա փորձ է արվում կապ տեսնել նրա բառապաշարի և հայ որևէ բարբառի միջև. այս կետում, ըստ այդմ, համեմատաբար կոնկրետ է Հ. Ամալյանի դիտարկումը⁴⁶ :

Հիշյալ, այլև ավելի ուշ երևան եկած գրեթե բոլոր աշխատանքներում, անկախ քննարկման կամ ակնարկի տարբեր չափերից, բառացանկն արժանանում է դրվատանքի՝ ամենից առաջ իր հնության նկատառումով: Գ. Գասպարյանը, օրինակ, իրավացիորեն գրում է. «Սակայն ինչպիսին էլ լինի այդ բառացանկը, յուր անճշտություններով հանդերձ, մի թանկագին գանձ է՝ խոր հնությունից պահպանված և արժանի է լուրջ ուշադրության և ուսումնասիրության, մանավանդ արտասանական որոշ հարցերի տեսակետից»⁴⁷:

1980-ական թթ. Օտունի բառացանկը քննության առարկա է դառնում հայ բարբառների տեսական հարցերի առնչությամբ⁴⁸: Այս

⁴⁶ Գ. Բ. Ջահուկյան. Լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1960, էջ 116–117, Է. Բ. Աղայան. նշվ. աշխ., էջ 106: Գ. Կ. Գասպարյան. Հայ բառարանագրության պատմություն, Ե., 1967, էջ 46–47: Հ. Մ. Ամալյան. Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V–XV դդ.), էջ 37–40:

⁴⁷ Գ. Կ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 46: Հմմտ. վերը՝ Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 105: Հմմտ. Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 105:

⁴⁸ J. J. S. Weitenberg. Armenian Dialects and the Latin-Armenian Glossary of Autun.– “*Medieval Armenian Culture (University of Pennsylvania Armenian Texts and Studies 6)*”, Chico, CA: Scholars Press, 1983, pp. 13–28: Հ. Դ. Մուրադյան. (գրախոս.), J. J. S. Weitenberg. Armenian Dialects and the Latin-Armenian Glossary of Autun. Տպագրված Medieval Armenian Culture (University of Pennsylvania Armenian Texts and Studies 6), Chico, CA:

դեպքում նկատում ենք, որ հնարավոր հարցադրումը, այն է՝ հին (X դ.) հնչյունական երևույթները համեմատել նոր բարբառների տվյալների հետ, որքան էլ ինքնօրինակ, կարող է մտնել փակուղի թեկուզ այն պատճառով, որ ըստ այդմ համեմատության եզրերի միջակա օղակները ոչ մի կերպ չեն բացահայտվում և սահմանվում:

Այսպես, Յ. Վայտենբերգը փորձում է «բառացանկի լեզուն կապել Հայաստանի որևէ բարբառային տարածքի հետ՝ հաշվի առնելով, անշուշտ, հազար տարվա բացը բառարանի և ժամանակակից հայ բարբառների վկայության փաստի միջև»⁴⁹ :

Մա տեսականորեն գնահատելի նախադրյալ է, սակայն, արդյո՞ք հնարավոր է այն լիովին իրականացնել, այսինքն՝ ըստ այդմ քննարկել բառացանկի թե՛ հնչույթային և թե՛ բառային երևույթների պատմությունը: Ի դեպ՝ Վայտենբերգը բառային քննություն չի կատարում, մանավանդ ծագումնային և բառակազմական բաղադրիչների բնույթի առումով. հմնտ . լինդ (փխ. լինդր / լինդր), ութանասուն (փխ. ութսուն), ինը (փխ. ինն) և այլն: Նա բառերին ուշադրություն է դարձնում ներլեզվական (գրական կամ խոսակցական) տեսանկյունից, որպիսի փորձ մինչ այդ կատարել էր Օ. Կարիերը:

Նշենք, որ Մեյեի դիտարկումը Կարստի քերականության մեջ է և է, այլն n ձայնավորների տարբեր արտասանության վերաբերյալ, համեմատությունը Օտունի բառացանկի տվյալների հետ արդեն կար, որն այնքան հնարավորություն կրնձեռեր հայ բարբառների մեջ դրանց արտացոլումների հիման վրա իրական համեմատություն անցկացնելուն և ճիշտ եզրակացության հանգեղուն, որ

Scholars Press, էջ 13–28 // «Պատմա-բանասիրական հանդես», 1985, 3, էջ 219–226:

⁴⁹ J. J. S. Weitenberg. նշվ. աշխ., էջ 14–15:

փորձում է անել Յ. Վայտենբերգը, իսկ հետագայում՝ նաև Հ. Մուրադյանը:

Ավելի կոնկրետ կարելի է նշել հետևյալը:

ա) Չայնավորին հաջորդող *յ*-ի անկում (հմմտ. *լուսնկա*):

բ) Միջձայնավորային դիրքում *ա* -ի սղում (հմմտ. *էրսուն, քառսուն* և այլն):

գ) Շեշտված վանկում *ե, ո* ձայնավորների վերածում երկբարբառի. հմմտ. *երիեկ* [eriec], *երիեսկ* [eriesc], *կուելկ* [cuelc] և այլն (հայերեն ձևերն այստեղ ըստ մեր տառադարձման): Այս կետի հետ կապված նշվում է հետևյալը. «Այստեղ ուրվագծվող իրավիճակը հայտնաբերված է կիլիկյան հայերենում: Մա իհարկե չի նշանակում, թե բառացանկի բարբառը ճշգրիտ նախորդն է գրական կիլիկյան հայերենի: Ժամանակակից բարբառների երկբարբառացման տարածումը պետք է հաշվի առնել մինչև այս գուգահեռի համար հավաստի փաստարկ գտնելը»⁵⁰ :

դ) Բերված աղյուսակում համեմատության եզրեր են դիտված մի կողմից՝ դասական հայերենի (գրաբարի), իսկ մյուս կողմից՝ Սվազի, Երևանի, Տրապիզոնի, Սասունի, Մալաթիայի, Ագուլիսի, Վանի և Ղարաբաղ - Լոռիի (բարբառների) առաջնալեզվային պայթական բաղաձայնների երկու՝ բառասկզբի և միջձայնավորային դիրքում ի հայտ գալու հիմունքով որոշելու բառացանկի բարբառային վիճակը, թեև տեսականորեն ընդունվում է, որ դրանցից ոչ մեկի հետ չի կարող այն մերձավոր գծեր ունենալ, որովհետև ժամանակային հեռավորությունը բավական մեծ է, միջանկյալ օղակների անհայտությունը խանգարում է նման եզրակացությա-նը⁵¹: Այս դեպքում, թերևս, հարկ կար դիմելու համեմատաբանու-

⁵⁰ Նույն տեղում , էջ 16–17:

⁵¹ Նույն տեղում, էջ 19–20: Հմմտ. Հ. Դ. Մուրադյան. նշվ. աշխ., էջ 221–222:

թյան մեջ լայն տարածում գտած ներքին վերականգնման մեթոդի օգնությամբ, որն էլ անտեսված է⁵²:

ե) Բառացանկի միավորների բարբառային պատկանելության որոշման համար տարբերակիչ հատկանիշ է ընտրված միջին բարձրացման *t* և *n* ձայնավորների անկամար բառերի առկայությունը, որն այնքան էլ հուսալի չէ, մանավանդ եթե այն սահմանված ենք գտնում ժամանակակից բարբառների միայն մի մասի համար, ընդ որում՝ այդ դեպքում անգամ այն ցանկում միակերպ չի դրսևորվում. բառացանկում կան նաև այլ կարգի տարբերություններ, որոնք հնչյունաբանության համար ունեն ոչ պակաս կարևորություն, քան որ բերվում են:

Վայտենբերգը հանգում է հետևյալ ընդհանուր եզրակացությանը. «Օտունի բառարանում ներկայացված բարբառի ծագման վայրի և տիպի մասին նախնական եզրակացությունը առաջին մոտեցումն է, որ արվում է այս հետաքրքիր փաստաթղթի միայն մի քանի յուրահատկությունների հիման վրա»⁵³: Նկատենք, որ այս մասին նշում է նաև Հ. Մուրադյանը՝ հետևյալ ձևակերպմամբ. «Հայ տեղեկատու անձը կարող էր եկած լինել Ջեյթուն - Մալաթիա - Սասուն - Վանա լիճ գծին մոտիկ որևէ վայրից: Վայտենբերգը իր այս եզրակացությունը համարում է նախնական և լեզվական այս սկզբնաղբյուրը արժանի է համարում ավելի մանրամասն քննության»⁵⁴:

Հարկ ենք համարում շեշտել, որ Վայտենբերգը ձեռնպահ է մնում հնչյունական անցումների մի այնպիսի հաջորդականություն

⁵² Մենք ևս չենք դիմում նման սկզբունքի գործագրմանը, քանի որ չենք հետապնդում բառացանկի հնչյունաբանության հիման վրա որևէ բարբառի պատկանելու հարցի լուծում:

⁵³ J. J. S. Weitenberg. նշվ. աշխ., էջ 21:

⁵⁴ Հ. Դ. Մուրադյան. նշվ. աշխ., էջ 223:

հաստատելուց կամ մատնանշելուց, որ հնարավոր լիներ այս կամ այն չափով միջակա օղակներ առանձնացնել այդ անցումների մեջ: Այսպես, հնդեվրոպական լեզուների մեջ *p > f > h > ø (գրո) անցման օղակներ են նշվում, որոնցից այս կամ այն աստիճանին համապատասխանում է ցեղակից լեզուներից մեկնումեկը կամ մի քանիսը. ըստ այդմ՝ հայերենի դեպքում, օրինակ, ունենք հե. *p > հայ. *h* [z, գրո (ø)]. հմմտ. հե. *pes > *hētō-p*, հե. *pos > *no(ū)-ŋ*, հե. *pater > *hայր*, հե. *oipah- > (*h*)*nijhi* և այլն:

Ուշագրավ է Հ. Մուրադյանի հետևյալ գնահատությունը. «...եթե նկատի չունենանք վիմական արձանագրությունները, բառացանկը և Մաշտոցի անվան Մատենադարանի 887 թ. գրչագիր ավետարանը հայերենի ամենահին գրավոր աղբյուրներն են, թեև հնարավոր է նաև, որ բառացանկը լինի ավելի հին»⁵⁵: Այս դեպքում էլ անվանի բարբառագետը անում է մի քանի հարցադրումներ, որոնց շուրջ բերում է իր առարկությունները, ըստ այդմ հայտնում իր կարծիքը: Վերջինս, անշուշտ, պետք է ըստ ամենայնի նկատի ունենալ սույն բառացանկի հնչյունաբանության և բարբառային հիմքի դեռևս չպարզաբանված խնդրի լուծման համար: Ի դեպ՝ այնքան էլ կարևոր չէ այդ ժամանակի համար բարբառային որևէ տարածք առանձնացնելը, առավել կարևոր է գրական նորմայի համեմատությամբ բարբառային իրողությունների հաստատումը՝ որպես լեզվի պատմության փաստ, որ կարող է այլ բնույթի քննության առարկա լինել:

Այնուհետև, ելնելով հայ. *l>ŋ* (*l*-ի վերահնչույթավորումը *ŋ*-ի) անցումից՝ Մուրադյանը գտնում է, որ «բառացանկի լեզուն, որը հայերենի *ŋ*-ի դիմաց հետևողականորեն հանդես է բերում *l*, չի կարող լինել IX - X դդ. ծնունդ, այն առնվազն մեկ դարով ավելի հին

⁵⁵ Նույն տեղում, էջ 219:

է, քան կարծվում է»⁵⁶: Սա մի նոր վարկած է, որ մատնանշվում է խնդրի վերջնական լուծման ճանապարհին:

Իսկ իբրև ամփոփում՝ Հ. Մուրադյանը գրում է հետևյալը. «Մակայն անկախ այս բոլորից, լատին - հայերեն բառացանկի լեզվի վերաբերյալ Վայտենբերգի արած դիտարկումները, այդ սկզբնաղբյուրի և հայ բարբառների լեզվական նյութի շուրջ արած դատողություններն ու եզրակացություններն ինքնին հետաքրքիր և ուսանելի են, իսկ բառացանկի լեզվի բարբառային պատկանելության մասին նրա առաջ քաշած կարծիքը՝ գիտական վարկածի կառուցման մի գեղեցիկ փորձ է»⁵⁷:

Իր գրախոսականին կից Հ. Մուրադյանը դնում է Օմոնի և Կարիերի կազմած ցանկը՝ մեկ այլ խմբավորմամբ, որում նկատելի են ոչ միայն բուն ցանկի խմբերի մեջ մտնող միավորների փոփոխություններ, այլև մի շարք միավորների տառադարձումների հայերեն նշանակման անճշտություններ, նույնիսկ սխալներ, վրիպումներ, որոնք գալիս են ոչ միայն Վայտենբերգի աշխատությունից, այլև ձեռագրի պատճենի՝ իրենց իսկ ոչ ճիշտ ընթերցումից:

Ավելի կոնկրետ հարկ ենք համարում նշելու հետևյալը:

1) Հ. Մուրադյանը գրախոսականի վերջում դնում է բառացանկը ավելի մանր խմբավորմամբ (նոր անվանումներով). ա) «մարմնի մասեր» (30 բառ), բ) «թվային արժեքներ» (18 բառ), գ) «շաբաթվա օրեր» (3 բառ), դ) «բնության երևույթներ» (6 բառ), ե) «անունը» (7 բառ), զ) «անձինք» (4 բառ) և է) «կրոնական» (4 բառ). ընդամենը՝ 72 բառ, այսինքն՝ եղածից դուրս է մնում 18 բառ, որը հետաքրքիր է, եթե տարօրինակ չէ:

⁵⁶ Նույն տեղում, էջ 223:

⁵⁷ Նույն տեղում, էջ 225:

2) Այս նոր ցանկում մի քանիսը բերված են ոչ այնքան ճիշտ ընթերցմամբ. հմմտ. *ատամունք* [atamunc]⁵⁸, փխ. *ատունկ* [atmunc], *շունչ* [scunch], փխ. *ծունկ*, *արունկն* [armunc], փխ. *արունկ*, *կոչ* «ձայն, կանչ» [cuech], փխ. *կոճ* «(նոքի) կոճ» (?) և այլն. վերջին բառը, օրինակ, հանված է «մարմնի մասերի անվանումներ» խմբից և դրված է հեղինակի՝ «կրոնական» խմբի մեջ՝ առանց ուշադրություն դարձնելու այդ խմբի անվանումների հերթականությանը:

3) Քիչ չեն այն դեպքերը, երբ տառադարձված հայերենի ստույգ նշանակման փոխարեն բերվում են ոչ ճիշտ ձևեր. հմմտ. *ափ* (hab), փխ. *հաբ* «(ձեռքի) ափ», *մազ* (mazen), փխ. *մազրն*, *մօրուք* (muruc), փխ. *մուրուկ* և այլն:

4) Կան ոչ ճիշտ ընթերցման հետևանքով վրիպումներ. *մատն* (madun), փխ. *մատուն* (matun), *միս* (mise), փխ. *միսկ* (misc), *փոք* (puerha) (?), փխ. *պուերհը* (puerhe) և այլն. վերջին օրինակը տրվում է հարցականով, որը տեղին չէ:

5) Նորացված ցանկում, նշեցինք, դուրս է մնում շուրջ երկու տասնյակ (ստույգ՝ 18) բառ, որ նույնպես պարունակում են հնչյունական կարևոր իրողություններ՝ հատկապես հայերենի պատմական հնչյունաբանության համար:

Վերջապես, ամփոփելով նախկինում կատարվածի մասին մեր վերլուծությունը, կարևոր ենք համարում նշել հետևյալը:

ա) Մինչ այժմ եղած դիտարկումներում հեղինակները (Կարիեր, Վայտենբերգ, Մուրադյան, մասամբ՝ Մեյե) լատիներենին զուգահեռ հայերեն (տառադարձված) ձևերը վերականգնում են ոչ թե ըստ եղածի (ինչպիսին որ բնագրում է), այլ, այսպես կոչված, հին կամ ավանդական (գրաբարյան) ձևով, որը «փակում» է դրանց

⁵⁸ Միայլը գալիս է Կարիերից. տե՛ս *A. Carrière*, նշվ. աշխ., էջ 14:

հիման վրա բառացանկի լեզվի բարբառային հիմքը գտնելու ճանապարհը⁵⁹: Մենք հակված ենք կարծելու, որ բնագրի նման միջամտությունը սկզբից նեթ եղել է ոչ տեղին:

բ) Լատինագիր հայերեն ձևերը հայատառ դարձնելիս խախտված են տառադարձման (գրադարձման) առանձին դեպքեր, այսինքն՝ ոչ միշտ է լատիներեն տվյալ գրանշանը հայերեն արտահայտվում նույն նշանով, և հակառակը :

գ) Բառացանկի որոշ բառեր կա՛մ ամեննին չեն վերծանվել, կա՛մ ոչ ճիշտ են վերծանված: Ունենք նման մի քանի օրինակներ, որոնց այստեղ չենք անդրադառնում, որովհետև այն պահանջում է գրչագրական-տառադարձական ուրույն աշխատանք, դրանց «ընթերցմանը» վերաբերող ապացուցողական լայն քննարկում: Բայց անվարան կարելի է հավաստել, որ Օտունի «Հայերեն - լատիներեն բառացանկը» շարունակում է մնալ հայերենի պատմական հնչյունաբանության, հատկապես բարբառագիտության կնճռոտ հարցերի լուծման ճանապարհին ոչ ըստ ամենայնի պարզաբանված գրավոր հուշարձան:

Հետ այսու մենք կատարելու ենք բառացանկի հայերեն բառային միավորների հնչյունաբանության, բառապաշարի քննություն, այլև որոշ դեպքերում դրանց հետ հայերենի նոր բարբառներում հնարավոր գուգահեռների անցկացում: Վերջինս մտնում է ավելի շուտ լեզվի պատմության, քան պատմական բարբառագիտության ոլորտի մեջ:

⁵⁹ Հին հայերենը (գրաբարը) առհասարակ ամեն կարգի համեմատության ելակետ կամ սկիզբ համարելը դասական բանասիրության, մանավանդ բարբառագիտության համար եղել է մի ավանդույթ (տրադիցիա), որին հակադրվելը, մանավանդ հայերենի (նաև բարբառների) տեսական համեմատական ուսումնասիրության մեջ կարող է համարվել խիզախություն:

2. Բառացանկի վերարտադրություն և մեկնաբանություն

Մեր ձեռքին է բնագրի նմանահանությամբ (ֆաքսիմիլե) օրինակը, որի ոչ այնքան դյուրին ընթերցանությամբ անգամ կարելի է որոշ նոր դիտարկումներ անել Օմոնի հրատարակած բնագրի հետագա վերծանումների ճշգրտության վերաբերյալ (Օ. Կարիեր, Յ. Վայտենբերգ, Հ. Մուրադյան և ուրիշներ)⁶⁰:

Դնում ենք բնագրի (լուսապատճենի) վերարտադրությունը (ռեպրոդուկցիան):

1. [Verba s]ev[.] ⁶¹ dictiones armenior'. Nomina dierv'						
2. [Dies dom]inica 2ա. k[ie]rache		Fřia II ergout xapte		Fř III eriec xapte		
3. Fř IIII 3ա. Khurec xapte		Fř V Hync x ^p ate ⁶²	Fř VI Vrpat		Fř VII Sabpat	
4. N o m i n a n u m e r i		I meche	II ergout	III eriec	IIII Khu[re]t ⁶³	
5. V	VI	VII	VIII	VIIIII	X	XX

⁶⁰ Լուսապատճենը (ֆոտոկոպիա) բավականին թույլ է արտահայտված, սակայն ոչ ամենևին անհնարին վերծանման համար. նաև փորձել ենք պահպանել «գրչության» ձևը (բառակցքում մեծատառ կամ փոքրատառ, s-ի գրությունը և այլն). այն տարիներ առաջ մեզ տրամադրել է հայագետ Յ. Վայտենբերգը:

⁶¹ Ուղղանկյուն փակագծերը ներառում են կա՛մ հնարավորինս վերականգնվող, կա՛մ կետով նշվող անընթեռնելի տեղիները: Արաբական թվերով նշանակումը (օր.՝ 2, 2ա և այլն) մերն է:

⁶² Լատ. *p*-ն ավելացված է փոքր-ինչ վերևում՝ a-ից առաջ:

⁶³ Այս թվականը Օմոնը և Կարիերը ճանաչում են *khuert* ձևով, առաջարկում ենք *Khuret* ընթերցումը. եթե ոչ՝ *Khurt*: Մեյեն անդրադառնում է միայն *Khurec xapte* կազմության առաջին բաղադրիչին՝ լատինագիր ս-ի հայ. *n*-ի առիթով, ընդ որում Կարիերի նշած հայ. *չորքշարթի*-ն տալով *չորեքշարթի* (հին գրական) ձևով (*Ա. Մեյե*, նշվ. աշխ., էջ 448):

5u. Hinc	V[. .]t	Hioct	Vt	In	Taz	Xan
6. XXX		XXXX		XXXXX		LX
6u. Erchun		Karraschun		Ifchun		Vatfchun
7. [L]XX		LXXX		LXXXX		C
7u. Hioctanatschun		Vtanatschun		Ininta		Haruir ⁶⁴
8. . M .						
8u. Hazar	N o m i n a c e t e r a r' R e r'					
9. panif	caro	vinū	cafeuf	ouṽ	pifcif	sal
9u. Haz	Mife	Chini	Paner	Chv	Chugen	Ahl
10. aqua	celu'	sol		luna	ftellē	terra
10u. Chure	Erginc	Arechac		Lucenga	Aftil	Keet[.]nc
11. homo	capill'	ocul'		[sup/ciliu']		ciliu'
11u. Anzen	Mazen	Hahc		Hunc		Ardeuanunc
12. nas'	of	labra	denf	gengiva		lingua
12u. Chit	Peran	Seirtun	Atmunc	Lind		Linzv ⁶⁵
13. barba	facief	aurif	collu'	gula		guttur
13u. Muruc	Eriefc	Aganch	Vife	Puelc		Kcerchac
14. p[.]ctuf	mamilla	vent'	humer'	brachiu'	man'	digituf
14u. Scirt	Cize	Puerhe	Tigunc	Stiruh	Hab	Matun
				(?) ⁶⁶		
15. pugn'	fpina	dorfu'	latuf	renef		[pelvis](?)
15u. Prunhc	Hualn	Cuele	Scirt	Handam		[kounc](?)
16. renef	coxa	genu	cruf	pef		cabilia

⁶⁴ Այս Haruir պարզ գրությունը Օմնը վերձանում է Hariu, տողատակին նշում haruir, իբրև ձեռագրական տարբերակ, Կարիերը դնում է հայ. *հարուր*, տողատակին՝ իբրև «խակց. *հարհւր-ի*». առարկելի է թե՛ մեկը և թե՛ մյուսը, որովհետև ձեռագիրն անխաթար է:

⁶⁵ Լատինագիր linzu (լուսապատճենում՝ linzv) «լեզու» բառը Օմնը և Կարիերը վերձանել են lizu, որը ճիշտ չէ, իսկ Մեյեն այդ ձևի հիման վրա անում է այլ վերլուծություն՝ կապված Կարստի աշխատության մեջ գուգահեռության հետ (*U. Մեյե*, նշվ. աշխ., էջ 448):

⁶⁶ Ի տարբերություն Օմնի և Կարիերի վերձանության՝ Striuch - *ձեռք*, մենք առաջարկում ենք Stiruh ընթերցում, որ պիտի նշանակի ավելի շուտ *սրունք*, քան *ձեռք* (տե՛ս ստորև):

16ա. Gernac	Andam	Scunch	Vluec	Uaden	Cuech
17. veretru/ 17ա. Cliu	tefticuli Scuc	mulier Kenic			
18. 18ա.Nomina scar' rer'	ecla/ Vanc	df' Ter		altare Patarac	
19. crux 19ա. Chahc	angeluf Arrachil teuauoet	scf' Supr	bonuf Aihich	epf Epf	
20. monacus 20ա. Apuguhaltf	Prefbit/ Erefc	Leuita Aottroetf		Xpian[e]uf Xpuener	

Ամենավերջում (բառացանկից դուրս) գրված է լատ. monacuf (փխ. ch-ով) [= «վանական»];

Նախ՝ անդրադառնանք ձեռագրի բնութագրին (ըստ տողերի ընդգրկման):

Անհրաժեշտ է պարզել, թե բառացանկը ինչ գրությամբ է ավանդված. այն կարող է օգնել ոչ միայն ճշտորեն ընթերցելու («վերծանելու») բնագիրը, այլև մոտավոր ենթադրություն անելու նրա գրության ժամանակի մասին⁶⁷:

Գրության ժամանակի ըստ հնարավորին պարզաբանումը կարևոր է հայերենի ոչ գրական (ստանդարտ) լեզվից հեռու կանգնած «լեզվի» (բարբառային-խոսակցական) վիճակի տեսանկյունից: Եթե այն, իրոք, IX դ. վերջի կամ X դ. լեզվական վիճակ է ներկայացնում, ապա դա էական նշանակություն է ձեռք բերում հայոց լեզվի գրավոր շրջանի հնչյունաբանության պատմության վերաբերյալ նոր պատկերացում ունենալու համար:

Ըստ այդմ անհրաժեշտ է պարզել նաև այն հարցը, թե Օմոնի կամ Կարիերի վերծանում-տառադարձումը որքանով է ընդունելի (հավանական) և որքանով՝ առարկելի, քանի որ կան բացթողումներ, որոշ դեպքերում ուղղելի կամ ճշգրտելի «տեղիներ»: Ուստի

⁶⁷ Հմմտ. *А. Д. Люблинская, Латинская палеография, М., 1969:*

ստորև տալիս ենք բնագրի տող առ տող նկարագրությունը՝ ըստ վերը բերված, մեր պատրաստած աղյուսակի [տողատումը նշում ենք արաբական թվերով, որոնցից մի քանիսն ունեն (ա) ենթակետով տող]: Կարիերը առաջարկած զուգահեռ համարժեքները, դրանցից մի քանիսին կից տողատակի կարճ կամ ընդարձակ ծանոթագրությունները ներկայացնում ենք լրացուցիչ մեկնաբանությամբ՝ առանձնապես անհրաժեշտ ուղղումների կամ ճշգրտումների ձևով:

Բնագիրն ընդամենը 40 տող է (ենթակետի հետ միասին), յուրաքանչյուր տողում առավելագույնը՝ 7 բառ.

Տող 1. *Verba seu dictiones armenorum. nomina dierum* [= Բառեր կամ թե հայերեն արտասանություններ]: Այստեղ սկզբից ընթեռնելի չեն *verba se* տառերը, որոնք ճշգրտորեն վերականգնված են Կարիերի կողմից, թերևս ժամանակին դրանք ընթեռնելի են եղել, այժմ միայն կարելի է կռահել, թեև դրանցից աղոտ նշմարվում է *verba* բառի *e*-ն. *armenorum*-ը գրված է հապավված, *R*-ն՝ աջ ներքևից փշիկ, այլև *armenorum*-ը *rum*-ի նույնպիսի հապավումով⁶⁸. տողի վերջում, փոքր-ինչ հեռու, արաբական թվով գրված է 156, որը ձեռագրի էջանիշն է (հմմտ. Օմոնի տվյալները):

Տող 2. Կարիերը, ինչպես որ Օմոնը, սկզբից իսկ վերականգնել է *dies dominica* բառակապակցությունը, որը թերևս իր ձեռքին եղած օրինակում ընթեռնելի է եղել: Մեզ հասած արտատպությունը այդ հնարավորությունը չի տալիս. աղոտ ընթեռնելի է *inica*

⁶⁸ Վերարտադրելիս այն փոխարինել ենք՝ աջ կողմի վերևից հավասարի նշանով: Այդպես նաև բառի վերջից կրճատման դեպքում դրված թեք գծի փոխարեն՝ հավասարի նշան (հմմտ. *capil / - capill*= և այլն), իսկ լատ. *u* ձայնավորի դեպքում վրան դրված գծիկը, որ բացթողման նշան է, մնում է նույնը, ստացվում է երկար *u* ձայնավոր (հմմտ. *superciliū = supercilium* և այլն):

տառախումբը: Այս տվյալի հաստատումը երկու բան կարող է լինել՝ կա՛մ ընդունել, որ այդ *inica*-ն, իրոք, *dies dominica*-ի վերջին մասի տառերն են, որը, իհարկե, գուրկ չէ հիմնավոր լինելուց, կա՛մ դիմել բանասիրական-հնագրական (պալեոգրաֆիկ) այլ տվյալների, և ըստ այդմ ճշգրտել:

Այսպես, հռոմեական օրացույցում շաբաթվա օրերի անունները կոչվում էին կա՛մ դասական թվականներով (օր.՝ *feria secunda* - «երկու շաբաթ կամ -շաբթի, *feria tertia* - «երեք շաբաթ կամ - շաբթի» և այլն), կա՛մ անուններով (օր.՝ *dies lunae* - «երկու շաբաթ, *dies martis* - «երեք շաբաթ», *dies mercuri* - «չորեք շաբաթ» և այլն)⁶⁹: Վիլլոտի բառարանում, օրինակ, *կիրակի*-ն տրվում է լատ. *dies dominica* (էջ 227) և *feria prima* (էջ 304) ձևերով: Իսկ այս բառացանկում օրերի թվարկումը նշվում է *Feria I*, *Feria II* և այլն ձևով (տե՛ս վերը):

Ուստի պետք է մտածել, որ անընթեռնելի *dies dominica* արտահայտությունը ժամանակին ընթեցվել է. Օմոնը և Կարիերը ճիշտ են նշել, իսկ եթե անընթեռնելի լիներ, ապա (հակառակ դեպքում), բանասիրական-տոմարագիտական տվյալների հիման վրա ստույգ վերականգնվել է. բոլոր դեպքերում պետք է ընդունել, որ ձեռագրի այս տողի սկզբում այժմ անընթեռնելի մասը *dies dominica* կապակցությունն է:

Նույն տողի հաջորդ արտահայտություններն են՝ *fria II* (որի կողքին փոքր-ինչ հեռու գրված է 1) և *fr*: Դրանք, ինչ խոսք, շաբաթվա մյուս՝ II և III օրերի լատիներեն անվանումներն են, որոնք ձեռագրում բերվում են հապավումով՝ *r*-ի վրա կետ նշանակելով (*r̄*). ըստ որում միևնույն բառի համար առկա է մի դեպքում *fria*,

⁶⁹ Տե՛ս «*Dictionarium novum latinum-armenum*», էջ 227-228: Հմմտ. «Նոր հայկազյան բառարանի» *երկշաբաթ* // *երկշաբաթի*, *չորեքշաբաթ* // *չորեքշաբաթի* և այլն բառահոդվածները (հ. 1, էջ 698, հ. 2, էջ 579):

մյուս դեպքում *fr* ձևի հապավումը, որը, թերևս, արդյունք է «գրիչի» անուշադրության: Եվ ինչպես այդ, այնպես էլ հաջորդ օրերի համար նշվում են հռոմեական թվանշանները (I, II, III, IIII, V, VI, VII)⁷⁰:

Տող 2ա. գրված են նախորդ տողի լատիներեն երեք բառերի հայերեն համարժեքները՝ *կիրակի*, *երկուշաբթի* և *երեքշաբթի*: Դրանք, ինչպես հայերեն հետագա բոլոր բառերի դեպքում է, բերվում են լատիներեն տառադարձությամբ:

Այս տողում առաջինը տառադարձված է *կիրակե*, որ ձեռագրում այժմ գրեթե անընթեռնելի է՝ հատկապես առաջին վանկի ձայնավորը (կամ երկբարբառը): Օմոնը այն տառադարձել էր *kyrache*, որն ընդունում է Կարիերը. և դնում *կիրակե*, նաև *կիրակե*՝ տողատակին տալով ընդարձակ ծանոթագրություն ասորերենից փոխառյալ լինելու մասին, ընդ սմին Խորենացու դիտարկումը շաբաթվա օրերի և շաբաթվա հաշվարկի վերաբերյալ համարում է ժամանակի խախտում (անախրոնիզմ), որն ամենևին տեղին չէ⁷¹:

Այդ տառադարձվածից այժմ պարզորոշ ընթերցվում են *k* տառը և *rache* տառախումբը: Չափից ավելի թույլ է արտահայտված *k*-ի և *r*-ի մեջտեղում եղածը. Կարիերը այն կարդացել է և անցկացրել՝ *y*. կարծում ենք, ավելի հավանական է *y*-ի փոխարեն *ie* կամ *iu* ընթերցումը. դա հիմնավորվում է նրանով, որ այստեղ բացատր բավականին մեծ է միայն մեկ գրի՝ *y*-ի համար:

⁷⁰ Հմմտ. *fria prima* - *կիրակի*, *կիրակեի*, նաև *feriae* - *տոնք*, *տոնից*, *պարապմունք*, *պարապմանց* (տե՛ս Բառգիրք լատինացուց և հայոց ի վերայ Աստուածաշունչ և ժամակարգութեան գրոց Հայոց եկեղեցոյ, շաբադդեալ ի Ա. Ն. Է. Դ. [= Աստուածատուր Ներսէսովիչ], Հոռմ, 1695, էջ 204):

⁷¹Տե՛ս *A. Carrière*, նշվ. աշխ., էջ 11: Կարիերի աշխատանքի տողատակերում տրվող ծանոթագրություններին անդրադառնում ենք ըստ անհրաժեշտության:

Տողի հաջորդ բառն է *երկուշաբթի*, որ՝ Օմոնը վերծանել է անջատ՝ *ergout xapte*, *երկու*-ի համար դրված է *ergout*⁷²: Կարիերը տողատակին ծանոթագրում է ոչ միայն *ergout*-ի վերջնահնչյունի տ կամ *c* լինելը, այլև *xapte*-ի *շ*-ի փոխարեն *ք* կամ *գ* լինելու հետ կապված, և վերծանում է *երկու(ք)շաբթի*՝ հղելով Մխիթար Սեբաստացու հայտնի բառարանին⁷³:

Անջատ գրությունը, թերևս, լատիներենի ազդեցությունն է, հայերենում այն բարդ բառ է: Ըստ այդմ, շաբաթվա 2-րդ օրը նշանակող հայերեն բառը ձեռագրում տառադարձված է *ergout xapte* ձևով, իբրև համարժեք *երկուգշաբթի* կամ *երկուշաբթի* ձևին, այն է՝ *t*-ն պիտի արտացոլված լինի *g* կամ *u* արտասանությունը (բացառվում է *ք* նշանակումը): Որ այստեղ ունենք *t*, աներկբա հաստատվում է նաև *երկու* թվականի տառադարձումով (տե՛ս առանձին՝ *ergout – երկու[տ/g]*):

Տողի վերջին բառն է *eriec xapte* ձևը, տառադարձումը՝ *երեքշաբթի*. ձեռագրում գրությունը կից է, իսկ Օմոնի, նաև Կարիերի մոտ՝ անջատ. պետք է վերադառնալ բնագրի կից գրությամբ (*eriecxapte*, ոչ՝ *eriec xapte*):

Տող 3. բերվում են շաբաթվա հաջորդ՝ IV, V, VI և VII անունները լատիներեն նշանակումներով՝ *fr IIII*, *fr V*, *fr VI*, *fr VII* ձևերով:

Տող 3ա. կից գրությամբ են *khurecxapte*, *hyncxapte*, *urpat*, *sabpat* հնչյունախմբերը, իբրև տառադարձումներ հայերեն *չորեքշաբթի*, *հինգշաբթի*, *ուրբաթ* և *շաբաթ* անվանումների (Օմոնը վեր-

⁷² Այս և մյուս դեպքերում ունենք *t*-ի գրչությունը *τ* ձևով (հուն. *τ* գրի տեսքով):

⁷³ Un ancien Glossaire Latin-Arménien, publié et annoté par A. Carrière, էջ 11: Այստեղ *xapte*-ն, կարծում ենք, արաբ. *hafta* «յոթնյակ. շաբաթվա յոթ օր» բառն է, որին անդրադառնալու ենք առանձին՝ մեր մեկ այլ աշխատանքում:

ծանուցում է անջատ գրությամբ. նույնը Կարիերի մոտ է). տառադարձումները ներկայացվում են իբրև բարդություն արտացոլող հայերեն բառերի նշանակումներ. *չորեքշաբթի* և *հինգշաբթի* բառերի տառադարձումն ունի կից գրություն (ինչպիսին որ են նախորդ երկուսը),

Կարիերը նշանակում է *չորեքշաբթի*, որ ճիշտ չէ՝ տառադարձման առումով, *հինգշաբթի* բառի դեպքում սպրդել է գրչագրական մի սխալ (եթե հետագա միջամտություն չէ), տառադարձված է հորիզոնական գծով *hyncxate*, այսինքն՝ բաց է թողնված *p*-ն, որը ավելացված է տողի վերևում, ընդ որում ոչ թե *a*-ի և *t*-ի վերևում, այլ *x*-ի և *a*-ի (*hyncx^pate*). դա չի խանգարել Կարիերին բառը ճիշտ տառադարձելու, որին, թերևս, օգնել են մյուս բառերը, որոնք ունեն *xapte* բաղադրիչը (*ergoutxapte*, *eriecxapte*, *khurecxapte*). այդ մասին տողատակին ծանուցվում՝ «Ձեռ. *xpate*» (ն. տ., էջ 12), որն, իր հերթին, վրիպակ է, քանի որ ձեռագրում գրչի վրիպած *p*-ն լրացված է բառի վերևում՝ *x*-ից, ոչ *a*-ից հետո. դա նշում է նաև Օմոնը, որ բերվում է նաև Կարիերի կողմից⁷⁴:

Տող 4. բերվում են 1, 2, 3, 4 թվականների հռոմեական նշանակումները, որոնց ընթերցումը որևէ դժվարություն չի հարուցում:

Տող 4ա. նախորդ տողում նշված *nomina numeri* [= թվականների անունները]՝ 1-4, տառադարձված *meche*-ի համապատասխան են դրվում *մէկ*, այլև *մէկը* ձևերը և տողատակին թեականով նշում է հետևյալը. «խսկց.. *meche*-ի վերջի *e*-ն, որը գտնուում ենք 35 [իմա՝ *chure - ջուր (ջուրը ?)*], 55 [իմա՝ *vise - վիզ (վիզը ?)*], 59 [իմա՝

⁷⁴ *H. Omont*, նշվ. աշխ., էջ 563: *A. Carrière*, նշվ. աշխ., էջ 12: Այստեղ Կարիերն ունի մեկ այլ ծանուցում այն մասին, որ Մխիթար Մեքաստացին տալիս է *հինգշաբթի* (*կ*-ով) ձև:

cize - ծիծ (ծիծը ?), 60 (իմա՛ pueche - *փոր (փորը ?)*), համարժե՞ք է ժամանակակից *ը-ին*» (ն. տ., էջ 12):

Հաջորդ՝ *ergout* և *eriec* ձևերին համարժեք են դիտվում *երկուք-ը* և *երեք-ը*: Դժվարություն է հարուցում այս տողի վերջին բառը, որը տառադարձումը պիտի լինի գրաբարյան *չորք-ի*, կամ ոչ գրաբարյան նույնարժեք մի ձևի: Կարիերը այն ընթերցում է *kuert*-ի ձևով, համարժեք՝ *չորք-ին*: Մակայն ձեռագրում ունենք 6 տառանշան, որոնցից պարզ են *k*, *h*, *u* և *t* տառերը. բավականին թավ են գրված նախավերջին և նախավերջընթեր տառերը, որոնց այս կամ այն ընթերցումը կարող է բոլոր դեպքերում երկվություն առաջ բերել. Կարիերը, վերը տեսանք, վերծանել է իբրև *e* և *r*, ստանալու՝ *khuert*:

Տող 5. այստեղ հռոմեական նիշերով բերվում են 5-10 և 20 թվանշանները՝ V, VI, VII, VIII, X, XX:

Տող 5ա. բերվում են նախորդ տողի հայերեն տառադարձված համարժեքները. պարզորոշ ընթերցվում են *hinc*, *hioct*, *vt*, *in*, *taz* և *xan* տառանիշերով բառերը. *hioct*-ը Կարիերը դիտում է տառադարձումը *եօթ*, *եօթը* ձևերի՝ տողատակին նշելով, որ դրանք են «բրբռ. *եօթն*-ի դիմաց» (էջ 12), իսկ *in*-ը՝ *ինը* ձևի, տողատակին՝ «խսկց. *ինն*-ի դիմաց» (ն. տ.): Նույնը նաև *taz*-ի դեպքում՝ այն դիտելով տառադարձությունը *տասը* ձևի՝ սա էլ իբրև «խսկց. *տասն*-ի դիմաց» (ն. տ.):

Այստեղ առարկելի է այն, թե ինչու տառադարձված *hioct*, *in*, *taz* ձևերի համար համարժեք են դիտվում *ը-ով* ձևերը, այն դեպքում, երբ այդ *ը-ի* արտաբերական-տառադարձական որևէ հիմք չկա, և այդ *ը-ով* ձևերն էլ դիտվում են իբրև բարբառային տարբերակներ գրաբարյան *եօթն* (փիս. *եւթն*), *ինն*, *տասն* ձևերի: Այնուհետև, եթե այդ ընդունելու լինենք, պիտի հաշվի առնենք նաև այն, որ տառադարձամբ չարտացոլված այն *ը-ն* կարելի է նկատի ու-

նենալ նաև մյուսների՝ *hinc-ի*, *vt-ի* և *xan-ի* համար, և այդպիսով տալ հայերեն (ըստ Կարիերի՝ «խսկց.») ձևերը, ասենք, նույն կերպ՝ *հինկը* (Կարիերի մոտ՝ *q-ով*), *ութը*, *քսանը*:

Այդ *ը-ի* հավելումը ոչ մի կերպ տեղին չէ, համակարգի մեջ՝ չհիմնավորված: Նույն տողում եղած մյուս տառադարձությունը, բնականաբար, վերաբերում է հայ. *վեց* թվականին, որը բավականին անընթեռնելի է: Կարիերը դիտում է *viit* ձևով: Այստեղ ինչ-որ կերպ ընթեռնելի են *v* և *τ* տառերը, մյուսների ընթերցումը, թերևս, կամայական է ստացվել Կարիերի կողմից. կարծում ենք, որ այդ երկու տառերն ունեն երկար *i* ձայնավորի արժեք, հակառակ դեպքում կարելի է կարդալ *ie*, կամ պարզապես՝ *u* (եթե ոչ նաև՝ *ei*): Բացառվում է այլ կարգի ընթերցումը, քանի որ գործ ունենք երկու ուղղահայաց գծերով նիշերի հետ, որոնք իրենց հորիզոնական տարածմամբ այստեղ բացահայտ չեն և սուկ ենթադրության տեղիք են տալիս, իսկ վերջինս տեղ ունի *i*, *e*, *u* (երկու *i*) նիշերի սահմանում, անկախ դրանց միմյանց նկատմամբ ունեցած դիրքից: Թե որն է ամենահավանականը և ճիշտը՝ *ie*, *ei*, *u* թե *ii*, կարելի է ենթադրել ձայնավորների այն հատկանիշներով, որոնք գործառել են նրա այս կամ այն տարածքի բարբառի կրող անձի (ինֆորմանտի) խոսքում՝ իր ժամանակի մեջ:

Տող 6. այստեղ հռոմեական նիշերով բերվում են 30, 40, 50 և 60 թվականները՝ XXX, XXXX, XXXXX և LX գրությամբ:

Տող 6ա. նշանակված են նախորդ տողում եղած թվանշանների հայերեն համարժեքների տառադարձումները, որոնք հստակ ընթեռնելի են՝ *erchun*, *karraschun*, *ischun* և *vatschun*. Կարիերը դնում է *երեսուն* (փխ.՝ *երսուն*, առանց երկրորդ *e-ի*, ինչպես ձեռագրում է), *քառասուն*, *յիսուն* և *վաթսուն*:

Տող 7. Այստեղ ունենք 70, 80, 90 և 100 թվականները հռոմեական նշանակումով, ըստ որում ձեռագրում 70-ի L-ը պարզորոշ չէ, ընթեռնելի է XX-ը, այդպես նաև մյուսները՝ LXXX, LXXXX, C:

Տող 7ա. տրվում են նախորդ տողում բերված թվականների հայերեն անվանումների նշանակումները, որոնցից ընթեռնելի են hiocanatschun, vtanatschun և haruir ձևերը: Ըստ որում, նախ՝ Կարիերը 80-ի հայերեն է դիտում *ութանասուն*-ը, ծանոթագրելով՝ «Մեծ Հայքի որոշ գավառներում դեռևս գործածվում է բարբառային ձևը՝ *ութուն*-ի փոխարեն» (ն. տ., էջ 13), այնուհետև՝ 100-ի հայերենը բերվում է *հարուր*, տողատակին ծանոթագրելով. «բրբռ., *հարհւր*-ի փոխարեն» (ն. տ.): Երկրորդ դեպքում կարելի է նկատել հետևյալը. տառադարձված haruir-ը ճիշտ ընդունելու դեպքում պիտի դիտվեր բուն համարժեքը *հարուր* (<haruir. ui-ն՝ ու): Իսկ 90-ը ձեռագրում հստակ է ընթերցվում:

Կարիերը նշում է ininta (ինչպես Օմոնը), որը բավականին համոզիչ է և հավանական: Իսկ թե այն հայերեն որ ձևի տառադարձումն է, Կարիերը չի բերում, այլ նշում է կետերով (իբրև բացթողում). տողատակին ծանուցվում է հետևյալը. «Հայերենում գրական և խոսակցական *իննսուն*: Ininta թերևս նշված է *ինն/անգամ/տասն* («neuf fois dix») բաղադրված ձևի համար, բայց պիտի հայտնեմ, որ ես որևէ հետք չեմ գտնում գուգահեռ ձևի գործածության» (ն. տ.):

Տող 8. բերվում է միայն 1000-ի հռոմեական նիշը՝ M:

Տող 8ա. տրվում է նախորդ տողի միակ բառի՝ 1000-ի հայերեն տառադարձումը՝ hazar: Այնուհետև, նույն տողում, գրված է՝ Nomina cetera rer (= nomina ceterarum rerum - «այլևայլ իրերի անուններ»):

Տող 9. այս տողում գրված է լատիներեն 7 բառ. panis «հաց», caro «միս», vinū (= vinum) «գինի», caseus «պանիր», ouŷ (ouum = ovum) «ձու», piscis «ձուկ», sal «աղ»:

Տող 9ա. նշվում է նախորդ տողում բերված լատիներեն բառերի հայերենը՝ տառադարձումով, այն է՝ haz, mise, chini, paner, chv, chugen, ahl (բոլորն էլ հստակ ընթեռնելի):

Կարիերը mise-ի փոխարեն դնում է misc, որը սխալ է և հետևանք այն բանի, որ բառը դիտել է՝ *միսք* (իբրև հոգնակի ձև *միսի*), այնինչ, կարծում ենք, պիտի լիներ *միսք*, մանավանդ որ ձեռագրում այդպես էլ ընթերցվում է (բառավերջում՝ e, ոչ թե c. հմմտ. meche «մեկ», chure «ջուր», vise «վիզ», cize «ծիծ», puerhe «փոք»)։ չի բացառվում, որ հայերենի տեղեկատուն (ինֆորմանտը) բառավերջի նման դիրքը շնչով արտաբերելիս լիներ, որ խոսակցական (բարբառային) հասկանիչ է (*շ-ով*)՝ իր ժամանակի մեջ:

Տող 10. բերվում է 6 բառերի լատիներեն անվանումը, դրանք են՝ aqua «ջուր», celū (= celum) «երկինք», sol «արեգակ», luna «լուսին», stellę (փխ. stella) «աստղ», terra «հող» («գետին», «երկիր»)։

Այստեղ հետաքրքրականը celum-ի տառադարձումն է՝ երկբարբառի դիմաց պարզ ձայնավոր, որպիսին, թերևս, հիմնավորելի է լատիներենի պատմության տվյալներով⁷⁵: Այլև stellę, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ stella-ի հոգնակին (ae-ի փոխարեն ք գրությամբ, որն ունի հիմնավորման կարիք)՝ դիտված իբրև անեզական, այն ևս լատիներենի համար պիտի ապացուցվի⁷⁶:

Կարիերը վերձանում է stellae (հոգն. ձև), սակայն ք գրությունը հոգնակի ձևի համառոտումն է. հմմտ. Ամբրոսիոս Թեզեոսի

⁷⁵ Հմմտ. *М. Нидерман*, Историческая фонетика латинского языка, М., 1949, էջ 63, 99:

⁷⁶ Նույն տեղում, էջ 28-29, 33-34:

մոտ նույնպես ունենք այդ Գ-ն՝ իբրև եզակի սեռական և տրական հոլովների կամ հոգնակի ուղղականի նշանակում⁷⁷:

Տող 10ա. այստեղ տառադարձված են վերը նշված լատիներեն բառերի հայերեն համարժեքները՝ հետևյալ կերպ. *chvre, erginc, arechac, lusenga, astil* և *keet[.]nc*: Ընդ որում՝ ա) *chvre*-ը դիտվում է հայ ջուր կամ ջուրը (?) ձևի տառադարձումը, բ) *erginc*-ը *ղ*-ով և *ք*-ով (*երկինք*, այն է՝ գրաբարյան ձևով), գ) *arechac*-ի դեպքում դրվում է *արեզակ* և տողատակին ծանոթագրվում է հետևյալը. «խսկց. *արեզակն*-ի փոխարեն» (ն. տ., էջ 14), դ) *lusenga*-ինը՝ զուգահեռ *լուսնկայ* (գրաբարյան) և *լուսինկայ* (ժողովրդական- «ստուգաբանական» իմաստով), ե) *astil*-ը *աստղ* (բայց ոչ՝ *աստիղ*) (?), զ) *keet[.]nc*-ի միջակա մեկ գիրը, երկուստեք կպած, հստակ չէ (որը, թերևս, «գրիչի» բացթողում կամ լրացում է), չի կարդացվում, բայց Օմոնը այն նշում է *kcedinc*, նաև Կարիերը՝ *kcedinc - գետինք*, որը խոսակցական է (գրաբարյան հոգնակի ձևից):

Տող 11. բերվում են լատիներեն 5 բառեր՝ *homo* («մարդ. այր»), *capill* (= *capillus*) («գես. վարս, մազ»), *ocul* (= *oculus*) («ակն, աչք»), *sup[er]ciliū* [= *supercilium*. ըստ Օմոնի և Կարիերի] («հոնք»), *ciliū*: [= *cilium*] («արևանունք»):

Տող 11ա. նշվում է նախորդ տողի լատիներեն բառերի հայերեն տառադարձումը. *anzen, mazen, hahc, hunc, ardeuanunc*. բոլորը՝ ընթեռնելի:

Այստեղ նկատելի է լատիներեն և հայերեն բառերի իմաստային տարբերություն. *homo*-ն *անձն*-ը չէ, այլ «մարդ, այր», *capillus*-ը (գրական) «գես, վարս, հեր», (խսկց.) «մազ» (վերջինս հայերենում, ինչպես գիտենք, հետագայում ունենում է ավելի լայն գործածություն):

⁷⁷ Տե՛ս *А. Эрну*, Историческая морфология латинского языка, М., 1950:

Տող 12. բերվում են լատիներեն հետևյալ բառերը՝ *nas* [= *nāsus*] «քիթ», *os* «բերան», *labra* «շուրթն», *dens* «ատամն», *gingiva* [= *gingīva*] «լինդ», *lingua* «լեզու», որոնք լիովին ընթեռնելի են:

Նկատելի է խախտում լատ. բառի դեպքում՝ *gingiva* (փիլ. *gingīva*) «լինդ», որ թերևս գրանցողի վրիպում է (կամ՝ բանավորարտասանական տարբերակ)⁷⁸:

Տող 12ա. նշանակվում են նախորդ տողի բառերի հայերեն համարժեքների տառադարձումները՝ *chit*, *peran*, *scirtun*, *atmunc*, *lind*, *linzu*. այստեղ ընթերցման առումով, թերևս երկակի է *scirtun* ձևում *c*-ի հարցը՝ *c*, թե՞ *e* (այդ պետք է պարզել *sc* կամ *se+i* հնչական արժեքի մեջ. հմմտ. տող 27-ի *seirt*-ը, այլև հակառակը՝ *scirt*-ը, որ պարզ է գրված՝ տող 29):

Դրանցից (գրական) *շուրթն*, *ատամն*, *լեզու* բառերի դիմաց գտնում ենք (ոչ գրական) *շրթուն*, *ատմունք*, *լիզու* ձևերը: Կարիերը նշում է *քիթ*, *բերան*, *շրթունք*, *ատամունք*, *լինտ*, *լիզու*, վերջին երկուսը ծանոթագրվում է. «խսկց., փիլ.՝ *լինտր*, *լինդր*», այլև «խսկց., փիլ.՝ *լեզու*. հղելով Յ. Շրյոդերի գրքի էջ 356-ը» (ն. տ., էջ 14):

Տող 13. բերվում են լատիներեն հետևյալ բառերը՝ *barba* «մորուք», *facies* «երես», *auris* «ունկն, ականջ», *collū* [= *collum*] «վիզ», *gula* «փող», *guttur* «խոչակ», որոնք լիովին ընթեռնելի են:

Տող 13ա. գրված են նախորդ տողի լատիներեն բառերի հայերեն համարժեքների տառադարձումները. *muruc*, *eriesc*, *aganch*, *vise*, *puelc*, *kcerchac*. սրանց գրությունը ևս բավականին հստակ է:

Ըստ Կարիերի՝ տառադարձումների հայերեն ձևերն են՝ *մուրուք*, *երեսք*, *ականջ*, *վիզ* (*վիզը*) (?), *փողք*, *խոչակ*. վերջինիս համար տողատակում նշում է՝ «խսկց., փիլ.՝ *խոչափող*» (ն. տ., էջ 15):

⁷⁸ Հմմտ. *И. Х. Дворецкий, Латинско-русский словарь, М., 1976:*

Տող 14. այս տողում կան դժվարընթեռնելի գրեր, որոնց վերականգնումից պարզվում է, որ ներկայացվում են լատիներեն հետևյալ բառերը. p[.]ctus «կուրծք». «լանջք», mamilla «ստինք», vent/ [= venter] «փոր, որովայն», humer' [= humerus] «թէկն, թիկունք», brachiu/ [= brachium] «բազուկ՝ դաստակից մինչև արմունկ հատվածը», man' [= manus «ձեռք», digitus «(ձեռքի) մատ»:

Տող 14ա. բերվում են նախորդ տողի լատիներեն բառերին համարժեք հայերեն հետևյալ տառադարձումները. ըստ Օմոնի՝ scirt, cize, puerhe, tigunc, striuch, hab, matun, իսկ ըստ Կարիերի (նույն կարգով)՝ սիրտ, ծիծ (ծիծը ?), փոր (փորը ?), թիկունք, ձեռք, ափ, մատունք, որոնցից մեկ-երկուսը տողատակում ծանոթագրվում է. ծիծ-ը ստին(ք) բառի խոսակցականն է, ափ-ը՝ «ձեռքի ափ» (ն. տ., էջ 15):

Այնուհետև, անհասկանալի է մնում Օմոնի striuch տառադարձումը, որը ընդունում է Կարիերը և համարժեք դնում ձեռք բառը: Առկա է տարբերություն, կա վերանայման կարիք. նախ՝ բառն ունի վեց, ոչ յոթ նիշով գրություն, երկրորդ c-ն Օմոնի ավելացումն է, որ ձեռագրում գոյություն չունի, երրորդ՝ s-ին հաջորդում են կա՛մ a, i, u, կա՛մ t, i, r, u (ոչ՝ t, r, i, u), չորրորդ՝ ենթադրելի է սրուն(ք) բառը, քան՝ ձեռք, որովհետև մարմնի մաս հանդիսացող սրունք-ը ստորին վերջույթի նույն անվանումն է, ինչ վերին վերջույթի դեպքում բազուկ-ը (իբրև լիարժեք թարգմանություն լատ. brachium («բազուկ») բառի (վերին վերջույթի դեպքում՝ «դաստակից մինչև արմունկ», իսկ ստորին վերջույթի դեպքում՝ «(ոտնա)թաթից մինչև ծունկ»)⁷⁹: Օմոնի նշանակած մատունք-ը (թարգմ.՝ լատ. digitus) Կարիերը ընդունում է ք-ով:

⁷⁹ Նկատենք, որ սա նախահնդեվրոպական իմաստաբանությամբ մարմնի վերին և ստորին վերջույթների անվանումային-գործառական բաշխման արտացոլում է, որ թերևս պահպանված է հայերենի տարած-

Տող 15. այստեղ դրված են լատիներեն հետևյալ բառերը՝ *pugn'* [= *pugnus*] «բուռն. բռունցք» (ըստ Կարիերի՝ *բռունք*, թեև լատիներեն ձևը եզակի թվով է), *spina* «ողն», *dorsu'* [= *dorsum*] «մեջք, թիկունք» (ըստ Կարիերի՝ *կողք*, լատիներեն ձևը՝ եզ. թվով է), *latus* «կող, կողք» (ըստ Կարիերի՝ *սիրտ*, որ սխալ է), *renes* «երիկամն, երիկամունք. գոտկատեղ» (ըստ Կարիերի՝ *անդամ*, որ սխալ է):

Տողի 6-րդ բառը ձեռագրի ներկայիս վիճակում խաթարված է (չի նշմարվում). Օմոնը և Կարիերը այն բաց են թողել, իսկ Վայտենբերգը առաջարկում է ընթերցել *ծունկ*, որը դժվար է ընդունելի համարել, որովհետև ցանկում այդ բառը այլ դեպքում հանդիպում է (տե՛ս Կարիերի № 72. *genu – scunch* «ծունկ»), թեև ցանկում ուրիշ բառեր էլ կան, որ կրկնվում են, նման կրկնությունը կարող է տարբեր բացատրություն ունենալ:

Այսուհանդերձ, մենք հակված ենք բացթողումը ընթերցելու որպես լատ. *pelvis* «կոնք(եր). գոտկատեղից ներքև» բառ՝ համարժեք հայ. *կոնք* բառին՝ տառադարձված *kounc* ձևով: Իսկ տողի 7-րդ բառը ամբողջովին խաթարված է (գոնե մեր ձեռքին եղած պատճենի դեպքում):

Տող 15ա. այստեղ բերվում է նախորդ տողի լատիներեն բառերի հայերեն համարժեքների տառադարձումը. *prunhc*, *hualn*, *cuele*, *scirt*, *handam'*, [*kounc*](?): Դրանք այլ բան չեն, քան գրական հայերենի *բռունք* (փխ. *բուռն*), *ողն*, *կողք*, *սիրտ*, *անդամ* և մեր կարծիքով՝ *կոնք* բառերի խոսակցական տարբերակները:

Կարիերը տալիս է *hualn – ողն*, այլև՝ *cuele – կողք*, որը ծանոթագրվում է հետևյալ կերպ. «ստույգ՝ *les côtes* [«կողեր»]» (ն. տ., էջ 15), սակայն, հայտնի է, որ (տե՛ս Վիլլոտի բառարանը և այլն) այն ունի *թեկն > թիկունք* իմաստը, ուրեմն տառադարձումը ճիշտ է

քային այն տարբերակում, որն ընկած է նման բնագրի երկլեզվյան անցման հիմքում, որն, անշուշտ, առանձին քննության նյութ է:

հայերեն ձևի համեմատությամբ, սակայն իմաստափոխված է՝ լատիներեն ձևի դեպքում:

Այս տողում է նաև scirt-ը, որը տառադարձումն է *սիրտ*-ի՝ իբրև համարժեք լատ. *latus*-ի, վերջինս ոչ թե *սիրտ* է, այլ *կող(ք)*, և ստացվում է շփոթ. Կարիերը, նկատի ունենալով *latus - scirt* զուգադրումը, երկրորդի հայերեն է դրել *սիրտ*՝ տալով հետևյալ ծանոթագրությունը. «Մտույզ՝ *le cœur* [«սիրտ»] (ն. տ.):

Բառացանկի այդ տողում *renes*-ը Օմոնը գրանցել է *handam*, իսկ Կարիերը դնում է *անդամ*: Օմոնի ցանկում *renes*-ը տրվում է երկու անգամ, առաջինը՝ *handam*, իսկ երկրորդը՝ *gernac* հայերեն արտասանվածի համար (այդ երկու անգամ բերվածների միջև պատճենումն ունի բացթողում, որ վերը մենք նշեցինք՝ իբրև խաթարված):

Մեր առարկությունն այն է, որ լատ. *renes*-ը նշանակում է ոչ միայն «*երիկամն (> երիկամունք)*», այլև «գոտկատեղ. մեջք», այսինքն՝ ոչ հայ. (խսկց.) *հանդամ*, կամ՝ *կունակ* (ինչպես բառացանկում է, որ ընդունում են Օմոնը և Կարիերը): Վերջինս դրանք ծանոթագրում է. մեկը՝ «Մտույզ՝ *membre* [«անդամ»]. Ճիշտ բառը *renes*-ի համար կլինեք *երիկամունք*, իսկց. *երիկամ* կամ *պոլոճիկ*», մյուսը՝ «խսկց., փքրց. *կունն* «մեջք» բառի» (ն. տ.) (երկրորդ *renes*-ը՝ ձեռագրի 16-րդ տողում):

Տող 16. այստեղ զետեղված են լատ. *renes* «երիկամն», *coxa* «ազդր. երանք, զիստ», *genu* «ծունկն», *crus* «բարձ. սրունք», *pes* «ոտն», *cabilia* «(ոտքի) կոճ», վերջին բառը նշվում է նույն ձևով՝ իբրև ծանոթագրություն. «*cabilia*» (էջ 16):

Տող 16ա. բերվում են նախորդ տողի լատիներեն բառերին համարժեք հայերեն տառադարձումները. *gernac*, *andam*, *scunch*, *uluec*, *uaden*, *cuech*: Դրանք ձեռագրում բավականին հստակ են,

առաջին բառը Կարիերը դիտում է արտացոլումը հայ. *կռնակ* բարբառային-խոսակցական (ոչ-գրական) ձևի (տե՛ս վերը):

Նկատենք նաև, որ լատ. *renes*-ը այստեղ շփոթված է նախորդի հետ (ցանկում երկու անգամ է լատ. *renes*-ը բերվում իբրև արտացոլում հայ. *անդամ*, *կռնակ* ձևերի), այնուհետև՝ պետք է նկատի ունենալ, որ այն 2-րդ դեպքում ցույց է տալիս *կռղն*-ը, ի տարբերություն 1-ին դեպքում *renes*-ի ցույց տված «երիկամն – երանք, ազդ(եր)» իմաստների: Երկրորդ ձևը *andam*-ն է. ի տարբերություն վերը եղած *handam*-ի. Կարիերը այս *andam*-ի համար առանձնացնում է *անդամ*՝ ծանոթագրելով. «Ավելի ճիշտ՝ «անդամ». մենք նկատում ենք նույն բառը գործածված *renes* - համար (69). *Coxa*-ի թարգմանությունը կլինե՛ր *ազդր*, իսկց.՝ *պուտ*, ի դեպ՝ *μυρος*-ը հատկացված է *անդամք*-ին (Apoc. XIX, 16)» (էջ 16):

Բառացանկում լատ. *genu*-ի հայերեն տառադարձվածն է *scunch*-ը՝ իբրև արտացոլումը հայ. *ծունկ*-ի: Կարիերը այդպես էլ անում է. տալիս է *ծունկ* և ծանոթագրում. «Խսկց.՝ *ծունգք*, *ծունկք*» (էջ 16): Այստեղ եղած մյուս բառերն են տառադարձված *uluec* (արտացոլումը՝ *ուլոք*, *ուլոգ*, ըստ Կարիերի), *uaden* (*ուտն*՝ ըստ Կարիերի), *cuech* (*կոճ*, ըստ Կարիերի): Եվ ամբողջ հարցն այն է, որ հիշյալ բառերը՝ *կռնակ*, *անդամ*, *ծունկ*, *ուլոք* (*ուլոգ*), *ուտն* և *կոճ*, հայ հին մատենագրության մեջ կիրառվում են գործառական տարբեր ուղրտներում, ոչ նույն հաճախականությամբ:

Տող 17. բերվում են լատիներեն *veretru'* (= *veretrum*) «առնացի, առականք, արականք», *testiculi* (< *testiculum*) «ամորձի(ներ)», *mulier* «կին. էգ» բառերը:

Տող 17ա. տրվում են նախորդ տողում եղած լատիներեն բառերի հայերեն համարժեք համարվածները՝ հետևյալ տառադարձումով. *cliu*, *scuc*. *kenic*: Ըստ Կարիերի՝ դրանք արտացոլումն են

հայ. կ... («memb. vir.»), *ձուք* և *կնիկ* ձևերի. վերջին երկուսի համար տալիս է ծանոթագրություն (էջ 16):

Տող 18. նախ՝ նշենք, որ այս և հաջորդ տողում (չհաշված վերջին տողը) բերվում է այլ փունջ կազմող բառերի ցանկում: Դրանք անվանվում են «Nomina sanctorum rerum» (= «սրբազան իրերի անվանումներ»):

Այդ փնջի երեք բառի լատիներեն ձևերը նշվում են (մեր տողատմամբ) 18-րդ տողում, իսկ 18ա-ում՝ փնջի անվանումը, այլև հիշյալ լատիներեն երեք ձևերի հայերենը: Այսպես, բերվում են լատ. *ecclā* (= *ecclesia*) «եկեղեցի», *df'* (= *deus* ?) «տէր, աստուած», *altare* «բեմ(ք). (զոհա)սեղան»:

Տող 18ա. այս տողում է գտնվում նշված փնջի լատիներեն անվանումը՝ «Nomina sanctorum rerum», այլև վերը բերված լատիներեն երեք բառի հայերեն տառադարձումը, ըստ Օմոնի՝ *vanc, ter, patarac*: Սրանք, ինչպես և վերնագիրը, դյուրընթեռնելի են: Կարիերը դիտում է իբրև տառադարձում հայ. *վանք, տէր* և *պատարագ* բառերի՝ տալով երեքի համար հետևյալ ծանոթագրությունները. 1) «մենաստան, «կրոնական) հավաք», և ոչ թե «եկեղեցի» (էջ 16), 2) «*տէր*-ը համապատասխանում է հաճախ *Dominus*-ին. *Deus*-ը կարող է լինել *Աստուած*» (ն. տ.), 3) «Ստույգ՝ «զոհ»; *altare* բառի իսկական թարգմանությունը կլինի *սեղան*» (ն. տ.): Սրանք, անշուշտ, տեղին մեկնաբանություններ են, և բառերի նման զուգադրումը վկայում է, որ թարգմանիչը («գրիչը») կարող էր եկեղեցուն մոտ մի անձնավորություն եղած լինել:

Տող 19. բերվում են լատիներեն հետևյալ հինգ բառերը՝ *crux* «խաչ», *angelus* «հրեշտակ», *ser'* (= *servus*) «ծառայ», *bonus* «լավ», *eps'* (= *episcopus*) «տեսուչ»: Սրանցից 3-րդը Կարիերը կարդում է *supr*, որը, թերևս, ուղղելի է, պիտի լինի *ser'* (= *servus*) «ծառայ»: Նշենք նաև, որ լատ. *episcopus* (< հուն. *ἐπισκοπός*), եթե չհաշվենք ցանկի

վերջում հոգևոր ոլորտի երկու բառի վերծանությունը, եզակի օրինակ է, որ հայերեն համարժեքը փոխառյալ ձևն է (*էպիսկոպոս*, V դ.):

Տող 19ա. բերվում են նախորդ տողի լատիներեն բառերի հայերեն համարժեք համարվածները. *chahe*, *arrachil* *teuauoet* (բաղադրյալ բառ), *supr*, *aihich*, *eps'* (= *episcopus*): Կարիերը սրանց հայերեն ձևերը դնում է՝ *խաչ, առաքեալ թևաւոր, սուրբ, աղէկ, էպիսկոպոս*: Նախ *angelus*-ի դիմաց նշվում է բառակապակցություն (սա միակ դեպքն է ողջ բառացանկում), երկրորդ՝ այն ծանոթագրվում է. «վերջին *t*-ի փոխարեն կարդալ *r*» (էջ 16): *Աղէկ*-ի համար տրվում է հետևյալ ծանուցումը. «փխ. բրբռ. *բարի*» (էջ 17): Նկատենք, որ հին գրականում *angelus* «հրեշտակ» բառի մեկ այլ իմաստն էր «զվարթունք». այստեղ ավելի նախընտրելի է *angelus*-ի հայերեն համարժեքի ընթերցումը *արագիլ* (թևաւոր) (բնագրում այն լիովին ընթերնելի է)⁸⁰: Ցանկի լատ. *eps'* (= *episcopus*) համառոտագրության դիմաց Օմոնը և Կարիերի դնում են հայերեն տառադարձված է *էպիսկոպոս* (փխ. *-ոս* վերջավորության), որ հազիվ թե կապ ունենա տեղեկատուի արտասանության հետ:

Տող 20. բերվում են լատ. *monacus* «աբեղայ», *presbit'* (= *presbiter*) «քահանայ, երեց», *leuita* «ղևտացի» (սուրբգրային անուն), *Xpian[e]uf* (?). սրանցից առաջին բառը ընթերցումը պարզ է, երկրորդը համառոտագրված է, երրորդի համար ոչինչ չի ասվում (մեր կարծիքով՝ հայ. *ղևտացի*), վերջին բառը ոչ միայն դժվար ընթերնելի է, այլև (առայժմ) անհասկանալի⁸¹:

⁸⁰ Հիշյալ բառերի իմաստային փոխհարաբերության համեմատական քննությանը անդրադառնալու ենք առանձին՝ մեկ այլ աշխատանքում:

⁸¹ Սա երևի կարելի լինի կարդալ *Christianus* «քրիստոնեայ. Քրիստոսապաշտ և այլն», որ ունի, օրինակ, Վիլլոտը (էջ 111):

Տող 20ա. բերվում է, ինչպես վերը նշեցինք, նախորդ տողում դրված լատիներեն չորս բառի հայերեն համարժեք դիտված հետևյալ տառադարձումները. *apiiguhalts*, *eresc*, *aottroets* և *xruener*, որոնցից *apiiguhalts*, *aottroets* և *xruener* ձևերը, իբրև հայերեն բառեր, հասկանալի չեն, թեև տառադարձումը մասամբ հստակ է⁸²:

Այս կետը բառացանկի ամենակնճռոտ մասն է: Կարիերը *apiiguhalts*-ը կարդում է *աբեղայացու*, այլև նշում՝ «*apiiguhalts*-ը հավանաբար եղել է ընդօրինակողների կողմից վատ տառադարձված: Բառի առաջին վանկը համապատասխանում է *աբեղայ* «միանձն» բառին: Մենք գրել ենք բրբռ, *աբեղայացու*, որ ունի նույն իմաստը, համեմատելի փոքր-ինչ վերը ձեռագիր տեքստում» (ն. տ., էջ 17): *Aottroets*-ը բաց է թողնում՝ ծանոթագրելով, որ «ձեռագիրը կարող է աղավաղված լինել» (ն. տ.), իսկ վերջինը՝ *xruener*, կարդում է *Քրիստոնէ*, որը հազիվ թե հավաստի լինի:

Ցանկում լատ. *leuita* բառը նշանակում է «ղևտացի», և այն պիտի իր նույնական արտացոլումն ունենար հայերենում, քանի որ, ինչպես *էպիսկոպոս* բառի դեպքում է, այն հայերենում փոխառություն է: Եվ եթե փոխառյալը չի պահպանվել (բառացանկի խոսակցականում), ապա *aottroets* ձևը պետք է որոնել ըստ այնմ, թե խոսակցական որ ձևը պիտի լինի. և եթե այդ պարզվի, ապա ինչ-որ չափով կհեշտանա բառացանկի բառապաշարի՝ բարբառային ինչ տարածքի բնորոշ լինելը:

Նույն տողում բերված է նաև լատ. *xrianus*-ը, որպիսի բառ չենք հանդիպում լատիներենի մեզ ծանոթ բառարաններում, տա-

⁸² Ցանկում լատ *i*-ի վրա սովորաբար կետ (.) չի դրվում, ուստի *Apiiguhalts* բառի 3-4-րդ նիշերը Օմոնը կարդում է լատ. *i*, հակառակ դեպքում կկարդացվեր լատ. *u*, և ըստ այդմ՝ ընթերցումը համարում ենք ոչ վերջնական, մանավանդ որ այդ տառադարձումը հայ. որևէ բառի համար առայժմ չենք գտնում:

րակուսելի է նաև այդ բառի հայերեն համարժեքի տառադարձումը՝ xpuener (պարզ ընթերցվող) ձևով. Կարիերը նշում է *Քրիստոնէ* բառը, որն, ինչպես վերը նշվեց, տարակուսելի է: Այնուամենայնիվ, եթե կարելի լինի բառը ընթերցել լատ. *chrisma*, (սեռ. հոլ.) *chrismatis*, (ծիս.) «օծում» (նաև *chrismarium* «սուրբ մասունքի՝ նշխարի աման») ձևով, որ բառացանկի այդ խմբին մոտ միավոր է, ապա հայ. *xpuener* նշանակումը կարող է մի ինչ-որ բրբռ. (կամ խսկց.) ձև լինել, որ մեզ համար մնում է անհայտ:

Տող 21. սա ըստ էության տող չէ, այլ ցանկի վերջում, առանձին՝ ձախ մասում, հստակ մանրատառ նշված է լատ. *monachus* «միանձն՝ վանական». դա, թերևս, «գրիչի»՝ իր ով լինելու նշանակումն է, որ դուրս է մնում բուն բառացանկից: Այդ բառի տառատեսակը տարբերվում է, ուստի կարելի է ենթադրել, որ այն այլ է կամ հետագա հավելում: Այս էջի միջին մասում կա կնիք, որ մեր ձեռքին եղած լուսապատճենի վրա անընթեռնելի է:

3. Բնագրային (տեքստային) նոր վերլուծություն

Օմոնը իր հրատարակածը անվանում է “*Manuel de conversation arménien-latin (du X^e siècle)*» [= Հայերեն-լատիներեն գրուցագիրք (X դ.)]: Եվ ինչպես որ ձեռագրում է, այն ներկայացվում է նախ ընդհանուր վերնագրով, այնուհետև՝ չորս բաժնով:

Նա հիմնականում ճիշտ է տառադարձել «գրչագիրը», որը հանգում է հետևյալին. 1) պահպանված է «գրչագրի» ինչպես գրությունը, այնպես է տառադարձումը բացի մեկ-երկու դեպքից (հմմտ. *Brachium - Striuch*), 2) բառացանկում տեղ գտած մի շարք համառոտագրություններ ճիշտ են բացված (*scripta plena*). 3) ուշմիջնադարյան լատինական «գրչագրության» (գրաֆիկայի) որոշ դեպքեր վերածվել են հետագա ավելի պարզ գրության, 4) տեղ են գտել որոշ կրկնություններ և բացթողումներ, որոնք մասամբ պահպանվում են Կարիերի ցանկում, 5) մեկ-երկու բառի դեպքում (*ղեւ-*

տացի և այլն) մենք անում ենք լրացում կամ ճշգրտում, որն, անշուշտ, հարկավոր է:

Մենք արդեն նշել ենք, որ Կարիերի կազմած ցանկը, ի տարբերություն Օմոնի կազմածի, լրացված է նաև հայատառ համարժեքներով⁸³: Այդ լրացումը կատարված է ոչ թե ըստ հայերեն ցանկում եղածի, այլ հիմք է ընդունվել հին գրական հայերենը (գրաբարը) (հմմտ. Ecclesia – Vanc, *վանք*, ն. տ., էջ 16):

Կարիերը հիմնականում ընդունում է Օմոնի վերծանումը, երբեմն տողատակում տալիս է ծանոթագրություններ՝ իբրև բառացանկի միավորների համար իր առաջարկածի պարզաբանում: Այստեղ դրանցից մի քանիսի հետ կապված ունենք հետևյալ դիտարկումները (մյուսներին կանդրադառնանք ցանկի հայերեն բառերի առանձին քննության ընթացքում):

ա) *Կիրակի*-ն բերվում է երկգրությամբ՝ *իւ / ի* [= *y*], *երկուշաբթի*, այլև *երկու* բառերի *ու*-ին հաջորդող նիշը Օմոնը և Կարիերը վերծանում են լատինագիր *t*-ով, որի համար Կարիերը առաջարկում է հայ. *ք* և տողատակում նշում հետևյալը. «*xapte*-ի *x*-ն, այստեղ և հաջորդ բառերում, գալիս է վերջին *ք*-ի և *գ*-ի միացումից *շաբթի* բառի սկզբնական *շ*-ի հետ. հմմտ. *քսան* ծագած *xan* –ից (18): Որևէ հիմք չկա որոնելու *շ-ի* (հուն. ξ) հին արժեքի հետքեր» (ն. տ., էջ 11):

բ) Տառադարձված *hinc xapte* ձևի հայերենը նշվում է ոչ միայն կից գրությամբ՝ *հինգշաբթի*, այլև *գ*-ով (փխ. *կ*), թեև տողատակում տալիս է Սեբաստացու բառարանի աշխարհաբարյան նշումը՝ *հինկշաբթի*, որ ինքը անտեսում է (Կարիերը ոչ միայն այս, այլ մյուս դեպքերում ևս հակված է գրաբարյան-գրական նշանակման,

⁸³ Ի դեպ, Է. Բ. Աղայանը գրում է, որ Պ. դը Լագարդն է փորձել անդրադառնալ բառացանկում տեղ գտած հայերեն բառերի արտասանությանը (տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 106):

որը ոչ այլ ինչ է, քան հեռացում բուն տեքստից): Շարաթ բառը բնագրում *bp* հնչախմբով է (նաև *s*-ով, եթե ընթերցում-վերծանումը ճիշտ է՝ թե՛ Օմնի և թե՛ Կարիերի մոտ. *sabpat*), որը բերվում է գրաբարյան ձևով (փխ. *սարպատ*) (էջ 12): Նման միջամտությունը, ինչ խոսք, տեղին չէ, մանավանդ պատմական հնչյունաբանության տեսանկյունից:

զ) Բավականին ուշագրավ է, բայց ոչ վերջնական Կարիերի տված բացատրությունն այս *իննսուն*-ին (*Ininta*). այդ ձևը՝ *ինինտա*, թերևս նշանակում է *ինին տասն* (?). և եթե սա հավաստի է կամ կարող է լինել ընդունելի, ապա ինչ-որ չափով նկատելի է դառնում այդ տասնավորի նշանակման համեմատաբար վաղ ժամանակի հիմունքը (դենումինացիան):

դ) Այս կետում ևս Կարիերը, բացի 100-ից, ընդունում է Օմնի նշանակում-վերծանումները. այդ թվականը Օմնը վերծանել է *Hariur* (= *հարիուր*), այնինչ Կարիերը դնում է *Haruir* (հայ.՝ *հարուր*), և տողատակում ունի ծանոթագրություն. «խսկց.՝ *հարիւր*» (ն. տ., էջ 13): Սա առարկելի է, որովհետև նախ՝ Օմնի վերծանումը և նշանակումը ճիշտ են, լուսապատճենի վրա՝ միանգամայն ընթեռնելի, երկրորդ՝ Կարիերը լատինագիր *ui* հնչակապակցությունը կարդացել է ոչ թե որպես այդպիսին, այլ իբրև երկբարբառ (*ni* [= *ow*]), վերջինը, իբրև հետագա շրջանի պարզ՝ վերին բարձրացման հետին շարքի ձայնավոր, որ այլ բան չէ քան ժամանակի խախտում (անախրոնիզմ). այդ թվականի հայերեն նշանակումն է *հարույր* (եթե ոչ *հարուիր*. հմմտ. հայ. նոր բարբառներում՝ *հարիր* և այլն)⁸⁴:

⁸⁴ Օմնը դրել է *hariur*, իսկ Կարիերը՝ *haruir*, վերջինը ճիշտ վերծանություն է, սակայն ճիշտ չէ տառադարձումը՝ հայ. *հարուր*, իբրև բրբռ. ձև, գրականը՝ *հարիւր*: Այնինչ ըստ բնագրի ճիշտ վերծանման՝ պիտի լինի *հարուիր* (հնչ.՝ *հարույր*), որն, իրոք, բարբառային է:

ե) Այնուհետև, մյուս՝ 1, 7, 9, 10 80, [90] նիշերի դեպքում ևս Կարիերն ունի ծանոթագրություններ: Այսպես, 1-ը և 7-ը բերվում են երկգրությամբ՝ *մէկ (մէկը)* և *եօթ (եօթը)* [*մէկը* ձևը հարցականով]՝ ծանոթագրելով 1-ի դեպքում՝ «խսկց., meche-ի վերջին e-ն, որ գտնում ենք 35, 55, 59, 60 (համարների բառերում – Վ. Հ.), համընկնում է ժամանակակից *ը-ին*», նույնը՝ 7-ի դեպքում⁸⁵:

զ) Հաջորդը վերաբերում է 9-ին, որ բերվում է ավելորդ *ը-ի* ձևով (հմմտ. In - *ինը*. վերջինը ևս համարվում է խոսակցական՝ գրական *ինն-ի* դիմաց), նույնը 10-ի դեպքում (հմմտ. taz - *տասը*. վերջինս խոսակցական՝ գրական *տասն-ի* դիմաց)⁸⁶:

Օմոնի կողմից ճիշտ վերծանված *utanatschun* ձևի հայերենը Կարիերը նույն կերպ էլ նշանակում է՝ *ութանասուն*, որը համարվում է ոչ գրական՝ ի տարբերություն ծանուցվող *ութուն-ի*. «Forme vulgaire encore employée dans quelques districts de la grande Arménie, pour *ութուն*» [= խոսակցական ձև դեռևս գործածվող Մեծ Հայքի մի քանի գավառներում՝ ութունի դիմաց]⁸⁷:

ե) Կարիերը չունի 90-ի համար որևէ նշանակում, թեև Օմոնը ճիշտ էր վերծանել (LXXXX. ininta). Կարիերն ունի հետևյալ ծանոթագրությունը. «Գրական հայերենում և խոսակցականում՝ *իննսուն*, *Ininta-ն* կարող է ածանցված լինել *ինն/անգամ/տասն* ձևից, բայց պիտի նշեմ, որ ես ոչ մի հետք չեմ տեսնում նման գուգահեռ ձևի» (ն. տ., էջ 13): Տառադարձված Ininta (90) ձևը, ենթադրելի է, որ եղած լինի ոչ գրական (բրբռ.-խսկց.) *ինին տա(սն)*

⁸⁵ Այստեղ առաջարկվող *e>ը* անցումը եթե անգամ ընդունելի համարվի, ապա այն պիտի եղած լինի իր ժամանակի մեջ:

⁸⁶ Տեղին կլինեք այստեղ տեսնել ճիշտ տառադարձված taz-ի վերջնահնչյուն z-ի վերաբերյալ հեղինակի մեկնաբանությունը, որը չի արվում:

⁸⁷ Բաց է մնում տառադարձված tsch-ի հնչյունական արտացոլման հարցը, որը, կարծում ենք, հազիվ թե կարելի լինի հայ. ս-ով լուծված համարել:

ձևը, ընդ որում վերջնավանկի շփականի անընկալելի արտասանության մեջ:

ը) Փակագծում հարցականով բերվող ձևը տրվում է բառավերջի *e*-ի համար, որ վերծանել է Օմոնը. եթե առարկելի համարենք այդ վերծանությունը, ապա թերևս հնարավոր լինի *e*-ի փոխարեն *c* նշանակում՝ իբրև հոգն. *h*-ի (փխ. *p*-ի) ցուցիչ, և ըստ այդմ՝ *ջուրք* ընթերցում:

Այնուհետև, բառացանկի երրորդ խմբում ընդգրկված են մեծ թվով բառեր, որոնց մի մասի վերաբերյալ Կարիերն անում է ավելի լայն ընդգրկման բանասիրական-բնագրագիտական դիտարկումներ, որն ունի առարկայական պատճառներ, և ինչպես մյուս դեպքերում է, այն իր ժամանակի համար եղել է միանգամայն գնահատելի:

Մտորև անդրադառնանք դրանցից առավել կարևորներին:

ա) Այստեղ վիճելի է *arechac*-ի տառադարձված *ch*-ի հայ. *q* համարժեքի նշանակումը, որ տալիս է Կարիերը, ընդ որում այն համարում է բրբռ.՝ գրական *արեզակն*-ի դիմաց: Լատ. *Luna* «լուսին» բառի հայերենը ճիշտ է վերծանված՝ *lusenga*, որի համար Կարիերը դնում է գուգահեռ *լուսնկայ*//*լուսինկայ*, իսկ գրականը՝ *լուսին*, և նման լուծումը նույնպես առարկելի է:

բ) Այս *Hahc* - *աչք* գուգադրման դեպքում Կարիերը ծանոթագրում է. «Ըստ *Chahc* = *խաչ* (82) անալոգիայի՝ այստեղ *Hahc*-ին պիտի համապատասխանի *աչք*» (ն. տ., էջ 14): Իսկ *Lizu* - *լիզու* ձևը ևս համարվում է բարբառային՝ հղելով Յ. Յ. Շրյոդերի աշխատությանը, որն ունի այդ ձևը («Գանձ արամեան լեզուի», Ամստերդամ, 1711, էջ 356), իսկ գրականը համարվում է բնականաբար, *լեզու* ձևը⁸⁸:

⁸⁸ Հմմտ. *Ա. Մեյե*, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 448:

գ) Կարիերը *Vize* – *վիզ* բառի, այլև *Cize* – *ծիծ* և *Puerhe* – *փոր* բառերի դեպքում ուղիղ ձևերին զուգահեռ հարցականով դնում է *ը* (*վիզը, ծիծը, փորը*), իբրև արտացոլում տառադարձված *e*-ի. հարցական դնելը անտեղի է, որովհետև նման նշանակումը, իրոք, ճիշտ է արտացոլում բարբառային արտասանությունը [(հմմտ. նաև *puer*-(he) > *պուեր*-(ը)]:

դ) Բառացանկում լատ. *pectus* «կուրծք», «այրական ուժ», *latus* «կողմ, կող(ք)». «կողոսկրեր՝ թիկունքից կրծքավանդակ» բառերին հայերեն համարժեք է դրված *սիրտ* բառը՝ երկու դեպքում էլ տառադարձված *scirt*. սրանց համար Կարիերը տալիս է միևնույն ծանոթագրությունը. առաջինի համար՝ «ավելի ճիշտ՝ *սիրտ*», երկրորդի համար ավելացնում՝ «նույն բառը արդեն գործածված է վերևում (58)» (ն. տ., էջ 15):

ե) Կարիերի համարակալումով նույնն են 69-70-ը՝ լատ. *renes*, սակայն տարբեր են թե՛ տառադարձումը (*Handam, Gernac*) և թե՛ հայերեն նշանակումը (*անդամ* և *կոնակ*). ըստ այսմ՝ առաջին *renes*-ը ծանոթագրվում է՝ «ավելի ճիշտ՝ *անդամ*. *renes*-ի համար ճիշտ տերմինը կլիներ *երիկամունք*, իսկց.՝ երիկամ կամ պոլոչիկ» (ն. տ., էջ 15), իսկ երկրորդը՝ կոնակ, չունի նույնպիսի ծանոթագրություն, այլ պարզապես նշվում է՝ «իսկց.՝ *կունն*-ի փոքրացուցիչ» (ն. տ.):

զ) Այսպես նաև՝ լատ. *coxa* «ազդր, զիստ, բարձ» բառը, որ ցանկում թարգմանված է *andam*, Կարիերը նույնպես դնում է *անդամ* հետևյալ ծանոթագրությամբ. «Ավելի ստույգ՝ «անդամ», մենք տեսնում ենք նույն բառը գործածված *renes*-ի (69 համար): Թարգմանությունը *coxa*-ի կլիներ *ազդր*, իսկց.՝ *պուտ*. միաժամանակ [հուն.- Վ. Հ.] *μηρος* կտրվի *անդամք* ձևով (*Apoc. XIX, 16*)» (ն. տ., էջ 16):

Իսկ չորրորդ խմբում ընդգրկված են ոչ մեծ թվով (12) բառեր, որոնց համար Կարիերն ունի ծանոթագրություններ. դրանցից մի քանիսը հետևյալ բնույթի են:

ա) Առարկում է, թե *վանք*-ը լատ. ecclesia-ն չէ, իսկ «*Տէր*-ին ավելի շուտ համապատասխանում է dominus-ը, deus-ին՝ *աստված*-ը» (ն. տ., էջ 16): Թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում առարկելի է այն, որ հայ. այդ բառերն այստեղ (տեղեկատուի խոսքում) հանդես են եկել (իբրև թարգմանություն) լատ. ecclesia, deus բառերի համարժեքներ ոչ այնքան լեզվի գրական, որքան խոսակցական ըմբռնումով:

բ) Թերևս նույնը պիտի ասվի հաջորդ՝ լատ. altare բառի թարգմանական *պատարագ*-ի վերաբերյալ, այն նկատառումով, որ հայ. *պատարագ*-ը առհասարակ (զոհա)սեղանի դիմաց կատարվող արարողություն («զոհաբերություն») է: Այնինչ Կարիերը altare-ը ընդունում է «սեղան» (չեզոք) իմաստով՝ գրելով. «Ստույգ՝ «զոհ». *altare* բառի ճիշտ թարգմանությունը կլինե՞ր *սեղան*» (ն. տ.):

գ) Անընդունելի պիտի համարվի լատ. angelus բառի հարցմանը տրված arrachil tevanoet պատասխան-թարգմանությունը (տառադարձումը ճիշտ է, նույնը՝ Օմնի ցանկում է) զուգադրել *առաքեալ թեւաւոր* կապակցությամբ (Կարիերը միաժամանակ առաջարկում է tevanoet-ի բառավերջի t-ն կարդալ *p* [ֆրանս. r]). և որքան էլ կարող է տարակուսելի լինել, այստեղ *arrachil* = *արագիլ* բառն է, որ իմաստով, այսինքն՝ պատասխանող-թարգմանչի մտածողությամբ, կապվում է «բարի լուրի, ավետիսի» («ավետիքի») հետ, որն իր գործառական (ֆունկցիոնալ) նախնականությամբ այլ պատկերացումների արձագանք է՝ առնված քրիստոնեական համատեքստի մեջ: Կարելի է մտածել նաև, որ *թեւաւոր*-ի տեղ գտնելը հավելադրություն է (*արագիլ* բառի լրացուցիչ բացատրություն). այդ կապակցության բուն, հիմքում եղած իմաստն է «հրեշտակ. զվարթունք»:

դ) Լատ. *monachus* բառը, որի թարգմանությունը տառադարձված է *apiiguhalts* (նույնը՝ Օմոնի ցանկում է). ii-ի փոխարեն, թերևս, լինի *u* [?]. այս կետը ունի կարիք հատուկ քննության⁸⁹:

ե) Այս խմբի նախավերջին բառն է լատ. *levita*, որի հայերեն թարգմանությունը Օմոնի ցանկում *aottroets* տառադարձումն է. Կարիերը դա չի ընդունում (դրված են կախման կետեր)՝ հետևյալ ծավալուն ծանոթագրությամբ. «*Levita* բառը այստեղ պիտի նշանակի «սարկավագ» և կարող է թարգմանված լինել *սարկաւագ* բառով. որի հետ *aottroets* բառը չունի նմանություն: Այստեղ ևս ձեռագրի բնագիրը կարող է վնասված լինել: Բառի սկիզբը գուցե համապատասխանում է *աղոթք*-ին, բայց վերջը մեզ համար մնում է անորոշ»⁹⁰:

Լատ. *levita* «ղեւտացի», այն իր նույնական արտացոլումը պիտի ունենար, քանի որ այդ բառը հայերենում հին փոխառություն է, և եթե այդ փոխառյալը չի պահպանվել հետագայում (խոսակցականում), որով սպասելի էր՝ ներկայացվեր *levita*-ն, ապա *aottroets* ձևը պիտի որոնել հայերենի ո՛չ գրականում (բարբառներում կամ խոսակցականում)⁹¹: Թերևս կարելի է ենթադրել *աղոթք* (*աղոթեցք*) (?), սկզբնավանկում *ղ*-ի սղում, որ անհնարին չէ (իբրև ղևտացիների սպասավորման մեջ մտնող գործառություն), եթե ոչ (բրբռ.-խսկց.) *աղոթրան* (< *աղոթարան*) «առավոտյան աղոթքի դիրք՝ առ տեր աստված» (?):

զ) Ցանկի վերջին միավորն է լատ. *xpianus*, հայերեն համարժեքը տառադարձված է *xpuener*, և Կարիերը տալիս է թարգմանություն՝ *քրիստոնէ*. նախ՝ լատ. *xpianus* բառ չենք գտնում բառարան-

⁸⁹ Կարիերն այս կետում տալիս է ծանոթագրություն (տե՛ս վերը):

⁹⁰ *A. Carrière*, նշվ. աշխ., էջ 17:

⁹¹ Դա, իր հերթին, կօգնի այս ցանկի և նրա ինֆորմանտի՝ լեզվի որ տարբերակին պատկանելիս լինելը:

ներում, այնուհետև՝ նրա հայերեն արտացոլումը՝ *xpuener*, ճիշտ է վերծանված (Օմոնի կողմից, որ ընդունում է Կարիերը), որի հայերենը ևս դժվար է վերականգնել. բոլոր դեպքերում հարցը մնում է չլուծված⁹²:

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք Կարիերի բնագրային աշխատանքի վերաբերյալ վերը կատարված դիտարկումները, ապա կարելի է ասել, թե բավականին մեծ է անվանի հայագետի ներդրումը այս խնդրի լուծման ուղղությամբ՝ վերծանություն, տառադարձություն, հայերեն նշանակում և այլն: Առանձնապես ուշագրավ են նրա այն նկատառումները, որոնք բերվում են ցանկին կից տողատակի ծանոթագրությունների ձևով: Կատարված է բնագրագիտական կարևոր վերլուծություն բառացանկում տեղ գտած ձևերի արտասանական և բառային շեղումների վերաբերյալ. օր.՝ լատ. *bonus* «լավ» բառը ցանկում թարգմանված է *աղէկ*, որի համար տողատակում ծանուցվում է՝ «խսկց *բարի*-ի փոխարեն»: Նկատելի հնչյունական և բառային տարբերությունները նշվում են հին գրական հայերենի (գրաբարի) համեմատությամբ, որ հետագա ուսումնասիրողների համար եղել է օրինակ այլ գրավոր հուշարձանների լեզվի քննության համար:

Այդուհանդերձ, այստեղ առարկելի է այն, որ՝ 1) անտեսված է գրաբարի սկզբնական և հետագա փուլերի միջև անցումը (խզումը), 2) հնչական-արտասանական գրեթե ամեն մի տարբերություն բացատրվում է իբրև ոչ գրական (եթե ոչ՝ բարբառային) շեղում, որպիսով անտեսվում է տեղեկատուի (ինֆորմանտի) լեզվական-անհատական կողմը, այլև 3) հաշվի չի առնվում լատիներենի գրադարձական հնարավորությունը՝ հայերենի համեմատությամբ: Այս

⁹² Ցանկից դուրս ձեռագրի ներքևի ձախ կողմում կա *monacus* բառը, որը, հավանաբար, «գրչինն» է (գրող-արտագրողինը), իսկ մեջտեղում՝ կլոր կնիք, լատինատառ անընթեռնելի գրությամբ:

ամենը նշանակում է, որ լեզվական իրողությունների համաժամանակյա վիճակը դիտարկվում է ոչ թե ինքնին («ինքն իր մեջ»), այլ պատմական (տարածամասնակյա) կտրվածքում, իսկ վերջինը՝ ոչ համակարգված (սիստեմատիկ) ձևով: Վստահ կարելի է ասել, թե գրաբարի և այդ բառացանկի լեզվի տվյալների համեմատությունը, ըստ Կարիերի, մի փորձ է, սակայն ոչ օրինակ հետագա ուսումնասիրողների համար՝ նրանում այս կամ այն (մանավանդ ուշ շրջանի կամ նոր) բարբառի համակարգ կանխադրելու:

Այնպես որ հայերեն-լատիներեն բառացանկի միավորների հնչյունական, բառային տարբերությունների քննությունը ենթադրում է ավելի համակողմանի և առավել ամբողջական մոտեցում, քան որ կատարվել է անվանի բանասեր Օ. Կարիերի հիշյալ աշխատանքում: Հայերենի պատմական հնչյունաբանության, բառագիտության բնագավառում այսօր կան նոր տվյալներ, որոնք կարելի է նկատի ունենալ այս դեպքում նույնպես:

Կարիերը սույն 90-բառանոց ցանկի վերաբերյալ բերում է չորս տասնյակից ավելի նման ծանոթագրություն, որոնք մենք խմբավորել ենք մոտ մեկ տասնյակ կետերի մեջ՝ մեր մեկ այլ աշխատանքում⁹³:

Հետագայում ևս, ինչպես վերը նշել ենք, այս կամ այն չափով խոսվում է այդ բառացանկի մասին: Դրանք, ի տարբերություն վերը բերված երկուսի, բավականին ակնարկային են, այլև թողնում են կողմնակի անդրադարձի տպավորություն՝ իբրև այս կամ այն չափով առնչվող իրենց բուն խնդիրներին. նկատի ունենք համեմատաբար ուշ գրված աշխատանքները⁹⁴:

⁹³ Տե՛ս Վ. Գ. *Համբարձումյան*, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (X-XVIII դդ.), հ. 2, էջ 55-57:

⁹⁴ Տե՛ս վերը՝ տողատակի ծանոթագրություն 9-ը:

Կարիերն այս ցանկի տեղադրումից, որոշ տեղերի վերծանությունից, այնուհետև վերլուծությունից առաջ անդրադառնում է բառացանկի (ձեռագրի) բանասիրական և բնագրագիտական քննարկմանը՝ հայտնելով կարծիք գրության ժամանակի, լատիներեն ձևերի թարգմանության երկակիության, գործածության նպատակադրման մասին և այլն: Այս հարցերին հետագա ուսումնասիրողները ևս այս կամ այն չափով անդրադարձել են՝ ամենից առաջ շեշտը դնելով երևույթի մշակութային կողմի վրա⁹⁵:

Ըստ այսմ՝ 90-բառանոց ցանկի բնագրային - բանասիրական քննարկման համար Կարիերն ունի 42 ծանոթագրություն, որոնք կարելի է խմբավորել հետևյալ կերպ:

ա) *Աղէկ* (փխ. *բարի*) ծանոթագրման նման են՝ *եօթ*, *եօթը* (փխ. *եօթն*), *ինը* (փխ. *ինն*), *տասը* (*տասն*), *ութանասուն* (փխ. *ութսուն*), *հարուր* (փխ. *հարիւր*), *արեգակ* (փխ. *արեգակն*), *լուսնկայ*, *լուսինկայ* (փխ. *լուսին*), *լինտ* (փխ. *լինտր* / *լինդր*), *լիզու* (փխ. *Լեզու*), *խոչակ* (փխ. *խոչափող*), *ծիծ*, *ծիծը* (փխ. *ստին*, *ստինք*), *կոնակ* (փխ. *կուռն*), *ծունկ* (փխ. *ծունգք* / *ծունկք*): Այստեղ կարող է լինել առարկություն. օրինակ՝ լատինագիր հայերեն ձևի տառադարձումը հաճախ տարբերվում է բնագրից (օրիգինալից), և ըստ այդմ էլ այն համեմատվում է գրաբարի հետ (*Hiocht* – *եօթ*, *եօթը*, *Ստ* – *ութ*, *Իո* – *ինը* , *Taz* – *տասը* և այլն):

բ) Եղած այս կամ այն բառի նման գրանցումը ոչ թե քննվում է ինքնին, այլ գրական այլ աղբյուրների օգտագործմամբ. համեմատության եզր է ընտրված հիմնականում Մխիթար աբբա Սեբաստացու բառարանը, մասամբ՝ Յ. Շրյոդերի քերականությունը, այլև Մ. Դյուլորիեի և Պ . դը Լագարդի աշխատությունները :

⁹⁵ Հմմտ. *Ա. Գ. Դոլուխանյան*, Լատիներեն-հայերեն հնագոյն բառարանը //«Շիրակ» (ամսագիր), Բեյրութ, 2006, ապրիլ- յունիս, էջ 44-47:

գ) Որոշ դեպքերում չի նշվում բառի հայերեն համարժեքը (հմմտ. 25. LXXXX – Ininta –, 89. Levita – Aottroets –), երբեմն էլ հայերենի դեպքում տրվում է ոչ թե եղած, այլ գրաբարյան ձևը (հմմտ. 16. XIII In – ինը, 17. X Taz – տասը , 19. XXX Erchun – երեսուն և այլն):

դ) Կան բառի հայերեն գրության անհարկի միջամտություններ, երբեմն բառը բերվում է հարցականով և այլն. հմմտ. 2. Feria II Ergout xapte երկու (ք) շաբթի, 35. Aqua Chure ջուր [ջուրը (?)], 55. Collum Vise վիզ / [վիզը (?)], 59. Mamilla Cize ծիծ / [ծիծը (?)], 60. Venter Puerhe փոք / փոքը և այլն, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ բնագրում առկա ժամանակի խոսակցական ձևերի հնարավոր հաշվառման արդյունք:

ե) Տեղ է տրվում հայերեն նշանակման կրկնակ ձևերի (տարբերակների). հմմտ. *Կիրակե / կիրակե, եօթ / եօթը, լուսնկայ / լուսինկայ, յունք / յոնք, ոլոք / ոլոգ* և այլն, որն այլ բան չէ, քան լատինագիր հայերեն բառի ոչ լիարժեք արտացոլման հետևանք. քննարկումը մնում է առկաիս և այլն:

զ) Նկատելի է Օմնի ցանկից (1) տարբերվող վերականգնում (2): Հմմտ.

- | | | |
|---------------------------|---|--------------------------------|
| (1) C. Harur | – | (2) C. Haruir հարուր, |
| (1) Crus – Vluec | – | (2) Crus – Uluec ոլոք, ոլոգ, |
| (1) Monacus – Apiiguhalts | – | (2) Monachus – Apiiguhalts ... |
| (1) Pes – Vaden | – | (2) Pes – Uaden ոտն: |

է) Սահմանվում են հնչյունական որոշակի գույզադիպումներ՝ ըստ բառի կազմում դրանց գործածության դիրքային առանձնահատկությունների. 1) պայթական բաղաձայնների դեպքում՝ *p > p, q > ch, kc, η > d, uy > p, ʎ > g, k, c, ch, m > t, d*, 2) ձայնավորների

դեպքում՝ ե > (բառասկզբում) e, (մեկ այլ ձայնավորից առաջ) hi, n (բառասկզբում) > u, ua, hua (բառամիջում), ue, ua և այլն⁹⁶ :

Բառացանկի որոշ բառերի ձայնավորների գրության մասին, ինչպես վերը մասամբ նշեցինք, խոսում է նաև Ա. Մեյեն. այստեղ ավելացնենք հետևյալը: Նա նախ՝ իր մի գրախոսականում՝ գրված Յ. Կարստի կիլիկյան հայերենի քերականության վերաբերյալ (տե՛ս ստորև)⁹⁷, այնուհետև՝ Լաուերի հայտնի քերականության թարգմանության առիթով, որ կատարել է Կարիերը. «Ի պատիվ հայ բանասեր Մ. Էմինի և հանուն Արևելյան լեզուների դպրոցի. նա (իմա՛ Կարիերը – Վ. Հ.) հրատարակում է մի հին լատին-հայ բառարան: Այս բառարանը, որ գտնուում էր Թ դարի վերջերի կամ Ժ դարի սկզբների մի ձեռագրում, ամենահին բնագիրն է, որ վկայում է արևմուտքում հայերենի փոքր ի շատե՛ ծանօթութիւն լինելու մասին և լեզուագիտական տեսակետից շատ հետաքրքրական է⁹⁸: Մեյեի տեսական սկզբունքն այստեղ այն է, որ այդ բառացանկը պիտի որևէ չափով պարունակի ժամանակի լեզվական կնիքը (հնչյունական-արտասանական և այլն), ուստի այն կարելի է քննել ժամանակի լեզվի խոսակցական (եթե ոչ բարբառային) տարբերությունների նկատառումով: Դա նկատելի է նրա դիտարկումների մեծ մասում, որոնցից մի քանիսին հարկ ենք համարում անդրադառնալ ստորև:

ա) Մեյեն գրում է. «...այն տեղեկությունները, որ պր. Կարստը տալիս է է-ի և է-ի արտասանության մասին, ուշագրավ են: Հետա-

⁹⁶ Un ancien glossaire latin-arménien, p. 18.

⁹⁷ A. Meillet, Remarques sur la grammaire historique de l'arménien de Cilicie de M. J. Karst // «*Zeitschrift für armenische Philologie*», Band 2, Heft 1, 1903, էջ 18-28 (= *Մ. Մեյե*, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 441-451, 448):

⁹⁸ Տե՛ս «Արարատ» (ամսագիր), 1909, էջ 911 և այլն:

քրքրական կլինէր դրանք համեմատել այն եզրակացութիւններին հետ, որ կարելի է հանել 9-րդ դարի վերջի կամ 10-րդ դարի սկզբի լատիներէն մի ձեռագրի լատիներէն-հայերէն բառացանկի (glossaire) գրութեան ձեռքից (Carrière, Un ancien glossaire latin-arménien, Փարիզ, 1886):

Արդարև այստեղ *է*-ն նշված է *e*-ով, թեկուզ այն շեշտված լինի, № 80, 88:

Ընդհակառակն, անշեշտ *է*-ն նշված է *e*-ով թե՛ բառամիջում, ինչպես *arechac արեգակ* բառում (№ 37), թե՛ բառասկզբում, ինչպես *erginc երկինք* բառում. սակայն, երբ *է*-ն շեշտված է, այն նշված է *ie*-ով՝ *eriec երեք* (№ 3 և 10), *eriesc երեսք* (№ 53), *lizu*-ն «lingua. լեզու» (№ 51) ներկայացնում է ոչ թե հայ *է*-ի փոփոխությունը *i*-ի, այլ *լիզու* հայտնի բարբառային ձևը:

Բառացանկում անշեշտ *n*-ն հերկայացված է *u*-ով (իմա՛ *v*-ով. - Վ. Հ.), մի բան, որ ճշտիվ համապատասխանում է պր. Կարստի ուսուցած կիլիկյան արտասանությանը, էջ 21, այսպես՝ *khurec xapte չորեքշաբթի* (№ 4), ոչ բառասկզբնային շեշտված *n*-ն արտահայտված է *ue*-ով (իմա՛ *ve*-ով. - Վ. Հ.)՝ *uluec ոլոք* [№ 73, որտեղ բառասկզբի անշեշտ *n*-ն ներկայացված է նաև *u*-ով. (իմա՛ *v*-ով. - Վ. Հ.)], *khuert* (կարդալ՝ *khuerc*) *չորք* (№ 11), *puelc փողք* (№ 56), *cuelc կողք* (№ 67), *cuech կոճ* (№ 75) և այլն: Եվ բառասկզբնային շեշտված *n*-ն ներկայացված է *ua*-ով՝ *hualn ողն* (№ 66), *uaden ոտն* (№ 74). հմմտ. Լեհաստանի հայերէնում բառասկզբնային շեշտված *n*-ի յուրահատուկ արտասանությունը, որ հիշատակված է պր. Կարստի կողմից, էջ 20, № 5»⁹⁹:

Այս կետում, ինչպես նկատում ենք, տարբերությունները վերաբերում են միջին բարձրացման առաջին շաբթի *է*-ի և վերին

⁹⁹ Ա. Մէյէ, նշվ. աշխ., էջ 448:

բարձրացման հետին շարքի *ռ*-ի՝ հին գրականի համեմատությամբ բառացանկում հանդես բերած տարբերություններին, ընդ որում՝ շեշտի դիրքով պայմանավորված, և որոնք այս առումով հատուկ քննության առարկա պիտի դառնան՝ տարածամասնակյա կտրվածքում:

Մյուս կողմից՝ *արեգակ*-ը բերված է առանց *ն*-ի, իսկ *լիզու*-ն ավելի հին է, քան *է*-ով ձևը (հմմտ. *lingua // dingua*. Մեյեն համարում է բարբառային)¹⁰⁰:

բ) Մեյեն խոսում է նաև հայ. *լ / ղ* լծորդության մասին, որին անդրադառնում է Կարստն իր գրքում, և դարձյալ օգտագործվում են բառացանկի համապատասխան տվյալները այդ երևույթի պատմական տեղաշարժը ճիշտ ներկայացնելու նպատակով, սակայն այդ պատմականը բռնում է միայն գրական լեզու և հայերեն-լատիներեն բառացանկ եզրերը¹⁰¹:

Մեյեն գրում է. «...Ֆրանսերենի *lg*-ի *ղտ* տառադարձումը շատ խորհրդավոր է թվում, երբ կարդում ենք պր. Կարստի ուսումնասիրությունը. այն շատ հստակ է դառնում, երբ մտաբերում ենք, որ այն ժամանակ, երբ Կիլիկիայում սկիզբ առան ֆրանսիացիների և հայերի հարաբերությունները, այսինքն՝ 11-րդ դարում, ֆրանսերեն *l*-ն բաղաձայնից առաջ քմային *l* էր և չէր հանգել *ւ*-ին, որ այն պետք է դառնար: Այս տառադարձությունից հետևում է, թե հայե-

¹⁰⁰ Հմմտ *Հ. Պեղերսեն*, *Հայերեն եւ դրացի լեզուները*, Վիեննա, 1907, էջ 136:

¹⁰¹ Այս լծորդության մասին տե՛ս նաև *Գ. Այվազեան*, Տեսութիւն կարծեաց հայր Արսենի Բագրատունոյ յաղագս հնչման *ղ* և *լ* տառից, Վենետիկ, 1852: *A. Meillet*, *Remarques sur les l de l'arménien classique // «Յուշարձան»*, Վիեննա, 1911, էջ 209-211 [= *Ա. Մեյե*, Դիտորդություններ դասական հայերենի *լ*-երի մասին (*նույնի*, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 75-80)]: *Հ. Աճառյան*, Ե՞րբ *լ* դարձավ *ղ* [տե՛ս «Հայերեն արմատական բառարան», հ. 4, 1979, էջ 648- 654 («Հավելված»-ում)]:

րեն *ղ*-ն դեռևս այն կոկորդային ձայնեղ շփականը չէր, որ նա դարձավ հետագայում, և այն դեռևս *լ*-ի բնույթ ուներ:

Եվ իրոք, վերոհիշյալ լատիներեն-հայերեն բառացանկում *ղ*-ն նշված է *hl*-ով՝ *ahl աղ* (№ 34), իսկ *astil աստղ* (№ 39), *puelc փողք* (№ 56), *hualn ողն* (№ 66), *cuelc կողք* (№ 67) բառերում՝ պարզապես *լ*-ով:

Տարբերվող միակ օրինակը *aihich «լավ»* (№ 85) *աղէկ*, ակնհայտորեն խեղաթյուրված է ամեն տեսակետից: Այս առթիվ նշենք, ֆրանսերենի հայերեն տառադարձության եղանակները, որոնք հաստատվել են 11-րդ դարում, շարունակվել են մինչև իսկ այն ժամանակ, երբ դրանք ո՛չ ֆրանսերենի արտասանությանն էին համապատասխանում, ո՛չ էլ հայերենի: Դրանք հանդիպում են 16-րդ դարի և նույնիսկ հետագա բնագրերում, սակայն դրանցից ոչ մի հետևություն չի կարելի անել»¹⁰²:

Այս դեպքում ևս նկատենք, որ քննությունն արվում է գրական հայերենի նորմայի համեմատությամբ բառացանկում նկատելի շեղումների քննարկման ուղղությամբ, թեև այն երբեմն համեմատության մեջ է դրվում ֆրանսերենի հետ:

Եվ եթե ամփոփելու լինենք Կարիերի և Մեյեի դիտարկումները, ապա ամենից առաջ նկատելի է այն, որ բառացանկի հընչյունական-տառադարձական տարբերությունները քննվում են ոչ ինքնին («ինքն իր մեջ»), որ այնքան էլ հեշտ չէ, այլ ի համեմատություն հին գրական հայերենի ընդունված նորմայի: Իսկ դա դեռևս միակ հնարավորությունը չէ, մանավանդ եթե ժամանակային հեռավորության անտեսման պայմաններում իսկ կան այլ կարգի դրժ-

¹⁰² Նույն տեղում: Մեյեից մեջբերված հատվածի վերջին նախադասության առնչությամբ ստորև համեմատություն ենք անցկացնելու այս բառացանկի և Ամբրոսիոս Թեզեոսի նյութի (1539 թ.) միջև՝ հնչյունական մակարդակում:

վարություններ, օրինակ՝ հին հայերենի գրական նորմայի ճշգրտության աստիճանը, քանի որ այն, ինչպես գիտենք, ենթարկվել է այսպես կոչված, գրական-եկեղեցական լեզվական ստանդարտի, այնուհետև՝ այդ նորման տարբեր է ժամանակի մեջ, որ նկատելի է հետագայում երևան եկած գրական հուշարձանների ավելի մանրամասն քննությունից և այլն:

Այսուամենայնիվ, նկատելի է, որ հետագա ուսումնասիրությունները գնացին ավելի հեշտ ճանապարհով՝ խորացնելով բառացանկի՝ գրական լեզվի առնչությամբ բարբառային իրակություններ ներառելու մոտեցումը, որը նկատում ենք հատկապես վերջին ժամանակներս երևան եկած աշխատություններում (ցանկի քննությունն իբրև բարբառագիտական նյութ)¹⁰³:

4. Համադրական տախտակ նշանակումների և գրադարձության

Այստեղ կազմում ենք համադրական տախտակ, որն ընդգրկում է Օմոնի ցանկը (այունակ 1 և 2), Կարիերի նշանակումը (այունակ 3) և մեր կողմից առաջարկվող (ենթադրյալ) գրանցումը (գրադարձությունը) (այունակ 3): Ընդ որում այունակ 1-ում տվյալ բառին կից տալիս ենք նախ ցանկի հերթական համարը, այնուհետև՝ հայերեն (գրաբար) թարգմանությունը՝ չակերտներում, այունակ 2-ը լատինատառ «գրչագրի» նշանակումն է Օմոնի կողմից, այունակ 3-ը նույնի հայատառ նշանակումն է Կարիերի կողմից՝ տառացի կամ բառացի եղանակով, իսկ 4-ում տալիս ենք հայերեն բառի լատինագիրը հայատառ գրությամբ՝ լատիներենի հնչյունաբանության կանոնների մասնակի հետևողությամբ¹⁰⁴:

¹⁰³ Այդ մասին ավելի ուշ՝ մեր այս շարադրանքում:

¹⁰⁴ Կարիերի ցանկը նույնպես ունի համարակալում՝ արաբական թվանշաններով:

Ամենևին հավակնություն չունենալով, թե մեր կողմից բերվող գրադարձությունը միակ ճիշտն է կամ անառարկելին, կարծում ենք, որ այն մոտավոր պատկերացում է տալիս բառի՝ տվյալ ժամանակի մեջ հայախոս տեղեկատուի (խոսակցական, եթե ոչ բարբառային) արտասանության (հնչարտաբերության) վերաբերյալ: Գրադարձության մեջ որոշ գրերի («տառերի») ոչ միակերպ նշանակումը հիմնականում պայմանավորված է հնչաշղթայի օղակների (միավորների) դիրքի տարբերությամբ, մասամբ հաշվի ենք առել լատիներենի համապատասխան կանոնը նման հնչակապակցման դեպքում:

1. Լատիներեն	2. Հայերեն «գրչագիր»	3. Հայ. նշանակում (ըստ Կարիերի)	4. Հայ. գրադարձու- թյուն (ենթադրյալ)
1. Dies dominica «Տիրոջ օր»	Kyrache	կիրակե // կիրակե	կիրակե
2. Feria II «միջ. 2»	Ergout xapte	երկու(ք)շաբթի	երգուտ խապտե
3. Feria III «միջ. 3»	Eriec xapte	երեքշաբթի	երիեկ խապտե
4. Feria IIII «միջ. 4»	Khurec xapte	չորքշաբթի	կհուրեկ խապտե
5. Feria V «միջ. 5»	Hync xapte	հինգշաբթի	հինկ խապտե
6. Feria VI «միջ. 6»	Urpap	ուրբաթ	Ուրպատ
7. Feria VII «միջ. 7»	Sabpat	շաբաթ	սաբպատ
8. I «մի»	Meche	մեկ (մեկը)	մեկը

9. II «երկու»	Ergout	երկուք	երգուտ
10. III «երեք»	Eriec	երեք	երիեկ
11. IIII «չորք»	Khuert	չորք	կհուերտ
12. V «հինգ»	Hinc	հինգ	հինկ
13. VI «վեց»	Viit	վեց	վիիտ
14. VII «եւթն»	Hiocht	եօթ, եօթը	հիոիտ
15. VIII «ույթ»	Ut	ույթ	Ուտ
16. VIII «ինն»	In	ինը	ին
17. X «տասն»	Taz	տասը	տազ
18. XX «քսան»	Xan	քսան	քսան
19. XXX «երեսուն»	Erchun	երեսուն	երիսուն
20. XXXX «քառասուն»	arraschun	քառասուն	քառասիսուն
21. XXXXX «յիսուն»	Ischun	յիսուն	իսիսուն
22. LX «վաթսուն»	Vatschun	վաթսուն	վատսիսուն
23. LXX «եւթանասուն»	Hioctanatschun	եօթանասուն	հիոկտանատսիսուն
24. LXXX «ութսուն»	Utanatschun	ութանասուն	Ուտանատսիսուն
25. LXXXX «իննսուն»	Ininta	ինինտա	[.....]
26. C «հարեր»	Haruir	հարուր	հարույր
27. M «հազար»	Hazar	հազար	հազար
28. Panis «հաց»	Haz	հազ	հազ
29. Caro «միս»	Misc	միսք (հոգն. միս-ի)	միսկ
30. Vinum «գինի»	Chini	գինի	չինի
31. Caseus «պանիր»	Paner	պանիր	պաներ

32. Ovum «ձու»	Chu	ձու	ձու
33. Piscis «ձուկն»	Chugen	ձուկն	ձուկըն
34. Sal «աղ»	Ahl	աղ	ահլ
35. Aqua «ջուր»	Chure	ջուր (ջուրը)	չուրը
36. Celum «երկինք»	Erginc	երկինք	երգինկ
37. Sol «արեւ»	Arechac	արեգակ	արեկհակ
38. Luna «լուսին»	Lucenga	լուսնկայ, լուսինկայ	լուցենգա
39. Stella «աստղ»	Astil	աստղ	աստիլ
40. Terra «երկիր. գետին»	Kcedinc	գետինք	քեդինկ
41. Homo «մարդ»	Anzen	անձն	անզըն
42. Capillus «մազ»	Mazen	մազն (ն հող)	մազըն
43. Oculus «ակն. աչք»	Hahe	աչք	հաչ
44. Supercilium «յոն»	Hunc	յունք, յոնք	հունկ
45. Cilium «արտեւանունք»	Ardevanunc	արտեւանունք	արդեւանունկ
46. Nasus «քիթ»	Chit	քիթ	չիտ
47. Os «բերան»	Peran	բերան	պերան
48. Labra «շուրթն»	Scirtum	շրթունք	սկիրտում
49. Dens «ատամն»	Atmunc	ատամունք	Ատմունկ
50. Gengiva «լինդ»	Lind	լինտ	լինդ
51. Lingua «լեզու»	Lizu	լիզու	լիզու

52. Barba «մորուք»	Muruc	մորուք	մորուկ
53. Facies «երես»	Eriesc	երեսք	երիեսկ
54. Auris «ունկն. ականջ»	Aganch	ականջ	ագանջ
55. Collum «վիզ»	Vise	վիզ (վիզը)	վիզը
56. Gula «ըմպան»	Puelc	փողք	պուելկ
57. Guttur «կոկորդ»	Kcerchac	խոչակ	խերչակ
58. Pectus «կուրծք»	Scirt	սիրտ	Սկիրտ
59. Mamilla «ստինք»	Cize	ծիծ (ծիծը)	ծիզը
60. Venter «որկոր»	Puerhe	փոր (փորը)	պուերիը
61. Humerus «թիկունք»	Tigunc	թիկունք	տիգունկ
62. Brachium «ձեռքի թևի մաս»	Striuch	ձեռք	ստրիուխ
63. Manus «ձեռք»	Hab	ափ	հաբ
64. Digitus «մատ»	Matun	մատունք	մատուն
65. Pugnus «բռունցք»	Prunhc	բռունք	պրունկ
66. Spina «ող. ողնաշար»	Hualn	ողն	հուալն
67. Dorsum «մեջք. թիկունք»	Cuelc	կողք	կուելկ
68. Latus «կողմ. կողք»	Scirt	սիրտ	սկիրտ
69. Renes «երիկամ»	Handam	անդամ	հանդամ
69ա. [...] «...» (?)	[gonc] (?)	[կոնք] (?)	գոնկ
70. Renes «երիկամ»	Gernac	կրնակ	գրրնակ
71. Coxa «ազդր. զիստ»	Andam	անդամ	անդամ
72. Genu «ծունկ»	Scunch	ծունկ	ծկունխ
73. Crus «սրունք»	Ulucc	ոլոք. ոլոգ	ուլուելկ
74. Pes «ոտն»	Uaden	ոտն	Ուադրն
75. Cabilia «(ոտի) կոճ»	Cuech	կոճ	կուեչ

76. Veretrum «m. vir.»	Cliu	կ... {m. vir.}	կլիու
77. Testiculi «ամոր- ձիք»	Scuc	ձուք	սկուկ
78. Mulier «կին»	Kenic	կնիկ	կրնիկ
79. Ecclesia «եկեղե- ցի»	Vanc	վանք	վանկ
80. Deus «աստուած»	Ter	Տէր	տեր
81. Altare «սեղան. բեմ»	Patarac	պատարագ	պատարակ
82. Crux «խաչ»	Chahc	խաչ	խաչ
83. Angelus «լրաբեր. հրեշտակ»	Arrachil tevavoet	առաքեալ թևաւոր	արախիլ տեվավորտ
84. Sanctus «սուրբ»	Supr	սուրբ	սուպր
85. Bonus «լավ. բարի»	Aihich	աղէկ	այիիխ
86. Episcopus «Եպիսկոպոս»	Episcopus	Եպիսկոպո ս	Եպիսկոպոս
87. Monachus «միանձն»	Apiiguhalts	աբեղայացո ւ	ապիիգուհալսս
88. Presbiter «քահա- նա, երեց»	Eresc	երեց	երեսկ
89. Levita «ղեւտացի»	Aottroets	[.....]	աոտտրոետս (?)
90. Xpianus «մասունք. նշխար» (?)	Xpuener (?)	Քրիստոնէ (?)	քրուենէր (?)

Ցանկի ինը տասնյակ բառերի՝ մեր կողմից կատարվող գրադարձությունը ոչ միշտ է միօրինակ, այսինքն՝ կան որևէ դժվարություն չհարուցող բառեր (հմտ. andam - *անդամ*), կան նաև բառեր, որոնք ներկայացնում են այս կամ այն գրի նշանակման դժվարություն՝ նույն գրանշանի հանդիպելը տարբեր բառերում (վերջիններիս ոչ նույն դիրքում), որ կարող է ունենալ ոչ միաբժեք բացատ-

րություն (հմմտ. chini - *գինի*, chu - *ձու*, chure - *ջուր*, chit - *քիթ* և այլն):

Նկատի ունենալով այս հանգամանքը՝ ստորև բերենք հետևյալ մոտավոր խմբավորման օրինակներ:

1) Գրադարձության դժվարություն չունեցող (նույնական) բառազույգեր. օր.՝ *անդամ // անդամ, եպիսկոպոս // եպիսկոպոս, լիզու // լիզու, խաչ // խաչ* և այլն:

2) Գրադարձության դժվարություն ներկայացնող (resp. ոչ-նույնական) բառազույգեր. օր.՝ *աբեղայացու // ապիփզուհալտս, աղէկ // այհիիս, աստղ // աստիլ, ծունկ // ծունիս* և այլն:

3) Հայերեն ձայնավորների (նաև երկհնչյունների) դեպքում տարբերություններ. օր.՝ *երեսք // երիեսկ, կողք // կուելկ, ոտն // ուադն, տեր // տեր* և այլն:

4) Հայերենի բաղաձայնական տեղաշարժով արտահայտվող տարբերություններ օր,՝ *ատամունք // ատմունկ, բերան // պերան, գետինք // քետինկ, երկինք // երգինկ, լինտ // լինդ, հինգ // հինկ, պատարագ // պատարակ* և այլն:

5. Հնչյունական-արտասանական վերլուծություն

Նման վերլուծությունը ամենից առաջ վերաբերում է ձայնավորներին և բաղաձայններին, այնուհետև վերջիններիս որոշ միացություններին:

ա) Ձայնավորներ: Դրանք բերում ենք ըստ իրենց դիրքային բաշխվածության, որոնք լինում են մի քանի տեսակ:

Ա-ի դիրքային բաշխումը: Հայ. *ա*-ն այս դեպքում ևս հանդես է գալիս բառի երեք դիրքերում՝ բառասկզբում, բառամիջում և բառավերջում: Արտասանությունը եղել է սովորական՝ հայերենի բոլոր փուլերին բնորոշ: Համեմատաբար հաճախական է բառամիջի գործածությունը, բառավերջում կա ընդամենը երկու օրինակ՝

կիսաձայն յ-ի անկման հետևանքով, որ հետագա հայերենին է բնորոշ:

1. Բառասկզբում. ahl (աղ), arechac (արեգակ), astil (աստղ), anzen (անձն), ardevanunc (արտևանունք), atmunc (ատամունք), aganch (ականջ), andam (անդամ), arrachil tevaloet (առաքեալ թևաորք), aihich (աղէկ), apiigulalts (արեղայացու), levita (- aottrocts – [.....,]):

2. Բառամիջում. kyrache (կիրակէ, կիրակէ), ergout xapte (երկուշաբթի), eric xapte (երեքշաբթի), khurec xapte (չորքշաբթի), hyncxapte (հինգշաբթի), urpat (ուրբաթ), sabpat (շաբաթ), taz (տասը), xan (քսան), karraschun (քառասուն), vatschun (վաթսուն), hioctanatschun (եօթանասուն), utanatschun (ութանասուն), haruir (հարուր), hazar (հազար), haz (հաց), misc (միսք), paner (պանիր), anzen (անձն), mazen (մազն), hahc (աչք), ardevanunc (արտևանունք), peran (բերան), kcerchac (խոչակ), hab (ափ), matun (մատունք), hualn (ողն), handam (անդամ), gernac (կոնակ), andam (անդամ), uaden (ոտն), vanc (վանք), patarag (պատարագ), chahc (խաչ), arrachil tevaloet (առաքեալ թևաորք), apiigulalts (արեղայացու),

3. Բառավերջում. ininta (ինինտա[սն]), lucenga (լուսընկա):

Ե-ի դիրքային բաշխումը: 1. Բառասկզբում. ergout xapte (երկու[ք]շաբթի), eriec xapte (երեքշաբթի), ergout (երկուք), eriec (երեք), erchun (երեսուն), erginc (երկինք), eriesc (երեսք), episcopus (եպիսկոպոս), eresc (երէց):

2. Բառամիջում. eriec xapte (երեքշաբթի), khurec xapte (չորքշաբթի), meche (մէկը), eriec (երեք), khuert (չորք), paner (պանիր), arechac (արեգակ), lucenga (լուսնկայ, լուսինկայ), kcedinc (գետինք), anzen (անձն), mazen (մազն), ardevanunc (արտևանունք), peran (բերան), eriesc (երեսք), puele (փողք), kcerchac (խոչակ), puerhe (փորը) cuelc (կողք), gernac (կոնակ), uluec (ոլք, ոլոգ), uaden (ոտն), cuech

(կոճ), kenik (կնիկ), ter (Տէր), arrachil tevavoet (առաքեալ թնաւորք),
eresc (երէց), xrucner (քրիստոնէ [?]):

3. Բառավերջում. kyrache (կիրակէ//կիրակէ), ergout xapte
(երկու(ք)շաբթի), eric xapte (երեքշաբթի), khurec xapte (չորքշաբթի),
hyncxapte (հինգշաբթի), meche (մէկը), chure (ջուրը?), astil (աստղ),
vise (վիզը), puele (փողք), cize (ծիծը), puerhe (փորը):

Ը-ի դիրքային բաշխումը: Այս հնչյունով որևէ բառի գրանցում
չի հանդիպում, բառացանկում, բացի բառավերջին դիրքից և in
(ինը) բառից, այն արտահայտվում է լատ. e գրով, և ըստ այդմ ու-
նենք ոչ գրական (ժամանակի խոսակցական կամ ինչ-որ բարբա-
ռին բնորոշ արտասանության օրինակ). meche (մէկը), hioct (եօթ//
եօթը), in (ինը), chure (ջուրը), vise (վիզը), cize (ծիծը), puerhe (փորը):

Է-ի դիրքային բաշխումը: Այս հնչյունով բառեր կան միայն
բառամիջում և բառավերջում, ընդ որում սակավ օրինակներով.
1. բառամիջում. meche (մէկը), ter (տէր), aihich (աղէկ), eresc (երէց),
2. բառավերջում. kyrache (կիրակէ // կիրակէ), xruener (քրիստոնէ
[?]):

Ի-ի դիրքային բաշխումը: Այս դեպքում բառակզբի համար
կա մեկ օրինակ, իսկ բառավերջում՝ մի քանի, բառամիջում՝ համե-
մատաբար մեծ թվով:

1. Բառասկզբում. in (ինը), ischun (յիսուն), ininta (...):

2. Բառամիջում. kyrache (կիրակէ // կիրակէ), hyncxapte
(հինգշաբթի), eriec (երէք), hinc (հինգ), viit (վէց), hioct (եօթ//
եօթը), hioctanatschun (եօթանասուն), ininta (...), haruir (հարուր), misc
(միսք), chini (զինի), erginc (երկինք), astil (աստղ), kcedinc (զետինք),
chit (քիթ), scirtun (շրթունք), lind (լինդ), lizu (լիզու), eriesc (երէսք),
vise (վիզը?), scirt (սիրտ), cize (ծիծը), tigung (թիկունք), striuch
(ձեռք), scirt (սիրտ), cliu (կ.... [= m. vir.]), kenik (կնիկ), arrachil

tevavoet (առաքեալ թևաւորք), aihich (աղէկ), episcopus (եպիսկոպոս), apiigulalts (արեղայացու),

3. Բառավերջում (e > ի). ergout xapte (երկու[ք]շաքթի), eriec xapte (երեքշաքթի), khurec xapte (չորքշաքթի), hyncxapte (հինգշաքթի), chini (զինի):

Ու-ի դիրքային բաշխումը: Այստեղ չկան օրինակներ բառակզրի և բառավերջի համար, իսկ *բառամիջում* եղածները մի քանիսն են gonc [կոնք (?)], arrachil tevavoet (առաքեալ թևաւորք), episcopus (եպիսկոպոս), aottrocts [... (?)]:

Ու-ի դիրքային բաշխումը: Երեք դեպքում էլ կան օրինակներ, բառամիջում՝ առավել չափով:

1. Բառասկզբում. urpat (ուրբաթ), ut (ուրթ), uluec (ուլոք//ուլոգ), uaden (ուսն).

2. Բառամիջում. khurec xapte (չորքշաքթի), erchun (երեսուն), karraschun (քառասուն), ischun (յիսուն), vatschun (վաթսուն), hioctanatschun (եօթանասուն), utanatschun (ութանասուն), chugn (ձուկն), chure (ջուրը), lucenga (լուսնկայ//լուսինկայ), hunc (յունք//յոնք), ardevanunc (արտևանունք), scirtun (շրթունք), atmunc (ատամունք), muruc (մուրուք), tigunc (թիկունք), striuch (ձեռք), matun (մատունք), prunhc (բրունք), scunch (ծունկ), cliu (կ... [= m. vir.]), scuc (ձուք), episcopus (եպիսկոպոս), apiigulalts (արեղայացու), xrucner (քրիստոնէ):

3. Բառավերջում. chu (ձու), lizu (լիզու), cliu (կ... [= m. vir.]):

բ) Երկհնչուններ: Սա պիտի բաժանվի մի քանի ենթախմբի. ստորև տալիս ենք հետևյալ բաշխումը՝ ելնելով զուգադիպման տարբերությունից:

1. *Պարզ ձայնավորի դիմաց երկհնչուն.* *ե > իե, իու, ո > ուե, ուա, ա > ահ [այ],* eriec xapte (երեքշաքթի), eriec (երեք), khuert (չորք), ahl (աղ), hahc (աչք), eriesc (երեսք), puele (փողք), puerhe (փորը),

striuch (ձեռք), hualn (ողն), cuec (կողք), uluec (ոլոք// ոլոգ), uaden (ոսն), cuech (կոճ):

2. *Երկհնչյունի (ոչ երկազիր ու-ի) դիմաց պարզ ձայնավոր.* kyrache (կիրակե// կիրակե), lucenga (լուսնկայ // լուսինկայ):

3. *Երկգրույթ ու-ի դիմաց լատինազիր պարզ ու [u].* ut (ութ), erchun (երեսուն), karraschun (քառասուն), ischun (յիսուն), vatschun (վաթսուն), hioctanatschun (եօթանասուն), utanatschun (ութանասուն), chu (ձու), chugn (ձուկն), churc (ջուրը), lucenga (լուսնկայ // լուսինկայ), hunc (յունք//յօնք), ardevanunc (արտևանունք), scirtun (շրթունք), atmunc (ատամունք), lizu (լիզու), muruc (մուրուք), tigunc (թիկունք), matun (մատունք), prunhc (քոունք), scunch (ծունկ), scuc (ձուք), supr (սուրք):

4. *Երկհնչյունի դիմաց երկհնչյուն.* ergout xapte (երկու(ք)շաբթի), ergout (երկուք), hioct (եօթ), hioctanatschun (եօթանասուն), haruir (հարուր), hunc (յունք // յօնք), ardevanunc (արտևանունք):

գ) Հնչամիացություններ: Բառացանկում կան տարբեր, այսպես կոչված, հնչամիացություններ. դրանք ներկայացնում ենք հետևյալ խմբերով.

1. Ch հնչամիացությունը դասական լատիներենում հայտնի էր՝ համարժեք հայ. *խ*-ին (օր.՝ carta «թուղթ», schola «դպրոց» և այլն). բառացանկում այն գործածվել է հայ. *գ, կ, ք, ջ, ճ, չ, ձ* պայթականների և կիսաշփականների, այլև *խ, գ* շփականների դիմաց: Եղած օրինակներն են՝ *գ. chini* (զինի), *arechac* (արեգակ), *angelus* - *arrachil* *teavoet* (առաքեալ թևաորք), *կ. kyrache* (կիրակե// կիրակե), *meche* (մեկը), *scunch* (ծունկ), *aichich* (աղէկ), *ք. chit* (քիթ), *striuch* (ձեռք), *arrachil* *teavoet* (առաքեալ թևաորք), *ջ. chure* (ջուրը), *aganch* (ականջ), *ճ. cuech* (կոճ), *չ. kcerchac* (խոչակ), *ձ. Chu* (ձու), - *chugn* (ձուկն), *խ. chahc* (խաչ), *u.* (*erschun* - երեսուն):

2. Sch-ն հայ. *ս*-ին համարժեք հանդիպում է թվականների դեպքում. *karraschun* (քառասուն), *ischun* (յիսուն), *vatschun* (վաթսուն), *hiocatanatschun* (եօթանասուն) և *utanatschun* (ութանասուն).

3. Kh - չ. *khurec xapte* (չորքշաբթի), *khuert* (չորք),

4. Bp - բ. *sabpat* (շաբաթ),

5. Ii - ե. *viit* (վեց), *apiiguhalts* [աբեղայացու (?)],

6. Hl - դ. *ahl* (աղ),

7. Kc - գ. *kcedinc* (գետինք), իւ. *kcerchac* (խոչակ),

8. Sc - շ, ս, ծ (ձ). *scirtun* (շրթունք), *scirt* (սիրտ), *scunch* (ծունկ), *scuc* (ձուք),

9. Hc - չք, ք. *hahc* (աչք), *chahc* (խաչ), *prunhc* (բռունք),

10. Rh - ր. *puerhe* (փորը),

11. Rr - ռ. *arrachil tevavoet* (առաքեալ թևաւորք),

12. Tt - ? . *aottrocts* (...):

դ) Բաղաձայններ: Ամենից առաջ նկատի ունենք պայթական և հպաշփական բաղաձայնների դրսևորումները. սրանք կարելի է ներկայացնել մի քանի ենթախմբով՝ ըստ իրենց դիրքային բաշխվածության.

1. Երկշրթնային *բ, պ, փ* պայթականների արտահայտությունը. *բ. ergout xapte* (երկու(ք)շաբթի), *eriec xapte* երեքշաբթի), *khurec xapte* (չորքշաբթի), *hyncxapte* (հինգշաբթի), *urpat* (ուրբաթ), *sabpat* (շաբաթ), *peran* (բերան), *prunhc* (բռունք), *supr* (սուրք), *apiigulalts* (աբեղայացու). *պ. paner* (պանիր), *patarag* (պատարագ), *episcopus* (եպիսկոպոս). *փ. puele* (փողք), *puerhe* (փորը), *hab* (ափ):

2. Առաջնալեզվային *դ, տ, թ* պայթականների արտահայտություն. *դ. lind* (լինդ), *handam* (անդամ), *andam* (անդամ). *տ. Taz* (տասը), *astil* (աստղ), *kcedinc* (գետինք), *ardevanunc* (արտևանունք), *atmunc* (ատամունք), *scirt* (սիրտ), *matun* (մատունք), *scirt* (սիրտ), *uaden* (ոտն), *ter* (տէր), *patarag* (պատարագ). *թ. ergout xapte* [եր-

կու(ք)շաբթի], eriec xapte (երեքշաբթի), khurec xapte (չորքշաբթի), hyncxapte (հինգշաբթի), urpat (ուրբաթ), sabpat (շաբաթ), hioct (եօթ// եօթը), ut (ույթ), vatschun (վաթսուն), hioctanatschun (եօթանասուն), utanatschun (ութանասուն), chit (քիթ), scirtun (շրթունք), tigunc (թիկունք), arrachil tevavoet (առաքեալ թևաւորք):

3. Հայերենի հետնալեզվային *գ, կ, թ* պայթականները բառացանկում ունեն բացառիկ ընդգրկումով գործածություն, այսինքն՝ գրեթե չկա որևէ բառ, որի կազմում չլինի նման բաղաձայն: Եվ նկատի ունենալով այս հանգամանքը՝ ստորև ոչ թե թվարկում ենք այդ բառերը, այնուհետև վերլուծում, այլ միայն վերլուծություն ենք անում ըստ որոշ տեսակավորման՝ արտասանական կոնկրետ որակների հետ կապված:

ա. hyncxapte (հինգշաբթի), hinc (հինգ), chini (զինի), arechac (արեգակ), kcedinc (գետինք), uluec (ոլոք// ոլոգ):

բ. kyrache (կիրակե // կիրակե), ergout xapte (երկու(ք)շաբթի), meche (մեկը), ergout (երկուք), chugn (ձուկն), erginc (երկինք), arechac (արեգակ), lucenga (լուսնկայ // լուսինկայ), aganch (սկանջ), kcerchac (խոչակ), tigunc (թիկունք), cuelc (կողք), gonc [կոնք (?)], gernac (կոնակ), scunch (ծունկ), cuech (կոճ), cliu (կ... [= m. vir.]), kenik (կնիկ), aihich (աղեկ), episcopus (եպիսկոպոս):

գ. Ergout xapte (երկուշաբթի), eriec xapte (երեքշաբթի), khurec xapte (չորքշաբթի), ergout (երկուք), eriec (երեք), khuert (չորք), xan (քան), karraschun (քառասուն), misc (միսք), erginc (երկինք), kcedinc (գետինք), hahc (աչք), hunc (յունք // յօնք), ardevanunc (արտևանունք), chit (քիթ), scirtun (շրթունք), atmunc (ատամունք), muruc (մուրուք), eriesc (երեսք), puele (փողք), tigunc (թիկունք), striuch (ձեռք), matun (մատունք), prunhc (բռունք), cuelc (կողք), gonc [կոնք (?)], uluec (ոլոք// ոլոգ), scuc (ձուք), vanc (վանք), arrachil tevavoet (առաքեալ թևաւորք), xpucner (քրիստոնէ):

4. Հպաշփականներից *ձ, ծ, ց* սուլականները և *ջ, ճ, չ* շչականները բառացանկում ներկայանում են հետևյալ օրինակներով. *ձ*. chu (ձու), chugn (ձուկն), anzen (անձն), striuch (ձեռք), scuc (ձուք). *ծ*. cize (ծիծը), scunch (ծունկ), *ց*. viit (վեց), haz (հաց), apiigulalts [աբեդայացու (?)], eresch (երեց), *ջ*. churc (ջուրը), aganch (ականջ), *ճ*. cuech (կոճ), *չ*. khurec xapte (չորքշաբթի), khuert (չորք), hahc (աչք), kcerchac (խոչակ), chahc (խաչ):

ե) Շփականների հնարավոր դրսևորումներ: Դրանք ևս ինչոր չափով տարբեր են՝ ըստ բաշխվածության:

Վ. viit (վեց), vatschun (վաթսուն), vise (վիզը), vanc (վանք),

Ֆ. Հետագա նորամուծություն՝ X դ. բավականին ուշ (օրինակ՝ չիք),

Զ. mazen (մազն), vise (վիզը),

Ս. taz (տասը), xan (քան), erchun (երեսուն), karraschun (քանասուն), ischun (յիսուն), vatschun (վաթսուն), hioctanatschun (եօթանասուն), utanatschun (ութանասուն), misc (միսք), lucenga (լուսնկայ // լուսինկայ), astil (աստղ), eriesch (երեսք), scirt (սիրտ), scirt (սիրտ), supr (սուրք), episcopus (եպիսկոպոս), xpucner (քրիստոնե),

Շ. ergout xapte (երկու(ք)շաբթի), eriesch xapte (երեքշաբթի), khurec xapte (չորքշաբթի), hyncxapte (հինգշաբթի), sabpat (շաբաթ),

Ղ. ahl (աղ), astil (աստղ), hualn (ողն), cuelc (կողք), aihich (աղէկ),

Իս. kherchac (խոչակ), chahc (խաչ):

զ) *Ձայնորդներ*: Առանձնանում են հետևյալ օրինակները.

Մ. meche (մեկը), misc (միսք), mazen (մազն), muruc (մուրուք), matun (մատունք),

Յ. ischun (յիսուն), hunc (յունք // յօնք),

Ն. hyncxapte (հինգշաբթի), hinc (հինգ), xan (քսան), erchun (երեսուն), karraschun (քառասուն), ischun (յիսուն), vatschun (վաթսուն), hioctanatschun [եօթանասուն (< եօթանասուն)], chini (գինի), paner (պանիր), chugn (ձուկ), erginc (երկինք), lucenga (լուսնկայ // լուսինկայ), kcedinc (գետինք), anzen (անձն), mazen (մազն), hunc (յունք // յօնք), ardevanunc [արտևանունք (< արտևանունք)], peran (բերան), scirtun (շրթունք), atmunc (ատամունք), lind (լինդ), aganch (ականջ), tigunc (թիկունք), matun (մատունք), prunhc (բռունք), hualn (ողն), handam (անդամ), gonc [կոնք (?)], gernac (կոնակ), andam (անդամ), scunch (ծունկ), uaden (ոտն), kenik (կնիկ), vanc (վանք), xpucner (քրիստոնէ),

Լ. lucenga (լուսնկայ// լուսինկայ), lind (լինդ), lizu (լիզու),

Բ. erchun (երեսուն), haruir (հարուր), hazar (հազար), paner (պանիր), erginc (երկինք), ardevanunc [արտևանունք (< արտևանունք)], peran (բերան), scirtun (շրթունք), muruc (մուրուք), eriesc (երեսք), arrachil tevafoet [առաքեալ թևաւորք (< թևաւորք)] xpucner (քրիստոնէ),

Դ. karraschun (քառասուն), prunhc (բռունք), gernac (կոնակ),

Ե. hioct [եօթ // եօթը (< եաւթ // եաւթը)], hioctanatschun [եօթանասուն (< եօթանասուն)], ardevanunc [արտևանունք (< արտևանունք)], arrachil tevafoet [առաքեալ թևաւորք (< թևաւորք)],

է) Հազագային հ-ի արտահայտությունը: Եղած օրինակները գրական նորմայի սահմանում են. hinc (հինգ), hyncxapte (հինգշաբթի), haruir (հարուր), hazar (հազար), haz (հաջ), handam (անդամ) և այլն:

6. Բառաբանական (ստուգաբանական) վերլուծություն

Նման վերլուծություն կատարելիս, բնականաբար, ելակետային ենք համարում գրաբարի բառապաշարը՝ իբրև ստանդարտ վիճակ, որի համեմատությամբ տարբերություն է հանդիսանում ամեն

կարգի շեղում (բարբառային-խոսակցական, «գրչագրական», սխալագրություն և այլն):

Նկատվող տարբերությունները հիմնականում երկու կարգի են՝ հնչյունական-ձևային և իմաստային-գործառական, ըստ տվյալ բառի վերծանում-տառադարձման:

Ականջ [լատ. *auris* «ականջ»]. ցանկում՝ *Aganch*, որում *ch* – ջ լծորդումից բացի առկա է հետնալեզվային խուլի ձայնեղացում՝ *ly* – *q*, որն, իրոք, բարբառային հատկանիշ է. նոր բարբառներից միայն Ոզմն ունի *w'qանջ* ձևը¹⁰⁵:

Աղ [լատ. *sāl* «աղ»]. ցանկում՝ *ahl*. այս ձևին ժամանակին անդրադարձել է Մեյեն (տե՛ս վերը). կարելի է մտածել, որ *h*-ի առկայությունը հնարավոր է ձայնավորի երկար արտասանության պարագայում, որպիսով այն հեռու է գրականից:

Աղէկ [լատ. *bonus* «լավ»], ցանկում՝ *aichich*, որ ձեռագրում ընթեռնելի է, վերծանում է Օմոնը, իսկ Կարիերը նշանակում է *աղէկ* (փխ. գրական՝ *բարի*)¹⁰⁶: *Աղէկ* նշանակման դեպքում, հավանաբար, հաշվի է առնված ամենից առաջ *aich* – *աղ* լծորդությունը, որը անհավանական չէ՝ խոսակցականի համար, իսկ *i*-ն, իրոք, ոչ գրական հնչյան արդյունք է: Ըստ Աճառյանի, *աղէկ*-ը գրական հետագա գործածություն է (< **աղու-եակ*, *աղ-ու* < հե. **sal-*), կա նոր բարբառների թե՛ արևմտյան (*կը ճյուղի*) և թե՛ արևելյան (Ազլ. Մղ., Խոյ) տարբերակներում:

Անդամ [լատ. *coxa* «ազդր, զիստ, բարձ»]. *andam* «անդամ» թարգմանությունը վերծանում է Օմոնը, որ ընդունվում է Կարիերի կողմից՝ հիշեցնելով բառի «ազդր» (խակց.՝ *պուտ* «բուր») իմաստի

¹⁰⁵ Նոր բարբառների համապատասխան ձևերը հիմնականում տալիս ենք ըստ Աճառյանի «Արմատական բառարան»-ի տվյալների:

¹⁰⁶ *A. Carrière*, նշվ. աշխ., էջ 17:

մասին, որ այն հանդիպում է նաև լատ. *rēnēs*-ի դեպքում, նաև համարժեք՝ հուն. *μηρός* «անդամ» բառին¹⁰⁷:

Անձն [լատ. *homo* «մարդ. այր»]. Օմնի վերձանումը ճիշտ է՝ *anzen*, որում էլ նկատում ենք *z - q, e - p* (գաղտնավանկի *p*) փոխարկում, որի դիմաց Կարիերը դնում է գրական *անձն*. փաստորեն իմաստային բաղարկումը (կոնտամինացիա) գալիս է գրանցողից՝ ըստ տեղեկատուի հաղորդածի:

Աչք [լատ. *oculus* «աչք»]. վերձանված է *hahc*. նոր բարբառներից ոչ մեկում չի հանդիպում բառասկզբի *h*-ով ձև, բացի *յաճկ* (Ալշ.) ձևից:

Աստղ [լատ. *stella* «աստղ»]. բառացանկում՝ *stellæ* (հոգն. թ.), վերձանումը՝ *astil*. նախօրինակի հոգնակի ձևը հայերենում եզակիով է, լատիներենում բուն՝ նախնական իմաստն է «մոլորակ. համաստեղություն», այլն՝ «արև»: Հայերենում բառը *h*-ով է՝ *աստիղ*, նոր բարբառները չունեն նման ներառմամբ ձև, չհաշված՝ *ասղ՝ըխիզ* (Խրբ.). *p*-ի փոխարեն *h* ներմուծումը, թերևս, լիահնչությամբ է պայմանավորված:

Ատմունք [լատ. *dēns* «ատամ»]. բնագրում և վերձանության մեջ՝ *atmunc*, որ գրաբարի *ատամն* ձևի հոգնակին է (< *ատամունք*), դրված է *w*-ի սղումով՝ բնորոշ խոսակցական լեզվին, բառավերջի *c*-ն, անկասկած, հոգնակիի ցուցիչ է՝ *h*-ով (*p*-ի ապաշնչեղացմամբ, որ ևս բարբառային-խոսակցական կարող է լինել). ներկայիս բարբառները չունեն հոգնական-հավաքական իմաստով նման ձև:

Արագիլ (թելաւորք) [լատ. *angelus* «լրաբեր. համբավաբեր». առավել ևս՝ «աստծու լրաբեր. հրեշտակ»]. սա միակ բառն է ցանկում, որ բաղադրյալ կազմության է, դրված է իբրև համարժեք լատ. *angelus* բառի. այն փոխառություն է հուն. *ἄγγελος* «լրաբեր (ավե-

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 16:

տաբեր)» ձևի: Օմոնը պարզ ընթերցմամբ *arrachil teuauet* կապակցությունը դնում է միջնադարյան լատ. *arrachil teuavoet* գրչությամբ, որ ունի նաև Կարիերը՝ ծանոթագրելով. «Վերջին *տ*-ն կարդալ *ը*»¹⁰⁸: Սա դիտարկում է, որ հատուկ քննության պիտի առնվի բառի հնչյունական-արտասանական կողմի տեսանկյունից՝ կապված հաղորդողի և գրանցողի լեզվի իմացության հետ: Կարիերը հայ. *առաքեալ թնաւոր*-ի համար ևս ունի ծանուցում. «Իմա՛ «լրաբեր. մարգարե»». *Angelus* = հրեշտակ»¹⁰⁹: *Արագիլ*-ի առասպելական հին հնդեվրոպական պատկերացումը, կարելի է ասել, չի ստացել իր հավանականին անգամ մոտ լուծումը՝ կապված, օրինակ, հայերենում *Արա գեղեցիկ* դիացանվան բաղադրության և պաշտամունքի հետ¹¹⁰:

Արեգակ [լատ. *sōl* «արև. արևի լույս»]. հայերեն *արեգակն* ձևի գործածությունը հին է. ցանկում պարզ տառադարձմամբ՝ *arechac*, Օմոնը ճիշտ է վերծանում, որին Կարիերը համարժեք է դնում հայ. *արեգակ*՝ իբրև «խոսակցական *արեգակն*-ի»: Այստեղ *ն*-ի անկումը, այլև *ch* - կ լծակցումը հիմք են այն ոչ գրական՝ ժամանակի խոսակցական ձև համարելու:

Արտեանունք [լատ. *ciliūm* «աչքի կոպ, սովորաբար՝ ներքին»]. հայ. *արտեան*՝ «թարթիչի մի թելը» հին գործածության բառ, որի ծագումն, ըստ Աճառյանի, անհայտ է. իսկ Ջահուկյանը թեականով կապում է հե. **drep-* (***er-*) «մաշկել, քերթել, անջատել» ձևի հետ, Աղայանը՝ հե. **drep-* «տեսնել»¹¹¹: Ցանկում բառի անեզական-

¹⁰⁸ Նույն տեղում:

¹⁰⁹ Նույն տեղում:

¹¹⁰ Այս հարցադրմանը անդրադառնալու ենք առանձին՝ մեկ այլ աշխատանքում:

¹¹¹ Հ. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Ե., 1971, էջ 343: Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010,

հոգնական ձևի գործածությունը, ոճական առումով, նորություն չէ, քանի որ հին գրականում ևս նման ձևով հանդիպում է. և այն անցել է նաև ցանկի լեզվին: Օմոնի՝ լատ. *ardeuanunc* ձևով պարզ վերծանությունը Կարիերը դնում է լատ. *u*-ի փոխարեն *v* (ըստ լեզվի հետագա ուղղագրության), *d*-ի փոխարեն *uz*, որն, իրոք, առարկելի է, քանի որ տեղեկատուի լեզվում այն առաջնալեզվային ձայնեղով է արտաբերված եղել՝ *արդեւանունք*, որ էական տարբերություն է գրական նորմայի տեսանկյունից:

Սի [լատ. *manus* «ձեռք. անասունի առջևի վերջույթը»]. ցանկում համառոտված լատ. *man*՝ ձև: Օմոնը վերծանում է *manus*, հայ. *hab*, որին Կարիերը զուգադրում է *սի* ձևը՝ «ավելի ստույգ՝ ձեռքի «սի» ծանուցմամբ¹¹²: Հայ. *սի* «ձեռքի ներսի կողմը» բառը, ըստ Աճառյանի, անհայտ ծագման է, Ջահուկյանը թեականով փորձում է կապել հե. **ap-* «բռնել, վերցնել, հասնել» արմատի հետ¹¹³: Նոր բարբառների մեծ մասում հանդիպում է նույն ձևով, կան նաև *ի*^o (*Տիգ.*), *յսի* (*Ալշ.*), *օի* (*Ագլ.*) և այլն. ցանկի նախահունչ *h*-ի հետ հմմտ. *յսի* (*Ալշ.*), որ կարող է տեղին լինել, իսկ շրթնային շնչեղ խուլ *ի*-ի դիմաց ձայնեղ *բ*-ի առկայությունը, իրոք, ոչ գրական՝ բարբառային-խոսակցական է:

Արիգուհալտ [լատ. *monachus* «վանական»]. առայժմ մնում է անիմանալի:

Աոտրոկտ [լատ. *levita* «ղևտացի»]. առայժմ մնում է անիմանալի:

Քերան [լատ. *os* «բերան»]. ցանկում այս բառը գրառված է *peran*, ձայնեղ *բ*-ի դիմաց խուլ *պ*, որը բարբառային է՝ ոչ գրական

Էջ 96: *Է. Բ. Մղայան*, Բառաքնական և ստուգաբանական ուսումնասիրություններ, էջ 34:

¹¹² *A. Carrière*, նշվ. աշխ., էջ 15:

¹¹³ *Գ. Բ. Ջահուկյան*, նշվ. աշխ., էջ 105:

(< հե. *bher- «ծակել, ճեղքել»)։ Օմոնի ճիշտ տառադարձումը Կարիերը վերածել է գրականի՝ *բերան*, որ տեղին չէ. բառասկզբի խուլ շրթնայինի օրինակներ ունեն զգալի թվով նոր բարբառներ, ընդ որում առաջին վանկի ձայնավորի տարբեր որակներով՝ *պերան* (Մկ., Մրդ., Շմ., Սլմ., Վն.), *պէրան* // *պարան* (Ղրբ.) և այլն։

Բռունք [լատ. pugnus «բռունցք. բռունցքի հարված. կոփամարտ»]. ցանկում համառոտված լատ. pugn՝ ձև։ Օմոնը վերձանում է pugnus, իսկ հայ. prunhc, որին Կարիերը զուգադրում է *բռունք*. վերջինս *բունն* (եզ. թ.) ձևի հոգնակին է. տեղեկատուի լեզվում՝ իբրև անեզական բառ. նկատելի է շրթնային ձայնեղի խլացում՝ *p* > *պ*, որ շեղում է գրական ստանդարտից։ ԱՃառյանը *բունն*-ի տակ չունի *բռունցք*, չի տալիս նաև բարբառային ձևեր, ծագումը համարում է «անստույգ», այնինչ Ջահուկյանը ստուգաբանում է իբրև բնիկ՝ հե.*bhōr- կամ *bhor-no- (*bher-) «բերել. տանել» արմատից (Pokorny, I, 133)¹¹⁴։

Գետինք [լատ. terra «հող, երկիր»]. ցանկում նշվում է kcedinc, որ ձեռագրում (լուսապատճենում՝ թույլ) է արտահայտված (keet[.]nc)։ Օմոնի վերձանությամբ և Կարիերի ընդօրինակումով առկա է արտասանության գրային ոչ ստանդարտ ձև՝ բառասկզբում kc > q (եթե ոչ քմային խուլ՝ *կ*), իսկ բառավերջում՝ c > *ք*, ինչպես մյուս բառերից մի քանիսում։

Այստեղ առավել ուշադրության ենք առնում բառամիջի դիրքը, այն է՝ առաջնալեզվային խուլի փոխարեն ձայնեղի նշանակում (t > d), որ ակնհայտ հեռացում է ստանդարտ լեզվից, այսինքն՝ բարբառային-խոսակցական վիճակի դրսևորում է։ Նոր բարբառներից միայն մեկ-երկուսում ունենք նախահունչ խուլ, կամ՝ բառամիջի

¹¹⁴ Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 486։ Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 140։

ձայնեղ բաղաձայն՝ *կէտին* (Մկ. Մրդ.), *կէտին* (Սլմ.), *կէտին* (Վն.), *գիդին* (Հմշ.) և այլն:

Գինի [լատ. *vīnum* «գինի. խաղող. որթատունկ»]. ցանկում գրանցումը և Օմոնի վերձանումը ստույգ են՝ *Chini*. Կարիերը դնում է *գինի*, որի մի տարբերակ է որոշ բարբառներում առաջնալեզվային արտաբերությունը՝ *q // ջ (ջինի)*: Ըստ այսմ՝ ցանկում բառասկզբում գրանցվել է *ջ-ի*^օ, թե՛ *գ-ի* արժեքով բաղաձայն, հարցը առաջ է բերում գրականի և ոչ-գրականի երկվություն, և նրա լուծումն ունի իր նշանակությունը լեզվի պատմության համար (տե՛ս նաև վերը): Հե. ծագման *գինի* (<**qēnī* < **uoi-n*) նոր բարբառներում առկա է ոչ միայն հետնալեզվային քմային կամ պարզ հետնալեզվային ձայնեղ, խուլ կամ խուլ շնչեղ (*գ, կ, ջ*) բաղաձայնով, այլև առաջնալեզվային ձայնեղ ջ-ով. *գ'ինի* (Ալշ., Ախց., Մշ. Ջղ.), *կ'ինի* (Մրդ., Սլմ., Վն.), *կինի* (Հմշ., Ղրբ., Շմ.), *քինի* (Ռ., Տիգ.), ջինի (Աշտ.) և այլն:

Եպիսկոպոս [լատ. *episcopus* «դիտորդ, հսկիչ. եպիսկոպոս»]. ցանկում նշվում է *Ep~f* համառոտագրությամբ [episcopus]. բառը, հայտնի պատճառներով, հար և միշտ գրական ձևով է հանդես գալիս:

Երեսք [լատ. *faciēs* «(արտաքին) տեսք. ձև». «պատկեր». «դեմք, երես»]. ցանկում՝ *Eriesc*, առաջին պլանում հիշյալ իմաստներից ոչ առաջինն է, որ սովորական է հայերեն խոսակցական լեզվի, քան գրականի համար: Տառադարձված ձևում սկզբնահնչյուն *e-*ն կարող է նաև հայ. *է* լինել, իսկ *ie* գրությունը ոչ այլ ինչ է, քան *է* պարզ ձայնավորի բարբառային արտասանություն, որ հատկանշական է ժամանակի բանավոր խոսքի տեսանկյունից (այն նկատելի է նաև այլ բառերում): Նոր բարբառների գրեթե մեծ մասում նշվում է նախահունչ *է* ձայնավոր. *էրես* (Մշ.), *է'րես(կ)* «զգեստի՝ վերմակի արտաքին կողմ» (Տի.), նաև *յէրես* (Ալշ., Մշ.) և այլն:

Երէք [լատ. trēs «երեք»]. այս թվականը ցանկում բերված է հռոմեական նիշով (III), որ գործածվում է ոչ միայն առանձին, այլև շաբաթվա երկրորդ օրվա դեպքում: Տառադարձումն է՝ Eriec, որ Օմոնի ճիշտ վերձանումը Կարիերը բերում է նույնությամբ՝ դնելով հին գրականի *երէք* ձևը: Սակայն երևում է, որ տեղեկատուն այն արտաբերել է միջին ձայնավորի երկբարբառային հնչյունով (*է > իե*): Բառավերջում տառադարձված լատ. c-ն համարժեք է համարված գրական *ք*-ին (այդպես նաև eriec hapte > *երէքշաբթի*, khurec haptie > *չորքշաբթի* բառերի դեպքում, բայց ոչ hync hapte > *հինգշաբթի*, որ *գ*-ով է). ստացվում է լատ. c-ի տարբերակային՝ *ք//գ* տառադարձում, որը գրականին հետևելու արդյունք է, այնինչ կարելի է ենթադրել թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում հայ. *չ* խուլի առկայություն (ասենք՝ *երիեկ* և այլն): Լայն գործածության այս բառը նոր բարբառներում ունի զանազան հնչմամբ ձևեր՝ *իրէք* (Ալշ., Մշ., Մչ.), *յիրէք* (Ձղ.), *իրէք* (Սլմ., Վն.), *իրէք* (Ախց., Ակն., Եր., Հմշ., Ղրբ., Պլ., Տիգ. և այլն), *իրիք* // *իյիք* (Ձթ.), *իրիք* (Ազլ., Մղր., Ոզմ) և այլն:

Երէք խապտե [լատ. feria III «1. հանգստի՝ տոն օր. ընդմիջում. հանգիստ». շաբաթվա 3-րդ օրը»]. *խապտե* տառադարձմանն անդրադառնում ենք առանձին, իսկ *երէք*-ի մասին՝ տե՛ս վերը:

Երէց [լատ. presbyter (հուն.) «ավագ. (եկեղ.) քահանա, երեց. պաստոր»]. ցանկում ստույգ համառոտագրությամբ և վերձանումով՝ prepfbit~, որում գրանցողի սխալով հուն. *γ*-ի փոխարեն լատ. *i* գիրն է. հայերեն թարգմանությունն է Eriesc, որում նկատում ենք մեկ տարբերություն՝ բառավերջում լատ. c-ն հայ. *ք*-ի արժեքով, չհաշված այն, որ բառասկզբում, թերևս, արտասանվել է *է*, որ տառադարձված է լատ. e ձայնավորով. հե. ծագման *երէս* (*preisk'hu) բառը նոր բարբառներում հանդիպում է *է*-ով, որ կարող է ունենալ նաև նախահունչ *յ*. *յերէց* (Ոզմ.), *երէց* (Ալշ., Մշ., Մկ. Տփ.), *իրէց*, *իյէց* (Ձթ.) և այլն:

Երկինք [լատ. celum «1. երկնային բարձունք. երկինք. 2. օդ, մթնոլորտ»]. ցանկում և Օմննի վերձանության մեջ՝ Erginc, որի դիմաց Կարիերը դնում *երկինք*, որպիսով նկատելի բառասկզբի պարզ *է*-ի արտացոլում, և հնարավոր է, որ ունենար *է*-ի արժեք, իսկ բառամիջում՝ *գ* (փխ. *կ*), որն այլ բան չէ, քան խուլի դիմաց ձայնեղ բաղաձայնի դրսևորում, որ ընդհանուր է բարբառների որոշակի մասում: Նկատենք նաև, որ դասական լատիներենում բառի առաջին վանկում ոչ թե պարզ ձայնավոր է, ինչպես որ մեր քննության առարկա ցանկում է, այլ երկբարբառ (e, փխ.՝ ae. հմմտ. Վիլլոտի բարբառնում՝ œ. այս վերջինը դասականում համարվում է ոչ ճիշտ ձև)¹¹⁵: Նոր բարբառներում ունենք՝ *երկինք* (Ալշ., Կր.), *յերկինք* (Ախց.), *յերկինք* // *երկինք* (Կն.), *երգինք* (Ազլ.), *երգինք* (Հմշ., ՆՆխ., Տիգ.), *յերգինք* (Ջդ.) և այլն:

Երկու [լատ. duo «երկու»]. բառացանկի «գրչությունը» ցանկում ունի մի քանի «տարօրինակ» դրսևորում, նախ՝ բառավերջում լատինագիր *t*, երկրորդ՝ հայ. *ու*-ի գրությունը ոչ թե լատիներեն պարզագիր *u*-ով, այլ երկհնչունով՝ *ou*-ով, որ մյուս դեպքերից ոչ մեկում այդպիսին չէ (տե՛ս վերը). *ut* (*ութ*), *erchun* (*երեսուն*), *chu* (*ձու*), *chugn* (*ձուկն*) և այլն. նաև հետնալեզվային խուլի ձայնեղացում՝ հայ. *կ* >լատ. *g* (*ergout*): Այս կետում ծագող հարցերի լուծումը մնում է բավականին կնճռոտ:

Երսուն [լատ. triginta «երեսուն»]. ցանկում տասնավոր նշանակող *-ուն* բաղադրիչի *u*-ն տառադարձված է *ch*-ով (*Erchun* «30», *karraschun* «40», *ischun* «50» և այլն), որ դասական լատիներենում այլ հնչում ուներ (*hu* [x]). նման տառադարձումը մնում է անբացատրելի, եթե բացառենք միակ հնարավորը՝ հայ. *խ*-ի (բարբառային-խոսակցական) քմային արտասանություն (նման ռուս. *х*-ին.

¹¹⁵ Տե՛ս *И. Х. Дворецкий, Латинско-русский словарь*, էջ 143, 199:

հմմտ. գերմ. *ich* «ես». *glücklich* «քաղցր. համեղ»): Այնուհետև, բառամիջում *ե* ձայնավորի սղումը, իրոք, ոչ գրական (խոսակցական) հնչյան հետևանք է (*եղեսուն* > *երսուն*), իսկ բառասկզբում չենք բացառում հին գրական *ե* [ē] ձայնավորի հնարավոր յէ [yē] արտասանությունը: Նոր բարբառներն ունեն մեծապես տարբեր հնչումով ձևեր՝ *յէռէսուն* // *յէռսուն* // *յէռսուն* (Եր., Վն., Ալշ., Մշ), *էրսուն* (Մշ., ՀՃ.), *էրսուն* (Ախց., Կր., Ջթ., ՆՆխ., Պլ. Տգ. և այլն), *հէրսուն* // *հէրսոն* (Մկ., Ոզմ.) և այլն:

Եւթն [լատ. *septem* «7»]. ցանկում ընթեռնելի տառադարձումն է *Hiocet*, որ Օմոնը վերծանում է նույնությամբ, իսկ Կարիերը այն նշում է երկու տարբերակով՝ *եթթ*/*եթթր*. երկրորդ ձևը բնավ տեղին չէ, թեև հեղինակը տողատակին գրում է, որ այն բրբռ. (խսկց.) ձևն է *եթթն*-ի¹¹⁶: Նոր բարբառներն ունեն հետևյալ ձևերը՝ *յթթր* (Խրբ., ՀՃ.), *յթթ* (Ալշ., Մկ., Մշ., Ոզմ., Վն.), *ոյթթր* (Ոզմ.), *ոյթթր* (Ախց., Եր., Կր., Ջր., Սլմ.), *ոյթթր* (Գոր., Ղրբ., ՆՆխ.) և այլն:

Եւթանասուն [լատ. *septuaginta* «յոթանասուն»]. տե՛ս *եւթն*: Նոր բարբառների մեծ մասում բառասկզբում *ո* է. *ոյթանասուն* (Մշ.), *ոյթանասուն* // *ոյթանասուն* (Եր., Շմ., Ասլ., Ջր., Տփ., Ազլ. Գոր.), մասամբ՝ *յ. յոթանասուն* (Մշ.) և այլն:

Թիկունք [լատ. *humerus* «թիկունք. կենդանիների թիակները՝ մեջքի վերին կողմը ուսով հանդերձ»] (<թեկն // թեկն). ցանկում տառադարձումն է *Tigunc*, որ Օմոնի ճիշտ վերծանման հիման վրա Կարիերը նշում է *թիկունք*՝ առանց անդրադառնալու այդ ձևում առկա ձայնեղ *գ*-ին (փխ. *կ*), որպիսով այն ոչ գրական (խսկց.-բրբռ.) օրինակ է: Նոր բարբառների մեծ մասում բառը *կ*-ով է, մի քանի-

¹¹⁶ *A. Carrière*, նշվ. աշխ., էջ 12: Մենք այս թվականին անդրադառնալու ենք առանձին՝ համեմատական քննության նոր տվյալների օգտագործմամբ:

սում՝ *q*-ով. *թիկունք* (Ալշ., Մշ., Տփ.), *թիկունք* (Մկ.), *թե՛ գիւնք* (Ղրբ.), *թիգունք* (Խրբ., Մեր.) և այլն:

Ին [լատ. novem «ինը»]. տեղեկատուի արտասանածն է *In* (առանց *ն*-ի), որ պահում են Օմոնը և Կարիերը, թեև վերջինս դնում է հայ. *ինը*՝ նշելով, որ այն գրական *ինն*-ի փոխարեն է. *ն*-ի հավելումը, կարծում ենք, տեղին չէ, որովհետև նոր բարբառների մի որոշակի մասում այն կա *ին* ձևով (Ալշ., Մկ., Մշ., Վն.): Մա կարևոր օրինակ է տեղեկատուի բարբառային-խոսակցական «լեզվի» վերաբերյալ:

Ինինտա[u(ն)] [լատ. nonaginta «իննսուն»]. ցանկում գրությունը հստակ է, թեև գրերը բավականին կպած են, Օմոնը վերծանում է ճիշտ՝ *ininta*, Կարիերը բաց է թողնում՝ տողատակին տալով ծանոթագրություն (տե՛ս վերը): Մենք ենթադրում ենք՝ ցանկում գրանցվածի վերջում *-u(ն)* [-s(n)] մասի հնարավոր հավելում, որ տեղեկատուի ասածը գրանցողի կողմից (հստակ չընկալելու պատճառով) բացթողում է:

Լեզու [լատ. lingua «լեզու. խոսք. խոսելաձև»]. ցանկում բառը տառադարձված է *linzu*, նկատենք, որ լատինագիր *n*-ի վրա և տակը դրված են կետեր, Օմոնը և Կարիերը դա անտեսել են՝ գրելով *Lizu*. հարց է առաջանում՝ կետեր դնելը նշանակում է տառի զեղչն՝ *ւ*, թե՞ Օմոնի վերծանումն է սխալ:

Բառը բնիկ է, ծագում է հե. *t'ng^[h]uH- «լեզու» արմատից. ըստ այդմ՝ բառացանկի տեղեկատուի հաղորդածի մեջ հիշյալ *n*-ն վրիպո՞ւմ է, օրինակ՝ բնագրի նախորդ տողի (ճիշտ այս բառի վերևում եղած լատ. lingua-ի առաջ բերած շփոթի ուղղում՝ երկու կետերով), թե՞ բնիկ արմատի՝ ավելի հին ձևի՝ հե. *n-ի արտացոլում ոչ հին գրական հայերենում, այլ 10-րդ դ. այս ձեռագրի մեջ: Հարցը կարևոր է այդ և այլ առումներով, մանավանդ որ նախկինում այն եղել է տարբեր ուսումնասիրողների (Մեյե, Պեդերսեն,

Աճառյան և ուրիշներ) կողմից տարաբնույթ քննության առարկա¹¹⁷: Նոր բարբառները, ըստ Աճառյանի տվյալների, ունեն բառի հնչական մի շարք տարբերակներ՝ *լեզօլ* (Ռզմ), *լեզու* (Խրբ., Մշ., Պլ., Տիգ.), *լեզու/լուզու//լեզի* (Ասլ., Մկ., Սլմ. Վն.), *լիզու//լիզի/լուզու* (ՆՆխ., Ալշ., Ախց., Եր., Կր., Ջղ և այլն), *լեօզի //լի՛զու, լի՛զու* (Մրդ., Ազլ., Գոր., Ղրբ.) և այլն:

Լինդ [լատ. *gingīva* «լինդ. լնդեր»]. ցանկում լատիներեն բառը *e-ով* և կարճ *i-ով* է՝ *gengiva* (փխ. *gingīva*), Օմոնը ճիշտ է վերծանում՝ *Lind*, Կարիերը տալիս է բառավերջի խուլ բաղաձայնով՝ *լինտ*, իսկ տողատակին՝ իսկց. *լինտր, լինդր*¹¹⁸:

Աճառյանը նկատում է, որ հին գրչություններում «գրուած է նաև *լինտ* և կրկին յոգնակիով՝ *լնդերք* կամ *լնտերք* (ինչպես ունինք *տղերք, երեխերք*), որից ՀՀԲ [= «Հին հայկազյան բառարան» - Վ. Հ.] և Հինք. (=Հյունքյարպեյենտյան – Վ. Հ.) ենթադրում են սխալմամբ եզ. *լինտր* ձևը¹¹⁹: Այս վերջին սխալ *լինտր* ձևն է նշում Կարիերը տողատակում: Նոր բարբառներն, իրոք, չունեն *լինտր* ձև, այլ հանդիպում են հետևյալ ձևերը. *լինդ* (Ալշ., Եր., Խրբ., Պլ., Վն.), *լինդիր* (Մրդ.), *լրնդերք* (Ախց., Կր., Ղրբ., Շմ.), *լնդիր //լանդիր* (Ռզմ.) և այլն:

Լուսնկա [լատ. *lūna* «լուսին. լուսնի լուսավորում. ամիս»]. ցանկում լատ. *lūna* բառի համար դրված է (հստակ ընթերցվում է) լատինագիր *Lucenga*, որ տալիս է նաև Օմոնը, այնինչ Կարիերը հարադրում է *լուսնկայ, լուսինկայ* ձևերով, տողատակին՝ «իսկց. *լուսին-ի*»¹²⁰: Նոր բարբառներից մի քանիսն, իրոք, ունեն *լոյս* բառարմատից կազմված *լուսին* բառի նման տարբերակներ. *լուսնիզա*

¹¹⁷ Այդ հարցին անդրադառնալու ենք առանձին աշխատանքում:

¹¹⁸ Նույն տեղում, էջ 14:

¹¹⁹ Հ. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 284:

¹²⁰ A. Carrière, նշվ. աշխ., էջ 14:

//*լուսինգա* (Սչ., Սեր.), *լուսունգա* // *լուսնգա* (Պլ.), *լուսունգա* (Խրբ.), *լիսինգա* (Ակն, Ասլ.): Ի դեպ՝ Աճառյանը գրում է. «Սրանց մեջ *լուսնկայ* ձևացած է հին հյ. *լուսնակայ* բառից՝ իմաստի այնպիսի փոփոխությամբ, ինչպես է *արև*, գրբ.՝ «արեգակի լոյսը», աշխ.՝ «արեգակ»»¹²¹:

Խաչ [լատ. *crux* «խաչ. ցավ, տանջանք. լուծ»]. այս բառի ծագումը, ոչ անկախ է. Լիդենի ունեցած կարծիքից, Աճառյանը կայում է հե. **khēt*- «փայտ» արմատի հետ. ի լրացումն որի՝ Ջահուկյանը գրում է. «Թերևս բնիկ հնդեվրոպական **khōtiō*- [**khēt*-] «փայտ», այլև այն «միացնում է հնդեվրոպական *(s)k(h)ai-d/t «խփել, բոնցքահարել, հրել, խթել» արմատի հետ», որին, թերևս «խանգարում է» հայ. *խաչափայտ* կազմությունը (?). այդուհանդերձ, ասվածը կարելի է համարել ընդունելի՝ մինչև ավելի անվարան ստուգաբանություն գտնելը¹²²:

Խոչակ [լատ. *guttur* «կոկորդ. խոչակ. խժռելը»]. ցանկում՝ լատինագիր *Kcerchac*, որը տալիս է նաև Օմոնը, Կարիերը դնում է հայ. *խոչակ*՝ նշելով. «խակց. *խոչափող-ի*»¹²³: Ըստ Աճառյանի՝ *խոչակ*-ը շնչափողն է, բաղադրված *խոչ*-ի հնչամիացությունից՝ իբրև բնաձայնություն, որի համար բարբառային ձևեր չեն նշվում¹²⁴: Լատինագիր *kcerchac* տառադարձության մեջ կան հնչունական բացատրության կարոտ տեղեր՝ կապված բառակազմի *kc>խ* և բառամիջի *ch > չ* համապատասխանության հետ (տե՛ս վերը):

¹²¹ Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 296:

¹²² Հ. Աճառեան, նշվ. աշխ., հ. 2, էջ 333-334: Գ.Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 317: Նույնի՝ Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 147:

¹²³ A. Carrière, նշվ. աշխ., էջ 15: Ի դեպ՝ *խոչափող*-ը և *խոչակ*-ը հավասարապես հետին են, քան այս ցանկում տեղ գտնելը:

¹²⁴ Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 427:

Ծիծ [լատ. mamilla, փքրց.՝ mamma-ի «ստինք. պտուկ»]. մեր ձեռքին եղած ֆաքսիմիլեում դժվարընթեռնելի, սակայն Օմոնի կողմից ճիշտ վերականգնված հայ. Cize ձևի համար Կարիերը դնում է երկու՝ *ծիծ*, փակագծում՝ *ծիծը*, ընդ որում երկրորդը հարցականով, այլև տալիս է հետևյալ ծանուցումը. «խսկց.՝ *ստին, ստինք*»: Այս cize տառադարձումը արտացոլում է *ծիծը* արտասանվածը, բառի սկզբում և վերջում հայ. *ծ*-ն նշվում է ոչ միակերպ, այսինքն՝ տեղեկատուի խոսքում դրանց արտաբերումը տարբեր է եղել: Ուստի բառի գործածությունը, այլև արտասանությունը դուրս են ժամանակի գրական նորմայից: Հայ. բարբառների մեծ մասում գործածվում է *ծիծ* (Ախց., Կր., Մրդ., Ջղ., Սլմ., Վն., Տփ. և այլն), իսկ որոշ բարբառներում՝ *պտուկ* (Ախց., Երև., Կր. և այլն):

Ծունկ [լատ. genu «ծունկ»]. հստակ գրությամբ և տառադարձությամբ genu - Scunch բառին Կարիերը համարժեք է դնում *ծունկ* ձևը՝ ծանոթագրելով, թե այն խոսակցական ձևն է գրաբարի *ծունգք* // *ծունկք* տարբերակի: Ցանկում, իրոք, առանց հոգնակերտ *ք*-ի է, սակայն արմատի *գ/կ* լծորդությունը գալիս է հին շրջանից, և այս դեպքում դրանցից մեկն է դրված, որ չի ենթադրում խոսակցական կամ բարբառային ծագում: Նոր բարբառներում ևս այն երկակի՝ *գ*-ով և *կ*-ով է հանդիպում, երկակի լինելը գալիս է նախահայերենից, որում նախնական ձայնեղ *գ*-ն հետագայում ներառել է զուգահեռ խուլ *կ*-ով տարբերակը. հմտ. *ծունգ* (Եր., Մշ., Ջղ., Սեբ., Սլմ.), *ծունկ* (Ախց., Կր.). բառացանկի ձևը մոտ է այս երկրորդին:

Կիրակէ [լատ. kirache «Dies dominica. կիրակի»]. գրական արտասանության ընդօրինակում:

Կ... [լատ. verētrum «m. vir.»]. ցանկում ևս բառը համառոտված է՝ Cliv, բառակզբում հետնալեզվային խուլ *կ* բաղաձայնով, որ նոր բարբառներից մի քանիսում ևս այն հայտնի է, իսկ որոշ դեպ-

քում՝ ձայնեղ *q*-ով, արևելյան և արևմտյան տարածքների հակադրությամբ:

Կնհկ [լատ. mulier «կին. առնակին». ոչ-գրական (բրբռ.-խսկց.) Kenic ձևի՝ ցանկում առաջին վանկի *ը*-ն արտացոլված է լատինագիր *e*-ով, որ նկատելի է նաև այլ օրինակներում: Տառադարձված այդ ձևի սկզբի և վերջին նույն խուլ հնչյունը տարբեր տառադարձմամբ է, որ հիմք է ենթադրելու, թե դրանցից մեկը կամ մյուսը, թերևս, խուլ բաղաձայն չէ, որ գրեթե անհնարին է ցույց տալ կամ ապացուցել: Նոր բարբառները, օրինակ, չունեն *ե*-ով ձև, իսկ *ը*-ով ունեն (օր.՝ *կենհկ*), ուստի այստեղ լսված և գրված *ը* ձայնավորն է (օր.՝ *կընհկ*). Բարբառների մեծ մասը *-հկ* մասնիկով ձևն ունեն, ընդ որում սկզբնահնչյունի (երբեմն նաև վերջնահնչյունի) ձայնեղացմամբ:

Կողք [լատ. dorsum «թիկունք, կռնակ. ողնաշար»]. լիովին ճիշտ վերծանված և տառադարձված Cuelc ձևի համար Կարիերը դնում է *կողք*՝ ծանոթագրելով. «ավելի ստույգ՝ les côtes [«կողեր»]». սխալը գալիս է տեղեկատուից, որ լատ. dorsum-ը թարգմանել է *կող(ք)*, փխ.՝ *թիկունք* կամ *մեջք*: Թե՛ մեկը և թե՛ մյուսը գրական բառեր չեն, ուստի ցանկում նման գործածությունը վերաբերում է ժամանակի խոսակցականին (եթե ոչ՝ որևէ բարբառի), ընդ որում արմատի *ռ* ձայնավորի փոխարեն՝ *ռ*, այլև բառավերջում՝ *ք*, լատինագիր *l*-ի արտացոլումը իբրև հայ. *ղ*, որը վկայություն է հայ. *լ > ղ* անցման. ընդարձակ վերլուծություն ունի Մեյեն՝ կապված ցանկի *աղ* (ahl) օրինակի հետ¹²⁵:

¹²⁵ Տե՛ս *Ս. Մեյե*, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 448:

Կոճ [լատ. *cabilia*. հմմտ. ֆրանս. *cheville* «(ոտի) կոճ»]. տեղեկատուի արտաբերածը Օմոնը տառադարձել է *Cuech*, որ եթե հայերեն արտահայտենք, պիտի լինի *կուէչ*, սակայն Կարիերը այն գուգադրել է գրական *կոճ* ձևի հետ՝ միաժամանակ տողատակում ծանուցելով հետևյալը. «*Cabilia* «ոտի կոճ». այն շատ հաճախ լինում է *cabilia* (ձևով)»¹²⁶: Տառադարձված *cuech* ձևը, անշուշտ, բարբառային-խոսակցական է, որ գրական *n*-ի դիմաց ունի *ուէ*, իսկ *ճ*-ի փոխարեն՝ շնչեղ խուլ չ: Նոր բարբառներից մի քանիսում կան այդ ձևին մոտ արտասանությամբ ձևեր՝ իմաստի տարբերակմամբ. *կու՛ճ* (Մրդ.), *կուճ* (Մկ., Ոզմ), *գէօջ* (Հմշ.) և այլն:

Կոնակ [լատ. *renēs* «երիկամ. մեջք, գոտկատեղ»]. ցանկում այս բառը դրված է լատ. *renes* բառին համարժեք, սակայն վերջինս բերվում է նաև հայ. (բրբռ.) *հանդամ* բառի դեպքում (տե՛ս ստորև). տեղեկատուից եկող շփոթն ակնհայտ է: Այդուհանդերձ, լատինագիր հայ. *Gernac* ձևում առկա է, այսպես կոչված, արևմտյան արտասանություն (հետնալեզվային խուլի ձայնեղացում), այլև բառամիջում («գաղտնավանկ») *ը*-ի արտահայտում լատինագիր *e*-ով (հմմտ. *kenic* - *կնիկ* և այլն):

Կոնակ-ը, հայտնի է, *կուռն* բառի փոքրացուցիչ ձևն է՝ *-իկ* մասնիկով, հանդիպում է ուշ շրջանի գրական հուշարձաններում (տարբերակ՝ բրբռ. *ճուռն* և այլն): Նոր բարբառներում այս բառում խուլի ձայնեղացման օրինակներ են տալիս հիմնականում արևմտահայ տարածքի բարբառները:

Հագար [լատ. *mille* «հազար»]. այս բառի ծագումը ընդունված է կապել իրանական լեզուների տվյալների հետ՝ թվականական բաշխման հիմքով, սակայն այդ բառարմատից [համանուն (?)] հայտնի է այլ իմաստով բուսանուն, նույնիսկ որականիչ ածական

¹²⁶ *A. Carrière*, նշվ. աշխ., էջ 16:

(հմմտ. մեկի *հազարը*՝ հազարի ժամանակը, իմա՝ «լավագույն, բարձրակետային և այլն պահը»): Աճառյանը բույս նշանակող հազար «մի տեսակ բույս» արմատը համարում է «անստույգ բառ»¹²⁷:

Հանդամ (< handam) [լատ. rēnēs «երիկամ. մեջք. գոտկատեղ, ազդրեր»]. ցանկում ընթեռնելի է, ուստի Օմոնը դնում է Handam, նույնը՝ Կարիերը, ծանոթագրելով. «Ավելի ստույգ՝ «անդամ», rēnēs-ի համար ճիշտ տերմինը կլիներ *երիկամունք*, խոսակցական՝ *երիկամ* կամ *պոլոճիկ*»¹²⁸: Ըստ այսմ՝ տեղեկատուն շփոթել կամ խուսափողական ձևով (Էվֆեմիզմ) է թարգմանել, և գրանցողն այդպես էլ նշել է հայ. *անդամ*, *կոնակ* և *երիկամ* բառերի իմաստային (կզմխս., գր.-խսկց.) տարբերությունը՝ լատ. rēnēs «երիկամ. մեջք, գոտկատեղ» և coxa «ազդր, զիստ, բարձ»¹²⁹:

Հարեր [լատ. centum «հարյուր»]. այս բառի ծագման վերաբերյալ կան ստուգաբանական մի շարք փորձեր, որոնց այստեղ չենք անդրադառնում՝ դրանցում բավարար հիմքեր չտեսնելու պատճառով:

Հաց [լատ. pānis «հաց»]. այս բառը տառադարձված է բառավերջում լատինագիր z-ով՝ Haz, որ լիովին համապատասխանում է արտասանությանը, եթե ընդունենք z-ի՝ հայ. *ջ*-ին համարժեք արտասանության հնարավորություն. այլն՝ վանկակազմիչ ձայնավորի խախտում չկա՝ գրական նորմային համարժեք:

Հինգ. [լատ. quīnque «հինգ»]. արմատը բնիկ է (< հե. *penk^he-). բառացանկում գրված է *կ*-ով (Hink), որպիսին գտնում ենք հետագայի բարբառներից մեկ-երկուսում (Ախլ., Կր.): Նույնը՝ *հինգ խապտե* [լատ. feria V «հանգստի՝ տոն օր. ընդմիջում. հանգիստ». շաբաթվա 3-րդ օրը]» բառակապակցության մեջ.

¹²⁷ Հ. Աճառեան, նշվ. աշխ., հ. 3, էջ 6:

¹²⁸ A. Carrière, նշվ. աշխ., էջ 15:

¹²⁹ Sté u И. X. Дворецкий, Латинско-русский словарь, էջ 268, 869:

Ձեռք [լատ. brāchium «ձեռքի մաս՝ արմունկից մինչև թաթր. մագիլ, ճանկ»]. ձեռագրի բավականին ընթեռնելի, իրարից անջատ ընդամենը չորս նիշը Օմոնը վերծանում է Striuch, որն առարկելի է, վերջինիս դիմաց Կարիերը դնում է *ձեռք* (< *ձեռն*-ի հոգն. թ.), որ գրական չէ, այլ հետագայում դարձած անեզական, որի մի վկայությունն է այս ցանկի տվյալը: Մենք ենթադրում ենք հայ. *սրունք* (գրաբար նաև՝ *սրունգն* // *սրունկն*) վերծանություն, քանի որ լատ. brāchium (նաև նվազ՝ brāchiolum «ազդրի մկան») նշանակում էր ոչ միայն՝ 1) «արմունկից մինչև (ձեռնա)թաթ», այլև 2) «ծնկից մինչև (ոտնա)թաթ»¹³⁰: Ընդ որում վերծանության մեջ լատ. ch-ն այս դեպքում ավելի ճիշտ կլինի դիտել հայ. *կ*-ի նշանակում (*սրունկ*): Իսկ լատ. str- հնչմանը համարժեք համարելի հայ. *սր*- հնչումը կարող է հատուկ քննության նյութ լինել: Ըստ այսմ բառացանկի հայերեն մասի *ձեռք* բառը դուրս է մնում, փոխարենը՝ *սրունք*:

Ձու [լատ. ovum «ձու»] // *ձուք* [լատ. testiculi «(տղամարդու) մարմնի մաս. առնական ուժ»]. այս բառը ցանկում հանդիպում է երկու անգամ, իբրև թարգմանություն՝ 1) լատ. ovum «ձու. հավկիթ» (եգ. թ.) (լայն իմաստով՝ «բնամթերք») և 2) լատ. testiculi «ձվեր. ամորձիք» (անեգ. ձև) [լայն իմաստով՝ «(տղամարդու) մարմնի մաս. առնական ուժ»] բառերի: Ցանկում դրանց նշանակումը (մեր ձեռքին եղած լուսապատճենը դժվար ընթեռնելի է) Օմոնի կողմից ճիշտ է, մանավանդ փակագիր մասերի բացման հետ կապված: Կարիերը հայ. *ձուք* «ձվեր» ձևի համար տողատակում ունի ծանոթագրություն. «Pr. [= propremant] «les œufs [= ավելի ստույգ]՝ «ձվեր»¹³¹:

¹³⁰ Տե՛ս *И. X. Дворецкий*, նշվ. աշխ., էջ 136: Իմաստային նման բաշխումը առհասարակ բնորոշ է հե. լեզուներին. հմմտ. հայ *կուռն* // *ձուռն* և այլն:

¹³¹ *A. Carrière*, նշվ. աշխ., էջ 16, ծանոթ. 4:

Հետաքրքիր է նաև այն, որ տառադարձման մեջ առաջին դեպքում հայ. *ձ*-ն նշանակված է լատինագիր *ch*-ով, իսկ երկրորդ դեպքում՝ *sc*-ով, որ տարակուսելի է, ուստի տեղիք է տալիս մի քանի ենթադրության՝ տեղեկատուի արտասանության տարբերություն, գրանցողի անձեռնհասություն (ոչ կոմպետենտություն), ժամանակի տվյալ խոսվածքում այդ բառերի տարբեր հնչողություն և այլն:

Եվ եթե ենթադրելու լինենք, ապա կարելի է լատինագիր *ch*-ն համարել համարժեք հայ. *ձ*-ին, *sc*-ն՝ *ժ*-ին, իսկ *scuc*-ի վերջնահանգ *c*-ն՝ հայ. *ք*-ին: Նկատենք, որ ըստ Աճառյանի «Արմատական»-ի տվյալների՝ հայ. *ձու* «ձու» բառը «անստույգ» է (ըստ Ջահուկյանի՝ «թերևս բնիկ հնդեվրոպական **ǵōm-* [**o(u)ǵ-om-*]«ձու» նախաձևից¹³²), իսկ *ձու(ք)* «ամորձիք» բառը համարվում է ծագած հե. **oǵiom* նախաձևից (հմմտ. Ջահուկյանի հիշյալ ստուգաբանությունը, որ այս ձևը տալիս է «ձու. հավկիթ» բառի համար)¹³³: Նոր բարբառներում ունենք ոչ միայն ձայնեղ, այլև խուլ կիսաշփականով ձևեր, որոնցից վերջինը ծագումնային արտացոլման առումով ըստ համեմատաբանության նոր տվյալների, համարվում է ավելի նախնական:

Ձուկն [լատ. *piscis* «ձուկ»]. ցանկում հստակ գրությամբ պահպանված ձևը Օմոնը ճշտորեն վերծանում է *chugen*, որին Կարիերը համարժեք է դնում *ձուկն* ձևը՝ լիովին համապատասխան գրաբարին: Սակայն նկատում ենք տառադարձման նրբություններ՝ բա-

¹³² Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 477: Ի դեպ՝ Ջահուկյանի բառացանկում տարբերակված չեն այդ բառերը, որ տարակուսելի է. տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 142, 184, 209:

¹³³ Այս դեպքում, իրոք, առկա է ձևափոխության բաղադրություն (կոնտամինացիա), որ կարող է պարզվել, օրինակ, *ձու* (<*ձագ*) // *ձու(ք)* (*ամ-որձի*) իմաստային անցմամբ:

ռասկզբի լատինագիր *ch*-ի դիմաց *d* արտացոլում, բառամիջում *h*-ից առաջ գաղտնավանկ *z*-ի արտահայտում *e*-ով, վերջապես՝ հետնալեզվային խուլի փոխարեն ձայնեղ (ի տարբերություն գրաբարի): Նոր բարբառներում կան ձայնեղ / խուլ տարբերակմամբ ձևեր՝ ոչ միայն բառասկզբի, այլև բառամիջի դիրքում (չհաշված քմայնացումը) (Ջղ., Ագլ., Շմ., Տփ., Պլ., Վն, Հմշ և այլն):

Մազն [լատ. *capillus* «մագ. բուրդ. (բույսերի) մազմզուկ»]. ցանկի լատ. *capillus*-ի թարգմանությունն է հայ. *մազ* բառը, որը տառադարձման մեջ *Mazen* ձևով է, ենթադրելի է, ինչպես այլ օրինակներում, թե բառամիջի լատինագիր *e*-ն համարժեք է հայ *z*-ին՝ իբրև հայերենին առհասարակ բնորոշ հնչման գրային նշանակում և արդյունք հայերենի ուղղախոսական-ուղղագրական այդ իրողության (գրանցողի կողմից) չիմացության. այս դեպքում միակ տարբերությունը, թերևս, բառավերջի *h*-ի ներառումն է, որ կարելի է խոսակցականի արտացոլում համարել (Կարիերն այն նշում է իբրև *déterm.* [= *détermination* «որոշիչ»):

Մատն [լատ. *digitus* «մատ՝ ոտքի կամ ձեռքի. ճանկ. մագիլ»]. ցանկի լատ. *digitus*-ի թարգմանությունն է, ըստ տեղեկատուի, *Matun*, որ այլ բան չէ, քան գրաբարի հոգն. ուղղ. ձևը՝ առանց *p* մասնիկի (փխ.՝ *մատունք* «մատներ». Կարիերը այդպես էլ դնում է՝ շրջանցելով *p*-ի հանգամանքը): Կարելի է մտածել, որ տեղեկատուի «լեզվում» երևույթը ընկալվելիս է եղել հոգնական-հավաքական իմաստով, որպիսով էլ թարգմանվել է լատիններեն եզակի թվով նշանակվող բառը: Այս դեպքում ևս, անշուշտ, ունենք տարբերություն գրական նորմայի և բառացանկի գրառման միջև:

Մեկ [լատ. *ūnus* «մեկ»] «մի, մեկ» արմատը հայերեն բաղադրյալ ձևերում ներկայանում է մի քանի տարբերակով, ծագումով բնիկ է՝ հե. **smio-* (< **sem-*) «մեկ. մեկ ամբողջ»: Բառացանկում այն դրված է լատինագիր *Meche*, որ Կարիերը համարում է *մեկ* կամ

վէկը ձևերի արտացոլում: Հայերենի նոր բարբառներից ոչ մեկում չի նշվում *վէկը*, բառացանկի ոչ միայն այդ բառում, այլև մի քանի այլ բառերում ունենք բառավերջի լատինագիր *e*, որն, անկասկած, այլ բան չէ, քան իր ժամանակի միջին շարքի *ը*-ի արտասանության նշանակում. հմմտ. *chure* (*չուրը*), *vise* (*վիզը*), *cize* (*ծիծը*), *puerhe* (*փորը*): Ենթադրելի է, որ դա տեղեկատուի (ինֆորմանտի) ոչ թե խոսքային-արտասանական մի դրսևորում է, այլ լեզվի բարբառային հիմքի արտահայտություն¹³⁴:

Միս [լատ. *caro* «միս, փափուկ՝ անուկոր միս»]. ցանկում հստակ գրություն ունեցող լատ. *caro* բառը թարգմանված է հայ. *միսը* (հոգն. ուղղ. հոլ.)՝ նկատի ունենալով, որ տառադարձման մեջ բառավերջի գիրը պիտի *c* [ք] լինի՝ Misc: Այնինչ հակված ենք կարդալու *e* [է], ինչպես այլ օրինակներում, նշանակում է բառավերջի *ը* արտասանությունը՝ իբրև տեղեկատուի խոսքի (բարբառի) արտահայտություն:

Մուրուք [լատ. *barba* «մորուք. (կենդանիների՝ բույսերի) մազափունջ»]. հստակ տառադարձված *Muruc* ձևը խոսակցական-բարբառային է (հմմտ. նոր բրբռ.՝ Մշ., Ալշ, Շմ.)՝ կապված առաջին վանկի ձայնավորի հետ (*nz*, փխ.՝ *n*, ըստ գրական նորմայի): Նման տառադարձումը արտացոլում է տեղեկատուի խոսքի հնչումը. միակ ուշադրության արժանին, թերևս, այն է, որ բառավերջում լատ. պարզ խուլը հայերեն նշանակված է շնչեղ խուլով (լատ. *c* > հայ. *ք*):

Յիսուն [լատ. *quīnquāgintā* «հիսուն»]. տեղեկատուի արտասանածը տառադարձված է *Ischun* (պարզ, ընթեռնելի), սկզբնահունչ *յ*-ի հավելումը չի բխում տառադարձումից, իսկ *sch* հնչախումբը *ս*-ով արտահայտելը մնում է գրեթե չբացատրված, եթե բա-

¹³⁴ Հմմտ. *A. Carrière*, նշվ. աշխ., էջ 12, ծանոթ. 4:

ցառենք ենթադրելի կրկնահունչ *ց*-ի հանգամանքը (*sch* > հայ. *gg. յիցցուն*՝ շեղում գրական նորմայից). այդ դիրքում կրկնահունչ (տևական) արտասանություն հանդիպում է նոր բարբառներից մի քանիսում (Տիգ., Ալշ., Ջղ., Մրղ., Սեբ. և այլն):

Յունք [լատ. *supercilium* «հոնք. խոժոռ տեսք»]. տեղեկատուի արտասանածը տառադարձված է *Hunc*, որում նկատելի է երկու կարգի տարբերություն՝ դասական գրաբարի *աւ*-ի (*օ*-ի) դիմաց *ու*, որն ակնհայտ ոչ գրական (խոսակցական-բարբառային) է՝ առհասարակ հայերենի հնչյունաբանության պատմության տեսանկյունից, այլև հոգնակերտ *ք*-ի դիմաց՝ *կ*-ի գրություն (որը ևս կարող ենք նույն կերպ բնորոշել), այնինչ Կարիերը տալիս է երկու ձևով՝ *յունք* և *յոնք*. առաջինը ևս գրական չէ, և երկրորդի՝ գրական ձևի հետ հեռու են Օմոնի՝ վերը նշված ճիշտ տառադարձվածի նշանակումից:

Նկատենք, որ հայերենի նոր բարբառներում ունենք նման գրությամբ (իմա՝ արտասանության արտացոլում հանդիսացող) ձևեր՝ *յոնք* (Ցղ.), *յունք* (Ազլլ.), *յունք* (Ալշ., Սշ., Ջղ.) և այլն:

Շաբաթ [լատ. *feria VII* «յոթնօրյակ»]. բառը հանդես է գալիս ոչ միայն առանձին՝ յոթնյակի օրերից վեցերորդի նշանակման համար, այլև բաղադրությունների մեջ. վերջիններս գրաբարում ևս միակերպ չեն, այլ ունեն տարբերակներ՝ *երկուշաբաթ*// *երկուշաբաթի*, նաև *երկշաբաթի*, *երեքշաբաթ*, (բրբո.) *երեքշաբթի*, *չորեքշաբաթ* // *չորեքշաբաթի*, (աշխ.) *չորեքշաբթի*, *հինգշաբաթ* // *հինգշաբաթի*:

Բառացանկում այս բառ-բաղադրիչը գրված է, մի տեսակ, անսպասելի ձևով՝ *xapte*, որի բնույթին չեն անդրադարձել նախկինում (Օմոն, Կարիեր և ուրիշներ): Աճառյանը նշում է՝ *միաշաբաթի*, *երկուշաբաթի*, *երեքշաբաթի*, *չորեքշաբաթի* և *հինգշաբաթի* «կամ նաև *միաշաբաթ*, *երկուշաբաթ* և այլն» (ՀԱԲ, 3, էջ 479):

Բառի պատմական-համեմատական քննությունը մեզ կարող է հեռուն տանել: Հայտնի է, որ հայ. *շաբաթ* բառը առնչվում է սեմական լեզուներին, և տարածված է հնդեվրոպական մի շարք լեզուներում. հմմտ. եբր. *šabbāθ* «հանգիստ. դադար՝ ի նշան արարչության յոթերորդ օրվա» (ասոր. *šabbāθā*), հուն. *Σάββατον*, լատ. *Sabbatum* և այլն: Աճառյանը կարծում է, որ «եբրայական բառը փոխառությամբ անցած է նաև ուրիշ բազմաթիվ լեզուների» (ն. տ.):

Սակայն, մենք հակված ենք մտածելու, որ այս դեպքում ունենք ոչ թե փոխառություն, այլ հնդեվրոպական-սեմական (նոստրատիկ) ընդհանրություն. եբր. *šabbāθ* բառը զուգադրելի է հե. **sep^{[h]t[h]}mo* «յոթ» (**sep^{[h]t[h]}-mo* «յոթերորդ»)ձևի հետ, որ անբասիր է թե՛ հնչյունապես և թե՛ իմաստով (հմմտ. հայ. *եաւթն* > *ելթն*, *եօթն*). հինդկ. *saptá*, ավեստ. *hapta*, հուն. *ἑπτά*, լատ. *septem*, հրգերմ. *sibun* (գերմ. *Sieben*) «յոթ», նաև հինդկ. *saptamá* «յոթերորդ», պրսկ. *haftum*, հուն. *ἑβδομος*, լատ. *septimus* և այլն¹³⁵:

Այստեղ միայն նշենք, որ այդ առնչության իմաստային զարգացումը ավելի հին է, քան որ ավանդական համեմատաբանությունը (և իմաստաբանությունը) ժամանակին ներկայացնում էին. *շաբաթ* հասկացությունը լեզուներում նախապես նշանակել է «յոթ» կամ «յոթնյակ»՝ կապված իրականության (երկրային, երկնային և այլն) յոթնաբաշխ պատկերացումների առաջացման հետ՝ մինչև դիցական-պաշտամունքային մակարդակ¹³⁶: Հմմտ. նաև ուրարտ.

¹³⁵ Տե՛ս *T. B. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, I-II, Тбилиси, 1984, էջ 846:*

¹³⁶ Այս հարցին անդրադառնալու ենք առանձին, ավելի մանրամասն:

ՔՏիբիտու- դիցանունը՝ ըստ Գ. Ղափանցյանի, նաև հետագա քննարկումների տվյալները¹³⁷:

Շրթունք [լատ. labra «շուրթ. կողմ». եգ. թ.՝ labrum «շուրթն»]. բնագրում պարզ ընթերցվող Scirtun ձևը Օմոնը տալիս է հստակ նշանակումով, որին Կարիերը գուգադրում է *շրթունք* բառը՝ հավանաբար նկատի ունենալով բառավերջի *-un*-ը, որը հիմք է հանդիսացել ենթադրելու հոգնակի թվի *-ունք*, մանավանդ որ լատիներենի ձևը հոգնակիով է բերված: Այս դեպքում դժվարություն է հարուցում բառասկզբի լատ. տառադարձված *sc* > հայ. շ լծորդումը, որը, օրինակ. *սիրտ* (scirt), *ծունկ* (scunch) բառերի դեպքում այլ է՝ *sc* > հայ. *ս/ծ*:

Ուռք [լատ. crūs «սրունք. արմ. խարիսխ»]. ձեռագրի լուսապատճենում հստակ ընթերցվում է լատինագիր տառադարձությամբ Vluec (v-ն գլխագրով), որպիսին գտնում ենք նաև Օմոնի ցանկում, սակայն Կարիերի ցանկում այն փոխարինված է լատինագիր U-ով, որ տարակուսելի է, ընդ որում հայերեն համարժեք են դրված *ուռք* // *ուրգ* կրկնակ ձևերը, որոնք հեռու են բնագրից, այսինքն՝ մոտ հին գրականին: Տեղեկատուի լեզվում հայ. *ուռք*-ը արտասանվել է նախահունչ *վ*-ով և բառամիջի *ուե* (*վե*), որպիսով այն ունի ոչ գրական՝ բարբառային (կամ խոսակցական) միավորի արժեք:

Ողն [լատ. spīna «փուշ, փշե պսակ». «ող, ողնաշար»]. այս բառի դեպքում ևս լուսապատճենի վրա բառը հստակ նկատելի է՝ Hualn, որ գրական հայ. *ողն* բառի խոսակցական-բարբառային մի տարբերակ է՝ բառասկզբի *n*-ին նախորդող *hn*, նույն *n*-ի փոխարեն *u*, իսկ *ղ*-ի փոխարեն *լ* արտասանությամբ գրային նշանակում՝

¹³⁷ Գ. Ա. Կանանյան, Об урартском божестве Шебиту // “Известия” АН Арм. ССР, общественные науки, 1946, 11-12, с. 9-18: Հմմտ. Ս. Գ. Հմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը, Ե., 1990, էջ 14-15, 99:

հուալն: Հիշենք, որ ժամանակին Մեյեն հատուկ անդրադարձել է *ahl > աղ* անցմանը, և այդ օրինակին ավելանում է *Hualn > աղն*, որ-
պիսով ավելի է ամրապնդվում հնչյունական երևույթի դրսևորումը
տվյալ ժամանակաշրջանի համար:

Ուն [լատ. *pēs* «ոտ(p)»], տեղեկատուի հաղորդածը գրանց-
ված է *Uaden*. այս դեպքում նույնպես բառասկզբի հայ. *n*-ն երկ-
հնչյունային արտասանությամբ է՝ *ուա (ua)*, որ դարձյալ ոչ գրական
մի հնչում է: Նման ձևեր գրանցված ենք գտնում նաև նոր բար-
բառներում՝ *վոտ* (Ջղ., Սլմ., Վն.), *վօտ* (Երև., Շմ.), *վրտ*, *վրետ*
(Մրդ.) և այլն:

Չորք [լատ. *quattuor* «չորս»]. այս բառը Օմոնը տառադարձել է
Khuert, որ հանդես է բերում տարբերություններ գրականի համե-
մատությամբ. Մեյեն այս բառի վերաբերյալ ունի դիտարկումներ.
«Նույն բառացանկում անշեշտ *n*-ն ներկայացված է *u*-ով, մի բան,
որ ճշտիվ համապատասխանում է պր. Կարստի ուսուցած կիլիկ-
յան արտասանությանը, էջ 21, այսպես՝ *khurec xapte* չորեքշաբթի
(№ 4)»¹³⁸:

Այդպես նաև բառացանկն ունի *khurec xapte - չորեք իսապտե*
[լատ. *feria IV* «հանգստի՝ տոն օր. ընդմիջում. հանգիստ». «շաբաթ-
վա 3-րդ օրը»] նշանակումը:

Պանիր [լատ. *caseua* «պանիր»]. Օմոնի ցանկում և Կարիերի
աշխատության մեջ ճշտորեն ներկայացված է տեղեկատուի ար-
տասանությունը՝ *Paner*, որպիսով նկատելի է դառնում բառի ոչ
գրական (խոսակցական կամ բարբառային) հնչումը միջին դիր-
քում *h > t* (e): Հակառակ դեպքում կարելի է հավաստել, որ լատի-
նագիր տառադարձումը (e, փխ. i) արտացոլում է հայ *h* ձայնա-
վորը, որն այնքան էլ հավաստի չէ: Առավել հավաստի կլինի ասել,

¹³⁸ *Ս. Մեյե*, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 448:

թե լատինագիր e-ն հայ. ը-ի արտաբերման նշանակումն է (օր.՝ paner [հնչ. panər]), ինչպես որ գտնում ենք այլ օրինակներում: Այսուհանդերձ նշենք, որ հայերենի նոր բարբառներից մի քանիսում ունենք վերջնավանկում *է-ով* ձևեր. *պանէր* (Շմ.), *պանըէր* (Ղրբ.) և այլն:

Պատարագ [լատ. (altar) altāre «սեղան, (եկղ.) բեմ»]. Օմնը վերծանում է ձեռագրում եղած պարզ գրությամբ Patarac, Կարիերը բերում է բառավերջում հետնալեզվային ձայնեղով, գրական արտասանությամբ՝ *պատարագ*, այլն ունի ծանոթագրություն, որն այլ է, քան այս հնչյունական միջամտությունը. «Ստույգ՝ «գոհ. գոհաբերություն». altāre բառի հավաստի թարգմանությունը կլիներ *սեղան*»¹³⁹:

Ջուր [լատ. aqua «ջուր»]. տեղեկատուի արտասանածը Օմնը տառադարձել է Chure, որ կարող է հայերեն արտահայտվել *չուրը* ձևով, սակայն Կարիերը այն համադրել է գրական *ջուր* ձևի հետ (կից փակագծում հարցականով նշելով նաև՝ *ջուրը*, որը մասամբ մոտ է տառադարձվածին):

Այստեղ բառասկզբի Ch-ն հայ. ջ-ի արժեքով տառադարձումը համեմատելի է ցանկում Chini «գինի» բառի Ch-ի հետ, և եթե տարբերությունը (*գ* կամ *ջ*) չդիտենք պայմանավորված հայ. *ի* կամ *ու* ձայնավորի առանձին հնչմամբ վանկ կազմելու հանգամանքով, ապա թե՛ մեկ և թե՛ մյուս դիրքում պիտի ենթադրենք ջ-ի գրություն (*ջինի* և *ջուր*):

¹³⁹ A. Carrière, նշվ. աշխ., էջ 16, ծանոթ. 8: Ի դեպ՝ նկատենք, որ Հ. Աճառյանն իր հոդվածներից մեկում («*Արարատ*» [ամսագիր], 1898, էջ 485-486) բառի բուն կամ նախնական իմաստ է համարում «նվեր, ընծա» ելնելով պահլավերենում բառի բաղադրիչների ունեցած առանձին իմաստների համադրումից (տե՛ս նաև Հ. Աճառեան, Հայերեն արմատական բառարան. հ 4, էջ 37):

Առանձին հարց է նաև այն, թե Chure բառի սկզբի բաղաձայնը ունի ձայնե՞ր, թե՞ շնչեղ խուլ հնչյունի արժեք (ջ / ջ), որ բարբառային տարբերակման հատկանիշ է՝ ի հակադրություն գրականի: Նոր բարբառներում ունենք ոչ միայն ձայնեղ, այլև խուլ և շնչեղ խուլ արտասանությամբ՝ պարզ կամ քմային երանգով տարբերակներ. ջուր (Ալշ., Ախց., Երև., Խրբ. Կր., Մշ.), ջիւր (Ասլ.), ճիւր (Գոր., Ղրբ., Մկ., Մրդ., Շմ., Սլմ, Վն.), չուր (Ռ., Տգր.) և այլն:

Միրտ [լատ. cor «սիրտ»]. ցանկում այդ բառով է թարգմանվել լատ. pectus բառը, որի բուն իմաստն է «կուրծք», «այրական ուժ», այնուհետև՝ «հոգի, սիրտ»: Այս դեպքում սխալը տեղեկատուինն է, այսինքն՝ արդյունք է չիմացության, կամ էլ պայմանավորված է իր բարբառով (խոսակցականով):

Միրտ [լատ. latus «կողմ, կող(ք)». «կողոսկրեր՝ թիկունքից կրծքավանդակ»]. տեղեկատուի սխալ թարգմանությամբ գրանցվել է *սիրտ*, որը տառադարձվել է լատինագիր Scirt, որում միակ տարակուսելին հայ *ս*-ի արտահայտումն է լատ. sc-ով (նման գրության այլ օրինակ ևս ունենք. հմմտ. scunch - ծունկ): Նկատենք, որ *սիրտ* բառը գործածվել է ցանկում նաև լատ. pectus «կուրծք» բառի թարգմանության դեպքում. տեղեկատուն այս դեպքում ևս սխալվել է, կամ սխալ համարվողը գալիս է իր խոսակցականից (կամ բարբառից). դա նկատել է նաև Կարիերը, որ տվել է համապատասխան ծանոթագրություն¹⁴⁰: Նոր բարբառներում *սիրտ*-ը հանդիպում է նաև վերջնահանգ ձայնեղ բաղաձայնով, այլև կոշտ *ռ*-ով՝ *սիրդ*, *սիռտ* և այլն (Ալշ., Խրբ., Մշ., Վն.):

Սուրբ [լատ. sanctus «սուրբ. անձեռնմխելի»]. բառացանկում հստակ գրությամբ նշվում է Supr, իբրև հայ. *սուրբ* բառի տառադարձում, որ գրականի համեմատությամբ ունի տարբերություն-

¹⁴⁰ Տե՛ս *A. Carrière*, նշվ. աշխ., էջ 15. ծանոթ. 3:

ներ. նկատենք, որ հայ, *սուրբ* բառը ծագում է հե. *k'ubhro- (հմմտ. հիդլ. *ṣabhrá-* «փայլուն. պայծառ»). խիստ ուշագրավ է այն, որ բառացանկում գրական *սուրբ*-ը, որ կրում է **pp* > *-pp* (*bhr* > **rbh-* > **pp*) դրափոխությունն (մետաթեզիս), արտացոլում է արմատի նախնական հնչումը (ավելի մոտ նախագրային վիճակին, և ըստ այդմ՝ ընդհանուր հնդեվրոպականին), մի ուրույն արտացոլում, որ հանդիպում է տեղեկատուի արտասանությամբ՝ գրականի համեմատությամբ թերևս բարբառային: Այնուհետև, *Supr* ձևում առկա է նաև մեկ այլ երևույթ՝ շրթնային ձայնեղի խլացում, ձայնորդին հաջորդելու դեպքում (*p* > *ʃ*):

Վաթսուն [լատ. *sexāgintā* «վաթսուն»]. բաղադրյալ կազմությամբ՝ *վեց*-ից, որը բնիկ է (< հե. **syek's-* «վեց»):

Վանք [լատ. *ecclēsia* (< հուն. *ἐκκλησία* «հավաքույթ. հավաքատեղի. եկեղեցի») «ժողով. եկեղեցի»]. տեղեկատուի *Vanc* թարգմանությամբ հայ, *վանք* բառով է նշված լատ. (< հուն.) *ecclesia* (բուն իմաստով՝ «ժողով», փոխաբերաբար՝ «եկեղեցի». վերջինը՝ փոխառություն հունարենից) բառը. Օմոնը և Կարիերը դնում են *վանք*, այնինչ տառադարձման մեջ այն վերջնահնչյուն խուլ բաղաձայնով է (*կ*, ոչ թե՝ *ք*): Կարիերը տողատակում ունի նաև ծանոթագրություն. «վանք «(ֆրանցիսկյան) միաբանություն», և ոչ թե «եկեղեցի» (իմաստով)»¹⁴¹:

Ինչպես կարելի է նկատել, առկա է լատ. *ecclēsia* բառի թարգմանություն՝ *վանք* (փխ. *եկեղեցի*) բառով, այն էլ բարբառային-խոսակցական վերջնահնչյուն խուլ բաղաձայնով (*vanc*=վանկ): Ի դեպ՝ հայերեն բանավոր խոսքում, ներկայումս ևս *վանք* բառը, հոգևոր ոլորտում, նշանակում է ավելի շուտ «եկեղեցի», քան «մենաստան»: Բառը ավանդաբար համարվում է փոխառություն իրան.

¹⁴¹ Նույն տեղում, ծանոթ. 6:

*wahana «բնակություն» ձևից, որ անցել է հայերենին նախնական՝ «բնակություն, բնակարան» իմաստով¹⁴²:

Վեց [լատ. sex «վեց»]. ցանկում այս բառը գրեթե անընթեռնելի է, մանավանդ է ձայնավորի նշանակումը, որն արտահայտված է երկու նիշով: Այդ նիշերը Օմոնը ընթերցում է երկու i-ով (Viit), որին հետևում է Կարիերը: Վստահելին մնում է Օմոնը:

Իսկ հակառակ դեպքում, կարելի է ենթադրել ie (Viet) (?), որ-այիսով կունենանք հայ. (խսկց.) *վիեց* ձևը: Այս ենթադրության հիմք է այն, որ այլ դեպքերում ևս ունենք միջին դիրքի ձայնավորի *իե* (ie) գրություն (հմմտ. eriec = *երիեկ*, eriesc = *երիեսկ*):

Ի դեպ՝ ըստ այս կանոնի, կարելի է ենթադրել նաև *գետին(ք)* [լատ. terra «հող, երկիր»] բառի համար ie-ով գրություն (*Kiedinc*), որ ցանկում նշվում է *Kcedinc* (*կեդինկ*), եթե բացառենք, որ լատ. k-ին հաջորդող c-ն, թերևս, կարող է k խուլի շնչեղացման համար լինել:

Ինչպես նկատում ենք, առկա է թեականություն, ուստի հնարավոր է այլ օրինակներով կանոնի հաստատում. և այդ ամենը արդյունք է ժամանակի՝ գրական նորմայից դուրս գտնվող մի խոսքի (տեղեկատուի խոսակցական լեզվի)՝ գրանցողի կողմից ոչ կանոնավոր և անմիօրինակ տառադարձման:

Վիզ [լատ. collum «վիզ, պարանոց, փողրակ»]. տեղեկատուի արտասանած ձևը Օմոնը ճշտիվ տառադարձել է Vise, որ կարող է հայերեն արտահայտվել *վիզը* ձևով, սակայն Կարիերը այն բերում է գրական *վիզ* ձևի հետ (փակագծում հարցականով նշելով նաև՝ *վիզը*, որը նույնն է, ինչ տառադարձվածը): Ինչպես մյուս դեպքերում, այստեղ ևս առկա է բառավերջի թույլ արտասանություն՝ *ը*-ով, որն, անշուշտ, խոսակցական-բարբառային է, քան գրական լեզվի յուրահատկություն:

¹⁴²Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 302:

Suu [լատ. decem «տասը»] (առանց *ն*-ի). այս թվականը ճիշտ և ճիշտ տառադարձված է առանց *ը*-ի, որը հոդ չէ, այլ արմատի բաղադրիչ (հին *ն*-ի տարբերակ): Օմնը և Կարիերը տառադարձումը վերծանում են անսխալ ձևով. Կարիերը ունի հետևյալ ծանոթագրությունը՝ «խակց. *տասն*-ի դիմաց»¹⁴³: Նման տեղաշարժ նկատում ենք նաև ներկայումս, մանավանդ բանավոր խոսքում: Այնուհետև, *ս*-ի փոխարեն *զ* տառադարձումը (խուլի ձայնեղացում), թերևս, տեղեկատուի խոսքին է վերաբերում: Նոր բարբառների մի մասում ևս կա այդ երևույթը՝ *տասս* (Ալշ., Մկ., Մշ., Վն. և այլն):

Տէր [լատ. deus «աստված. աստվածություն»]. այս դեպքում ամենից առաջ աչքի է զարնում հայերեն բառի *է*-ով գրությունը՝ *տէր*, որ նույն է, ինչ ցանկի ունեցածը՝ Ter, անխափան ձևով: Իսկ Կարիերի ցանկում *է*-ով է, ունի նաև հետևյալ ծանոթագրությունը (որ չի վերաբերում այդ տարբերությանը)՝ «*Տէր*-ը ավելի շուտ համապատասխանում է Dominus (բառին). Deus (բառը)՝ *Աստուած* (բառին)»: Աճառյանը *տէր*-ը նոր բարբառներում նշում է միայն *է*-ով¹⁴⁴:

Ութ [լատ. octō «ութ»]. բառը ցանկում *տ*-ով է, իսկ *ու*-ն միջնադարյան լատ. V-ով՝ Vt (ինչպես որ, օրինակ, Vtpat «ուրբաթ», Vtanatschun «ութսուն» բառերի դեպքում): Օմնը տառադարձում է լատ. u-ով, որ ընդունում է Կարիերը: Այստեղ ուշադրություն է գրավում գրական լեզվի *թ*-ի փոխարեն *տ* գրությունը, որն ակնհայտ տարբերություն է՝ բարբառային-խոսակցական հիմքով: Նոր բարբառներից մի քանիսում է հնարավոր ցույց տալ շնչեղ խուլի ապաշնչեղացում՝ *ուտ* (նաև՝ *ութ*) (Մշ.) և այլն:

Ութսուն [լատ. octōgintā «ութսուն»]. լատինագիր LXXX թվականը (ցանկում՝ Vtanatschun) Օմնը տառադարձում է Utanatschun,

¹⁴³ Տե՛ս *A. Carrière*, նշվ. աշխ., էջ 12. ծանոթ. 7:

¹⁴⁴ *Հ. Աճառեան*, նշվ. աշխ., էջ 402:

որ նույնությամբ ունի Կարիերը՝ տողատակի հետևյալ ծանոթագրությամբ. «Բարբառային ձև, դեռևս գործածված Մեծ Հայքի [= grande Arménie] մի քանի գավառներում»¹⁴⁵: Այստեղ նույնպես ունենք շնչեղի ապաշնչեղացում, ինչպես նաև, դժվար հասկանալի, լատ. *tsch* հնչյունախմբի ընկալում իբրև *u* (կամ գուցե *g*), որ մնում է բացատրելի այլ օրինակների ի հայտ գալու դեպքում:

Ուրբաթ [feria VI «վեցօրյակ»]. «շաբաթվա՝ յոթնյակի վեցերորդ օրը». այս իմաստը հետին է, նախնական է համարվում «մայր մտնել՝ մայրամուտ. օրվա ավարտ՝ արևի մարելը»: Բառացանկում այն գրված է շրթնային պայթական ձայնեղ *p*-ի փոխարեն խուլ *u*-ով. *Urpāt*, որ բարբառային-խոսակցական արտասանություն է:

Այս վերջին իմաստով բառի ծագումը կապվում է սեմ. 'רב «արևի մայրամուտ» արմատի հետ. հետագայում է գործածվում «ուրբաթ» (նխն.՝ «պատրաստություն») իմաստով. հմմտ. *arūwəθā*, արաբ. 'arūbat և այլն¹⁴⁶: Նման արտասանություն ունեն հետագա (նոր) բարբառներից միայն մի քանիսը (*Ալշ.*, *Մկ.*, *Վն.*, *Մրդ.* և այլն)¹⁴⁷:

Փող [լատ. *gula* «ըմպան. կոկորդ. բուկ»]. ցանկում տառադարձված *Puelc*-ի բառավերջի գիրը Օմոնը կարդում է *c*, փխ.՝ *e*, թեև այն ունի հստակ գրչություն, հակառակ դեպքում լատ. *gula* ձևը պիտի լիներ հոգնակիով՝ *gulae*, որ համարժեք դառնար հայ. *փողք*-ին, ինչպես որ ընդօրինակում է Կարիերը: Քանի որ ցանկում լատ. *gula*-ն եզակի է, ուստի հայերենում ևս պիտի լինի եզակի, որի հիման վրա էլ առաջարկում ենք ճշգրտում՝ *Puele*, հայագիր՝ *պուելը*,

¹⁴⁵ Տե՛ս *A. Carrière*, նշվ. աշխ., էջ 13. ծանոթ. 1:

¹⁴⁶ *Հ. Աճառեան*, նշվ. աշխ., հ. 3, էջ 615:

¹⁴⁷ Նույն տեղում, էջ 616: Հայ. ձայնեղ > խուլ (*b > p*, *d > t* և այլն) հարաբերակցությունը, ըստ լեզվաբանական նորագույն տեսությունների, վերաբնեղի կամ վերանայելի հարց է:

որն այլ բան չէ, քան այդ ժամանակի մեջ հայ *փռռ* «ըմպան. կոկորդ. բուկ» բառի հնչական տարբերակի արտացոլում տեղեկատուի խոսքում:

Այդ ձևում նկատելի է մի կողմից՝ գրական շնչեղ խուլ *փ*-ի ապաշնչեղացում՝ *պ*, մյուս կողմից՝ *լ*-ի դրսևորում (դեռ չի դարձել *ղ*), բառավերջում *ը*-ի առկայություն, որ, ինչպես այլ դեպքերում, տեղեկատուի լեզվի մի հատկությունն է, ինչպես նաև՝ ձայնավոր *ռ*-ի փոխարեն *ռլ*, որ կա նաև նոր բարբառներից մեկ-երկուսում:

Փռռ [լատ. venter «փոր, որովայն»]. այս բառի դեպքում նույնպես նկատելի է հնչունական այնպիսի տարբերություն, որ տեսանք *փռռ* բառի դեպքում (շնչեղ խուլի ապաշնչեղացում, ձայնավոր *ռ*-ի հետ կապված. այս դեպքում՝ *ռլե*): Ցանկի Puerhe տառադարձումը ճշտիվ պահում են Օմոնը և Կարիերը. վերջինս այդ գրչությունը զուգադրում է հայագիր *փռռ* [*փռռռ* (?)] ձևերի հետ՝ երկրորդը հարցականով, ինչպես որ անում է հեղինակը *վիգ, ծիծ, ջուր* բառերի դեպքում:

Առեղծվածային է մնում լատինագիր *հ*-ի դրսևորումը Puerhe ձևում, որի համար թերևս կարելի է անել մեկ ենթադրություն՝ նախորդող *ը*-ի ավելի փափուկ հնչումը ցույց տալու համար (հմմտ. pugnis - prunhc [*բռունք*): Իբրև զուգահեռ նշենք, որ նոր բարբառներից մի քանիսում կան բառի միջին ձայնավորի փոփոխմամբ ձևեր՝ *փուր* (Ագլ., Տիգ.), *փտոր* (Հմշ., Սեր.), *փիւր* (Զթ., Սվ.) և այլն:

Քառասուն [լատ. quadrāgintā «քառասուն»]. այս թվականը ըստ տեղեկատուի հնչման նշանակված է Karraschun ձևով, որ նույնությամբ բերում է Օմոնը: Կարիերը նույնը տալիս է առանց մեկնաբանության, որ սպասելի էր լատինագիր sch-ի համար. դասական լատիններենում այն կարդացվում է *ս/ս*, և ըստ այդմ՝ որ դժվար բացատրելի է հայ. *ս*-ի դիմաց, իսկ կրկնակի *ր*-ի նշանակումը, թերևս, ունի կոշտ ձայնորդի արժեք:

Քիթ [լատ. *nāsus* «քիթ. հոտառություն»]. ցանկում այս բառը տառադարձված է *Chit*, որում հայ. *ք*-ն նշանակված է բառասկզբի *ch*-ով: Եթե *արեզակ* բառի համար բառամիջում *գ*-ն նշանակված է լատինագիր *ch*-ով, ապա այս դեպքում վերջինս ունի *գ*-ի շնչեղ խուլի՝ *ք*-ի նշանակման արժեք, որ մի տեսակ համակարգի տպավորություն է թողնում: Իսկ բառավերջում շնչեղ խուլ *թ*-ի դիմաց պարզ խուլ *տ*-ի նշանակումը կարող է, իրոք, բարբառային-խոսակցական համարվել, մանավանդ որ զուգահեռ օրինակներ կան նոր բարբառներում:

Քսան [լատ. *viginti* «քսան»]. տեղեկատուի հաղորդածը գրաված է *Xan*, որ նույնությամբ ունեն *Օմոնը* և *Կարիերը*՝ հստակ նշումով. ըստ այդմ՝ առկա է լատ. *x* – հայ. *ք* համապատասխանություն:

Ցանկի *Xpuener* [լատ. ?]. բառի վերծանումը և հայերեն համարժեքի նշանակումը հարուցում են դժվարություններ, ուստի ծագման վերաբերյալ ևս ոչինչ չի կարելի ասել (հմմտ. վերը՝ ծանոթ. 81):

7. Համեմատություն հետագա հնատիպ բառարանների հետ

Հայ բազմադարյան բառարանագրության մեջ, հայտնի է, իրենց տեղն ունեն երկլեզվյան, ընդ որում հայերեն-լատիներեն բառարանները՝ անկախ դրանց երևան գալու հանգամանքների տարբերությունից (ծավալ, նպատակ, կազմության և հրատարակման վայր և այլն):

Մեր ուշադրության առարկա բառացանկի բառապաշարի որոշ մասը փորձել ենք համեմատել հետագա նման բառարաններից մի քանիսի հետ, ամենից առաջ հնչյունական ինչ-ինչ կնճռոտ դեպքերի՝ ըստ հնարավորին պարզաբանման նպատակով:

1. Սույն բառացանկի բառերից մի քանիսը, հատկապես լատիներենում համարժեքներ ունեցողները, համեմատել ենք Ֆր. Ռի-

վոլայի բառարանի (Mediolani [=Միլան], 1621) տվյալների հետ¹⁴⁸. այստեղ նշենք դրանցից միայն մի քանիսը (կից փակագծում՝ բառարանի էջը)¹⁴⁹:

հաց, սեռ.՝ *հացի* - panis (էջ 265),

միս - caro (էջ 323),

ձու // *հավկիթ* - ovum (էջ 285),

ձուկն, հոգն. թ.՝ *ձկունք* - piscis (էջ 285),

երկինք, սեռ. հոլ.՝ *երկնից* - caelum (էջ 138) (Omont-ի մոտ՝ celum),

անձն, սեռ. հոլ.՝ *անձին* - anima, նաև persona (էջ 30),

արտևանունք - supercilia, կամ palpebrae (էջ 56) (Omont-ի մոտ՝ cilium),

շրթունք, սեռ.՝ *շրթանց* - labia (էջ 361) (Omont-ի մոտ՝ labra),

ատամ, հոգն.՝ *ատամունք*, dens, dentis (էջ 47)¹⁵⁰,

վիզ - collum (էջ 427),

ծիծ // *ըստին* - mamma, uber (էջ 227),

կոնակ // *մէջք* - tergum, dorsum (էջ 251),

անդամ, հոգն.՝ *անդամք* - membrum (էջ 25),

կոճ - stipes (էջ 248),

¹⁴⁸ *Fr. Rivola*, Dictionarium armeno-latinum, Mediolani, 1621: Որոշ բառեր էլ համեմատել ենք հեղինակի նույն բառարանի հետագա հրատարակության (Paris, 1633) հետ, որի դեպքում ևս նույն տպավորությունն ենք ունենում;

¹⁴⁹ Հայերենի պատմական հնչյունաբանության կարևոր խնդիր է ուշ միջնադարյան երկլեզվյան տպագիր բառարանների բառապաշարի հնչազգրական-տառադարձական քննությունը՝ իբրև հայ բարբառների ընդհանուր նկարագրին նպաստող նյութ:

¹⁵⁰ Քերականական թեք ձևերի կրճատ գրությունը՝ լատիներեն, հայերեն, լրացնում ենք (օր.՝ dens, -tis > dens, dentis. *պատարագ*, *-րագի* > *պատարագ*, *պատարագի*):

կ[...] // *արանք* - «memb. vir.» (էջ 247),
կնիկ // *կին* - mulier, foemina (էջ 247),
վանք - cœnobium (էջ 423),
պատարագ, սեռ. հոլ.՝ *պատարագի* - sacrificium, oblation,
 missa (էջ 382),
առաքեալ, հոգն.՝ *առաքեալք* - apostolus (էջ 41),
աղէկ // *լաւ* - bonus (էջ 11),
եպիսկոպոս, հոգն.՝ *եպիսկոպոսունք* - episcopus (էջ 131),
աբեղայ - cœnobita, monachus (էջ 1),
երիցունք (< *երէց*) - sacerdotes (էջ 138),
քրիստոնէայ, սեռ. հոլ.՝ *քրիստոնէի* - christianus (էջ 475):
 Ի՞նչ է ցույց տալիս այս համեմատությունը. կարելի է նշել
 հետևյալը:

ա) Առկա է հոգնական-հավաքականի գործածություն, որ ավելի ևս հատկանշական է լեզվի խոսակցական տարբերակի համար (հիմնականում *-ունք* մասնիկով). *ատամունք*, *արտնանունք*, *ջրթունք*, *անդամք*, *արանք* (< *առն* «այր»), *երիցունք*:

բ) Բերվում են գրական-խոսակցական (եթե ոչ՝ բարբառային) գույգեր (հոմանիշներ), *աղէկ* // *լաւ*, *կնիկ* // *կին*, *կոնակ* // *մէջք*, *ծիծ* // *ստին*, *ձու* // *հավկիթ*:

գ) Հայ. *աբեղայ* և *վանք* բառերը գուգադիր են լատ. նույն արմատից բաղադրված cœnobium (էջ 423) // cœnobita (monachus) (էջ 1) բառերին (հմմտ. հայերենի դեպքում՝ *վանք* // *վանական* գուգակցում):

2. Օ. Կարիերի (վերականգնած) բառացանկը կարելի է համեմատել նաև Հակ. Վիլլոտի բառարանի (համապատասխան) տվյալների հետ. այստեղ՝ կից փակագծում, դնում ենք բառարանի էջը, հեղինակը երբեմն տալիս է անհրաժեշտ օրինակ-բացատրություններ, որոնք նշում ենք չակերտների մեջ, լատիներեն նշանա-

կումները թարգմանում ենք, քերականական թեք ձևերի կրճատ գրությունը լրացնում ենք (օր.՝ *թիկունք, -անց > թիկունք - թիկանց*):

Dies domonica. Կիրակի (էջ 227)

1. feria prima. *կիրակե. կիրակի, միաշաբաթ, vel domoinica* (էջ 304),

2. feria secunda. *երկու շաբաթ* (էջ 304),

3. feria tertia. *երեք շաբաթ* (էջ 304),

4. feria quarta. *չորեք շաբաթ* (էջ 304),

5. feria quinta. *հինգ շաբաթ* (էջ 304),

6. feria sexta. *ուրբաթ* էջ 304),

7. feria...¹⁵¹:

Nomina numeri (= թվերի անունները)

8-27-ը Կարիերի մոտ նշված է հռոմեականով, ուստի հնարավոր չէ Վիլլոտի տվյալների հետ համեմատել:

Nomina ceterarum rerum [= «այլնայլ իրերի անուններ»]

28. panis - *հաց. պան. նկանակ* (էջ 533),

29. caro - *միս, սեռ.՝ մսոյ* [այլն՝ caro alias, *մարմին ցանկութեան*] (էջ 99),

30. vinum - *գինի* (էջ 731),

31. caseus - *պանիր* (էջ 100,

¹⁵¹ VII օրը Վիլլոտի մոտ (էջ 304-ի շարքում չկա), կա էջ 227-ի շարքում, էջ 228-ում՝ dies sabbati, *շաբաթ* օր, այլ կերպ ասած՝ Վիլլոտը տալիս է՝ 1) dies domonica, dies lunae, dies martis, dies mercure, dies Jovi, dies veneris, dies sabbati, 2) feria, I, II, III, IV, V, VI, feria VII-ը չի տալիս, այն պետք է փնտրել էջ 227-ում՝ dies sabbati, այսպիսով՝ 2-րդ թվարկումը թերի է մնում. հմմտ. ըստ Վիլլոտի՝ feriae - *աւուրք*, feriae quietis - *աւուրք դադարման* (ն. տ., էջ 304). ի դեպ՝ feria նշանակում է՝ 1) «տոն», 2) «ընդմիջում», 3) «հանգիստ, դադար» (տե՛ս *Дворецкий, 1976*, էջ 421), այլն՝ feria (< ferior) (դեպոնենտ բայ) «տոնել, չգործել, հանգիստ մնալ» (ն. տ., էջ 422):

32. ovum - *ձու* (էջ 530),
 33. piscis - *ձուկն* (էջ 560),
 34. sal - *աղ* (էջ 640),
 35. aqua-*ջուր* (էջ 581).

36.[caelum]. Վիլլոսը չունի celum ձևով (էջ 106), այլն՝ վերջինիս մոտ caelum-ը *գրիչ երկաթի, գրիչ պողպատի* է (էջ 89), Ռիվոլայի մոտ՝ coeleum-ը՝ *երկինք*, Կարիերի մոտ՝ celum-ը՝ *երկինք*, Վիլլոսի մոտ՝ coelom-ը գրված է caelim - *երկին*, «ընդհանուր առմամբ՝ հոգնակի»՝ *երկինք, արքայություն, վերնային* (փխ.՝ *վերին*. -*ային* մասնիկով կազմությունը, ի դեպ, լատինաբան ձև է՝ ածական, փխ.՝ մակբայ) *Երուսաղեմ, դրահստ* (էջ 123),

37. sol -*արեգակն* (էջ 662), *արևն* - (ն. տ.), *արեգն, արփի* (ն. տ.),

38. luna - լուսին (էջ 453,

39. stellae - Վիլլոսի մոտ՝ stella - *աստղ*, հոգն. ուղղ.՝ *աստեղք // աստեղունք*, Կարիերի մոտ՝ stellae¹⁵²,

40. terra - *հող, երկիր, գետին, ցամաք* (էջ 698),

41. homo - *մարդ, այր > առն*, հոգն.՝ *մարդիկ, մարդիկք // մարդիք* (ն. տ.),

42. capillus - գետք, վարք, հերք, մազք. faeminarium etiam [= նաև կանացի] ծամ (էջ 98),

43. oculus - *աչ, սեռ.՝ աչի, ակն, սեռ.՝ ական* (էջ 516),

44. supercilium - *արտևան. յոնք // յունք* (էջ 685),

45. cilium - «է այն բարակ կաշի և մորթ, որ զակն ծածկէ». *թարթափ աչացն*. իսկց.՝ *թերթեվանք*. dicitur etiam [=ասվում է նաև] *թարթ, unde sixis oculis* - *անթարթ ակամբ* (էջ 112),

46. nasus - *քիթ, գինտ // գինդ, ունչ, ընկունք* (էջ 491),

¹⁵² Թեզեոս Ամբրոսիոսի տեքստում երբեմն բառավերջում զ է. դա, արդյո՞ք æ չէ:

47. os - *բերան* (էջ 528),

48. labra - Վիլլոտը չունի՝ labra, ունի՝ labrum > labra *շուրթն*, *շրթունք* (էջ 429), այլև՝ labrum, ora > *ափ*, *եզր*, *ափ* գետոյն, եզր փոսոյ (ն. տ.). ունի նաև՝ labia, labiorum. raro labio [= հաճախ labium], *շրթունք*, սեռ.՝ *շրթանց*. *շուրթն*, սեռ. հոլ.՝ *շրթան*, *պռունգն*, հոգն.՝ *պռննգունք* (էջ 429),

49. dens - ստամն, սեռ.՝ *ստաման*, հոգն.՝ *ստամունք*, սեռ.՝ *ստամանց*, *կեռիք*, *ժանիք* (ն. տ.),

50. gengiva - Վիլլոտը չունի (էջ 330). Բ. Դվորեցկու բառարանում՝ gengiva («Латинско-русский словарь», М., 1976, էջ 456), այլև «Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարան»-ում (Ե., 1951, էջ 192): Ուստի՝ Միսքյանի բառարանի (Miskgian, Manuale lexicon armenolatinum. Ad usum scholarum, Romae, 1887, II տպ.՝ Lovanii, 1966) օգնությամբ նաև պարզում ենք, որ Կարիերը gengiva է գրել, փխ.՝ gengiva-ի (տե՛ս *Միսքյան*, էջ 118): Եվ gengiva-ն՝ Վիլլոտի մոտ, *լինտր*, սեռ.՝ *լնտեր*, հոգն.՝ *լնտերք*: «*Լենտ*, միս անշարժ ընդ որ յօդեալ են և թաղեալ ստամունք» (էջ 332),

51. lingua – *լեզու*, սեռ.՝ *լեզուի* (էջ 446),

52. barba - *մորուք*, սեռ.՝ *մորուաց*, գործ.՝ *մորուօք*, նաև *մորուս* // *մորուս* (էջ 80),

53. facies - *երես*, *դէմ*, սեռ.՝ *դիմի*, հոգն.՝ *դէմք*, սեռ.՝ *դիմաց* (էջ 296),

54. auris - *ականջ*, *ունկն*, սեռ.՝ *ունկան*, *լսելիք* (էջ 76),

55. collum - *վիզ*, սեռ.՝ *վզի*, *պարանոց*, *շլիք*, խսկց.՝ *շլինք*, *ուլն*, սեռ.՝ ուլան (էջ 128),

56. gula - *կոկորդ*, *որկորդ*, *որկոր*, *քիւք*, *փողք*. «Ոսկրն արգելանի ի փողսն» (էջ 339),

57. guttur - *կոկորդ*, *որկոր*, *քիւք*, ընդ որ կերակուր ի ստամոքս մտանէ (էջ 339),

58. *pectus* - լանջ, սիրտ, կուրծք, ստին. *pectus percutere* - զկուրծն բախել, կոծել (էջ 543),
59. *mamilla* - ստին, սեռ.՝ *ստեան*, գործ.՝ *ստեամբ*. *ստինք* // *ըստինք*. «ծիծ, պտկունք, որ է ծծի ծայրն» (էջ 460),
60. *venter* - *որովայն*. *փոր*, *արգանտ* (էջ 723),
61. *humerus* - *թիկունք*. սեռ.՝ *թիկանց*. *ուս*. *թիկնամէջ*. *միջնորունք* (էջ 347),
62. *brachium* - *բազուկ*, սեռ.՝ *բազկի*. *կուռն* (էջ 85),
63. *manus* - *ձեռն*, սեռ.՝ *ձեռին*, բցո.՝ *ի ձեռանէ*, գործ.՝ *ձեքամբ* // *ձեքբ*, հոգն.՝ *ձեքոք* // *ձեքամբք* (էջ 463),
64. *digitus* - *մատն*, սեռ.՝ *մատին*, գործ.՝ *մատամբ*, հոգն.՝ *մատունք*, սեռ.՝ *մատանց* (էջ 231). ընդ որում առանձին նշանակվում են հինգ մատները. մատն 1 (= *digitus I*)՝ *pollex* – *բոյթ* // *բութ*, մատն 2 (= *digitus II*)՝ *index* – *մատնիշ*, մատն 3 (= *digitus III*)՝ *infamis* – *միջնամատն*, մատն 4 (= *digitus IV*)՝ *annularis* – *մատանիմատ*, մատն 5 (= *digitus V*)՝ *auricularis* – *ծկիկ ձեռին*, *ծկոյթ* // *ճկոյթ* (ն. տ.),
65. *pugnis* - *բուռն*, սեռ.՝ *բռան*, «ձեռն ամփոփեալ՝ կարկամեալ. չափէ յարմկանէ մինչև ի ծայրն մատանց» (ն. տ.),
66. *spina, spinae* - *փուշ*, սեռ.՝ *փշոյ* (էջ 668)¹⁵³,
67. *dorsum* - *թիկունք*, *թիկնամէջ*. *քամակ*, *ուսք* (էջ 252)¹⁵⁴,
68. *latus, lateris* - *կող*, հոգն.՝ *կողք* // *կողունք*. *կուշտ*, սեռ.՝ *կշտի* (էջ 437),

¹⁵³ Կարիերի մոտ՝ *ողն*, որ ճիշտ չէ: Միսքյանի բառարանում՝ *ողն*, *ողին*, *ողունք*, *ողանց* - *dorsum, tergum, vetex, cacumen, fastigium, summum* (տե՛ս էջ 297). ունի նաև *փուշ* - *փշոյ*, *փշոց* - *spina, vepres, dumus, sentis* (էջ 457). տարբերակված նշանակման հարցը կարող է առանձին քննության:

¹⁵⁴ Հմմտ. վերը՝ թիվ 67:

69-70. *renes, renum* - երիկամունք, սեռ.՝ երիկամանց. «աղիք երկու յաջ և յառաջ կոյս, որք զմեզն մղեն ի փուչիկ». *մէջք, երանք* // խսկց.՝ *պլօջիկ* (էջ 622),

71. *coxa, -ae.* // *coxendix, coxendicis.* *ազդր*, սեռ.՝ *ազդեր*, *aliquando* [=երբեմն, ինչ-որ ժամանակ] - *երանք, զիստ, տախտակ գատին*. խսկց.՝ *անդամ, մէջք* (էջ 181),

72. *genu* - *ծունգ* // *ծունկ* // *ծունք*, սեռ.՝ *ծնկան*, հոգն.՝ *ծնկաց, գուճ*. ամեն դեպքում՝ *genuum* [= «ծնկու չափ»] (էջ 331),

73. *crus, crues* - *բարձ. սրունկ*, սո.՝ *սրնկան* // *սրունք. իրան*, հոգն.՝ *իրանունք*. ոլոքն. «ջարդել ոլոքսն», այլ՝ *կարթ* (էջ 184),

74. *pes* - *ոտն, ոտի*, հոգն.՝ *ոտից, ոտան, ոտամբ* (ն. տ.),

75. *cabilia*. Վիլլոտն այս բառը չունի, Կարիերը հիշեցում է՝ «շատ հաճախ հաղիպում է՝ *cabilia*» (էջ 16). Ըստ Միսքյանի՝ *կոճ*-ը՝ չիք. Դվորեցկին չունի՝ *cabilia, cavilia*: Ռիվոլան ունի՝ *կոճ* - *stipes* (էջ 248). Վիլլոտի մոտ՝ *stipes* - *ձող, փայտ*, այլև *կութղ* // *կոթղ, բունն, կոճղ, գնտակ, կոճ* (էջ 673).

76. *veretrum* - ըստ Վիլլոտի՝ *առնացի, ծածուկ անդամ, առականք. ամօթանք. ամօթ տեղի. պատկառելի անդամ, արականք, ծանականք*, խսկց.՝ *պլոր* (էջ 725).

77. *testiculi* - *ամորձիք, ձու. երկուորիք անդամոց*. «այդպէս ասին, զի վկայք են արութեան». խսկց.՝ *ճիճք* (ն. տ.),

78. *mulier* - *կին*, սեռ.՝ *կնոջ*, գործ.՝ *կնաւ. էգ*, սեռ.՝ *իգի*, հոգն.՝ *իգունք. muliercula* - կին արհամարհելի. անարգ (էջ 487),

79. *ecclesia, նաև caetum* - *ժողով. ժողովետղ. եկեղեցի. caetum cogere* [= եկեղեցացուցանել] (էջ 257,

80. *deus* - *աստուած. կէդժ՝ հաստուած* (էջ 225),

81. *altare* - *բէմ, բեմի, սեղան, սեղանոյ. խորհրդանոց, զոհարան. զենարան, մատուցարան. բեմբ* (էջ 41),

82. *crux* - *խաչ, խաչափայտ. փայտ կենաց* (էջ 184),

83. angelus - *զուարթունք երկնից, զօրք երկնաւորք, հրեղէնք*. որք թէ յաշխարհս առաքին յաստուծոյ առ բան ինչ, ասին *հրեշտակ* (ն. տ.),

84. sanctus - 1. սուրբ տեղի. անուանեալ, տեառնագրեալ, նուիրեալ աստուծոյ. 2. սուրբ. արդար. սրբափայլ. ամենասուրբ. անարատ. անմեղ. անբիծ, մաքուր անբամբաս յամենայն զնացս. 3. *է-ռահիւսակ սրբասացութիւն. երեքսրբեան երգութիւն. օրհներգութիւն* (էջ 642),

85. bonus - *լաւ, բարի, ուղիղ. աղէկ* (էջ 85),

86. episcopus - Վիլլոտն ունի երեք իմաստով, որից վերջինն է վերաբերում մեր այս ցանկի համապատասխան անվանմանը (հոգևոր ուղորտին). 1. վերակացու, 2. ծովեզերապետ, ծովեզերադետ. 3. եպիսկոպոս, հոգն.՝ եպիսկոպոսք // եպիսկոպոսունք. վերակացու, վերապետուչ, առաջնորդ, ինամակալ եկեղեցոյ (էջ 271),

87. monachus - *արեղայ. միայնակեաց, միակեաց*, սեռ.՝ *միակեցի. միանձնեայ, միանձն*, հոգն.՝ *միանձունք. մոնագոն, մոնոգոն* (էջ 481),

88. presbiter (Վիլլոտն ունի *y*-ով՝ presbyter, սեռ.՝ resbyteri)-*ծեր, քահանայ. էրէց* (էջ 588),

89. levita - ղևտացի, յազգէ ղևի (էջ 440). նույնը Միսրայանի բառարանում՝ 1. *ղևտացի, ղևտացւոյ, ղևտացւոց* - levites, levita, 2. ղևտական, ղևտականի // ղևտականոյ – leviticus (էջ 199). Կարիերը չի վերականգնում հայերեն բառը, այլ նշում է տառադարձականը (տրանսկրիպտիվը)՝ aottocus (տե՛ս Կարիերի ցանկը, էջ 17),

90. xpianus - (ն. տ.):

Այսպիսով, Հակ. Վիլլոտի (մասամբ նաև Ֆր. Ռիվոլայի) բառարանի համապատասխան տվյալների հետ համեմատությունից կարելի է գալ հետևյալ եզրակացությանը:

ա) Եթե ընդունում ենք, որ Օտունի բառացանկը IX (կամ X) դ. «գրչություն» է, ապա նրա և հիշյալ բառարանների միջև ընկած է շուրջ վեց-յոթ հարյուրամյակի մի ժամանակաշրջան, որի ընթացքում լեզվում պիտի նկատելի լինեին որոշակի տարբերություններ՝ հնչյունական համակարգում և մյուս բաժիններում:

բ) Այս ժամանակաշրջանի լեզուն, բնականաբար, միջին գրական հայերենն է, որի առնչությամբ ոչ գրական՝ բարբառային-խոսակցական տարրերն ունեն ավելի ցայտուն դրսևորում, և որի վկայությունը տարբեր բնույթի գրավոր աղբյուրներում դրանց ավելի լայն գործածությունն է:

գ) Օտունի բառացանկի ոչ գրական (խոսակցական-բարբառային) տիպի միավորների հնչյունական, մասամբ նաև բառային դրսևորումները այս կամ այն տարբերակվածությամբ նկատում ենք նաև հետագա ժամանակներում:

դ) Լեզվական նման իրողությունների ներքին համեմատական-գուգադրական քննությունը՝ հիմնված միջնադարյան ամեն կարգի աղբյուրների վրա, հայոց լեզվի պատմության դեռևս վերջնական լուծում չստացած խնդիրներից է, կարևոր արդի հայերենագիտության համար:

3. ԵՐԿԼԵԶՎՅԱՆ ՈՉ-ԾԱՎԱԼՈՒՆ («ՄԱՆՐ»)

ԲԱՌԱՑԱՆԿԵՐ

Հայ-լատինական բառարանները զգալի են դառնում XIV դ. հետո, առավել ևս XVII դ., XVIII դ. 10-50-ական թթ., երբ լույս են տեսնում ոչ միայն սովորական, այլև բավականին սովոր ծավալով բառարաններ, որոնք, զրված լինելով ժամանակի գրաբար հայերենով, այնուամենայնիվ պարունակում են խոսակցական կամ բարբառային հնչյունական, բառային և այլ կարգի երևույթներ:

Նման բառացանկեր գտնում ենք ոչ միայն XV դ. և XVI դ. 1-ին կեսին, այլև մեծ մասամբ հետագա՝ XVII դ. գրական հուշարձաններում՝ Երևան եկած առանձին, կամ մատենակից (ալիգատ) կազմությամբ: Դրանց անդրադառնում ենք մեր այս աշխատանքում՝ հայերենի հնչյունաբանության, մասամբ բառապաշարի կամ տերմինաբանության հայեցակետից:

Հայտնի է, որ XVIII դ. հայ մտավոր շարժումը ընդգրկում է լայն բնագավառներ, որոնցից մեկն էլ բառարանագրությունն է: Հայտնի են հայերենի և նրան զուգադիր որևէ այլ լեզվի բառամթերքն ընդգրկող երկլեզվյան բառարաններ, որոնք մեզ են հասել տպագիր և ձեռագիր վիճակում: Դրանցից շատերը մինչև այժմ չեն կորցրել իրենց ճանաչողական նշանակությունը հայ մշակույթի զարգացման պատմության համար: Այդպիսին են մեր այս աշխատանքում քննության առարկա երեք ձեռագիր նյութերը՝ Մատորիեզ դը Լա Կրոզի, Հակոբ Վիլոտի և Կդեմես Գալանոսի անունով հայտնի, որոնց էլ անդրադառնում ենք իրենց տեղում՝ առանձին-առանձին:

Դրանցից բացի անդրադառնում ենք նաև մի քանի այլ աշխատանքների, որոնք քննության առարկա չեն եղել՝ մանավանդ լեզվի առումով, եղել են այս կամ այն կարգի ակնարկներ դրանց գոյության վերաբերյալ¹⁵⁵:

1. Հանս Շիլտբերգերի գրքի «Հայր մեր»-ը: Հանս Շիլտբերգերը (XIV - XV դդ.) հեղինակ է հուշագրությունների, նրա գերմաներեն լեզվով աշխատության մեջ տեղ է գտել XIV-XV դդ. թվագրվող հայերեն մի տեքստ՝ «Հայր մեր»-ը [= Har myer]¹⁵⁶: Այն գրված է ոչ գրական (ժամանակի խոսակցական, թերևս բարբառային) լեզվով, որը վկայում է հեղինակի (գրառողի) բարբառախոս (գուցե ոչ գրագետ) լինելու մասին (կան գրական նորմայից շեղումներ՝ սխալներ, զուգաձև գրություններ և այլն). սուրբգրային այդ հատվածը անգիր գիտեր գրեթե ամեն մի հայ քրիստոնյա:

Հայ բանասիրության, հատկապես աղբյուրագիտության և մատենագրության պատմության մեջ հայտնի է այս հեղինակի անունը¹⁵⁷: Համեմատաբար ավելի լայն տեղեկություններ ունեն դրանցից մի քանիսը: Հայտնի է, որ՝ «ըստ ոմանց, Շելդբերգեր անգրագետ էր եւ նորա ճանապարհորդական նկարագրութիւնները գրի առնուեցան նորա իսկ թելադրութեամբ. այդ գործը, որ առաջին

¹⁵⁵ Հմմտ. *Է.Բ. Աղայան*, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, էջ 105:

¹⁵⁶ *H. Schiltberger*, Reisebuch, Tübingen, 1885, էջ 117: Տե՛ս *Վ. Գ. Համբարձումյան*, նշվ. աշխ., էջ 43-44:

¹⁵⁷ *Գ. Զարբհանալեան*, Պատմութիւն հայկական տպագրութեան սկզբնաւորութենէն մինչ առ մեզ, Վենետիկ, էջ 1895, էջ 33-35: *Վ. Սուրենեան*, Հանս Շիլտբերգերի կեանքի և գործունեութեան մասին // «Հանդէս գրականական եւ պատմական», հ. Գ, Մոսկուայ, 1890, էջ 148-164: *Կ. Կոստանեանց*, Հայագիտութիւնն Արեւմտեան Եվրոպայում (համառոտ տեսութիւն և գրացուցակ), Թիֆլիս, 1910: *Գ. Լևոնյան*, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958: *Ռ. Բշխանյան*, Հայ գրքի պատմություն, հ. 1, Ե., 1977, էջ 296, 298-300 և այլն:

անգամ լոյս տեսաւ 1473 թուին, բովանդակում է իւր մէջ ընդարձակ եւ առասպելախառն տեղեկութիւններ հայերի մասին»¹⁵⁸:

«Գերմանացի ճանապարհորդի առաւելութիւնն այն է, որ նա աւանդել է մեզ նմուշներ ԺԵ. դարու հայերէնի այնպէս, ինչպէս կարող էր այն ժամանակներում լսել և ըմբռնել մի եւրոպացի պանդուխտ: Շատ տեղեր նա, իհարկէ, մեղանչում է անգրագիտութեամբ: Այսպէս, օրինակ, *Հայաստան* անունը նա մեկնել է իբրև նախնեաց աշխարհ, երևի *հայ* և *հայր* բառերն իրար հետ շփոթելով. «Haiasdan d. h. Der Ahnen Land [=հին երկիր] «. նա գրում է «ասուաց թողութիւն մեղք» (Աստուած թողութիւն քո՞ւ մեղք), ողորմեա՛ - ogormika և այլն»¹⁵⁹:

«Լիզուագիտութեանը Շելլերգեր այն ծառայութիւնն է արել, որ առաջին անգամ օտար լեզու ուսանելու համար փորձնական օրինակ ընդունել է նա Հայր մերի ուսումը. նորա ուղեգրութեան վերջում կայ հայերէն եւ թուրքերէն հայր մեր» (տե՛ս Schildberger, երես 276)»¹⁶⁰:

Լեզվական տարբերությունների առումով բավականին ուշագրավ նյութ կա Վ. Սուրենյանցի՝ Շիլլերգերի ուղևորությունների թարգմանաբար ներկայացրածի մեջ. դրանք սովորական բառեր են, հատուկ անուններ, մեկ դեպքում՝ նախադասություն, որոնց կից (փակագծերում) բերվում են նաև լատինագիր. *Հայաստան* (Armenia, երբեմն՝ Armenia) (էջ 151), *Ղարաբաղ* (Karabag (ն. տ.), *նեմեց* (Nimitzsh) (էջ 152), *Թիֆլիս* (Tifflis), *Երզինգա* [Ersingen] (ըստ հայերի անվանման *Զէզինկան*. [Zesinkan]), *սուլթան* (soldan), *սուրբ Թադէու* (Sant Thatee), *Տրդատ* (Derthat. էջ 154), *Լամբարդիայ* (Lamparten. էջ 155), *Դուշան* («սա է *Տուկանայ*». Duschan. (էջ 155), *կայթողի-*

¹⁵⁸ *Կոստանեանց*, նշվ. աշխ., էջ ԻԳ:

¹⁵⁹ Նույն տեղում:

¹⁶⁰ Նույն տեղում, էջ ԻԳ-ԻԴ:

կոս (kathagnes. էջ 156), *թագաւր* (takchavr. ն. տ.), *Մարգիս* (Serchis. էջ 159), «*Աստուած թողու քու մեղք*» (Assuatz togu chu miegk. էջ 161), *ողորմեա* (ogormia. ն. տ.), *վարդապետ* (warthabiet) (էջ 162), *խալիֆայ* (kalipha. էջ 164): Ի դեպ՝ հեղինակն իր ուղևորությունների մեջ գրում է նաև հետևյալը. «Ես երկիրներն ու քաղաքները այնպես եմ անուանել, ինչպես որ նա կայ և տեղական լեզուներն են անուանում» (ն. տ., էջ 150-151):

Ինչ կարելի է նշել նման գրությունների վերաբերյալ.

ա) Ակնհայտ է պայթական ձայնեղ և խուլ բաղաձայնների փոխադարձ գործածություն. *Տրդատ* (Derthat), *Լամբարդիայ* (Lamparten),

բ) Չայնորդի նշանակում հետնալեզվային բաղաձայնով. *կաթողիկոս* (kathagnes), *Ղարաբաղ* (Karabag), *ողորմեա* (ogormia),

գ) Չայնավորի վերածում երկհնչունի. *վարդապետ* (warthabiet. էջ 162),

դ) Նման տառադարձությունը, հավանաբար, հետևանք է ոչ միայն լատինագիր նշանների հնչունական արժեքի ոչ հստակ օգտագործման, այլև հայերենին ոչ լիովին տիրապետելու:

Այսօր նման բնագրի առկայությունը ամենից առաջ հնչունական կողմի առումով, անհրաժեշտ է, մանավանդ լեզվի պատմության համար:

Այդ վավերագրին հետազայում նվիրվել է գերմաներեն գրախոսություն՝ Ֆ.Ն. Ֆինկի (1887-1910) հեղինակությամբ. որը, ցավոք, մեր ձեռքի տակ չունենք («Die ostarmenischen Leute des 15. Jahrhunderts nach den Transskriptionen in Hans Schiltbergers

Reisebuch // "Wissenschaftliches Korrespondenzblatt der Philologiae Novitates, 1906, Novemb.-Dez. 35-43)¹⁶¹:

«Հանդէս ամսօրեայ»-ի հոդվածագրի տեղեկացումներից իմանում ենք, թե Ֆինկը բանասիրական (բնագրային) և լեզվական ինչ դիտարկումներ է ունեցել այդ վավերագրի վերաբերյալ, մասնավորապես լեզվի տեսանկյունից:

Նախ առաջինի՝ բանասիրականի մասին:

1) «Արեւմտեայց հայ լեզուի մասին գաղափար մը տալու համար իբրեւ նմոյշ յառաջ կը բերէ Terek-ի քով գտնուող Dschulad քաղաքին մէջ, հայկական ձայնաւորի ժամանակ լսած «Հայր մեր»-ը եւ եօթ հայերէն բառ լատինական տառերով»¹⁶². Հեղինակից պահպանված չորս ձեռագրերից միայն երկուսում կա այդ վավերագիրը (ձեռ. ձեռ.՝ Donaaescinger [= D.] և Heidelberger [=H.]):

2) Այդ յոթ բառերն են.

ա. Asswatz tog (D. և H. - thog), u chu (D. և H. - thu), miegh (D. - mieck, H. - niechk) [= հայ.՝ Աստուած թողու քու մեղք],

բ. Ogormia (H.- ogornicka, D. - agornika) [= հայ.՝ ողորմեա],

գ. Kathagaes (D. և H. - Kathagnes) [= հայ.՝ կաթողիկոս],

դ. Takahawr (D. և H. - takchauer) [= հայ.՝ թագաւոր]:

Նկատելի են բառային-ձևային տարբերություններ՝ *ասվազ* (իմա՝ *աստուած*), *թոզու* [տարբ.՝ *թոզ*] (իմա՝ *թողու*) և այլն:

3) Վերջում երկայուն (գուգադիր) բերվում է «Հայ մեր»-ը՝ «լատինական և հայկական տառերով», որ հայերեն մասում լատինականի համեմատությամբ ունի տարբերություններ (իմատ. Ergink – *երգինք* և այլն), ուստի բերենք այն՝ համեմատելու բնագրի 1885 թ. հետ (վերջինս ավելի ուշ).

¹⁶¹ Տե՛ս նաև *Մ. Ջնտոյեան*, Հայր մերը ԺԵ. դարու հայ արեւելեան գաւառաբարբառով // «Հանդէս ամսօրեայ» (ամսագիր), 1909, էջ 30:

¹⁶² Նույն տեղում, էջ 30:

Հատինագիրը՝ “Har myer ur ergink es; surp eytza annun chu; ka archawun chu; jegetzy kam thu hyerginckch yep ergory; hatz meyr anhabas tur myes eisor; yep theug (D. cheug) meys perdanatz hentz myengkch (H. myenglich) theugunch meyrokcch perdabanatz, yep my theug myes y phwerczuchin (H. phwetzuchin); haba prige (D. bryge) myes y tzscheren (D. czscheren). Amen” // *Հայագիրը*՝ «Հայր մեր որ յերկինք ես, սուրբ իցէ անուն քո: Գայ արքաւուն քո. եղիցի կամք քո յերկինք եւ յերկրի: Հաց մեր հանապազ տուր մեզ այսօր: Եւ թող մեզ պարտք մեր հայնց (հէնց) մենք թողունք մերոց պարտապանաց: Եւ մի՛ թող մեզ ի փորձութիւն, ապա փրկէ մեզ ի չարէն: Ամէն»¹⁶³:

Այդ տեքստը, որ բերվում է հիշյալ ամսագրում՝ քաղված Ֆինկի հոդվածից, ունի (ինչպէս վերը նշվեց) զգալի տարբերություններ, մանավանդ հայագիր տարբերակում, որին էլ անդրադառնում ենք այստեղ:

Իսկ աժմ երկրորդի՝ լեզվականի մասին:

1) Ֆինկը տարակուսանք է հայտնում նաև լեզվական տարբերությունների վերաբերյալ. «զարմանալի բան է համարում» ոչ միայն «փառաբանական» (իմա՝ «զի քո է արգայութիւն») դուրս թողնելը, այլև «ժողովրդական արտասանութիւնն եւ բառերուն ձեւերը»,

2) Անդրադառնում է բնագրի գրչագրական տարբերություններին («սխալներին»). «Ֆինկ ամբողջ բնագրին վրայ դեռ հետևեալ դիտողութիւններն կ'ընէ. նախ՝ յայտնի գրչի սխալ կը համարի «եղիցին կամքէն» ետքը եկած *thu*, *perdanatz* եւ *meyrokc* բառերը եւ առաջինը՝ *chu* (քո), երկրորդը *perdkch* (պարտք) և երրորդը՝ *meyrots* (մերոց) կը սրբագրէ»,

¹⁶³ Նույն տեղում:

3) Մեկնաբանում է ամեն մի բառ. «Հետեւեալ սխալներն շեշտելէն ետքը կ'անցնի Տէրունական աղօթքիս ամէն մէկ բառին վրայ եւ համեմատական լեզուագիտական օրինօք դիտողութիւններ ընելով, մեկնելու կամ արդարացնելու համար աղօթքիս մէջ դիտուած ԺԵ. դարու գաւառաբարբառը: Աւելորդ կը համարինք յառաջ բերել մեկնութիւններն, որոնցմով կը վերջանայ հայագէտիս յօդուածը»¹⁶⁴:

Նախ բերենք 1885 թ. տեքստը (in situ)՝ լատինագիր (եղած կետադրմամբ). Har myer. Har myer ur ergink; es surp eytza annun chu; ka archawun chu; jegetzy kam chu (thu DH), [worpes] hyerginckch yep ergory; [es] hatz meyr anhabas tur myes eisor; yep theug (cheug P) meys perdanatz hentz myengkch (myenglich H)] theugunch meyrokch perdabanatz; yep my teug myes y phurtzuthiun (phwerczuchin D phwetzuchin H); haba prige (bryge D) myes y tzscharen (czscheren D tzscheren H). Amen¹⁶⁵.

Այս բնագիրը, բացառությամբ մի քանի բառի, ունի ոչ-գրական լեզվի ակնհայտ տարբերություններ (հնչունական, բառի գործածության և այլն): Այն ըստ էության ժամանակի բանավոր խոսքի մի նմուշ է գրավոր տեսքով: Այստեղ ունենք միայն մի քանի բառ, որ ընդհանուր հայերենի գրական նորմայի տեսանկյունից կանոնական են («ոչ շեղում»՝ գրական նորմայից). *es* (= ես), *annun* (=անուն), *kam* [= կամ(ք)], *hatz* (= *huug*), *tur* (= տուր), *my* (= մի), *amen* (= ամեն):

¹⁶⁴ Ձեռքի տակ չունենալով Ֆինկի հիշյալ հոդվածը (տպագրված գերմանական “Wissenschaftliches Korrespondenzblatt der Philologiae Novitates” ամսագրում՝ 1906 թ., նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 35-43)՝ այնուամենայնիվ կարելի է դիտարկումներ անել այդ սկզբնաղբյուրի լեզվի վերաբերյալ՝ միջնորդաբար («երկրորդ ձեռքից»):

¹⁶⁵ Փակագծերում տրվում են գրչագրական տարբերակներ՝ D, H, P նշանակումներով, որոնք այդ գրչագրերի («ձեռագրերի») համառոտություններն են (տե՛ս վերը):

Այդ տարբերությունները հիմնականում երեք կարգի են՝ գր-
չագրական, հնչագրական (տառադարձական) և ուղղախոսական
(բարբառային-խոսակցական):

ա) *Գրչագրություն*. դնում ենք տեքստը՝ անխաթար, յուրա-
քանչյուր բառին կից փակագծում նշելով նրա հայատառը (ըստ
«գրչության»).

Har (= *հար*), myer (= *մյեր*), ur (= *ուր*), ergink (= *երգինկ*), es (= *ես*),
surp (= *սուրպ*), eytza (= *էյտզա*), annun (= *աննուն*), chu (= *չու*),
ka (= *կա*), archawun (= *արգհաւուն*) chu (= *չհու*), jegetzy (= *յեգէտզի*)
kam (= *կամ*), phu (= *փու*) [տարբ.՝ thu (= *տհու*) DH], [worpes
(= *վորպէս*)], hyerginckch [= *հյերգինկփ*], yep (= *յէպ*), ergory (= *երգորյ*),
[es (= *ես*)], hatz (= *հատզ*), meyr (= *մէյր*), anhabas (= *ան-
հաբաս*), tur (= *տուր*), myes (= *միէս*), eisor (= *էիսոր*), yep (= *յէպ*),
theug (= *տհէուզ*) [տարբ.՝ cheug (= *չհէուզ*) P], myes (= *միէս*), perdanatz
(= *պերդանատզ*), hentz (= *հէնտզ*), myengkch (= *միէնկչի*) [տարբ.՝
myenglich (= *միէնկչիցի* (?) H], theugunch (= *տհէուզունչի*), meyrokkch
(= *մէյրոկչի*), perdabanatz (= *պերդաբանատզ*), yep (= *յէպ*), my (= *մի*),
theug (= *տհէուզ*), myes (= *միէս*), y (= *ի*) phurtzuthiun (= *փուրտզուտհիուն*)
[տարբ.՝ phwerczuchin (= *փիւերցչիցիին*), phwetzuchin] [= *փիւէտզուցիին* (?) H],
haba (= *հաբա*), prige (= *պրիգէ*) [տարբ.՝ bryge (= *բրյգէ*) D], myes (= *միէս*), y (= *ի*),
tzscharen (= *տզչարէն*) [տարբ.՝ czscheren (= *չզչարէն*) D], tzscheren (= *տզչարէն* (?) H),
Amen (= *ամեն*):

Նկատելի է հետևյալը. չկա գրության միօրինակություն. գ
(= *կ, ղ*), (= *ց, ծ, ք*) և այլն, հայերեն որոշ հնչյուններ հանդես են
գալիս երկազիր (երբեմն ավելի) «գրչությամբ». cz (= *ց*), tz (= *ց*). zsch
(= *չ*) և այլն, չկա հնչյունական անցման միօրինակություն՝ թե՛
ձայնավորների, թե՛ բաղաձայնների դեպքում. surp (= *սուրբ*), myer

// meyr (= մեր), meys // myes (= մեզ), ergink // hyerginckh (= երկինք) և այլն:

բ) *Հնչազրույթուն (տառադարձություն)*. այստեղ որոշ դեպքերում նկատում ենք նաև միևնույն միավորի տարբերակային տառադարձություն, որ վկայություն է բառի ոչ լիարժեք համապատասխանության օտար գրով արտահայտելուն. բերում ենք ըստ հայերեն տառադարձման, կից փակագծում տալիս ենք բնագրի գրական նորմայով ընդունելի գրությունը,

Հար (փիւ. *հայր*), *մյեր* (փիւ. *մեր*). *ուր* (փիւ. *որ*). *երզինկ* (փիւ. *յերկինս*), *ես* (= ես), *սուրպ* (փիւ. *սուրբ*), *էյցա* (փիւ. *էդիցի*), *անուն* (= *անուն*), *քու* (փիւ. *քո*), *կա* (փիւ. գայ. իմա՛ եկեսցե), *արքաւուն* (փիւ. *արքայութիւն*), *քու* (փիւ. *քո*), *յեզեցը* (փիւ. *էդիցին*), *կամ* (փիւ. *կամք*), *քու* [տարբ.՝ *թու* (?)] (փիւ. *քո*), *վորպես* (փիւ. *որպէս*), *հյերզինկ* (փիւ. *յերկինս*), *յեպ* (փիւ. *էլ*), *երգորը* (փիւ. *յերկրի*), *ես* (= *էլ*), *հաց* (փիւ. *զհաց*), *մէյր* (փիւ. *մեր*), *անհարաս* (փիւ. *հանապազորդ*), *տուր* (= *տուր*), *միես* (փիւ. *մեզ*), *էիսոր* (փիւ. *այսոր*), *յեպ* (փիւ. *էլ*), *թեւզ* (տարբ.՝ *քեւզ*) (փիւ. *թող*), *մէյս* (փիւ. *մեզ*), *պերդանաց* (փիւ. *զպարտիս*), [մեր]¹⁶⁶ [բացթողում է], *հենց* (փիւ. *որպէս*), [էլ] *միենզկ* [տարբ.՝ *մյենզլիք* (?)] (փիւ. *մեք*), *թեուդունք* (փիւ. *թողումք*), *մէյրօկց* (փիւ. *մերոց*), *պերդաբանաց* (փիւ. *պարտապանաց*), *յեպ* (փիւ. *էլ*), *մի* (փիւ. *մի՛*) *թեուդ* (փիւ. *տանիր*). *միես* (փիւ. *զմեզ*), *ի* (=ի), *փուրցութիւն* [տարբ.՝ *փուերցութիւն*, *փուեցութիւն* (?)] (փիւ. *փորձութիւն*), *հարա* (փիւ. *այլ*), *պրիզե* (տարբ.՝ *բրիզե*) (փիւ. *փրկեա՛*), *միես* (փիւ. *զմեզ*), *ի* (=ի), *ցարեն* [ծչերեն, *ցչերեն* (?)] (փիւ. *չարեն*), *զի քո է արքայութիւն էլ գորութիւն էլ փառք յաւիտեանս* [բացթողում է], *ամեն* (փիւ. *ամէն*):

¹⁶⁶ Այս և մյուս բացթողում՝ ուղղանկյուն (միջակ) փակագծերում:

Ըստ այսմ՝ նկատելի են հետևյալ հնչյունական, բառային և ձևաբանական անցումները, ինչպես նաև բառի գործածության և բնագրի տարբերությունները. տեղ են գտել նաև ձեռագրական տարբեր լրացումներ (կամ հավելումներ)¹⁶⁷:

1. Չայնավորներ և երկհնչյուններ.

ա) երկբարբառի (երկբարբառակերպի) պարզեցում՝ *հար* (փխ. *հայր*, *այ > ա*), *արքաւուն* [փխ. *արքայութիւն*. *այ > ա*], *վորպէս* (փխ. *որպէս*. *է > ւ*), *արքաւուն* (փխ. *արքայութիւն*. *իւ > ու*), *պրիզէ* (փխ. *փրկեա՛. եա > ւ*), *ջարէն* [= *tzscharen*] (փխ. *չարէն*. *է > ւ*), *ամէն* (փխ. *ամէն*. *է > ւ*),

բ) երկբարբառի վերածում մեկ այլ երկբարբառի. *էխօտ* (փխ. *այսօր*. *այ > էի*), *փուրցութիւն* (փխ. *փորձութիւն*. *իւ > իու*),

գ) պարզ ձայնավորի վերածում երկբարբառի. *մէր* (փխ. *մեր*. *է > յէ*), *յեզեցը* (փխ. *եղիցին*. *է > յէ*), *վորպէս* (փխ. *որպէս*. *ո > վո*), *մէյր* (փխ. *մեր*. *է > էյ*), *միէս* (փխ. *մեզ*. *է > իէ*), *յեպ* (փխ. *ել*. *է > յէ*), *թեւզ* (փխ. *թող*. *ո > էւ*), *մէյս* (փխ. *մեզ*. *է > էյ*), *միենզկք* (փխ. *մէք*. *է > իէ*), *թեուղունք* (փխ. *թողումք*. *ո > էու*), *մէյրօկց* (փխ. *մերոց*. *է > էյ*), *յեպ* (փխ. *ել*. *է > յէ*), *միէս* (փխ. *զմեզ*. *է > իէ*), *փուրցութիւն* (փխ. *փորձութիւն*. *ո > ու*), *միէս* (փխ. *զմեզ*. *է > իէ*),

դ) ձայնավորի կամ ձայնորդի փոփոխում. *ուր* (փխ. *որ*. *ո > ու*), *յցա* (փխ. *եղիցի*. *ի > ա*), *քու* [փխ. *քո*. *ո > ու* (երկիցս)], *յեզեցը* (փխ. *եղիցին*. *ի > է*), *պերդանսաց* (փխ. *զպարտիս*. *ա > ւ*), *թեուղունք* (փխ. *թողումք*. *մ > ն*), *պերդաբանսաց* (փխ. *պարտապանսաց*. *ա > ւ*), *ջարէն* [= *tzscharen*] (փխ. *չարէն*. *է > ւ*),

¹⁶⁷ Մեր դիտարկումներն այստեղ նախնական են, քանի որ բախվում ենք լատինագիր նշանակումների լուրջ դժվարությունների, որոնց հաղթահարումը հետագա աշխատանք է ենթադրում:

ե) հնչյունի կրկնում, հավելում. *միենզկք* (փխ. *մէք. ք > կք*), *մէյրօկց* (փխ. *մէրոց. ց > կց*), *հաբա* (փխ. *այլ. հ-ի* հավելում). *ցչարեն* [= tzscharen] (փխ. *չարէն. ց-ի* հավելում):

2. Բաղաձայնների դեպքում.

ա) ձայնեղի (շնչեղ) խլացում. *սուրպ* (փխ. *սուրբ. բ > պ*), *փուրցութիուն* (փխ. *փորձութիւն. ձ > ց*),

բ) խուլի վերածում ձայնեղի. *կա* (փխ. *գայ. կ>զ եկեցէ*), *հյերզինկք* (փխ. *յերկինս. կ > զ*), *պերդանաց* (փխ. *գպարտիս. տ > դ*), *պերդաբանաց* (փխ. *պարտապանաց. տ > դ, նան պ > բ*), *հաբա* (փխ. *այլ. պ > բ*). *պրիզէ* (փխ. *փրկեա՛ կ > զ*).

գ) շփականի վերածում պայթականի. *յեզեցը* (փխ. *եղիցին. ղ > զ*), *թեւզ* (փխ. *թող. ղ > զ*),

դ) ձայնորդի վերածում պայթականի. *յեպ* (փխ. *եւ. լ > պ. երիցս*),

ե) շնչեղ խուլի ապաշնչեղացում. *պրիզէ* (փխ. *փրկեա՛ փ > պ*):

3. Հնչյունախմբի փոփոխություն (պարզեցում, սեղմում, հավելում և այլն). *եյցա* (փխ. *եղիցի. ղի > յ*), *արքաւուն* [փխ. *արքայութիւն*]. *թի > թ* (զրո)], *հյերզինկք* (փխ. *յերկինս. հ-ի* հավելում), *յեպ* (փխ. *եւ. ե > յէ*):

4. Ձևաբանական փոփոխություն. *երզինկ* (փխ. *յերկինս*). *կա* (փխ. *գայ. իմա՛ եկեցէ*), *յեզեցը* (փխ. *եղիցին*), *կամ* [փխ. *կամք*]. *հյերզինկք* (փխ. *յերկինս*), *երզօրը* (փխ. *յերկրի*), *հաց* (փխ. *զհաց*), *միես* [փխ. *զմեզ*):

5. Բառի գործածության տարբերություն՝ բացթողում, կրճատում, հավելում, փոխարինում.

ա) բացթողում՝ [(...) = *եւ*], [(...) = *մեր*], [(...) = *զի քն է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս*],

բ) կրճատում՝ *անհարաս* [փխ. *հանապազորդ*. *h > օ* (զրո)], *որդ > օ*], *տու* (փխ. *տուր*. *p > օ*),

գ) հավելում՝ *es* [= *ես*],

դ) փոխարինում՝ *ka* [= *կա* (փխ. *գայ*. իմա՝ *եկեցե*)], *anhabas* [= *անհարաս* (փխ. *հանապազորդ*)], *theug* [= *թեուդ* (փխ. *թորդ*)], *perdanatz* [= *պերդանաց* (փխ. *զպարտիս*)], *hentz* [= *հենց* (փխ. *որպէս*)], *haba* [= *հարա* (փխ. *այլ*)], *theug* [= *թեուդ*] (փխ. *տանհր*), *haba* [= *հարա*] (փխ. *այլ*):

6. Բառերի բնագրային տարբերությամբ նշանակումներ. *chu* (= *ցու*) [տարբ.՝ *thu* (= *տհու*) DH], *theug* (= *տհեուդ*) [տարբ.՝ *cheug* (= *ցհեուդ*) P], *myengkh* (= *միենգկհ*) [տարբ.՝ *myenglich* (= *միենգլից*) (?) H], *phurtzuthiun* (= *պհուրտզուտհիուն*) [տարբ.՝ *phwerczuchin* (= *պհերցզուցիին*), *phwetzuchin*] [= *պհետզուցիին* (?) H], *prige* (= *պրիգե*) [տարբ.՝ *bryge* (= *բրյգե*) D], *tzscharen* (= *տզսչարեն*) [տարբ.՝ *czscheren* (= *ցզսչերեն*) D, *tzscheren* (= *տզսչերեն*) (?) H]:

Նկատենք, որ բերվածը գրչագրական է, և որի հնչագրական (տառադարձական) վերձանումը այնքան էլ տեղին չէ՝ անապահով լինելու պատճառով:

գ) *Ուղղախոսություն (բարբառային-խոսակցական)*. Թերևս այդպիսին կարելի է համարել հետևյալ բառերը. *har* (= *հար*), *myer* (= *մյեր*), *eytza* (= *էյցա*), *chu* [տարբ.՝ *thu*] (= *քու/թու*), *archawun* (= *արքաուն*), *meyr* (= *մյր*), *anhabas* (= *անհարաս*), *myes* (= *մյես*), *eisor* (= *էի/էյսոր*), *hentz* (= *հենց*), *myengkh* [տարբ.՝ *myenglich*] [= *միենգք/միենգլիք* (?)], *haba* (= *հարա*), *myes* (= *մյես*) և այլն:

Այս հնչադարձությանը ինչ-որ չափով կարող են օգնել հետագա՝ XVI-XVII դդ. այն գրավոր աղբյուրները, որոնցում կան հայերենի այբուբենի նմուշներ՝ մասամբ լատիներեն զուգադրությամբ, և դրանց նշանակումները կատարվում էին այն ժամանակվա

Եվրոպայում ընդունված ձևով, որ ամենայն հավանականությամբ շարունակվել է մինչև XVIII-XIX դդ. կեսերը¹⁶⁸:

2. Թեզեոս Ամբրոսիոսի գրքի հայերենի նյութը: Իտալացի կանոնիկոս Թեզեոս Ամբրոսիոսի (1469-1540) մի աշխատությունը ևս մեր այս թեմայի առումով բավականին ուշագրավ է: Նրանում ի թիվս այլ լեզուների կան տարբեր կարգի դիտարկումներ հայերենի վերաբերյալ՝ հնչյունաբանության, բառի գործածության, բնագրի գուգադրության առումով (օր.՝ սուրբգրային հատվածներ, «Հայր մեր» և այլն)¹⁶⁹:

Ամբրոսիոսի այս աշխատության մատենագիտական քննությունը գտնում ենք հայ տպագրությանը և հայ գրքի պատմությանը վերաբերող աշխատանքներում¹⁷⁰:

Է. Բ. Աղայանը դիտարկում ունի նրանում մեսրոպյան գրերի, մանավանդ բաղաձայնների հնչյունական նշանակումների մասին, որ հետագայում տեսական առումով դառնում է հատուկ ուշադրու-

¹⁶⁸ Մեր ձեռքին չունենք Գուլիելմոս Պոստելլուսի (1549-1581) «Linguarum duodecim characteribus differentium alphabetum, introductio et legendi modus» [= «Տասներկու լեզուների այբուբենի բնույթի տարբերություն, ներածություն և ընթերցման եղանակ»] աշխատանքը, որ պիտի լիներ հեղինակի «De affinitate linguarum» [= «Լեզուների սահմանումների մասին»] գրքի մի մասը. նրանում այլ լեզուների հետ համեմատվում է նաև հայերենը՝ դրանք համարելով ծագած երբայերենից. բերվում է այդ լեզուներով «Հայր մեր»-ը, որին անդրադառնալը մնում է հետագայում իրագործելի: Հմմտ. Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 107-108:

¹⁶⁹ Introductio in Chaldaicam linguā, Syriacā, atque Armeniacā, et decē alias linguas characterum differentiū Alphabeta. Theseo Ambrosio ex comitibus Albonesii, [Padua], MDXXXIX (= 1539):

¹⁷⁰ Գ. Չարքիանյան, նշվ. աշխ., էջ 33-35: Գ. Լևոնյան, նշվ. աշխ., էջ 58-59: Ռ. Բշխանյան, նշվ. աշխ., էջ 296, 298-300 և այլն: Գ. Լևոնյանը, օրինակ, գրում է. «Այս գրքի մեջ կան հայալեզու և հայատառ էջեր, որոնց մեջ հեղինակը խոսում է ոչ միայն հայ քերականության մասին, այլև նմուշներ է բերում Ավետարանից» (տե՛ս Գ. Լևոնյան, նշվ. աշխ., էջ 59):

թյան առարկա (օր.՝ Հ. Պեդերսենի և ուրիշների կողմից). «...չնայած թերություններին, նրա (իմա՝ Ամբրոսիոսի – Վ. Հ.) գիրքը մեծ արժեք ունի պատմական տեսակետից, հատկապես հնչյունների արտասանության մասին տված նրա տեղեկությունները արժանի են ուշադրության. այսպես, նա գիտե, որ արևմտյան և արևելյան արտասանությունները՝ հատկապես ձայնեղ պայթականներինը, տարբեր են. այդ իսկ պատճառով էլ այդ կարգի տառերի դիմաց նշանակում է լատինական երկու տառ. *pén* = byen և pyen, *qwa* = da և ta և այլն»¹⁷¹: Ավելացնենք, որ այստեղ ոչ պակաս կարևոր է *z*-ի տառադարձումը՝ լատ. ye, այսինքն՝ երկհնչյունային (կամ քմային՝ իե = ie) որակի:

Կ. Կոստանյանը նկատել է, որ աշխատության հեղինակը տեղյակ է հայերենի պայթական բաղաձայնների արտասանության տարբերությանը. «Այս գործի մեջ նա տալիս է մեզ մի քանի լեզուների, որոնց մեջ և հայերենի, քերականութիւնը, միևնոյն ժամանակ նա հաղորդում է մոտ 40 լեզուների այբուբենի ցանկեր իւրաքանչիւրի կազմի բացատրութեան հետ միասին: Հայոց տառերի թիւը Թեզեոսի ասելով 39 է, անշուշտ, նոցա մեջ եւ գիրն ևս, հաշուելով իբրև առանձին տառ: *Նա գիտե, որ հայոց տառերից ոմանք կրնակի հնչյուն ունին՝ արևելեան և արևմտեան. գոր օրինակ, նորան յայտնի է, որ բ հնչում է բեն և պեն* և այլն (ընդգծումը մերն է – Վ. Գ.)»¹⁷²:

Այդ ուշագրավ աշխատության բանասիրական-գաղափարաբանական, մասամբ նաև լեզվաբանական կողմերին մեր այս վեր-

¹⁷¹ Է. Բ. Ադայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, էջ 107: Տե՛ս նաև Գ. Զարբանակեան, նշվ. աշխ., էջ 40-42:

¹⁷² Կ. Կոստանեանց, նշվ. աշխ., էջ ԽԷ: Նման առանձնացմանը հետագայում տրվել է մեծ նշանակություն հայերենի համեմատական լեզվաբանության մեջ:

ջին տարիներին անդրադարձել է հայագետ Վ. Բ. Ստրոմայերը՝ իր մենագրության և ատենախոսության մեջ¹⁷³:

Ստորև անդրադառնում ենք այդ գրքում տեղ գտած այն դիտարկումներին, որոնք կարևոր են հայերենի հնչյունաբանության պատմության համար, մանավանդ մեր այս թեմայի առնչությամբ:

1. Աշխատության էջ 16բ-19ա-ում հեղինակը խոսում է հայերենի այբուբենի հնչական արժեքի մասին, բերում համապատասխան բառ-օրինակներ՝ ըստ գրության (տառադարձությամբ) և մեկնաբանությամբ: Տվյալ դեպքում մեր ուշադրության բուն առարկան է մեսրոպյան գրերի հնչական արտահայտությունը XVI դ. (= 1539 թ.) օտարախոս հայագետի նշանակմամբ, որն, անշուշտ, ունի իր արժեքը գրադարձության պատմության տեսանկյունից¹⁷⁴:

Դրանցից հատկանշական են հետևյալները.

ա > *ajp* («որ *այպ* է հնչվում»). *Աբրահամ* – Abraham,

ե > *iech* [= իեչ]. *Եզրովն* – hhezron, եզ – *ez*,

է > *ae*. *Ուլբէթ* – ωbeth (էջ 16բ),

ը > *iet* կամ *ier*. *ըստ Մայթէնուի* – *i est Mayheosi*,

ի > *ini*. *Իսահակ* – Jsahach,

իւ > *che* կամ *hhe*, *իսուսեցեալ* – hhousezeal,

հ > *ho*. *Աբրահամ* – Abraham, *իսահակ* – Jsahach,

ճ > *je*. *Ճերվազի* – geruazi, *Վիճիլիա* – vigilia, *կարիճն* – charigin, *Ճերոնիմա* – hieronymos (էջ 17ա),

յ > *J, j, i*. *Յակովբ* – Jacob, *Յովրամ* – ioram, *Բոնու* – boos,

վ > *vief, vieu* կամ *viech*. *Յակովբ* – Jacob, *յովրամ* – ioram, *Յովսէփ* – Jouseph (էջ 17բ-17ա),

¹⁷³ Վ. Բ. Ստրոմայեր, Ամբրոջիո Թեգետի հայագիտական ժառանգությունը (թեկն. ատենախոս. սեղմագիր), Ե., 2000:

¹⁷⁴ Հարկ եղած դեպքում կից ուղղանկյուն փակագծում դնում ենք հայերեն տարբերակը՝ միջանկյալ հավասարման նշանով:

ւ > yun կամ ium [= յուն, իուն]. *Դաւիթ* - Dauith («nos David dicimus» = մենք *Դաւիթ* ենք ասում. - Վ. Հ.)¹⁷⁵, *Եւսեբիոս* - eusebios. *հուդայ ծնաւ զ Փարէս* (զ-ն անջատ՝ Վ. Հ.) և *զազրայ ի Թամարայ* (այստեղ և առհասարակ՝ որոշ հատուկ անուններ փոքրատառով են. - Վ. Հ.),

ւ - ieu. eu [= իեու, եու]. (diphthongus est = երկբարբառ է. - Վ. Հ.) և զզարայ - eu zzarai et zarā (իմա՝ այ > ai, ā),

օ - aipiun (իմա՝ aip - iun. - Վ. Հ.). օ-ն աւ-ից. *Աւգուստինոս* // *Օգոստինոս* - Augustinos // Ogotinos (էջ 18ա-բ):

2. Այնուհետև, էջ 142բ-ից սկսած հեղինակը դարձյալ անդրադառնում է հայերենի այբուբենին՝ բերելով մեսրոպյան գիրը, նրա լատիներեն տառադարձումը, այլև նշելով անվանումը՝ մեկ կամ երկու ձևով: Որոշ դեպքերում համեմատելի է նախորդի հետ. կից փակագծերում նշվում է լատինագիր հնչումը (որը ավելորդ ենք համարում նշել հայերեն գրերով):

ա - a (ayp), բ - b/p (byen, pyen), գ - g / c (giem, chiem), դ - d / t (da, ta), է - e / ie (iech), զ - (z za). է - œ // e (ae, e), ը - ie (iet), թ - th (tho), ժ - g / z / x (ge, ze, xe), ի - i (ini), լ - l (luen), խ - hh (hhe) (էջ 142բ),

ծ - dh / tz / zz (dha, tza, zza), կ - c / g / k / q (chien, gien, kien, quien), հ - h (ho), ձ - ss / ts / x (ssa, tsa, xa), ղ - gl / l (glal, gal), ճ - i / g / h (ie, gie, hie), մ - m (miem), յ - i (i), ն - n (nu), շ - s / sc (sa, scha), ո - o (vua), չ - s / z (secha, zia), պ - p / b (pe, be) (էջ 143ա),

ջ - sc / ch / q / z (sche, zche), ռ - rh / rr (rhe, rra), ս - s (sa), վ - u (viech, vieu, vieph), տ - t / d (tuen, duen), ը - r (re), գ - zt / zz (zzo), լ - y (yun, phyun), փ - p / ps (piur, psiur), զ - ch (che), ւ - eu (իեւ), օ - o (aypyun [= ayp - yun, իմա՝ այբ, վյուն], փ [հավանաբար՝ Ֆ (?)] - ph (phe):

¹⁷⁵ Հեղինակի լատիներեն նախադասություն-օրինակի թարգմանությունը մերն է:

Ըստ այդմ՝ առանձնացվում է 39 տառ. ա) 14 ձայնավոր՝ *ա, է, է, ը, ի, իւ, հ, ճ, յ, ն, Վ, լ, ւ, օ, ք* 25 քաղաձայն՝ *բ, գ, դ, զ, թ, ջ, լ, ծ, կ, հ, ձ, ղ, ս, ն, շ, ջ, պ, ջ, ո, ս, տ, ը, ց, փ, ք, փ (Ֆ. ?)*:

Այս թվարկման առումով կարելի է նշել հետևյալը.

ա) հեղինակը հստակ չի տարբերում ձայնավորները, որոնց շարքում բերում է նաև այլ կարգի հնչման գրեր (*իւ, հ, ճ, յ, ն, Վ, լ, ւ, օ*),

բ) քաղաձայնների վերջին և վերջից 3-րդ տառերի նշանները (երկուսն էլ՝ *փ*), իսկ վերը բերված ցանկում՝ նույնն են վերջից 2-րդ և 5-րդ տառերը, այն է՝ մեսրոպյան այբուբենի 34-րդ գիրը (*ւ*) և հետագա լատինագիրը (*Ֆ < f*), որպիսով ստացվում է մեկ նիշի հավելում:

գ) Ամբրոսիոսը, թերևս, չունի տեղեկություն լատինագիր *Ֆ (< f)*-ի ոչ հայկական, հետագա նորամուծություն լինելու մասին. մեսրոպյան 34-րդ գիրը (ւ. «վյուն» կամ «հյուն») արտասանությամբ մնացել է անճանաչելի:

Այնուհետև, քաղաձայնները հնչման կազմով երկու տեսակ են.

ա) պարզ (simplices)՝ *գ, թ, ժ, հ, ս, ն, շ, ջ, ջ, ո, ս, տ, ը, ց, փ, ք, ւ*, որոնցից շնչեղ (aspirates) են՝ *թ (th), ջ (ch), ո (rh), փ (ph), ք (ch), փ (իմա՝ Ֆ. ph)*,

բ) կրկնակ (duplicates)՝ *բ, գ, դ, ծ, կ, ձ, ղ, ս, տ, պ, փ* (էջ 144ա-բ). այստեղ էլ նույն է մնում *փ*-երի հարցը, այլև հստակ չէ *ջ (ch)* և *ք (ch)* նշանակումը:

Առանձնացվում է 6 երկբարբառ, *այ, աւ, իւ, ու, էւ, ոյ*, որոնցում, ըստ հեղինակի, առաջադիրներ են *ա, է, ի, ո*, իսկ վերջադիրներ՝ *յ, լ* (կա նաև *վ*, թերևս *ու*-ի համար, որ տառադարձվում է հուն. ω) (էջ 144ա): Ըստ այսմ՝ երկբարբառի արժեք ունի գրաբարյան *ու*-ի, այլև *օ*-ի արտահայտումը հուն. ω (ω մեզա). օր.՝ *Ուլբեթ* –

օbeth (էջ 16բ), ժողովրդեան - zoglōrdean (էջ 150ա), օրհնեալ // օրհնեալ է - օrhneal // aurhneal ae (էջ 185բ), որովայն - օwain (ն. տ.) և այլն: Հայ. ուլ-ը բերվում է նաև օ, օս տառադարձումով. Յակովբ - Jacob (էջ 18ա), Յովսէփ - Jouseph (ն. տ.) և այլն:

Գրադարձական նման մոտեցման վերաբերյալ հայտնենք մի քանի ընդհանուր նկատառում:

ա) Չայնավորների և երկհնչյունների ոչ միակերպ գործածություն. *խօսեցաւ* (hhoseztau) / *խաւսեցաւ* (hhauseztau) (էջ 155բ). *ի համբաւէ չարէ / մի երկիցէ* (էջ 156ա):

բ) Բնագրային առանձին հատվածներում նկատելի են հպական, շփական և հպաշփական բաղաձայնների գրության, այսինքն՝ հնչյունի սխալ տառադարձման օրինակներ՝ ի համեմատություն այբուբենի ցանկում բերվածի. *չ* - ch (փխ. c, g, k կամ q). *Վլեմենդոս* - Chlemendos (< Clemēte) (էջ 149ա), *ծ* - x (փխ. dh, tz կամ zz). աստուածածին - astuxaxin (էջ 185բ) և այլն:

գ) Կան ամբողջովին ոչ ճիշտ կամ ոչ հավաստի տառադարձման դեպքեր, օր.՝ հայ. ճ-ի դիմաց լատինատառ - i /g /h (ie, gie, hie) նշանակումները:

դ) Տառադարձության մեջ զգալի է ժամանակի իտալերենի այբուբենի որոշ գրերի արտասանության ազդեցությունը. հմմտ. *է* - e, ie (iech), *զ* - g / c (gi(em), chiem), որոնցում հայ. չ արտասանությամբ տառադարձված է ch երկագիր [ch]:

ե) Հայերեն խուլի դիմաց ձայնեղի, նաև շնչեղ խուլ տառադարձում, *Իսահակ* - Isahach (ch-ն այբուբենի ցանկում դրվում է *ք*-ի համար) (էջ 17ա), *երկիր կոյս*. ergir cois (էջ 145ա) և այլն:

3. Առանձնացնենք սուրբգրային մի քանի հատված (դրանք սովորաբար երեք ձևով են՝ հայերեն, նրա տառադարձությունը և լատիներեն).

ա. «Adam. *Ադամ*, interpretatū nomen երկիր. ercir, terra. Aut *երկիր* կոյս. ergir cois, terra virgo, vel *երկիր* մարմնացեալ. erkir marmnazzeal, terra icarnata, aut *երկիր* կարմիր. ergir carmir, tera rubens vel rubea, կամ որ *յերկրէ* ամենայն քն. cuam or i ercrae amenain cho aut qui ex terra tota tua. De quo Paulus, I ad Corinthios, XV ait. որպէս *ադամաւն* ամենեքեան մեռանին, նոյնպէս և ի Քրիստոս ամենեքեան կենդանացին. Orpes adamaun amenechean meranin, noinpaes eu i Christos amenechean cendaszstin» (էջ 145ա):

բ. «Ահա կոյս յղացի և ծնցէ որդի և կոչեցեն զանուն նորա Եմմանուէլ. Aha cois iglaszzi eu tzanzti ordi eu cozeszten zanun nora emmanuæł» (էջ 146ա. բերված է առանց լատիներենի):

գ. «Հայր Աբրահամ ողորմեաց ինձ և առաքեայ (փիս. Գ-ով. Վ. Հ.) զղազարոս զի թացցէ զծերն մատյն (փիս. Ի-ով. Վ. Հ.) ի ջուր և զովացուցէ զլեզու իմ, զի ափափակիմ ի տապոյ աստի - Hair Abraham oglormeazt intz eu aracheai zglazaros zi thaztzzę ztzærn matin ifroi ischur eu zɔaztuszzę zlezu im zi aphaphakim i tapoi asti - Pater Abrahā misereri mei, et mitte Lazarum qui intingat manus extremum suae in aquā et refrigeret linguam meam, quia crucior in flamma ista» (էջ 146ա)¹⁷⁶:

Այս հատվածում, ի տարբերություն վերը բերված ցանկում եղածի (է > æ / œ, e), հայ. է երկբարբառակերպի համար տառադարձական նիշ է բերվում *ջ* տառանիշը (հմմտ. *թացցէ* - thaztzzę, *զովացուցէ* - zɔaztuszzę), որ տարակուսելի է:

դ. «Խօսեցաւ ած հարցն մարգարեիք, ի վերջին աւուրս յայտոսիկ խաւսեցաւ ընդ մեզ որդովն - hhoseztau astuzt harztn

¹⁷⁶ Այս հատվածից երևում է, որ Ամբրոսիոսն այնքան էլ չի տիրապետում հայերենին. դա երևում է նաև տառադարձումից, այլև լատիներեն թարգմանությունից:

margareiuch, i verscin auurs iaisosic hhouseztau iend mez ordwon (կամ ordoun)» (էջ 155բ):

Այս հատվածում, օրինակ, նկատում ենք հայերենին առհասարակ անհարիր հնչական-տառադարձական երևույթներ, օր.՝ հայ. ջ-ի, ց-ի և /ւ-ի դեպքը:

4. Բերում ենք Ամբրոսիոսի գրքում տեղ գտած «Հայր մեր»-ը՝ ըստ հիշյալ աշխատության (in situ). այն նույնպես երեք ձևով է՝ զուգադիր (հայերեն, նույնի տառադարձություն և լատիներեն. վերջինս չենք բերում)¹⁷⁷.

«Հայր մեր որ յերկինս դես սուրբ եղիցի անուն քո (= Hair mer or iercins des surb eglizzi anun cho), եկեսցէ արքայութաի քո եղիցին կամք քո (= eceszze archaiuthai cho eglizzin camch cho), որպէս յերկինս և իերկրի (= orpæs iercins eu iercri), զհաց մեր հանապազորդ սուր մեզ այսաւր (= zhazt mer hanapazord tur mez aisaur), և թող մեզ զպարտիս մեր (= eu thogl mez zpaartis mer), որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց (= orpæs eu mech thoglumch merozt partapanaszt), և մի տանիր զմեզ ի փորձութաի (= eu mi tanis zmez i phorxuthai), այլ փրկեայ զմեզ ի չարէ (= ail pharceai zmez i zarae), զի քո է արքայութաի (= zi cho ae archaiuthai), և զաւրութաի և փառք յաւիտեանս (= eu zauruthai eu pharhch iauiteans). Ամէն (= Amen)» (էջ 185ա):

Այս հատվածի հնչյունական-տառադարձական դրվածքի վերաբերյալ կարելի է նշել հետևյալը.

ա) հայ. *-ութ/ւն* ածանցի անօրինակ համառոտում (*-ութաի*), որ ավելի շուտ գրչագրական, քան հնչյունական-տառադարձական

¹⁷⁷ «Հայր մեր»-ի բնագրի ֆոտոպատճենը տե՛ս *Ռ. Իշխանյան*, Հայ գրքի պատմություն, հ. 1 (հայ տպագիր գիրքը 16-17-րդ դարերում), Ե., 1977, էջ 299: Հեղինակը չի կատարում այդ հատվածի լեզվի քննություն:

նմուշի դրսևորում է. *արքայութաի* (երկիցս. փխ. *արքայութիւն*),
գաւրութաի (փխ. *գաւրութիւն*), *փորձութաի* (փխ. *փորձութիւն*),

բ) հայերենին լիովին չտիրապետելու արդյունքում *երկինք*
բառի հոգնակի ներգոյականի *յերկինս* ձևին զուգադրվել է երկրորդ
դեմքի *դ* ցուցականանիշ մասնիկ՝ գրված հաջորդ բառի հետ.
երկինս դես (փխ. *յերկիս ես*),

գ) ձայնավորից առաջ դրվել է *ի* նախդիր (ոչ տարբերակ յ),
թերևս *երկիր* բառի սկզբի ոչ պարզ, այլ երկհնչյունային արտասա-
նության նկատառումով. *է* (հնչում՝ *յէ*). որպէս յերկինս և *իերկրի*,

դ) *ա* ձայնավորի կրկնագրություն, թերևս հնչյունի երկար
արտասանության արդյունքում, որ ինքնին հետաքրքիր է՝ *ասս*
(*ā*)(?). *գպասարտիս* մեր (տառադարձում՝ *zpaartis mer*):

Բերենք նաև մեկ այլ օրինակ-հատված. «*Salutatio Angelica. Ուրախւեր – Urahher / Մարիամ – Maram / լի – li / շնորհօք – snorhoch / տէար – tear / ընդքեզ – iendchez / օրհնեալ – օrhneal / էս – es / դու – du / ի – i / կանայս – canais / և – eu / օրհնեալ է – aurhneal ae / պտուղ – ptuge / որովայն – օրօain / քն – chu / տէար – tear / մեր – mer Իեսուս – Jesus / քրիստոս – Christos*»¹⁷⁸:

Նկատելի է հետևյալը.

ա) չկա պայթական բաղձայնների փոխադարձ գործածու-
թյուն (ձայնեղի փոխարեն խուլ, և հակառակը). *ընդքեզ – iendchez*,
դու – du կանայս – canais, տէար – tear, պտուղ – ptuge,

բ) կա անորոշություն *օ (աւ)*-ի, *ով*-ի նշանակման հարցում.
օրհնեալ – օrhnea // snorhoch // aurhneal ae, որովայն – օրօain,

գ) տարբեր են նշանակված հայ. *է* և *է* գրերը, *ւ*-ը բերվում է
երկազիր. *էս – es, aurhneal ae, մեր – mer, և – eu* և այլն:

¹⁷⁸ Թեք գծիկով բառանջատումը մերն է:

Այս աշխատության մեջ հայերենի հնչյունական-տառադարձական երևույթների մեր այս ակնարկից ունենք այն պատկերացումը, որ այնքան էլ վստահելի չեն հեղինակի հայերենի իմացությունը, այլև նրա հնչյունական նշանակումները, և այս պարագայում դժվար է խոսել ժամանակի հայերենի գրական և ոչ գրական տարբերության մասին:

3. Տրանցիսկուս Ռիվոլայի «Բառգիրք հայոց»-ը: Ռիվոլան հայտնի անուն է հայ գրավոր մշակույթի պատմության մեջ. նա հեղինակ է ոչ միայն ծավալուն լատինատիպ քերականության, այլև երկզվյան մի արժեքավոր բառարանի¹⁷⁹: Վերջինս այստեղ քննության ենք առնում հայերենի հնչյունաբանության պատմության, այլև ժամանակի խոսակցական (բարբառային), օտար՝ փոխառյալ բառերի գործածության նկատառումով, այսինքն՝ այն վիճակով, որ ներկայանում է հայերենի բառապաշարը XVII դ. առաջին կեսին:

Այդ բառարանները նախկինում ուշադրության առարկա են եղել ավելի շուտ բառարանագիտական ակնարկի ձևով, քան ուսումնասիրված մանրամասն և ըստ ամենայնի՝ կապված ամենից առաջ հայոց լեզվի պատմական բառագիտության, եթե ոչ նաև հնչյունաբանության և բառի իմաստաբանության հետ¹⁸⁰:

Է. Բ. Աղայանը գտնում է, որ այդ աշխատանքները «արժանի են ուշադրության, նախ՝ իրենց ներկայացրած պատմական արժե-

¹⁷⁹ Franciscus Rivola, Grammatica Armenae, libri quattuor (լատին և հայ լեզ.), Միլան. 1621: Բառարանը լույս է տեսել երկու անգամ՝ Միլանում և Փարիզում. այստեղ քննության նյութը քաղել ենք թե՛ մեկից և թե՛ մյուսից. Տե՛ս Բառգիրք հայոց. Dictionarium armeno-latinum, auctore Francisco Rivola, Mediolani, MDCXXI (=1621), 479 էջ: Բառգիրք հայոց. Dictionarium armeno-latinum», auctore Francisco Rivola, Paris, MDCXXXIII [=1633], 396 էջ:

¹⁸⁰ Տե՛ս Գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Ե., 1967:

քով, ապա՝ նաև հայոց լեզվի պատմության համար պարունակած նյութով. այդ տեսակետից ավելի մեծ արժեք է ներկայացնում բառարանը, որ պարունակում է տասնյոթերորդ դարի կենդանի հայերենից քաղած բազմաթիվ բառեր»¹⁸¹:

Սույն բառարանի մասին կարդում ենք «Հանդես ամսօրեայ»-ի էջերում լույս տեսած «Տպագրութիւն հայ-լատին բառագրոց Ֆրանցիսկոս Ռիվոլայի» վերնագրով հոդվածում (հեղ.՝ հ. Գ. Գ. [= Գրիգոր Գալեմբարյան]): Թարգմանաբար բերվում է Ռիվոլայի բառարանի Միլանում տպագրվածի առաջաբանի հետևյալ հատվածը, որին հետագա ուսումնասիրողները ուշադրություն չեն դարձրել, նրանում ուշագրավ տեղեկություն կա բառարանի նյութը Ջուդայի բարբառից քաղված լինելու մասին. «Այս հայ-լատին բառագիրքը սկսայ օգնականութեամբ մի քանի հայոց,- գորոնք Ֆր. Կարդ. Բոռուեոս երկայն ատեն այստեղ սնոյց,- որպէս զի այս լեզուն ի մերայնոց ուսումնասիրուի: Ուստի ըստ մասին անոնց աշխատակցութեամբը, եւ ըստ մասին այլևայլ գրեանց ընթերցմամբ գործս յօրինած եմ: Ասոր մէջ եթէ ցանկայի մասեր կը պակսին, կը խնդրեմ անոնցմէ՝ որոց ձեռքն այս աշխատասիրութիւնս կ'անցնի, միտ դնել ոչ միայն անոր՝ որ այս լեզուին վրայ տակաւին մէկը գրած չէ, այլ նաեւ՝ որ հեղինակը ծննդեամբ կամ հայրենեօք հայ չէ»¹⁸² :

Հատկանշական է նաև հետևյալը. «Եւ իրօք Ռիվոլա իւր բառագիրքն յօրինած է մօտը գտնուող (Ջուդայեցի) հայերու բերնէն բառեր հաւաքելով եւ քիչ բան միայն ի գրոց հաւելելով, այնպէս որ բառգիրքն աւելի աշխարհաբար է, քան գրաբար»¹⁸³ :

Նկատենք, որ Ռիվոլայի բառարանի «աշխարհաբար, քան գրաբար» լինելու հանգամանքը նկատի ունի Գ. Ա. Շրումպֆը, որ

¹⁸¹ Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 109:

¹⁸² «Հանդես ամսօրեայ», 1896, 2 (փետրուար), էջ 60:

¹⁸³ Նույն տեղում, էջ 61:

այն ավելի պակաս գնահատության է արժանացնում, քան այլ բառարաններ. «Այս բառագիրք (իմա՝ Ռիվոլյայի բառարանը – Վ. Հ.) շատ անկատար է և լի վրիպակօք, իսկ Աստուածատուր Ներսէսովիչի յօրինածը, հրատարակուած ի Հռովմ, ի 1695, և մանավանդ Հօրն Վիլլոտի (1714) անհամեմատ վեր են իրենց արժէքով, քան գրիվոլեանն»¹⁸⁴: Շրումպֆի նման գնահատությունը տեղին է՝ միայն վերապահությամբ, եթէ նկատի ենք ունենում Ներսէսովիչի և Վիլլոտի բառարանների հրատարակչական բարձր որակը, քան Ռիվոլյայինը: Իսկ ինչ վերաբերում է նյութի (բառապաշարի) «անկատար» լինելուն, ասվածը տեղին չէ, ընդհակառակը՝ Ռիվոլյայի բառարանը լավագույն նմուշներից մեկը պիտի համարվի ժամանակի կենդանի լեզվի բառապաշարի ներկայացման իմաստով: Ըստ այսմ՝ Ռիվոլյայի բառարանը արժանի է հատուկ քննության՝ առանձնապէս հայերենի բարբառների (կոնկրետ՝ Ջուղայի բարբառի) հնչյունաբանության համար: Այդ բարբառի հնչյունական համակարգի բնույթի վերաբերյալ Ռիվոլյայի տվյալները ավելի վստահելի կարող են լինել, քան հետագա ուսումնասիրողների կողմից նշվողները¹⁸⁵:

Նախ՝ բերենք մի քանի օրինակ բառարանի 1621 թ. տպագրությունից, որոնցում կան հնչյունական տարբերություններ՝ հատկապէս պայթական բաղաձայնների առնչությամբ. *ապագուք* - abacuch, *աբէթ* - Japheth, *աբէթածիինք* - progensis Jaheth (բայց՝ *աբէթագուվք* - abenago), *աբենէր* - abner, *աբիութ* - abiud), *Աբիստղոմ* - Ansalon, *աբտակ և չաւփալայ* - colaphus, *աբտակել* - colaphis caedere (էջ 1), *ագցան և ունէլուվք* - forcipes et usum (էջ 2):

Այնուհետև, մեծ թվով տարբերություններ կարելի է բերել բառարանի 1633 թ. տպագրությունից. դրանք մի քանի տեսակ են:

¹⁸⁴ Գ. Ա. Շրումպֆ, նշվ. աշխ., (տե՛ս «Բազմավէպ», 1891, էջ 59):

¹⁸⁵ Հմմտ. Հ. Աճառյան. Քննություն Նոր Ջուղայի բարբառի, Ե., 1940:

ա) Չայնավորների և կիսաձայնի հետ կապված՝ սղում (բացթողում), հավելում, վերածում մեկ այլ ձայնավորի. *արեղայ* – cœnobita, monacus (էջ 1), *ազանիլ և ազնիլ* – indui, vrstiri (էջ 2), *ազրզնալ* – brandiri (էջ 3), *ալնի* – insulsus (էջ 5), *աղչրկնալ* – puellascere (էջ 11), *աճրրնալ* – inirari (ն. ս.), *աիփ* («այբ») – prima lettera Armeniorum (էջ 4), *գրտրնակ* – lignum illud teres (էջ 81), *քոնալ* – a recto virtutis tramite abduci (էջ), *ամանաին* (յ-ի բացթողում) – aestivus (էջ 12), *զէժ // զիժ (զէժանալ // զէժիլ* – heberem evadere) – hebes, stulidus, bardus (էջ 71) և այլն:

բ) Երկբարբառի պարզեցում, կամ հակառակը, փոխարինում մեկ ուրիշով. բաւպիկ – discalceatus (էջ 37), *բաւղա* (հոգն. *բաւղէք*) – taurus (էջ 57), *բաւղագ* («կոկորդ») – guttur (էջ 57), *վարդագուն* – color rosaceus (էջ 349), *վարագոր* – velum ad altare, sacrasue umagines operiendas (ն. ս.), *բաւպիկ* – discalceatus (էջ 37), *համբոր* («համբուր») – sculum (էջ 318), *աւսկի // ոսկի* – aurum (էջ 47), *գաւլ* («լիճ») – lacuna, staguum (էջ 70) և այլն:

գ) Փոփոխություն պայթական (մասամբ շփական) բաղաձայնների առնչությամբ. *արտակել* – colaphus cœdere (էջ 2), *ագան* – forcipes (էջ 2), *ազաթել* – revereri (էջ 3), *աիփ* («այբ») – prima lettera Armeniorum (էջ 4), *աճէպ* – admiratio (*աճէպ բան* – inirabilis) (որից՝ *աճրրնալ* – inirari) (էջ 11), *քուրց* – cilicium (որից՝ *քուրց սզենուլ* – cilicio vestiri) (էջ 391), *աղչրկնալ* – buellascere (բայց՝ *աղչրհուրին*. *հ*-ով – puellaris æstas) (էջ 11), *վարցել* – pretio conducere (էջ 350), *ողսար* – ovis (էջ 300), *պատրիարք* – patriacha (*պատրիարգութիւն* – patriarchatus) (էջ 316), *պարկկէշտ* (կրկն. *կ*) – modestus (էջ 318), *պագ // պաք* – sculum (ն. ս.), *պագար* («անսուր») – conuentio pretij (էջ 51), վարցըգ, վարցել – pretio conducere (էջ 350), «*Գալըթ է բարի*» – Bene veneris (էջ 97), *գակատ* – accusatio apud iudicem (էջ 69), *զեղարթ* («նիզակ») – lancea (էջ) և այլն:

դ) Փ-ի փոխարեն Ֆ. կ-ի փոխարեն հ (հետնալեզվայինի փոխարեն հազագային). *Ֆանտ* (և լեպ) - *dolus, fraus* (էջ 394), *Ֆիլ* (սեռ. հոլ.՝ *Ֆլի*) – *elephas* (էջ 394), *աղջրհուֆին* – *puellaris æstas* (էջ 11) և այլն:

Այստեղ ամենից առաջ նկատելի է, որ գրականի համեմատությամբ հնչյունական տարբերությունները տարածվում են նաև փոխառյալ բառերի վրա, այնուհետև այդ տարբերությունները վրստահելի օրինակներ են ժամանակի (XVII դ. առաջին քառորդ) բարբառներից մեկի՝ Ջուդայի բարբառի պատմական քննության համար¹⁸⁶: Սույն բառարանի լեզվի առանձին քննությունը հայերենի պատմական բարբառագիտության կարևորագույն խնդիրներից է:

4. ՄՄՁ № 3475-ի («Տախտակ տրամաբանական») նյութը: Մեզ հասած այս ձեռագրում (1625 թ., էջ 284ա) հանդիպում է մի աստիճանական գծանկար-բառաշղթա՝ նույնատիպ եռաբաշխ 6 օղակներով, որոնցից յուրաքանչյուրը հարաբերակցային եռանդամ մեկ ամբողջություն է՝ ճանաչողության 6-ակի շեմերով: Ընդ որում եռաբաշխ օղակներում բերվում են իմացական մեկ ըմբռնման (կոնցեպտի)՝ վերացականից (աբստրակտից) մինչև ամենաիրական (կոնկրետ) երևույթները, այլև մեջտեղի օղակի ձախ կողմի օղակում՝ դրականի (+), իսկ աջ կողմի օղակում՝ բացասականի (-) նշանակումներն են, հետևյալ բաշխմամբ.

¹⁸⁶ Ջուդայի բարբառին նվիրված գիտական աշխատությունների հեղինակները (Յ. Յ. Շրյոդեր, Ն. Աճառյան և ուրիշներ) այս բառարանի՝ վերը բերված և նման այլ օրինակների ուսումնասիրություն չեն կատարել՝ ի համեմատություն բարբառի հետագա վիճակի, որպիսով այն մնում է ապագայի:

1) *մարմնաւոր* (զօրօնէայ) [= corporea] - *գոյացութիւն* (սուստանցիայ) [= substantia] - *անմարմին* (ինզօրօնէայ) [= incorporea],

2) *շնչաւոր* (անիմադում) [= animātum] - *մարմին* (զօրօն) [= corpus] - *անշունչ* (ինանիմադում) [= inanimātum],

3) *սզայուն* (սէնսիպիլէ) [= sēnsibile] - *շնչաւոր մարմին* (անիմադում գաւորօն) [= animātum corpus] - *անզգայ* (ինսէնսիպիլէ) [= insēnsibile],

4) *բանական* (ռացիանալէ) [= ratiōnāle] - *կենդանի* (անիմալ) [= animal] - *անբան* (ինռացիանալէ) [= i(n/r)ratiōnāle],

5) *մահկանացու* (մաւորօնալէ) [= mortāle] - *բանական կենդանի* (ռացիանալէ անիմալ) [= ratiōnāle animal] - *անմահ* (ինմաւորօնալէ) [= i(n/m)mortāle],

6) *սոկրատէս* (սոգրատէս) [= Sōcratēs] - *մարդ* (աւմաւ) [= homo, հզվդ. homō] - *պլատոն* (պլատոն) [= Platō(n)]:

Բերված հայերէնից լատիներէն թարգմանված (հայագիր) բառերում նկատում ենք գրադարձական հետևյալ արտացոլումը.

ա) հնչյունական. a // ā - ա, b - պ, c - գ, e - է, ē - է, i - ի, h - ժ (զրո), l - ղ // լ, m - մ, n - ն, o - օ, p - պ // բ, s - ս, t - դ / տ, u - ու,

բ) հնչակապակցական. ea - էայ, ir- ին (?), ti -ցի, o(ō) -աւ // օ:

Խուլերի դիմաց ձայնեղներ (p > բ, c > գ, t > դ), որ ունի նաև հակառակ երևույթը (b > պ. substantia - սուստանցիա), սովորաբար ընդունված է ասել, թե արևմտահայ տարածքի բարբառային հատկություն է, սակայն հնդեվրոպական պայթականների հայերէն արտացոլումների նոր տեսության համաձայն՝ խուլերն ավելի նախնական են, քան ձայնեղներից առաջացած լինելը. տեղի չի ունեցել բաղաձայնական տեղաշարժ (զերմ. Lautverschiebung):

Եվ մի կողմ թողնելով նշված հայերեն և լատիներեն բառերի ճանաչողական-իմացաբանական հարաբերակցությունը՝ լեզվի առումով հարկ ենք համարում նշելու միայն հետևյալը.

ա) բառացանկի հեղինակի համար հայերենը ոչ լիովին հասու լեզու է, որ երևում է, օրինակ, *աւ* երկբարբառի գրաբարյան գրությունից, երբ 12-րդ դ. կեսերից արդեն մուտք էր գործել լատինագիր *օ*-ն, թեև գործածում է նաև վերջինս (հմմտ. *գաւորբուս / գօրբուս, ինգօրբաւոեայ* և այլն):

բ) Հեղինակը այնպիսի «բարբառի» կրող է, որում պայթական ձայնեղներն արտասանվելիս են եղել իբրև խուլեր, և հակառակը՝ համապատասխան խուլերը ձայնեղներ (հմմտ. *սուպստանցիա*, փխ. *սուբստանցիա, գօրբուս*, փխ. *կորպուս, սենսիպիլէ*, փխ. *սենսիբիլէ, անիմադում*, փխ. *անիմատում* և այլն):

5. ՄՄՁ № 3475 («Բառք լատիներեն-հայերեն»): Այս ձեռագրում (1625 թ., էջ 285ա) կա մի սեղմ լատիներեն-հայերեն բառացանկ (ընդամենը 13 միավոր), որ բերում ենք նույնությամբ. *դիֆ[ե]րենցիա : սահման, ըսքենցիա : սեռ, օբերացիոն : ներգործություն, բերսոնա : անձն, նադուրա : բնություն, արսարսիում : արհեստ արհեստից, էթսիենցիա : նզիտություն, սիենցիարում : գիտութեանց, ատոմնիում, մեթոտոռում, փրինցիբիա, վիամ, ապենս: առ ամենայն մեթոտայից. սկզբանց, ճանապարհ, ունել:*

Նկատենք, որ վերջին 9-13 գույգերը բերվում են ոչ թե գույգ առ գույգ, այլ նախ լատիներեն՝ (9) *ատոմնիում*, (10) *մեթոտոռում*, (11) *փրինցիբիա*, (12) *վիամ*, (13) *ապենս*, այնուհետև հայերեն (իբրև մեկ կապակցություն կամ վերառյալ նախադասություն)՝ *առ*

ամենայն 9) մէջօտայից (10). սկզբանց (11). Ճանապարհ (12). ունել (13)¹⁸⁷:

Այնուհետև, նկատենք, որ թե՛ նախորդ, թե՛ այս ցանկը հնչունական գրանցումների առումով վստահելի օրինակներ են տվյալ ժամանակի հայերենի բարբառային-խոսակցական արտասանության (= գրադարձության) մասին:

Նկատելի է՝ 1) ձայնավորի գործածության խճողում. *օբերացիոն, բերսոնա* և այլն, 2) պայթական խուլի փոխարեն ձայնեղ բաղաձայնի կիրառություն, և հակառակը. *բսբենցիա, բերոնա* և այլն: Դա հավանաբար վկայություն է լեզվի կանոնականության չիմացության, այլն՝ տերմինաբանության հարմարեցման օտարլեզվյան համարժեքին:

6. Անդրեաս Ակոլութուսի գրքի հայերենի նյութը: Անդրեաս Ակոլութուսը (1654 – 1704 թթ.) հայտնի եգիպտագետ է, նրա լեզվագիտական հետաքրքրության մեջ է եղել նաև հայերենը՝ դիտարկված ամենից առաջ եգիպտերենի հետ ենթադրյալ առնչության մեջ: Հայագիտության մեջ ավելի ուշադրություն է դարձվել նրա թարգմանական մի աշխատանքին: Վերջինիս նյութը մենք դիտարկում ենք երկու կարգի մեջ՝ նկատի ունենալով հայերենի այբուբենի տառադարձական ցանկը և Ս. Գրքի մի հատվածի հայերեն թարգմանության լատինական տառադարձությունը:

1. Այս ցանկը XVII դ. վերջերին (1680 թ.) կազմված մի փոքրիկ պատառիկ է, որում հեղինակը աղյուսակի ձևով սյունակ առ սյունակ տալիս է հայերեն գրերի ձևը, անվանումը, արժեքը և թվահամարը (վերջինս բաց ենթ թողնում) (էջ 54-55)¹⁸⁸:

¹⁸⁷ Փակագծերում դրված թվերը մեր հավելումներն են:

¹⁸⁸ Հայ մատենագիտական ցանկերում այս գիրքը կոչվում է «Անդրիաս հայերեն» (ընդարձակ վերնագիրը տե՛ս վերը՝ ծանոթ. 136):

Տառադարձությունը իրացվում է կա՛մ հնչադարձությամբ, կա՛մ անվանումով (բնագրում բերվում է չորս սյունակով, որ այստեղ տալիս ենք սովորական ձևով՝ հերթականությամբ)¹⁸⁹. հմմտ. *u* - aip, a, *p* - pien, med. inter b & p (= *p*-ի և *պ*-ի միջև), *q* - chim, med. inter c & g (= *q*-ի և *գ*-ի միջև), *η* - ta, med. inter d & t (= *η*-ի և *տ*-ի միջև), *t* - jædsch, æ, aliis ie (= *տէ*, այլև *հէ*), *q* - sza, sz, z. allis ss (= *q*, այլև *uu*), *t* - e, e, *p* - jett, e. rapidiss. ut (i) ebr. (= ինչպես հր. i), *θ* - thuò, t. durum, vel th (= թավ, որպես th), *σ* - sge, sg, *h* - in, i vocal (= ձայնավոր i), *l* - liun, l, *h* - che, ... ebr. fortium (= հր., ուժեղ), *δ* - dza, dz sive [= կամ dz] // ebr. (= հր.), *q* - ghièn, ch, ... ebr. raphat (= հր.), c. ch. mollium (= փափուկ ch), *h* - huò, h, *d* - za, z et x (= և x), *η* - ghhad, gh. aliis k. sed ḥ volet l (= այլև k, բայց ḥ, թերևս l), *đ* - ge, g. gallic aliis g (= այլև g), *u* - mien, կմ, *j* - hi, i, *h* - nu, n, *z* - scia, sc. sive ... ebr (= կամ ... հր.), *n* - vou, o et u (= o և u), *z* - ccia, cc, *u* - be, b. duriusculum (= փոքր-ինչ կոշտ), *z* - ce, c, *n* - ria, rr, vel r fortius (= կամ ուժեղ r), *u* - se, s, *q* - vièu, v. consonans (= բաղաձայն), *u* - dium, d, *p* - re, *g* - zzuò, zz, *l* - hiun, u. vocalis (= ձայնավոր), *ph* - piur, ph, *p* - cche, cch sive ... ebr., *φ* - fe, f, o - aipun¹⁹⁰ - o:

Այս այբուբենի վերաբերյալ հարկ կա նշելու հետևյալը.

ա) տառերի անունների (անվանումների) տառադարձումները վկայում են, որ գործ ունենք մեսրոպյան գրերի, այսպես կոչված, «արևմտահայ» արտասանության հետ. *u* - aip, a, *p* - pien և այլն:

¹⁸⁹ Չորրորդ սյունակը՝ valor numeralis [= թվային արժեքը]. գրերի արաբական համարակալումն է (բաց ենք թողնում), առաջինը՝ figura [= տեսք. ձև], երկրորդը՝ nomen [= անուն. անվանում], երրորդը՝ potesta [= արժեք]. որոշ դեպքերում արժեքի լատիներեն նշումը թարգմանում ենք՝ փակագծերում. գլխագրերով նշումները դնում ենք փոքրատառերով:

¹⁹⁰ Այս այբուբենը ոչ այլ ինչ է, քան aip + hiun միացությունից առաջացած ձույլ անվանում (իմա՛ *u*-*l* «այբ- հյուն»):

բ) Երբեմն արտասանական (արտաբերական) համեմատություն է անցկացվում հայերենի և եբրայերենի միջև. *p* - jett, e. rapidiss. ut (i) ebr. (= ինչպես հր. i), *hu* - che, ... ebr. fortium (= հր. ուժեղ) և այլն:

գ) Քիչ չեն դեպքերը, երբ հարկ է լինում նշելու գրի միջին արտասանություն ունենալը. *p* - pien, med. inter b & p (= *p*-ի և *u*-ի միջև), *q* - chim, med. inter c & g (= *h*-ի և *q*-ի միջև), *η* - ta, med. inter d & t (= *η*-ի և *տ*-ի միջև) և այլն:

դ) Անորոշություն կա ձայնավորներից մի քանիսի (ե-ի, ո-ի), որոշ շփականների (ժ, շ, դ, խ և այլն) նշանակման մեջ:

Բերված են նաև հետևյալ երկբարբառները (հնչադարձությամբ) (էջ 55). աւ - av, եւ - æv, էւ - ev, ըւ - ev, իւ - iv, ու - u, այ - aj, ոյ - uj: Երկբարբառները թվով ութն են, տառադարձությամբ պարզ են, չունեն նշանակման երկվություն. նույն էջում նշվում է շեշտի երեք տեսակը՝ բուրթ (gravis), սուր (acutus) և երկուստեք (circumflexus):

Մեր այս առանձնացումները վկայում են, որ հեղինակի նշանակումներն այլ բան չեն, քան ժամանակի հնչական-արտասանական իրողությունների գրառում՝ իբրև լեզվի հնչյունաբանություն՝ հնչյունական շղթայից դուրս (ոչ լծորդական դիրքում):

2. Նույն աշխատության մեջ Ակոլությունը գետեղել է Ս. Գրքի Աբդիասի մարգարեությունից մի ամբողջական հատված՝ հայերեն բնագիրը, նրա լատիներեն տառադարձությունը, զուգահեռ՝ լատիներեն թարգմանությունը, այն ունի ընդարձակ անվանում, սակայն բանասիրության մեջ հայտնի է սեղմ վերնագրով՝ «Աբդիաս հայ»

[Obdias armenus (= «Աբդիասի մարգարեություն՝ հայերեն թարգմանությամբ»)]¹⁹¹ :

Բնագիրն ունի առաջաբան (Annotationes, էջ 7-53), անոտացիաները ծանոթագրություններ են բնագրային հատվածների վերաբեյալ, բացատրություններ զուգահեռ լեզուներով, իբրև գրական հուշարձան, թերևս, կարոտ է բանասիրական ավելի լայն քննության: Այս բնագրին մեզանում անդրադարձել են առավելապես բանասիրական, մասամբ՝ լեզվաբանական աշխատանքներում:

Է. Բ. Աղայանը այդ մասին գրում է. «Գիրքը պարունակում է Աստվածաշնչի «Մարգարեութիւն Աբդիու» փոքրիկ հատվածը: Հեղինակը թարգմանել է այդ հատվածը հայերենից լատիներեն և զետեղել իրար կողքի (էջ 1-7)՝ տալով նաև հայերենի ընթերցումը լատիներեն տառերով: Թարգմանությանը ավելացրել է քերականական վերլուծություն և զանազան ծանոթագրություններ (էջ 7-53), ապա հայերեն այբուբենն ու արտասանությունը»¹⁹²:

Ստորև ներկայացնելու ենք թարգմանության մի քանի հատվածի (էջ 1-2-ից քաղված) հնչյունաբանական-բառագիտական վերլուծությունը: Նախ՝ բերենք այդ հատվածները (թվով՝ յոթ), հայե-

¹⁹¹ Obdias Armenus, quo cum analysi vocum armenicarum Grammatica, et collatione versionis Armenicae cum Fontibus, aliisque, maximam partem Orientalibus versionibus, exhibetur. Primum in Germania specimen Characterem Armenicorum, in Celeberrima Academia Lipsensi procuratorum M. Andrea Acolutho, Vratislava, Siles. anno epochae. Armenorum MCXXIX. Messianae MDCXXC: Տես նաև Գ. Ա. Շրումպֆ, նշվ. աշխ., էջ 43-45: Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 110-111:

¹⁹² Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 111:

րենը և նրա գրադարձությունը (հատվածը կոչվում է՝ Marchareutium Abdiu (= «Մարգարէութիւն Աբդիու»)՝¹⁹³.

1) Desil Abdiu, or egeu jarrac chan zels Asurestanujn (էջ 1): Տեսիլ Աբդիու, որ եղև յառաջ քան զելս ասորեստանոյն (ն. տ.):

2) Aisbes ase der zedom: Lur luvav i Derne. Eu bascharumn arracheaz i hethanuss: Ariech, eu jarizzucch ivr nuza i baderazm (էջ 1): // Այսպէս ասէ տէր ցԵղօմ. Լուր լուաւ ի տէրնէ. և պաշարումն առաքեաց ի հեթանոսս. Արիք և յարիցուք ի վերայ նոցա ի պատերազմ (ն. տ.):

3) Aha sagavavor edu zches jazchs eu anarcheal es tu jujgj (էջ 1): // Ահա սակաւաւոր ետու զքեզ յազգս և անարգեալ ես դու յոյժ (ն. տ.):

4) Hbarduthiun srdi cchuj barzrazzujzz zcchez bnagil i dzachs vimazz. barxraz-zuzzanel zbnachuttiun ivr, ev asel i srdi ivrum ov icuszze zis jerchir (էջ 2): // Հպարտութիւն սրտի քոյ բարձրացոյց զքեզ բնակիլ ի ծակս վիմաց. բարձրացուցանել զբնակութիւն իւր. և ասել ի սրտէ իւրում ով իջուցէ զիս յերկիր (ն. տ.):

5) Ette barxraszzis ibrev zardsovi, ev ethe i mec asdegazz tizzes zbujn cchu, ev andi icuzzizz zcchez, ase Der (էջ 2): // Եթէ բարձրացիս իբրև զարծուի, և եթէ ի մէջ աստեղաց դիցես զբոյն քո. և անտի իջուցից զքեզ, ասէ Տէր (ն. տ.):

6) Ziart cchnnezav Esav, ev embrrnezan dsadsuchcch nora (էջ 2) // Զիա՞րդ քննեցաւ Եսաւ՝ և ըմբռնեցան ծածուկք նորա (ն. տ.):

7) Ev sarseszzin baderazmogech cchu uricch i Tiemanaj, zi barxzzi mart i lerrnen Esavaj (ն. տ.) // Եւ սարսեցին պատերազմօղք քո, որք ի Թեմանայ, զի բարձցի մարդ ի լեռնէն Եսաւայ (ն. տ.):

¹⁹³ Հատվածի ուղղագրությանը և կետադրությանը ոչ մի կերպ չենք միջամտում՝ բացի հայերեն փակագրությունները բացելուց (հմմտ. *Տր - Տէր* և այլն):

Այս հատվածների հնչյունաբանական վերլուծությունից պարզվում է հետևյալը.

ա) պայթական բացաձայնների գրության տարբերություններ՝ խուլի փոխարեն ձայնեղ, և հակառակը. երբեմն էլ ձայնեղը մնում է նույնը. *desil* (*դեսիլ*), *aisbes* (*այսբես*), *der* (դեր, իմա՛ տեր), *i Derne* (*ի տերնէ*, իմա՛ ի տեանէ), *i baderazm* (*ի բադէրազմ*), *tizzes* (*տիցէս*, իմա՛ դիցէս), *zbujn* (*զբոյն*) և այլն,

բ) *է*, *է* ձայնավորների միաձևացում՝ միայն լատինագիր *e*-ով. *ette* (*էթէ*), *i lernnen* (*ի լէռնէն*), *aisbes ase der* (*այսսէս ասէ տէր*) և այլն,

գ) պայթական շնչեղ խուլերի գրությունը, իբրև արտասանվածի գրառում, անմիօրինակ է՝ կապված շնչեղության («թավության») դժվարության հետ, որ հարուցում է լատինագիր այբուբենը. *zches* (զքէզ), *cchnnezav* (քննէցաւ), *icuszze* (իջուսցէ), *icuzzizz zcchez* (իջուցից զքէզ), *sarseszzin* (սարսէսցին) և այլն,

դ) *ղ*-ի արտահայտում հետնալեզվային ձայնեղով՝ իբրև շփական. *asdegazz* (աստեղաց), *baderazmogcch* (պատերազմօղք) և այլն:

Այսպիսով, ակնարկի ձևով տրվող մեր այս համեմատությունը ցույց է տալիս, թե որքան է անհրաժեշտ նման մի բնագրի լեզվի քննությունը հայերենի պատմական հնչյունաբանության համար:

7. Աստվածատուր Ներսեսովիչի բառարանի նյութը: Հայ գրավոր մշակույթի և կրթության երախտավոր է Աստվածատուր Ներսեսովիչը (1647-1709), որի երկլեզվյան (լատիներեն - հին հայերեն) բառարանի նյութը դեռևս չի եղել որևէ քննության առար-

կա¹⁹⁴: Այստեղ այդ բառարանին անդրադառնում ենք մասնակիորեն՝ հայերենի այբուբենի հնչյունական-տառադարձական համեմատության նպատակով (օր.՝ *Cyrus* - հայ. *Կիւրոս*, փխ. *իւ*-ով (էջ 128. արքայի անուն). *ւ*-ի *ու* արտասանություն, որ կարևոր է *ու* երկբարբառի և *ու*-ի առնչության տեսանկյունից (երկբարբառի պարզեցում):

Բառարանը կազմված է հին գրական հայերենի բառաթերքի հիման վրա, թեև կան ինչ-ինչ օրինակներ, որոնք տարբերություններ են ի հայտ բերում. վերջիններս նկատում ենք բառարանի սեղմ առաջաբանում, որտեղ հեղինակը խոսում է մի քանի վերջնամասնիկների մասին (*-գործ*, *-ղիր* և այլն), որոնցով կազմվում են նոր բառեր:

ա) Նկատում ենք բաղաձայնների տառադարձման՝ հին հայերենի նորմայից շեղումներ. *ծին* – *zin* (իմա՝ «*ծին* վերջնամասնիկ», *հողածին* և այլն, էջ V), *գործ* – *corz* (tum in *corz* [= իմա՝ *corz*], ն. տ.), *ղիր* «ղներ» – *tir* (tum in *tir* [= իմա՝ *tir*]. օրէնսդիր և այլն, էջ VI), *գարդ* – *zart* (tum in *zart* [= իմա՝ *zart*], ն. տ.), *շէն* – *ssen* (tum in *ssen* [= իմա՝ *ssen*], *ունաշէն* և այլն, ն. տ.), *պահ* – *bah* (tum in *bah* [= իմա՝ *bah*]. օրինապահ և այլն, ն. տ.) և այլն, բերված օրինակներում առկա է ձայնեղի փոխարեն խուլ, խուլի փոխարեն՝ շփական, այլն ձայնեղի գործածություն, որ հետաքրքիր է հայերենի բաղաձայնական համակարգի «շարժուն» (մոբիլ) դրսևորման պատմության առումով (հմմտ. *costa* – *նսգր* [փխ.՝ *կ*-ով], կող. էջ 120):

բ) Կան մասնակի շեղումներ ձայնավորների վերաբերյալ, ընդ որում բերվում են հին գրականին զուգահեռ խոսակցական

¹⁹⁴ «Բառգիրք լատինացոց և հայոց ի վերայ Աստուածաշունչ և ժամակագրութեան գրոց Հայոց եկեղեցոյն» [= *Dictionarium latino-armenum super sacram scripturam, et libros Divini officis Ecclesiae Armenae* [Roma, MDCXCXV (=1695), VIII + 596, et 14 p.]:

լեզվից օրինակներ. լատ. dies - օր, աւուր, տիւ. տուրնջեան. *գօրեկ* (էջ 151), լատ. panis – հաց, պան. *ջօթ* (էջ 378), լատ. cras – վաղիւ, *վաղվէն օրն* (էջ 120), լատ. cornu - եղջիւր, *կոտոշ* (էջ 118), լատ. linum tortum – պարան, երան. *ջուան* (իմա՛ չվան) (էջ 305), լատ. – երկրորդումն, կրկին՝ երկիցս անգամ, ապայ, *էրկուսում հեղ* (էջ 486), լատ. culmus – *փինջ, փնջի* [փիւ. ու-ով] (էջ 124), լատ. cucumer - սելի, *խիար* (ն. տ.) և այլն:

գ) Բառարանում, ինչպես նշվում է վերնագրում, ընգրկված է Ս. Գրքի և հարակից գրքերի բառապաշարը, սակայն որոշ բառեր, ի համեմատություն, ասէնք, Օտունի բառացանկի, չենք գտնում այստեղ (օր.՝ լատ. crux «խաչ» և այլն):

դ) Հանդիպում են, ի դեպ, հեղինակային նորակազմ բառեր՝ թարգմանելու լատիներեն համարժեքը (հայերենում նաև հնչյունական տարբերություններով). օր.՝ ciborium - *կերակրարան*, ciborium magister – *խոհարար, կերակրապետ* (էջ 75), charitas – սէր, սիրոյ, *սիրութիւն* (74), laboriose - *աշխատատրապէս, աշխատեղարար* (էջ 291), lanciola - *գեղարդիկ* (294), caupo (cauponis) – *բաժակավաճառ, պանտոկապետ* (էջ 70) և այլն:

ե) Բառերի թարգմանություն՝ գրականին հոմանիշ ոչ գրական բառով հանդերձ. լատ. cilicina – մագեղէն, *շալ* (էջ 76):

Այնուհետև, համեմատություն ենք անցկացնում Կարիերի ցանկի և Ներսեսովիչի սույն բառարանի բառապաշարի հնարավոր համընկումների միջև, բերում ենք բառարանի այն միավորները, որոնք կան Օտունի ցանկում (վերջինիս ձևերը չենք նշում. տե՛ս վերը). լատ. dies - օր, աւուր, *գօրեկ* (էջ 151), լատ. feriae – տօն, պարապմունք (էջ 204), լատ. panis – հաց, պան, *ջօթ* (էջ 378), լատ. caro - միս, մարմին (էջ 67), լատ. vinum - գինի (էջ 579), լատ. caseus - պանիր (էջ 68), լատ. osium - ձու, *հաւկիթ* (էջ 376), լատ. piscis - ձուկն (էջ 404), լատ. aqua - ջուր (էջ 37), լատ. caelum - երկին (ա-

ռանց ք-ի. էջ 62), լատ. *supercilium* - *յարտևանի, յօն* (բառարանը չունի *cilium*. էջ 523), լատ. *labra* - շրթուն, շրթունք (ՆՀԲ-ն չունի, ունի՝ *labium*. էջ 291), լատ. *gingiva* - (ՆՀԲ-ն չունի, ունի՝ *gingiva*), լատ. *pugnis* - բուռ, սեռ. հոլ.՝ բռան, *բռնցի* (էջ 439), լատ. *renes* - երիկամունք (էջ 460), լատ. *coxa* (ՆՀԲ-ն չունի), լատ. *crus* (ՆՀԲ-ն չունի), լատ. *testiculi* (ՆՀԲ-ն չունի), լատ. *mulier* - կին, *կնիկ* (էջ 339), լատ. *ecclesia* - եկեղեցի, ժողով, *ժամ* (էջ 172), լատ. *altare* - սեղան (էջ 23), լատ. *angelus* - հրեշտակ (էջ 28), լատ. *sanctus* - սուրբ, անարատ (էջ 478), լատ. *bonum* - բարի, լալ (էջ 59), լատ. *episcopus* - եպիսկոպոս (էջ 181), *monachus* - միայնակեաց, արեղայ, *միանձուն* (էջ 335), լատ. *presbiter* - ձերուհի, էրեց, քահանայ (ըստ Ներսեսովիչի՝ *prsbyter*. էջ 424), լատ. *leuita* - ղևտացի (ըստ Կարիերի՝ *levita*. էջ 301), լատ. *xpianus* - քրիստոնեայ (ըստ Ներսեսովիչի՝ *christianus*, էջ 75):

Այս ցանկի առումով նշենք հետևյալը.

ա) որքան էլ բառարանը նպատակ է ունեցել ներկայացնելու Ս. Գրքի և հարակից այլ գործերի բառապաշարի գուգադրում լատիներենի հետ, այնուամենայնիվ տեղ են գտել ժամանակի (եթե ոչ՝ առհասարակ) խոսակցական բառապաշարի միավորներ (հմմտ. *ջօթ, ցորեկ, հաւկիթ, յարտևանի, բռնցի* և այլն),

բ) Օտունի բառացանկից մինչև Ներսեսովիչի բառարան մի քանի հարյուրամյա ժամանակի տարբերություն է, որ ենթադրում է զգալի տարբերություններ բառերի թե՛ գրության և թե՛ իմաստի (թարգմանության) մեջ, սակայն համեմատությունը ցույց է տալիս մի կողմից՝ գերակշիռ մասով համընկումներ (ձևաիմաստային նույնության), մասամբ՝ տարբերություններ, որոնք արդյունք են լեզվի բառապաշարի պատմական փոփոխության,

գ) այս բառարանի տվյալների հետ համեմատությունը ինչ-որ չափով պարզում է Օտունի բառացանկի միավորների գրանցման և նշանակման հավաստիությունը:

Աստ. Ներսեսովիչը լեհահայ միջավայրի գիտնական է, որ որոշակի ներդրում ունի հայ-լատիներեն բառարանագրության մեջ, և լեզվական այդ ոլորտը, ընդ որում նաև հիշյալ բառարանը ունեն առանձին ուսումնասիրության կարիք: Մեր բերած մի քանի օրինակները ուրվագծում են հայերենի հնչյունական համակարգի պատմական փոփոխությունը միայն, ամբողջական քննությունը կարող է ավելին ցույց տալ:

8. Մ. Վ. Լա Կրոզի բառարանի ներածության և մի հատվածի նյութը: XVII դ. վերջին քառորդի և XVIII դ. 1-ին կեսի եվրոպական հայագիտության հայտնի երախտավորներից է Մատյուրինոս Վեյսիեր դը Լա Կրոզը (Լակրոզ) (1661-1739 թթ.), որը հայտնի է իր պատմական-բանասիրական, աղբյուրագիտական, ինչպես նաև բառագիտական (բառարանային) աշխատություններով: Ֆրանսիացի արևելագետ-հայագետը հեղինակ է նաև ձեռագիր «Բառարան հայ լեզուի» աշխատության, որի ներածության և բառարանի մի քանի էջի լուսապատճենը տեղ է գտել բավականին ուշ՝ ֆրանսերեն լույս տեսնող «Հայագիտական հանդես»-ի էջերում (հայագետ Յ. Յ. Ս. Վայտենբերգի աշխատասիրությամբ)¹⁹⁵:

Բառարանի նյութը մեծ մասամբ Ս. Գրքի (ըստ իր բնութագրի՝ «թագուհի թարգմանութեանց»-ի), մասամբ այլ գրքերի (Խորե-

¹⁹⁵ Studies in Early Armenian Lexicography the Armenian-Latin Dictionary by M. Veyssierr De La Croze (J.J.S. Weitenberg) // "Revue des études arméniennes: Nouvelle série", Tom XIX, Paris, 1985, tome XIX, pp. 373-429 (բնագրի վերատպ.՝ "Dictionarium armenico-latinum, summo studio et labore ... a Maturino Veyssiere La Croze, Pars Prima, Beroloni MDCCXII [= 1712] // Օր. cit., p. 381-419) [բնագիրը՝ Manuscript Leiden, Cod. Or. 431 A (վերատպ. pp. 381-419)]:

նացի, Շնորհալի և ուրիշներ) բառապաշարն է, որ բերվում է անհրաժեշտ հնչյունական-բառային վերլուծությամբ, բնագրային վկայակոչումներով. ըստ այդմ՝ կարելի է ասել, որ այն ամենից առաջ ունեցել է գործնական նպատակ:

Լա Կրոզի բառարանի ընդարձակ ներածությունը (*Praefatio de antiquitate et usu linguae armenicae* [= Ներածություն հնությանց և հայերեն լեզվի գործածության], էջ 382-417), բնականաբար, զբրված է լատիներեն, բանասիրական-տեքստաբանական հետաքրքրական մի աշխատանք է, որի հաջորդ երեք էջում տրվում է լատիներեն-պարսկերեն-հայերեն մի ցանկ՝ վերջին երկու լեզուներում ընդհանուր բառերի («*syllabus vocum quas armeni cum persis communis habent*»). այնուհետև բերվում է գրականության ցանկ՝ կազմված աշխատասիրողի կողմից, հաջորդ չորս էջը հատկացված է բառարանի ձեռագրի լուսապատճենին (էջ 422-425), իսկ սրան հաջորդում է բառարանի Դ, Ջ տառերի տակ բառահոդվածների մի քանի էջ (էջ 426-429)¹⁹⁶: Այդ աշխատությունից քաղում ենք տասնյակից ավելի հայերեն բառեր՝ տառադարձությամբ, հունարեն և լատիներեն թարգմանությամբ, որոնք, բնականաբար, փաստեր են տվյալ ժամանակի հնչյունական-գրադարձական փոփոխությունների վերաբերյալ:

Մեզ հետաքրքրող նյութ գտնում ենք հեղինակի ներածության մեջ, լատիներեն-պարսկերեն-հայերեն ցանկում և Դ, Ջ տառերով բառահոդվածներում, որոնց էլ անդրադառնում ենք ստորև:

1) Այստեղ մանրամասն քննության ենք առնելու բառարանի «Ներածություն» բաժնում հեղինակի տեսական վերլուծության մեջ գործածված օրինակ-բառերը, որոնք հնչյունական արտահայտության և վերջինի գրանցման տեսանկյունից երկու կարգի են՝ հին

¹⁹⁶ Մեր ձեռքին է «Հանդես»-ի էջ 373-429-ի առանձնատիպը, հետագա քննությունը կատարում ենք ըստ այդմ:

գրական հայերենի (գրաբարի) նորմային համապատասխանող և այդ նորմայից շեղվող ձևեր՝ բավականին կարևոր հայերենի պատմական հնչյունաբանության տեսանկյունից: Ըստ այդմ՝ ինչ-որ չափով կարելի է պատկերացում կազմել XVIII դ. սկզբին եվրոպական միջավայրում հայերենի հնչյունների արտասանության վերաբերյալ: Դրանք հանդես են գալիս հիմնականում բառերի, մասամբ նաև բառակապակցությունների և նախադասությունների մեջ

1. *Բառեր*. սրանց արտասանական նույնությունը կամ տարբերությունը նշում ենք ըստ հին գրական հայերենի նորմայի համեմատության՝ իբրև համընկումներ կամ շեղումներ:

ա) Հին գրական հայերենի (գրաբարի) նորմայի պահպանում: Լա Կրոզը հայերեն բառերը տալիս է ոչ միայն թարգմանաբար՝ հունարեն և լատիներեն (մեկ դեպքում՝ գերմաներեն), այլև նշում դրանց լատիներեն տառադարձությունը: Ստորև բերում ենք այն բառերը, որոնց տառադարձությունը նույնն է հայերենի հետ. *ազատ* [azat] (հուն. ἄζατη, լատ. liber) (էջ 399), *ակն* [akn] (< *ակ* [ak] («մի տեսակ քար») (էջ 389), *ահ* [ah] (լատ. terror) (էջ 391), *ապուր* [apur] (լատ. cibarius) (էջ 391), *անդ* [and] (լատ. inde) (էջ 932), *աստ* [ast] (լատ. hinc) (էջ 392), *արդար* [ardar] (լատ. iustus) (էջ 392), *արդումն* [ardumn] (սեռ. հոլ.՝ *արդման* [ardman], բր. հոլ. *արդմանե*, *յարդմանե* (լատ. verus, re vera (էջ 404), *բագին* [bagin] (լատ. altare, simulacrum) (էջ 392), *բան* [ban] (լատ. verbum) (էջ 392), *գերել* [gerel] (լատ. capere, captivum ducere) (էջ 398), *դանկ* [dank] (հուն. νόμισμα Περσικόν, լատ. nummus persicus) (էջ 393), *դպիր* [dpir] (լատ. scriba) (> *դպրութիւն* [dpruthyn] (լատ. scriptura, liber) (էջ 397-380), *դպրատան* (եզ. սեռ.) [dprastan] (լատ. locus կամ regio scribarum) (էջ 399), *ելանել* [elanel] (< *ել* [el] (լատ. ascendere, exire) (էջ 407), *կերել* [kerel] (լատ. edere) (էջ 399), *հազար* [hazar] (լատ. mille) (էջ 398), *հազարապետ* [hazarapet] (հուն. χίλιόρχος, լատ. mille hominibus praefectus)

(էջ 392), *հար* [har] (< *հարուլ* [harul]) (լատ. defigere) (էջ 391), *հրաման* [hraman] (հուն. ῥαμόν, լատ. mandatum, praeceptum) (էջ 391), *Մազդ* [mazd] (էջ 395), *մարդ* [mard] (լատ. vir) (էջ 398), *մոգ* [mog], (հնգն. մոգք [mogch]) (հուն. μάγοι, լատ. magi), մոգութիւն [moguthyn] (լատ. magia) (էջ 388), *մտանէլ* [mtanel] (< մուտ [mut]) (լատ. ingredi) (էջ 407), *ոսկի* [oski] (էջ 405), *որդի* [ordi] (լատ. filius) (էջ 389), *պահէլ* [pahel] // *պարհէլ* [parhel] (լատ. servare, custodire) (էջ 397), *պագ* [pag] (լատ. osculum) (էջ 391), *պատան* [patan] (< *պատնէլ* [patel], լատ. circumdare) (էջ 389), *պար* [par] ‘orbis, circulus’ + *ատակ* [atak] ‘que voce fundus’ > [պառատակ. հուն. παρατακηνοι, լատ. parataceni] (էջ 388), *պարս* [pars] (հուն. σφενδόνη, լատ. funda) (էջ 395), *պիսակ* [pisak] (էջ 395), *սահման* [sahman] (լատ. terminus, finis) (էջ 395), *ստան* [stan] (լատ. regio) (էջ 392), *ստանալ* [stanal] (լատ. colere, possidere) (էջ 392), *սուր* [sur] (լատ. gladius) (էջ 393), *վահ* [vah, կամ ouah] (էջ 394):

բ) Հին գրական հայերենի (գրաբարի) նորմայից շեղում: Այս խմբում բերում ենք այն բառերը, որոնց տառադարձությունը նույնն չէ հայերենի հետ: նկատելի են զգալի թվով շեղումներ. *ածէլ* [adzel կամ agel] (հուն. ἄγειν, լատ. agere, ducere) (էջ 389-390), *այծ* [aidz] (հուն. αἶξ, լատ. capra) (էջ 390), *արատ* [arat] (հուն. ἄγαθος, լատ. bonus, pollens) (էջ 391, 392), *արատարան* [arataban] (հուն. ἐυλόγιος, լատ. bene loquens) (էջ 392), *Աստուած* [astovadz] // *Աստրուած* [?] (հուն. Ἄστρον) (էջ 390)¹⁹⁷, *արեւ ժանտը* [arevzantch] (ժանտ - zant), հուն. ἀριζαντούς, լատ. arizantos) (էջ 388), *արծաթ* [ardzath] (լատ.

¹⁹⁷ Հմմտ. «... litteram δ fere olim ut γάμμα fuisse pronuntiatam evincunt. Tales sunt. *ածէլ* - adzel (ἄγειν), *այծ* - ajdz (αἶξ) ‘capra’, *արծաթ* - ardzath ‘argentum’, *ծէր* - dzer (γέρων) ‘senex’, *ծիր* - dzir (γῦρος) ‘gyrus’, *ծուր* - dzunr (γόνυ) ‘genu’, *մեծ* – medz (μέγας) ‘magnus’», *Աստրուած* ձևի համար չունի տառադարձում (տե՛ս ն. ս., էջ 390):

argentum) (էջ 390), *արծուի* [ardzovi կամ argzovi] (լատ. aquila) (էջ 392), *արձան* [arxan] (լատ. columna, cippus) (էջ 405), *արջ* [arq] (հուն. ἄρκτος, կամ ἄρκος, լատ. ursa) (էջ 393), *բազմակէտ* [bazmavep] (էջ 403), *բաժին* [badsġin] // *բարժին* [bardsġin] (լատ. pars portio) (էջ 396-397), *բարբառ* [barbar] (լատ. dialectum) (էջ 385), *բարձր* [bardzr] (լատ. excelsus, sublimis) (էջ 392, 393, 395), *բարձունք անասն* [bardzumarat] (լատ. magnitudine pollens) (էջ 392), *բժիշկ* [bsġishk] (լատ. medicus) (էջ 399), *բիբ էրի* // *բիբար* («տաքիտ») [bib eri, bibar] («bacca calida») (< *բիբ* [bib] և *այրել* [ayrel], լատ. urere) (հուն. πέπερι, լատ. piper) (էջ 395)¹⁹⁸, *բիւրօք* [byroch] (< բիւր [byr]) (լատ. decem millia) (էջ 406), *բոյս* [buïs] (սեւ. հռլ. բուսոյ - [busoi]) (էջ 387), *բովք* [bóch] (էջ 387), *բորբոքել* [burbuchel] (էջ 385), *բուծանել* [budzanel] (լատ. pascere) (էջ 388), *գանձ* [ganz] (հուն. γάζα, լատ. thesaurus) (էջ 394), *գոյն* [goin] (> *գունի* [guni]) (լատ. color) (էջ 397), *դալմատերէն* [dalmateren] (լատ. lingua latina) (էջ 409), *դալեակ* [daieak] (հուն. δηιόκης, լատ. deioces) (էջ 389), *դաշտան* [dashtan] (< *դաշտ* [dascht] լատ. campus, planities (հուն. ἀποκαθιμένη, լատ. menstruata) (էջ 398), *դարայոյզ* [daraioiz] (հուն. ἐρξείης, լատ. coercitor) (էջ 393), *դարանայոյզ* [daranaioiz] (հուն. ἔνεδρα «դարան», լատ. insidiae) (էջ 393), *դէւ* [dev] (հուն. δαιμον, լատ. demon, genius) (էջ 394), *դընապան* [dernapan] (լատ. janitor) (էջ 398), *թագ* [thag] (լատ. corona) (> *թագաւոր* [thagawor] (լատ. rex) (էջ 398), *խանաւ* [chanau] (< *խան* [xan] (լատ. achanwrum) (էջ 406), *խոյ* [choi] (հուն. τραγός, լատ. hircus) (էջ 398), *խոյր* [choir] (հուն. κυρβασία, ὀρθη τιάρα, լատ. cyrbasia, tiara rectar) (էջ 393), *խորհուրդ* [churhurd] (էջ 383), *ծէր* [dzer] (հուն. γέρων, լատ. senex) (էջ 390), *ծիր* [dzir] (հուն. γῦρος, լատ. gyrus) (էջ 390), *ծունր* [dzunr] (հուն. γόνυ, լատ. genu) (էջ

¹⁹⁸ Ունի հղում Ռիվոլյաի բառարանին:

390), *կալ* [cal] (լատ. habere, tenere) (էջ 393), *կալասուր* [calasur] (հուն. μαχαίροφόρος, լատ. gladium tenens) (էջ 392-393), *կայսր* [caiser] (գերմ. Kaiser) (էջ 414), *կապել* [kapel] (լատ. vincere, legare) (էջ 393), *կապերթ* // *կապերտ* [kaperth, kapert] (հուն. περσικός χιτων, լատ. pannus) (էջ 393), *ձի* [dzi կամ gi] (լատ. equus) (էջ 389), *մայր* [mair] (sing. մարի [mari] «մայր» (էջ 387), *մար* [mar], *մարք* [march] (հոգն. ք.՝ «մարեր», «մեղացիներ») (էջ 387), *մեծ* [medz] (հուն. μέγας, լատ. magnus) (էջ 390, 394), *մթեր* [methet] (էջ 394), *մի տեր* [mi ter] (լատ. unus dominus) (էջ 394), *Մեհր* [mehr] (հուն. Μίθρα // Μίτρας, լատ. Mithra) (էջ 394), *մրջին* [mertschin, կամ merqin] (հուն. μύρμηξ, լատ. formica (էջ 393), *յարդաման* [jardmane], կամ *յարդաման* [jardamane] (< *արդ* [ard], լատ. verus, կամ vere, որից՝ *արդեամբ* [ardeamb], ուղղ. հոլ.՝ *արդին* [ardyn], լատ. certus, verus) (էջ 404), *յաւիտեան* [javitean] (էջ 398), *նավթ* [navth] (էջ 394), *ներքին* [nerchin] (< *ի ներքուստ* [i nerchust]) (լատ. interior, inferior) (էջ 407), *ներքինի* [nerchini] (լատ. interior, eunuchus) (էջ 392), *նուեր* [nover] (էջ 383), *շար* [schar] (լատ. series, ordo) (էջ 395), *շրջիչ* [schertschix] (լատ. eversor, perturbator) (էջ 392), *շուն* [schun] (լատ. canis) (էջ 396), *շուշան* [schuschan] (հուն. Σοῦσα, լատ. lilia) (էջ 396), *որմզդական* [ormezdakan] (էջ 394), *ջարձանա* [xarxana] (< *ջ-արձանա*). *արձանալ* [arxanal] (լատ. mittere). *արձակել* [arxakel] (լատ. dimittere), *արձանանալ* [arxananal] (< *արձան* [arxan] (լատ. columna, cippus) (էջ 405), *պարտեզ* [pardez] (հուն. παράδεισος, լատ. paradus) (էջ 395), *Պարսիք* [Parsich] (էջ 395), *ջանալ* [tschanal, կամ qanal] (լատ. conari) (էջ 393), *ջերմ* [tscherm, կամ qerm] (լատ. calor, calidus) (էջ 398), *ջորի* [tschori կամ qori] (լատ. mulum) (էջ 393), *ջուր* [tschur] (էջ 414), *սիկլ* [sikl] (լատ. siclus) (էջ 396), *սմոր* [simor]¹⁹⁹, *ստրուկ*

¹⁹⁹ Ունի հղում Ռիվոլյայի բառարանին:

[struch] (էջ 388), *ստրուկացիք* [struchatzich] (հուն. στρούχατες, լատ. strucates) (էջ 388), *սրբութիւն* [serbuthyn] (էջ 383), *սուր ունիչ* [surunix] (լատ. ensem habens, ensem tenens) (էջ 396), *տաճիկք* [taġik] (էջ 414), *տաճկաստան* [taġkastan] (լատ. id est Turcia) (էջ 414), *տապաստ* [tapast] (լատ. humi stratus) (էջ 396), *տէգ* [téġ] (> *տիգի* [tigi]) (լատ. hasta) (էջ 396), *տէր* [ter] (լատ. dominus) (էջ 394), *տիգ* [tig] կամ *տէգ երան* [tigeran] (լատ. hasta felix). Իմա՛ *երան* «երջանիկ» (լատ. felix) (էջ 397)²⁰⁰, *Տիգրանակերտ* [Tigranacert] (հուն. Τυγράνου πόλις, լատ. urbs Tigranis) (էջ 397), *ցյունսու* [tz Iaunav] (լատ. ad Graecos) (էջ 406-407), *ուղէցի* [ouletzi] (< ուղել [oulel]) (լատ. mittetur) (էջ 406), *փառ* [phar] (լատ. gloria) (էջ 389), *փառական* [pharakan] (հուն. ἔσδοξος, լատ. gloriosus) (էջ 395), *փառաորդի* [pharordi] (հուն. φραότης) (էջ 389), *քրիստ* [chryso] (լատ. aurum) (էջ 406):

Հնչունական ի՞նչ շեղումներ ենք նկատում այս երկրորդ ցանկի մեջ (իբրև հնչունական-տառադարձական կազմություն). դրանք վերաբերում են, բնականաբար, բաղաձայններին, ձայնավորներին և երկբարբառներին («երկհնչուններին»):

1) Բաղաձայնական. պայթական և կիսաշփական բաղաձայններից միայն պայթական ձայնեղներն են, որ ցանկում չունեն շեղումնային դրսևորում, մնացածը փոքրիշատե հանդես է գալիս մեկ կամ մեկից ավելի զուգահնչական դրսևորմամբ: Ընդ որում նկատելի է, ավանդական ձևակերպմամբ, այս կամ այն կարգի «տեղաշարժ» (իմա՛ գերմ. Lautverschibung): Իսկ պայթական շնչեղների գրադարձությունը ունի մի այնպիսի անմիակերպություն, որ որակում ենք որպես շեղում պայմանականորեն ընդունելի որևէ վիճակից:

²⁰⁰ Ունի հղում Շրյոդերի աշխատությանը (էջ 18):

a) Պայթականներ և կիսաշփականներ.

ւ - *ք*. *բազմավէլ* [bazmavep] (էջ 403), *կապել* [kapel] (լատ. vincire, legare) (էջ 393), *կապերթ* // *կապերտ* [kaperth, kapert] (հուն. περσικός χιτων, լատ. pannus) (էջ 393), *պարտեզ* [pardez] (հուն. παράδεισος, լատ. paradisus) (էջ 395), *Պարսիք* [Parsich] (էջ 395), *տապաստ* [tapast] (լատ. humi stratus) (էջ 396),

փ - *փ*. *փարական* [pharakan] (հուն. ἔυδοξος, լատ. gloriosus) (էջ 395), *փարորդի* [pharordi] (հուն. φραότης) (էջ 389),

տ - *տ*, *դ*. *արատ* [arat] (հուն. ἄγαθος, լատ. bonus, pollens) (էջ 391, 392), *արատարան* [arataban] (հուն. ἐυλόγιος, լատ. bene loquens) (էջ 392), *յաւիտեան* [javitean] (էջ 398), *ներքուստ* [nerchin] (< *ի ներքուստ* [i nerchust]) (լատ. interior, inferior) (էջ 407), *պարտեզ* [pardez] (հուն. παράδεισος, լատ. paradisus) (էջ 395) և այլն,

թ - *տ*. *արծաթ* [ardzath] (լատ. argentum) (էջ 390), *թագ* [thag] (լատ. corona) (> *թագաւոր* [thagawor] (լատ. rex) (էջ 398), *կապերթ* // *կապերտ* [kaperth, kapert] (հուն. περσικός χιτων, լատ. pannus) (էջ 393.), *մթեր* [methet] (էջ 394), *նաւթ* [navth] (էջ 394), *սրբութիւն* [serbuthyn] (էջ 383),

կ - *կ*, *չ*. *բժիշկ* [bsġishk] (լատ. medicus) (էջ 399), *դայեակ* [daieak] (հուն. δηίοκης, լատ. deioces) (էջ 389), *կալ* [cal] (լատ. habere, tenere) (էջ 393), *կալասուր* [calasur] (հուն. μαχαιροφόρος, լատ. gladium tenens) (էջ 392-393), *կայսր* [caiser] (գերմ. Kaiser) (էջ 414), *կապերթ* // *կապերտ* [kaperth, kapert] (հուն. περσικός χιτων, լատ. pannus) (էջ 393), *ստրուկ* [struch] (էջ 388), *ստրուկացիք* [struchatzich] (հուն. στρούχαιτες, լատ. strucates) (էջ 388), *Տիգրանակերտ* [Tigranacert] (հուն. Τιγράνου πόλις, լատ. urbs Tigranis) (էջ 397), *փարական* [pharakan] (հուն. ἔυδοξος, լատ. gloriosus) (էջ 395) և այլն,

p - ch. *բիւրօք* [byroch] (< բիւր [byr]) (լատ. decem millia) (էջ 406), *բովք* [bóch] (էջ 387), *բորբոքել* [burbuchel] (էջ 385), *արեւ ժանտք* [arev zantch] (ժանտ - zant), հուն. ἀρισσαντούς, լատ. arizantos) (էջ 388), *ներքինի* [nerchini] (լատ. ‘interior’, ‘eunuchus’) (էջ 392), *ներքուստ* [nerchin] (< *ի ներքուստ* [i nerchust]) (լատ. interior, inferior) (էջ 407), *Պարսիք* [Parsich] (էջ 395) և այլն,

ձ - x, dz (g), z. *արձան* [arxan] (լատ. columna, cippus) (էջ 405), *բարձր* [bardzr] (լատ. excelsus, sublimis) (էջ 392, 393, 395), *բարձու՛ արատ* [bardzum arat] (լատ. magnitudine pollens) (էջ 392), *գանձ* [ganz] (հուն. γάζα, լատ. thesaurus) (էջ 394), *ձի* [dzi կամ gi] (լատ. equus) (էջ 389), *չարձանա* [xarxana] (<*չ-արձանա*). *արձանալ* [arxanal] (լատ. mittere). *արձակել* [arxakel] (լատ. dimittere), *արձանանալ* [arxananal] (< *արձան* [arxan] (լատ. columna, cippus) (էջ 405) և այլն,

ծ - dz, g. *աձել* [adzel կամ agel] (հուն. ἄγεινε, լատ. agere, ducere) (էջ 389-390), *այծ* [aidz] (հուն. αἶξ, լատ. capra) (էջ 390), *Աստուած* // *Աստրուած* [astovadz] (հուն. ἄστρον) (էջ 390), *բուձանել* [budzanel] (լատ. pascere) (էջ 388), *արծաթ* [ardzath] (լատ. argentum) (էջ 390), *արծուի* [ardzovi կամ argzovi] (լատ. aquila) (էջ 392) և այլն,

ց - tz, *ց՛յունաւ* [tz Iaunav] (լատ. ad Graecos) (էջ 406-407), *ուղեղի* [ouletzi] (< *ուղել* [oulel]) (լատ. mittetur) (էջ 406),

ջ - q, tsch, tsch. *արջ* [arq] (հուն. ἄρκτος, կամ ἄρκος, լատ. ursa) (էջ 393), *մրջին* [mertschin, կամ merqin] (հուն. μύρμηξ, լատ. formica) (էջ 393), *ջրջիչ* [schertschix] (լատ. eversor, perturbator) (էջ 392), *ջանալ* [tschanal, կամ qanal] (լատ. conari) (էջ 393), *ջերմ* [tscherm, կամ qerm] (լատ. calor, calidus) (էջ 398), *ջորի* [tschori կամ qori] (լատ. mulum) (էջ 393), *ջուր* [tschur] (էջ 414),

ճ - ğ. *տաճիկք* [taĝik] (էջ 414), *տաճկաստան* [taĝkastan] (լատ. id est Turcia) (էջ 414),

չ - x. *չարձանա* [xarxana] (< *չ-արձանա*). *արձանալ* [arxanal] (լատ. mittere). *արձակել* [arxakel] (լատ. dimittere), *արձանանալ* [arxananal] (< *արձան* [arxan] (լատ. columna, cippus) (էջ 405), *սուր ունիչ* [sur unix] (լատ. ensem habens, ensem tenens) (էջ 396) և այլն:

բ) Շփականներ. նման շեղումներ չենք գտնում սուլականների դեպքում, մյուսներն ունեն արտասանության, այլև տառադարձման անմիօրինակություն:

ժ - z, dsġ, sġ. *արև ժանտք* [arev zantch] (ժանտ - zant), հուն. ἀριζαντούς, լատ. arizantos) (էջ 388), *բաժին* [badsġin] // *բարժին* [bardsġin] (լատ. pars portio) (էջ 396-397), *բժիշկ* [bsġishk] (լատ. medicus) (էջ 399),

շ - sch. *շար* schar] (լատ. series, ordo) (էջ 395), *շրջիչ* [schertschix] (լատ. eversor, perturbator) (էջ 392), *շուն* [schun] (լատ. canis) (էջ 396), *շուշան* [schuschān] (հուն. Σοῦσα, լատ. lilia) (էջ 396),

դ - l. *դաղմատերէն* [dalmateren] (լատ. lingua latina) (էջ 409), *սիկլ* [sikl] (լատ. siclus) (էջ 396),

խ - ch, *խանալ* [chanau] (< խան [xan] (լատ. achanwrum) (էջ 406), *խոյ* [choi] (հուն. τραγός, լատ. hircus) (էջ 398), *խոր* [choir] (հուն. κυρβάσια, όρθη τιάρα, լատ. cyrbasia, tiara rectap) (էջ 393), *խորհուրդ* [churhurd] (էջ 383),

վ - v, ó. *բազմավէպ* [bazmavep] (էջ 403), *բուք* [bóch] (էջ 387):

գ) Չայնորդներ. այստեղ շեղումներ չենք տեսնում *ւ*, *ն*, *լ* գրերի դեպքում, մյուսներն ունեն հետևյալ տեսքը: Հեղինակը նույն տառադարձությունն ունի հայ. *ր* և *ռ* գրերի համար, առանձնապես երկվություն ունեն մյուսները, իսկ հիշյալ լծորդներից առաջինի գործածությունը ավելին է, քան երկրորդինը (մեկ-երկու դեպքում),

ր/ռ - r. *արծաթ* [ardzath] (լատ. argentum) (էջ 390), *արծուի* [ardzovi կամ argzovi] (լատ. aquila) (էջ 392), *արձան* [arxan] (լատ. columna, cippus) (էջ 405), *արջ* [arq] (հուն. ἄρκτος, կամ ἄρκος, լատ.

ursa) (էջ 393), *բարբառ* [barbar] (լատ. dialectum) (էջ 385), *բարձր* [bardzr] (լատ. excelsus, sublimis) (էջ 392, 393, 395), *բարձունք արատ* [bardzumarat] (լատ. magnitudine pollens) (էջ 392), *բիբ եռի // բիբար* («սաքրէդ») [bib eri, bibar] («bacca calida») (< *բիբ* [bib] և *այրել* [ayrel], լատ. urere) (հուն. πέπερι, լատ. piper) (էջ 395)²⁰¹, *բիւրօք* [byroch] (< բիւր [byr]) (լատ. decem millia) (էջ 406) և այլն,

յ - ի. յ. *խոյ* [choi] (հուն. τρογός, լատ. hircus) (էջ 398), *յարդամանէ* [jardmane], կամ *յարդամանէ* [jardamane] (< *արդ* [ard], լատ. verus, կամ vere, որից՝ *արդեամբ* [ardeamb], ուղղ. հոլ. *արդին* [ardyn], լատ. certus, verus) (էջ 404), *յաւիտեան* [javitean] (էջ 398), *ցճունաւ* [tz launav] (լատ. ad Graecos) (էջ 406-407),

ւ - v. u. *խանաւ* [chanau] (եգ. գործ. հոլ.) (< *խան* [xan] (լատ. achanurum) (էջ 406), *նաւթ* [navth] (էջ 394), *ցճունաւ* [tz launav] (լատ. ad Graecos) (էջ 406-407):

2) Չայնավորական. նկատելի են շեղումներ ստորև բերվող դեպքերում.

(է) - e. é. *բազմավէպ* [bazmavep] (էջ 403), *դադմատերէն* [dalmateren] (լատ. lingua latina) (էջ 409), *պարտեզ* [pardez] (հուն. παράδεισος, լատ. paradusus) (էջ 395), *տէր* [ter] (լատ. dominus) (էջ 394), *տէգ* [téq] (> *տիգի* [tigi]) (լատ. hasta) (էջ 396), *յարդամանէ* [jardmane], կամ *յարդամանէ* [jardamane] (< *արդ* [ard], լատ. verus, կամ vere, որից՝ *արդեամբ* [ardeamb], ուղղ. հոլ. *արդին* [ardyn], լատ. certus, verus) (էջ 404),

ը (նաև՝ գաղտնավանկ) - e. *սրբուրթին* [serbuthyn] (էջ 383), *սմոր* [semor] (էջ 396),

²⁰¹ Ունի հղում Ռիվոլայի բառարանին:

n - u, o. բորբոքել [burbuchel] (էջ 385), *խորհուրդ* [churhurd] (էջ 383), *որմզդական* [ormezdakan] (էջ 394), *ջորի* [tschori կամ qori] (լատ. *mulum*) (էջ 393), *սմոր* [simor]²⁰²,

o (< աւ) - օ. բիրօք [byroch] (< բիրաւք [byr]) (լատ. *decem millia*) (էջ 406),

3) Երկրաբառային (նաև՝ երկրաբառակերպ). նկատելի է երկրաբառի կա՛մ պահպանումի, կա՛մ պարզեցում.

այ - ai. այծ [aidz] (հուն. *αἴξ*, լատ. *capra*) (էջ 390), *դայեակ* [daieak] (հուն. *δειόςκος*, լատ. *deioces*) (էջ 389),

ել - ev. արել ժանտք [arevzantch] (ժանտ - zant), հուն. *ἀρισαντούς*, լատ. *arizantos*) (էջ 388),

ոյ - uī, oi. բոյս [buīs] (սեռ. հոլ.՝ բուսոյ - [busoi] (էջ 387). *գոյն* [goin] (> *գունի* [guni]) (լատ. *color*) (էջ 397), *դարայոյզ* [daraiioiz] (հուն. *ἐρξέτης*, լատ. *coercitor*) (էջ 393), *դարանայոյզ* [daranaioiz] (հուն. *ἐνεδρα «դարան»*, լատ. *insidiae*) (էջ 393), *խոր* [choir] (հուն. *κυρβασία, ὄρθη τιάρα*, լատ. *cyrbasia, tiara rectap*) (էջ 393),

ով - ó. բովք [bóch] (էջ 387),

ու (ըւ) - ov. Աստուած // Աստրուած [astovadz] (հուն. *Ἄστρον*) (էջ 390), *նուէր* [nover] (էջ 383), *արծուի* [ardzovi կամ argzovi] (լատ. *aquila*) (էջ 392),

իւ - y. i. բիրօք [byroch] (< բիր [byr]) (լատ. *decem millia*) (էջ 406), *մրջիւն* [mertschin, կամ merqin] (հուն. *μορμηξ*, լատ. *formica*) (էջ 393), *սրբութիւն* [serbuthyn] (էջ 383), *քրիւն* [chryso] (լատ. *aurum*) (էջ 406): *քրիւն* [chryso] (լատ. *aurum*) (էջ 406): *սրբութիւն* [serbuthyn] (էջ 383),

նի - ov. արծուի [ardzovi կամ argzovi] (լատ. *aquila*) (էջ 392):

²⁰² Ունի հղում Ռիվոլայի բառարանին:

2. *Բառակապակցություններ*. քննության առարկա հատվածում հանդիպում են հետևյալ օրինակները. *անապատ տաճկաստանի* [anapat taḡkastani] (լատ. desertum, կամ phoeniciae, կամ Arabiae) (էջ 414), *բժիշկ նամակ* [bsḡishk namak] (լատ. liber medicus) (էջ 399), *հազար սունք* [hazar sunch] (լատ. mille columnae) (էջ 399), *յաւիտեան խրատ* [javitean chratt] (էջ 398), *ջուր աղու սսփար* (tschur acu asphar) (էջ 414), *Պետրոս Չուղայեցուց* (Petrus Tschugaiensis) (էջ 409), *սուր ունիչ* (surunich) (էջ 396) *Փիլիպպոս ազգէ Փրանկս* (լատ. Philippum a genere Francorum) (էջ 414):

3. *Նախադասություններ*. հանդիպում է մի քանի օրինակ. *Յարդմանէ չարձանա պիսսոնա Մատրա* [jardamane xarxana pissona satra] (լատ. revera non mittit aurum rex magnus) (էջ 404), *Ուղեցի քրիստ իսնաւ քիւրօք ց'ունաւ* [ouletzi chryso chanau byroch tz iaunav] (լատ. Mittetur aurum achanurum myriadibus ad graecus) (էջ 406): *Եկն արթմանէ* (լատ. venit Arthame) (էջ 414), *այն ինչ վարդագոյն ծայրակարմիր արեգակն ընդ երկիր ծաւալիլ կամեր* (Tunc rosaceo puniceoque radio sol in terras erumpere cogitabat) (էջ 415)²⁰³:

9. Հակոբ Վիլլոտի բառգրքի նյութը: Հայ գրավոր մշակույթի պատմության մեջ, անկախ արտաքին հանգամանքներին վերաբերող տարրորոշումից, Հակոբ Վիլլոտը (1656-1743) ունի իր ներդրումը հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման բնագավառում, հեղինակ է հայերենի քերականության և լատիներենին զուգադիր հայերեն բառարանի: Նրա «Բառգիրք հայկական լեզուի» [= Dictio-

²⁰³ Սույն հատվածում Լա Կրոզը ունի բառերի ոչ ճիշտ՝ «կեղծ» ստուգաբանություններ, որոնց չենք անդրադառնում մեր այս թեմային չառնչվելու պատճառով. հմմտ. *բարձում առատ* [bardzumarat] (լատ. magnitudine pollens) (էջ 392):

narium novum latino-armenium. Roma, MDCCXIV (=1714), ԻԸ + 772 p.] լույս է տեսել ավելի ուշ՝ առաջինից գրեթե մեկ դար հետո²⁰⁴:

Նրանում հայերենի այբուբենը բերվում է հետևյալ տառադարձական նշանակմամբ. ա - a, բ - p, գ - k, դ - t, ե - ye, զ - z, է - è, ը - ê, թ - th, ժ - g, ի - i, լ - l, խ - h, ծ - dz, կ - gh, հ - h, ձ - tz, ղ - gh, ճ - dg, մ - m, յ - i, ն - n, շ - ch, ո - ouè, չ - tch, պ - b, ջ - dch, ռ - r (rr), ս - s, վ - u, տ - d, ր - r, ց - ts, ու - [-], լ - y, փ - 'p, ք - 'k, եւ - yew, օ - o, ֆ - ph:

Այս ցանկի վերաբերյալ կարելի է նշել հետևյալը:

ա) Չայնավորներից ա-ն, ի-ն, (լատինագիր) օ-ն պարզապես են (a, i, o), է-ն և շ-ն կրում են տարբերիչ (դիակրիտիկ) նշան (è, ê), այսինքն՝ ունեն ոչ հստակ, այլ երանգային ձայնավորում, հեռացած, այսպես կոչված, «մաքուր» արտաբերությունից, իսկ է-ն երկագիր է (ye), ռ-ն արտահայտված է երեք գրով (ouè). ու-ն բացառվում է՝ որպես այդպիսին, այսինքն՝ համարվում է երկգրույթ-երկբարբառ (դիգրաֆ-դիֆտոնգ):

բ) Վերը բերվածներից է-ն (ye), ռ-ն (ouè), հավանաբար, երկհնչյուն (դիֆտոնգ) և եռահնչյուն (տրիֆտոնգ) արտաբերություն են, հետագայում առաջինը պահպանվում է, իսկ երկրորդը վերածվում է հնչակապակցության (վօ). այբբենացանկն ունի նաև էւ (yew), որի երկրորդ բաղադրիչը (ւ «վյուն, հյուն») արտահայտված է այլ կերպ (հմմտ. yew, ւ=ou):

գ) Հպական և հպաշփական բաղաձայնների համակարգը ներկայանում է, ի համեմատություն հին գրական հայերենի նորմայի, ոչ այնքան միակերպ. ըստ այդմ նոր հայերենի արևմտահայ արտասանական տարբերությունը նկատվում է դեռևս ավելի վաղ,

²⁰⁴ Ջահուկյանը անդրադառնում է սույն բառարանի միայն «քերականական տեղեկություններին»: Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Գրաբարի քերականության պատմություն (XVII-XIX դդ.), Ե., 1974, էջ 207-209:

քան որ լեզվական այդ տարբերակների առաջացման ժամանակ է համարվում (Հ. Աճառյան, Գ. Ջահուկյան և ուրիշներ) XIX դ. կեսերին (1840-50-ական թթ.), հետագա ուսումնասիրությունները իրավացիորեն դնում են ավելի վաղ (1810-20-ական թթ.)²⁰⁵:

ե) Արտասանական այլ դժվարություն հարուցող հնչյունների գրադարձության դեպքեր. հմմտ. հայ. ծ, կ, ձ, դ, ճ, շ, ո, ջ, ջ գրերի դեպքում:

զ) Լատինագիր տառադարձման դժվարություններ. սա այն է, ինչ կարելի է սահմանել իբրև մեսրոպյան պարզագիր գրանշանների նուդեկցող տարբերիչ (դիակրիտիկ) նշանների հավելում. հմմտ. հայ. *է, է*, նույնիսկ *յի, ը* գրերի դեպքում:

10. ՄՄՁ № 7560-ի («Բառգիրք հայերեն-լատիներեն») նյութը:

Այստեղ առանձին քննության առարկա է Մատենադարանի հիշյալ ձեռագրում հայերեն-լատիներեն բառացանկը (ընդարձակ վերնագիրն է՝ «Հայերեն-լատիներեն այբբենական և քերականական բառգիրք». 1756 թ., էջ 41ա-64բ)²⁰⁶:

Այն, կարելի է ասել, հայերեն-լատիներեն տերմինացանկ է, աչքի է ընկնում ոչ միայն իր բնույթով (բովանդակությամբ), այլև հայերեն և լատիներեն նյութի ընդգրկման յուրահատկություններով: Տերմինացանկը, իբրև պատահիկ, խիստ ուշագրավ է հայ բառարանագրության պատմության մեջ, յուրովի լրացնում է մեզա-

²⁰⁵ Հմմտ. Վ.Լ. Աճառյան, Գրական արևմտահայերենի ձևավորումը, Ե., 1971:

²⁰⁶ Այդ հատվածական ցանկին անդրադարձել ենք մեր աշխատանքներից մեկում՝ բավականին սեղմ վերլուծությամբ: Տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Հայերեն-լատիներեն ձեռագիր բառարան // «Գուլտուր-լուսավորական աշխատանք» (ամսագիր), 1987, 8, էջ 15-17:

նում ստեղծված երկլեզվյան բառարանների թիվը, հետաքրքիր է առհասարակ հայ գրքի պատմության առումով:

Տերմինացանկի մասին մատենագիտական աղբյուրների ընձեռած տվյալները, ցավոք, բավականին սուղ են: Հայտնի է, որ այն կազմված է մի անհայտ հեղինակի ձեռքով: Ձեռագիրն ավանդված է 1756 թվականից, գրված է եղել Մադրասում, հնդկահայ մշակութային միջավայրում: Հիշյալ ձեռագրում այն անմիջաբար հաջորդում է բառարանային մեկ այլ աշխատանքի: Վերջինս, որքանով մեզ հաջողվել է պարզել, այլ բան չէ, քան XVII դ. նշանավոր մշակութային գործիչ, միարարական շարժման մասնակից, գիտնական Կդեմես Գալանոսի հայտնի քերականության տերմինների մի ձեռագիր տարբերակը:

Սկզբից նեթ անհրաժեշտ է նշել, որ սույն հայերեն-լատիներեն ձեռագիր տերմինացանկի մասին հայ բառարանագրության պատմությանը նվիրված ուսումնասիրություններում ոչինչ չկա, ոչինչ չենք գտնում նաև հայերենին վերաբերող այլ աշխատանքներում: Դա թերևս բացատրվում է միայն նրանով, որ դեռևս չունենք հայ բառարանագրության պատմության ամբողջական ուսումնասիրություն:

Ասվեց, որ հայերեն-լատիներեն տերմինացանկը կարևոր է առաջին հերթին իր բնույթով: Եվ երբ մանրամասն քննում ենք նրանում պարունակվող տերմինները, դրանց զուգադրումը լատիներենին, բառերի այբբենական-իմբային հաջորդությունը, թեմատիկ առանձնացումը և այլն, ապա նկատելի է դառնում, որ գործունենք մի հետաքրքրական բառարանային միավորի հետ: Ճիշտ է, այն բոլոր դեպքերում արժևորվում է տերմինարանի սահմաններում, սակայն անժխտելի է, որ խաղացել է մի կարևոր դեր հայերենի և լատիներենի զուգադրական գործնական իմացության,

ավելի ստույգ՝ հնդկահայ միջավայրում լատիներենի ուսուցման գործում:

Տերմինացանկը կազմված պիտի լինի լատինատիպ ինչ-որ քերականության նյութի հիման վրա, որովհետև նրանում տերմինները, իբրև բառահոդվածներ, բերվում են ոչ թե պարզ այբբենական հաջորդումով, այլ թեմատիկ կարգով, այսինքն՝ լիովին համապատասխանում են քերականությունների բաժիններին և գլուխներին, նույնիսկ նրանց վերնագրերին, այլև դրանցում առհասարակ շարադրվող քերականական երևույթների հերթականությանը: Այն, ըստ էության, երկլեզվյան բառարան է՝ հայերեն և լատիներեն քերականական տերմինների զուգադրումով: Այս հանգամանքը կարևոր է առանձնապես հայտնի քերականությունների հետ նրա ենթադրելի առնչությունները պարզելու տեսանկյունից:

Ըստ այդմ անհրաժեշտ համարեցինք մեր ձեռքի տակ եղած տերմինացանկը համեմատել լատինատիպ քերականությունների նյութերի հետ, ընդ սմին՝ հարկ էր ընդգրկել բոլոր կարգի լատինատիպ քերականական աշխատությունները՝ մտածելով, որ մեզ հետաքրքրող նյութերը կարող են քաղված լինել այնպիսի մի քերականությունից, որը գրված է եղել մշակութային այլ կենտրոնում, իսկ այս ձեռագիր տերմինացանկը կազմված լինի մեկ այլ միջավայրում:

Մեր որոնումների արդյունքում պարզվեց, որ սույն տերմինացանկը, ինչպես արդեն ասվեց, ստեղծված է Կղ. Գալանոսի հայտնի «Քերական և տրամաբանական ներածութիւն առ յիմաստաբանութիւն շահելոյ» [= *Grammaticae et logicae institutiones linguae litteralis armeniacae*] (Հոռոմ, 1645) գրքի քերականական նյութի հիման վրա:

Իսկ Գալանոսի նիշյալ երկը այլ բան չէ, քան լատիներենի զուգադրությամբ շարադրված հայերենի քերականություն: Քննութ-

յունից պարզվում է, որ ամեն դեպքում գործ ունենք լեզվական նյութի դասակարգման և մեկնաբանման նույն սկզբունքների և չափանիշների հետ: Տերմինացանկը կազմված է թեմատիկ նույն սկզբունքով, ինչ Կդ. Գալանոսի հիշյալ քերականությունը: Ընդ որում տերմինների բառարանագրական հաջորդականությունը, ինչպես ենթադրում էինք, ճիշտ և ճիշտ համապատասխանում է հիշյալ քերականության բաժինների, գլուխների և նրանցում մուծված լեզվական երևույթների նկարագրության հերթականությանը: Ուստի և հարցի բանասիրական-բնագրագիտական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մինչև այժմ անհայտ մնացած տերմինացանկի հիմքը եղել է Կդ. Գալանոսի քերականությունը: Մեր կարծիքը հաստատվում է ոչ միայն բանասիրական-բնագրագիտական տրվյալներով, այլև լեզվական նյութի բառագիտական-բառարանագիտական քննությամբ: Լեզվական փաստերը ցույց են տալիս, որ, օրինակ, տերմինացանկ կազմողը որոշ դեպքերում դժվարացել է գտնել հայերեն տվյալ տերմինի համարժեքը լատիներեն բնագրում, որի պատճառով ստիպված է եղել համապատասխան տեղերում բաց թողնել, և հետևանքը եղել է այն, որ նրանում հայերեն որոշ տերմիններ չունեն իրենց զուգադիրը. օր.՝ *անգայտ, արտաբերություն, մեծասար, շարամանություն* և այլն:

Լեզվական փաստերից բերենք ևս երկուսը;

Գալանոսն առանձնացնում է ածանցական անունների 16 տեսակ, ըստ որում թվարկման մեջ բաց է թողնված դրանցից *պակասական* տեսակը, որը չի խանգարում, որպեսզի հետագա շարադրանքում այդ տեսակը մեկնաբանվի կամ բնութագրվի: Իսկ տերմինացանկի կազմողն իր աշխատանքում դրանք բերում է ոչ միայն նույն հերթականությամբ, այլև իր հերթին վերականգնում է *պակասական* տեսակը: Դա նշանակում է, որ կազմողը կռահել է նման բնութագրումը՝ իբրև սոսկ տպագրական վրիպակ, և դա ևս

հավաստում է ձեռագիր տերմինացանկի ուղղակի առնչությունը Կղ. Գալանոսի քերականությանը:

Մյուս փաստն այն է, որ Կղ. Գալանոսի դասակարգած նախդիրները և նրանց վերաբերող օրինակները նույն հերթականությամբ և գրեթե նույնպիսի գրությամբ մեկ առ մեկ նշվում են սույն տերմինացանկում: Ըստ որում դրանց լատիներեն համարժեքներն էլ երկու դեպքում ամբողջովին համընկնում են:

Ինչպես հայտնի է, Կղ. Գալանոսի հիշյալ աշխատությունը, գրված լինելով ժամանակի գիտության մակարդակով, մի նոր քայլ է եղել հայ քերականության պատմության մեջ²⁰⁷: Նրանում հեղինակը օգտագործում է ոչ միայն հունարենի, լատիներենի և հայերենի քերականությունների արժեքավոր փորձը, այլև հայերեն գրավոր աղբյուրների համապատասխան տվյալները, որն ավելի քան գնահատելի է: Աշխատանքը լատինատիպ քերականություն է, հայերենի երևույթները, բնականաբար, ձևակերպված և բնութագրված են այդ լեզվի կաղապարով: Այդուհանդերձ, նկատելի է, որ հեղինակը նյութի շարադրանքի մեջ այնքան էլ տուրք չի տալիս լատինաբան ձևերի և արտահայտությունների գործադրմանը. լեզվի արհեստական ներմուծումներն ավելին չեն, քան կարելի էր ենթադրել՝ եթե լավագույնս տեղյակ ենք դասական լատիներենի գրական նորմային:

Վերն արդեն նշել ենք, որ հայերեն-լատիներեն այս տերմինացանկը գրվել է Մադրասում: Իսկ Կղ. Գալանոսի քերականությունը, որ երևան է եկել դրանից ավելի քան 110 տարի առաջ, չէր կարող ամեննին դուրս մնալ հնդկահայ գաղութի գործիչների մտավոր ուշադրությունից: Կարծում ենք, որ այդ քերականությունը հասել է նաև Մադրաս, հիմք հանդիսացել գործնական նպա-

²⁰⁷ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, էջ 25- 26:

տակ հետապնդող նման տերմինացանկ կազմելուն: Ի դեպ, սա հնարավորություն է տալիս խոսելու հայ մշակույթի ոլորտում նման շփումների մասին:

Այս տերմինացանկում, այնուամենայնիվ, իր բնօրինակ քերականության համեմատությամբ կան որոշ տարբերություններ: Այսպես, այստեղ փոքրիշատե մեղմացվել, վերանայվել և նույնիսկ բաց են թողնվել Կդ. Գալանոսի աշխատության մեջ եղած լատինական քերականական տերմինները. խմբագրությունը ակնհայտ է՝ թերևս արտաքին հանգամանքով պայմանավորված: Դա արվել է նաև այն պատճառով, որ հնդկահայ միջավայրի գործիչները նման տերմինները համարել են հետագա շրջանի գրաբարի ընդհանուր կառուցվածքին խորթ երևույթներ: Այս իրողությունը, իր հերթին, հավաստում է, որ հնդկահայ կենտրոնի գործիչը՝ բառացանկը կազմողը, տեղյակ է հայերենի զարգացման պատմությանը, նախկինում գրաբարի մեջ եղած միտումնավոր (արհեստական) խճողումներին, ուստի նման տերմինները իր կազմածում անտեսել է և կրճատել:

Այնուհետև, բավականին տեղին է այն հարցը, թե ինչ նպատակ է հետապնդել սույն երկլեզվյան տերմինացանկը: Կարելի է կարծել, որ պատահական չէ նման մի ձեռագիր ցանկի երևան գալը ժամանակի հնդկահայ գաղութի միջավայրում: Հայտնի է, որ դա մի ժամանակաշրջան էր, երբ այդ միջավայրի գործիչները առաջինը հայ իրականության մեջ ձեռնամուխ եղան հայոց լուսավորության, ընդ սմին կրթության, կարելի է ասել, հանրային հնչեղության գործին: Նման պայմաններում, բնականաբար, պիտի ձեռնամուխ լինեին նաև հոգևոր մի շարք արժեքների, ընդ սմին լեզվի և գրականության գնահատությանը և տարածմանը:

Քերականական գիտելիքների սերմանման առումով նման գործնական (առձեռն) բառացանկի կազմումը եթե ոչ անհատական-անձնական, ապա ընդհանուր նպատակ հետապնդող գործ

պետք է համարել: Եվ սույն տերմինացանկի անհայտ կազմողը (հեղինակը), հաշվի առնելով ժամանակին ճանաչում գտած հիշյալ քերականության արժանիքները, նրա ընձեռած նյութի հիման վրա կազմում է իր այս տերմինացանկը: Այն, թերևս, ունեցել է իր նշանակությունը մայրենի լեզվի ուսուցման գործում՝ տվյալ միջավայրում:

Տերմինացանկի կառուցվածքը բավականին պարզ է, բերվում են հայերեն-լատիներեն զուգադիր տերմիններ՝ ըստ թեմատիկայի. որոշ բացատրություններով: Այսպես, օրինակ, զուգահեռ բերվում են հոլովների անվանումները՝ կից լատիներեն համարժեքով, նույնի հայերեն տառադարձումով (դնում ենք փակագծերում), որ չի արվում մյուս՝ ավելի մեծ թվով դեպքերում. օր.՝ *տրական* - *dativus* (դատիուս), *հայցական* կամ *կրողական* - *accusativus* (ակկուզատիուս), *բացառական* կամ *առողական* - *ablativus* (աբլատիուս), *պատմական* - *instrumentalis*²⁰⁸ (նարրատիուս), *գործիական* - *narrativus*²⁰⁹ (ինստռումենտալիս)՝ *պարանական* - *commorativus* (կոմմորատիուս), *ներգոյական* կամ *կացողական* - *circumlativus*, (սիրկումլատիուս), *կոչական* - *vocativus* (վոկատիուս):

Բերված օրինակներում լատիներեն անվանումների հայերեն տառադարձումը կատարված է խստագույն ընդօրինակումով, եթե բացառենք մեկ երկու շեղում. հմմտ. *circumlativus*, *սիրկումլատիուս* (փխ. *g*-ով), *կոչական* - *vocativus*, *վոկատիուս* (փխ. *n*-ով):

²⁰⁸ Փխ.՝ *narrativus* (լատ. *narrāre* «պատմել»). ձեռագիր արտագրողը («գրիչը») շփոթել է հայ. *պատմական* և *գործիական* հոլովների լատիներեն համարժեքների նշանակումը, թեև տառադարձումը ճիշտ է դրել և ուղղում մտցրել բառերի վրա տեղափոխման նշան դնելով:

²⁰⁹ Տե՛ս նախորդ հղումը:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բցռ. - բացառական (հոլ.)
գաղղ. - գաղղիերեն (ֆրանսերեն)
գերմ. - գերմաներեն
եկղ. - եկեղեցական
թ. - թիվ
թարգմ. - թարգմանություն
լեհ. - լեհերեն
խսկց. - խոսակցական
ծանոթ. - ծանոթություն (-գրություն)
կրկն. - կրկնական (-ակի)
հեղ. - հեղինակ
հոգն. - հոգնակի (թիվ)
հոլ. - հոլով
հր. - հրեերեն
հուն. - հունարեն
ռուս. - ռուսերեն
սեռ. - սեռական (հոլ.)
փիս. (փոխ.) - փոխարեն (-անակ)
gen. - genetivus (սեռ. հոլ.)
pl. - pluralis (հոգն. թիվ)

1) Բնագրեր և բառարաններ

Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան, հհ. 1-4, Ե., 1973-1979:

Աւետիքեան Գ., Միրմէլեան Խ., Աւգերեան Ս., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2., Վենետիկ, 1836-1837:

Բառգիրք հայոց. Dictionarium armeno-latinum, auctore Francisco Rivola, Mediolani, MDCXXI (=1621), 479 էջ:

Բառգիրք հայոց. Dictionarium armeno-latinum», auctore Francisco Rivola, Paris, MDCXXXIII [=1633], 396 էջ:

[*Ներքետվիչ Աստուածատուր*], Բառգիրք լատինացոց և հայոց ի վերայ Աստուածաշունչ և Ժամանակագրութեան գրոց Հայոց եկեղեցոյն [= Dictionarium latino-armenum super sacram scripturam, et libros Divini officis Ecclesiae Armenae[Roma, MDCXCXV (=1695), VIII + 596, et 14 p.]]:

Ջահուկյան Գ. Բ., Հայերէն ստուգաբանական բառարան, Ե., 2010:

Дворецкий И. Х., Греческо-русский словарь, М., 1958.

Дворецкий И. Х., Латинско-русский словарь, М., 1976.

Introductio in Chaldaicam linguā, Syriacā, atque Armeniacā, et decē alias linguas characterum differentiū Alphabeta, circiter quadraginta, et eorūndem inuicem cōformatio. Mystica et Cabalistica quēplurima scitu digna ... Theseo Ambrosio ex comitibus Albonesii, Authore, [Padua], MDXXXIX (= 1539).

Galanus Clemens, Grammaticae et logicae institutiones linguae literalis Armenicae, Roma, 1645.

Guilielmus Postel, Linguarum duodecim characteribus differentium alphabetum [= Գուլիելմոս Պոստել, Linguarum, Փարիզ, 1538, 38 թերթ (= 76 էջ).

La Croze de Veyssière, Studies in Early Armenian lexicography the Armenian-latin dictionary // “*Revue des études arméniennes*”: Nouvelle serie, t. XIX, Paris, 1985, pp. 373-429.

Obadias Armenus, quo, cum analysi Vocum armenicarum Grammatica, & Collatione versionis Armenicae cum Fontibus, aliisque, maximam partem Orientalibus Versionibus, exhibetur. Primum im Germanica specimen Characterum Armenicorum, in Celeberrima Academia Lipsensis procuratorum M. Andrea Acolutho”, Vratislava, Soles, anno epochae armenorum MCXXIX, messianae MDCXXC (= 1680).

Omont H., Manuel de conversation arménien-latin du X^e siècle // Bibliotheque de l’École des Chartes, Revue d’érudition, consacrée spécialement a l’é tude du Moyen Age, XLIII, année 1882, Paris, Librairie d’Alphonse Picard, pp. 563-564.

Schiltberger H., Reisebuch, Tübingen, 1885.

Studies in Early Armenian Lexicography the Armenian-Latin Dictionary by M. Veyssièrr De La Croze (J.J.S. Weitenberg) // “*Revue des études arméniennes: Nouvelle série*”, Tom XIX, Paris, 1985, pp. 373-429 (բնագրի վերասույ.՝ “*Dictionarium armenico-latinum, summo studio et labore ... a Maturino Veyssiere La Croze, Pars Prima, Beroloni MDCCXII [= 1712] // Op. cit., p. 381-419*) [բնագիրը՝ Manuscript Leiden, Cod. Or. 431 A [վերասույ.՝ pp. 381-419]).

Theseus Ambrosius, Introductio in Chaldaicam linguam, Syriacam, atque Armenicam et decem alias linguae, Բավիս, 1539, 430 էջ (տե՛ս նաև “*Catalogue général des manuscrits des bibliothèques publiques des départements*”, 1, Paris, 1849).

Un ancien Glossaire Latin-Arménien, publié et annoté par A. Carrière, Paris, Imprimerie nationale, MDCCCLXXXVI (=1886).

2) Ուսումնասիրություններ

Աղայան Է.Բ., Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1958:

Աղայան Է. Բ., Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974:

Աճառյան Հ., Ե՞րբ լ դարձավ *ղ* (*Նույնի*, Հայերեն արմատական բառարան, հ. 4, 1979, էջ 648-654):

Աճառյան Հ., Հայոց գրերը, Ե., 1984:

Աճեմյան Վ. Լ., Գրական արևմտահայերենի ձևավորումը, Ե., 1971:

Ամալյան Հ. Ս., Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (V - XV դդ.), Ե., 1966: *Նույնի*՝ Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (XVI - XVII դդ.), Ե., 1971:

Այվազեան Հ. Գ., Տեսութիւն կարծեաց հայր Արսենի Բագրատունոյ յաղագս հնչման *ղ* և *լ* տառից, Վենետիկ, 1852:

Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. Բ, Ե., 1976:

Արեւելքի ժողովրդեան տարրեր Գաղղիոյ մէջ. Հայերն ի Գաղղիա ԺԲ-էն մինչեւ ԺԸ դար, թարգմ.՝ Հ. Յ. Աւգեր[եան] (= ֆրանս. բնագիրը՝ «Revue historique», 1918, 5-6, Mai-Juin):

Գասպարյան Գ. Կ., Հայ բառարանագրության պատմություն, Ե., 1967:

Դոլուխանյան Ա. Գ., Լատիներեն-հայերեն հնագոյն բառարանը // «Շիրակ» (ամսագիր), Բեյրութ, 2006, 4-6 (ապրիլ-յունիս), էջ 44-47:

Դեղեյան Շ., Հայ վանականները և ուխտավորները Արևմտյան Եվրոպայում X դարի վերջում և XI դարի սկզբում // «Պատմա-բանասիրական հանդես», 1984, 3, էջ 21-36:

Ջարբհանալեան Գ., Պատմություն հայկական տպագրության սկզբնաւորութենէն մինչ առ մեզ, Վենետիկ, 1895:

Բշիսանյան Ռ. Ա., Հայ գրքի պատմություն, հ. 1 (հայ տպագիր գիրքը 16-17-րդ դարերում), Ե., 1977:

Հևոնյան Գար., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958:

Կոստանեանց Կ., Հայագիտությունն Արևմտեան Եւրոպայում (համառոտ տեսություն և գրացուցակ), Թիֆլիս, 1910:

Համբարձումյան Վ. Գ., Հայերն-լատիներէն ձեռագիր բառարան // «Կուլտուր-լուսավորական աշխատանք» (ամսագիր), 1987, 8, էջ 15-17:

Համբարձումյան Վ. Գ., Հայերը և հռոմեացիները. լեզվական շփումներ // «Երկիր» (օրաթերթ), 13-ը նոյեմբերի, 1991:

Համբարձումյան Վ. Գ., Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (X-XVIII դդ.), հ. 2, Ե., 2015:

Համբարձումյան Վ. Գ., Օտունի | Հայերէն-լատիներէն բառացանկը // «Պատմա-բանասիրական հանդես», 2016, 2 (202), էջ 123-136:

Հմայակյան Ս. Գ., Վանի թագավորության պետական կրոնը, Ե., 1990:

Մէյէ Ա., Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978:

ՄՄՁ № 3475. «Տախտակ տրամաբանական» (1625 թ., էջ 284ա):

ՄՄՁ № 3475. «Բառք լատիներէն-հայերէն» (1625 թ., էջ 285ա):

ՄՄՁ № 7560. «Բառգիրք հայերէն-լատիներէն» (1756 թ., էջ 41ա – 64բ):

Մուրադյան Հ. Դ., (գրախոս.), *Weitenberg J.J. S.*, Armenian Dialects and the Latin-Armenian Glossary of Auton //“*Medieval Armenian Culture*“ (University of Pennsylvania: Armenian Texts and Studies 6), Chico Ca: Scholars Press, 1983, էջ 13-28 // «*Պատմա-բանասիրական հանդես*», 1985, 3 (110), էջ 219-226:

Շրումպֆ Գ. Ա., Ուսումնասիրությունք հայ լեզուի և մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ-ԺԹ դար), Վենետիկ, 1895:

Պեդերսեն Հ., Հայերէն եւ դրացի լեզուները, Վիեննա, 1907:

Ջահուկյան Գ. Բ., Լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1960:

Ջահուկյան Գ. Բ., Գրաբարի քերականության պատմություն (XVII-XIX դդ.), Ե., 1974:

Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:

Ջոնսոն Հ. Ա., Հայր մերը ԺԵ. դարու հայ արեւելեան գաւառաբարբառով // «*Հանդէս ամսօրեայ*» (ամսագիր), 1909, էջ 30-31:

Ստրումպեր Վ. Բ., Ամբրոջիո Թեզեոյի հայագիտական ժառանգությունը (թեկնած. ատենախոս. սեղմագիր), Ե., 2000:

Մուրենեան Վ., Հանս Շիլտբերգերի կեանքի և գործունեութեան մասին // «*Հանդէս գրականական եւ պատմական*», հ. Գ, Սոսկուայ, 1890, էջ 148-164:

Տեր-Ղևոնդյան Ա., (գրախոս.), “La livre Arménien à travers les ages” (Marseille, 1985 // «*Պատմա-բանասիրական հանդես*», 1987, 1, էջ 219-221:

Гамкрелидзе Т. В., Иванова Вяч. Вс., Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, I-II Тбилиси, 1984.

Капанцян Г. А., Об урартском божестве Шебиту //“*Известия*” АН Арм. ССР, общественные науки, 1946, 11-12, с. 9-18.

- Люблинская А. Д.*, Латинская палеография, М., 1969.
- Нидерман М.*, Историческая фонетика латинского языка, М., 1949.
- Эрну А.*, Историческая морфология латинского языка, М., 1950.
- Benfey Th.*, Geschichte der Sprachwissenschaft und orientalischen Philologie in Deutschland, München, 1869.
- Histoire des Francs, livre X. ch. 24 (Frédéric Macler, La France et l'Arménie à travers l'Art et l'Histoire, Paris, 1917).
- Lagarde P. de*, (գրախոսություն.) // “Göttingische gelehrte Anzeigen unter der Aufsicht der Königl. Gesellschaft der Wissenschaften”, Nr. 8, 15 April 1887, ss. 292-294.
- Macler F.*, Mosaïque orientale, Paris, 1907:
- Macler F.*, La France et l'Arménie à travers l'Art et l'Histoire // “Histoire du France”, livte X, ch. 24, Paris, 1917:
- Meillet A.*, Remarques sur les *l* de l'arménien classique // «Յուշարձան», Վիեննա, 1911, էջ 209-211 [= *U. Մէյէ*, Դիտոդություններ դասական հայերենի լ-երի մասին // *Նույնի*, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 75-80]:
- Meillet A.*, Remarques sur la grammaire historique de l'arménien de Cilicie de M. J. Karst // «Zeitschrift für armenische Philologie», Band 2, Heft 1, 1903, էջ 18-28 [= *U. Մէյէ*, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978, էջ 441-451, 448]:
- Rivola Fr.*, Grammaticae Armenae, libri quattuor (լատին և հայ լեզ.), Միլան, տպ. Սմբրոսյան վարժարանի, 1624:
- Weitenberg J. J. S.*, Armenian Dialects and the Latin-Armenian Glossary of Auton // “Medieval Armenian Culture“ (University of Pennsylvania: Armenian Texts and Studies 6), Chico Ca: Scholars Press, 1983, pp. 13-26.

Բովանդակություն

Առաջաբան.....	4
1. Հարցի կարևորությունը լեզվի պատմության համար	10
2. Դիտարկումներ Օտունի բառացանկի վերաբերյալ.....	22
1) Բառացանկի վերծանության և նկարագրության փորձերը...	22
2) Բառացանկի վերարտադրություն և մեկնաբանություն.....	41
3) Բնագրային (տեքստային) նոր վերլուծություն.....	62
4) Համադրական տախտակ նշանակումների և գրադար- ձության.....	78
5) Հնչյունական-արտասանական վերլուծություն.....	84
6) Բառաքնական (ստուգաբանական) վերլուծություն.....	92
7) Համեմատություն հետագա հնատիպ բառարանների հետ..	124
3. Երկլեզվյան ոչ ծավալուն («մանր») բառացանկեր.....	134
1) Հանս Շիլտերգերի գրքի «Հայր մեր»-ը.....	135
2) Թեգեոս Ամբրոսիոսի գրքի հայերենի նյութը.....	146
3) Ֆրանցիսկուս Ռիվոլայի «Բառգիրք հայոց»-ը.....	155
4) ՄՄՁ № 3475-ի («Տախտակ տրամաբանական») նյութը.....	159
5) ՄՄՁ № 3475-ի («Բառք լատիներեն-հայերեն») նյութը.....	161
6) Անդրեաս Ակոլոթոսի գրքի հայերենի նյութը.....	162
7) Աստվածատուր Ներսեսովիչի բառարանի նյութը.....	167
8) Մ. Վ. Լա Կրոզի բառարանի ներածության և մի հատվածի նյութը.....	171
9) Հակոբ Վիլոտի բառգրքի նյութը.....	183
10) ՄՄՁ № 7560-ի («Բառգիրք հայերեն-լատիներեն») նյութը.....	185
Համառոտագրություններ.....	192
Գրականության ցանկ.....	193

Վազգեն Գուրգենի Համբարձումյան

Հայ միջնադարյան երկլեզվյան բառացանկերի
նմուշների լեզվի քննություն

Համակարգչային ձևավորումը և
էջադրումը
Մ. Հ. Խառատյանի

Տպաքանակը 120